ՎԱՐԴԳԷՍ ԱՀԱՐՈՆԵԱՆ

ԱՆԴՐԱՆԻԿ

ՄԱՐԴԸ ԵՒ ՌԱԶՄԻԿԸ

ԲՈՍԹԸՆ· 1957
ՀԱՅՐԵՆԻՔ ՏՊԱՐԱՆ

2288

Uit de nalatenschap van
Nubar Jessayan (1920-2009)

ՄՕՐՍ՝

ԱՆՈՒՇ ՆԱԶԱՐԻ ԱՀԱՐՈՆԵԱՆԻ,
որ հանգչում է Արարատի ստորոտում՝
պայծա՛ռ, պայծառ յիշատակին

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Քսաներորդ դարի առաջին քսանհինգամեակի Հայ Ազատագրական Շարժման պատմութեան մէջ Անդրանիկը ամենավիպական, ամենափայլուն ռազմական դէմքն է, որ փոքրկեց հայ ժողովրդի հերոսատենչ հոգին: Բռնակալ տիրապետողների դաժան բռունցքի տակ դարերով կքած հայ ժողովուրդը Անդրանիկի մէջ տեսաւ իր վրիժառու բազուկը եւ անզուսպ բերկրանքով փաթեց այդ բազկի բռնած սրին, որ վաղուց է ինչ դուրս չէր քաշուել իր պատեանից:

Նոյնիսկ թշնամին՝ արիւնռուշտ ու վայրագ՝ պատկառանքով եւ զսպուած հիացումով կրկնեց անունը հայ հերոսի, որի հպարտ գլուխը երբեք չխոնարհուեց թշնամու առջեւ եւ որին երբեք չհասաւ թշնամու հարուածը:

Ինչպէս հրաբուխը ժայթքում է լերան անդնդախոր արգանդից, այդպէս էլ Անդրանիկը ժայթքեց հայ ժողովրդի սրտից, որպէս վրիժառու ըմբոստութեան հոյակապ մարմնացում: Թշնամուն պատուհասող նրա սուրը հայրենի հողի վրայ երբեք պատեան չմտաւ:

Նոյնիսկ հայրենիքից դուրս նա նետուեց դէպի այն դիրքերը, որտեղից կարելի էր հարուածել դարաւոր թշնամուն: 1912–13-ի Բալկանեան պատերազմի ժամանակ Անդրանիկը հայ կամաւորական մի գումարտակի գլուխ անցած կռուել է բուլղարների կողքին թուրքի դէմ: Բայց երբ թուրքի դէմ պատերազմը վերածուել է Բալկանեան դաշնակիցների եղբայրասպան կռուի, Անդրանիկը վար է դրել իր զէնքը եւ քաշուել է ռազմի դաշտից:

Հայ ժողովուրդը սիրեց իր ըմբոստ զաւակին, երգեր հիւսեց նրա արիութեանը եւ դիւցազնական առասպելներով զարդարեց նրա փոքրկալից, մրրկածուփ կեանքի պատմութիւնը: Եւ մի՞թէ առասպել չէր նրա հերոսական կեանքը՝ որքան առասպել, նոյնքան իրականութիւն միաժամանակ:

Անդրանիկը ռազմիկ էր ոտքից գլուխ:

Նա ծնուած հրամանատար էր, որ իր սուրը բարձրացրեց կամօքն Աստուծոյ եւ օրհնութեամբ հայ ժողովրդի:

Անդրանիկի զինուորական տաղանդը միեւնոյն շաղախից էր,

ինչ որ պատմութեան մեծ հրամանատարներինը: Եւ յանցանքը իրենը չէր, որ հայ կեանքը անձուկ սահմանների մէջ նրա զինուորական տաղանդը չհանեց նրան այն բարձունքները, ուր իրենից առաջ հասել էին հայ եւ օտար մեծ ռազմիկները: Մեր հայրենի լեռներում, մեր անդնդախոր ձորերում հայկական ռազմի ամէնից գոռ շեփորի ձայնն անգամ խեղդւում է, առանց հասնելու դրսի աշխարհին: Հայ կեանքից դուրս, այլ, աւելի լայն հորիզոնների տակ, Անդրանիկը կարող էր դառնալ պատմութեան նշանաւոր դէմքերից մէկը:

Բնութիւնը բաժին էր հանել Անդրանիկին մեծ հրամանատարների յատկութիւններից,— նախաձեռնութեան ոգի, արագ չափող ու կշռող միտք, յանդուգն վճռականութիւն, անքերի աչք ու ականջ եւ անձնական արիութիւն՝ իր օրինակով հրդեհելու իր հրամանին ենթակայ ռազմիկների հոգիները:

Անդրանիկը մէկ հայեացքով գիտէր չափել ռազմադաշտի բոլոր առաւելութիւնները եւ թերութիւնները իրեն եւ հակառակորդի համար: Մի արագ հայեացք հերիք էր, որ ռազմադաշտը տպաւորուէր Անդրանիկի մտքի մէջ այնպէս, ինչպէս լուսանկարչական ապակու վրայ առնուած համայնապատկեր եւ անջնջելի կերպով դրոշմուած մնար նրա ուղեղի ծալքերում: Եւ Անդրանիկը գիտէր լիուլի կերպով օգտագործել ռազմադաշտի բոլոր առաւելութիւնները՝ ի նպաստ իրեն, եւ պակասութիւնները՝ ի վնաս հակառակորդի:

Փոյթ չէ թէ թշնամին նոյնիսկ գերազանց ոյժեր ունենար, երբ պէտք էր նակատել, Անդրանիկը կռուի նախաձեռնութիւնը չէր զիջում հակառակորդին: Պէտք չէ որ հակառակորդը կռուի իր յատակագիծը պարտադրէր Անդրանիկին, այլ Անդրանիկն էր, որ իր կամքը պիտի պարտադրէր թշնամուն: Թշնամին էր, որ պիտի յարմարուէր Անդրանիկի ռազմական շարժումներին: Հարուածողը պիտի լինէր Անդրանիկը, իսկ հարուածն ընդունողը թշնամին:

Պարտուած թշնամին կարող է նողոպրել եւ մի ուրիշ տեղ նակատ յարդարել: Պէտք չէ թոյլ տալ այդ, թշնամու դիմադրական յետին ոյժն էլ պիտի խորտակել, այդպէս էր մտածում Անդրանիկը:

Անդրանիկը, ինչպէս ամէն մի կամքոն Աստուծոյ հրամանատար, միշտ յաղթանակը ծրագրեց, միշտ յաղթանակը հետապնդեց, բայց երբեք չմոռացաւ, որ կռուի դաշտում յաղթանակին կարող է յաջորդել ձախորդութիւն եւ պարտութիւն:

1915–ի ամբան նահանջից յետոյ Վասպուրականում ռուսական զօրամասերի բռնած նակատը շատ էլ կայուն չէր թուում Անդրանիկին: Ուստի, 1916–ի յունուարին նակատ վերադառնալուց յետոյ, ռուսական հաւանական նահանջի հեռանկարով մտահոգուած, Անդրանիկը մի օր կանչեց ինձ եւ ասաց.

— Սա քարտէսդ բեր նայինք:

Եւ ռուսական երկու վերստանոց զինուորական քարտէզի վրայ երկար ժամանակ կռացած Անդրանիկը գծեց նահանջի նամբաներ իր գնդի համար, անկախ ռուսական բանակի հաւանական շարժումներից: Նա միայն իրեն էր վստահում: Եւ իրաւունք ունէր: Այդ դէպքում նրա մէջ խօսում էր ե՛ւ ռազմագէտ հրամանատարը, ե՛ւ հայ հայդուկը, որ գերազանց ոյժերի տէր թշնամու դէմ նակատելուց յետոյ, գրեթէ միշտ թշնամու օղակումից խուսափելու մասին է ստիպուած եղել մտածել, մի այլ տեղ նորից նակատ կազմելու համար:

Վտանգի պահուն Անդրանիկին կարելի էր անսահման վըստահել: Նրա հրամանի տակ գտնուող զինուորն իրեն ապահով էր զգում: Եթէ թշնամին բազմահազար ոյժերով գրաւէր լեռ ու ձոր եւ շրջապատէր Անդրանիկին իր փոքրաթիւ գնդով, կարելի էր վստահ լինել, որ Անդրանիկը, եթէ դիպուածի զոհ չգնար, ապահով դուրս կը հանէր իր գունդը թշնամու օղակումից:

Ռազմադաշտում Անդրանիկը վճռական էր իր որոշումների մէջ, երբ համոզուած էր, որ ճիշդ է իր ընթացքը, նոյնիսկ, երբ այդ վճռականութիւնը հակառակ էր զինուորական կարգապահութեան եւ կարող էր նկատուել ըմբոստութիւն վերին հրամանատարութեան դէմ:

1915–ի ամառը Վասպուրականի ռուսական բանակը Վանի լճի հարաւային եւ հիւսիսային ափերով դիմեց ընդհանուր յարձակման: Թուրքական դիմադրութիւնը աւելի շատ կենտրոնացած էր Վանի լճի հարաւային ափի վրայ, Սուրբի լեռներում, որոնք պաշտպանում էին դէպի Բաղէշ եւ Մուշ տանող ճամբաների հանգոյցը Բահվէ–Դուրանում:

Սուրբի նակատի վրայ կռուող ռուսական զօրաբանակի յառաջապահ ոյժերը կազմուած էին առաւելապէս հայ կամաւորական չորս գնդերից, Անդրանիկի, Դրոյի, Քեռու եւ Համազասպի հրամանի տակ: Մի քանի օր թուրքական գրոհները եւ հակագրոհները յետ մղելուց յետոյ, երբ հայ կամաւորական գնդերին յաջողուել է մի յանդուգն գրոհով եւ բաւական ծանր զոհերի գնով գրաւել թուրքական տիրապետող դիրքերը, այդ նակատի

ռուս հրամանատար զօրավար Տրուխինից նահանջի հրաման է ստացուել: Անդրանիկը մերժել է ենթարկուել այդ հրամանին եւ մնացել է ծանր գնով գրաւուած դիրքերի վրայ, մինչ ռուսական ոյժերը, մինչեւ յետին զինուորը, յետ են քաշուել Վանի ուղղութեամբ:

Երկու օր չանցած ռուսական ոյժերը վերադարձել են Սուրբի դիրքերը: Այդ դիրքերից ռուսական ոյժերը, միշտ մեր կամաւորական գնդերի յառաջապահութեամբ, շարժուել են դէպի առաջ, դէպի Ուրթափ եւ Դատվան:

Այդ յանդուգն անհնազանդութեան համար Անդրանիկը ոչ թէ պատժուել է, այլ պարգեւատրուել է քաջութեան շքանշանով: Այդ պարգեւատրութեան բացատրականի մէջ ռուս հրամանատարութիւնը ասել էր, գրեթէ բառացի, հետեւեալը· «Հայ Կամաւորական Առաջին *Դրուժինայի**) հրամանատար Անդրանիկը, հակառակ նահանջի մասին իր ստացած հրամանին, մնացել է թշնամուց գրաւուած դիրքերի վրայ, մինչեւ որ այդ նակատի վրայ վերսկսուել է մեր ոյժերի յարձակողականը: Իր այդ քայլով Հայ Կամաւորական Առաջին *Դրուժինայի* հրամանատար Անդրանիկը մեծապէս նպաստած է եղել մեր զօրամասերի յետագայ յաջողութիւններին»:

— Ես կը հասկնայի, որ ատիկա ընդհանուր նահանջ չի կրնար ըլլալ եւ ռուսերը պիտի վերադառնան, պատմում էր յետագային Անդրանիկը: Թուրքերու ձեռքէն այդ դիրքերը խլելու համար մենք զոհեր տուած էինք եւ եթէ լքէի այդ դիրքերը ու նահանջէի, վերադարձի պարագային պիտի նորէն նոյնքան, եթէ ոչ աւելի զոհ տայինք այդ միեւնոյն դիրքերը գրաւելու համար: Ուստի որոշեցի չնահանջել:

Անդրանիկը հզօր, յանախ անզուսպ կրքի տէր մարդ էր: Ամէն ինչի մէջ նա կիրք էր դնում եւ ծայրայեղ կիրք: Ռազմադաշտում չափի զգացումի տէր Անդրանիկը կռուի դաշտից դուրս կորցնում էր այդ զգացումը: Եւ չափի զգացումի այդ պակասը եղաւ պատճառ Անդրանիկի այն քայլերի, որոնք ստուերոտեցին նրա, այլապէս պայծառ, անունը:

* * *

Մի քանի խօսք էլ այս գրքի մասին:

---

*) *Հին, իշխանապետական Ռուսիայում* դրուժինա *էր կոչւում տիրապետող իշխանի զօրագունդը:*

Այս գրքի հեղինակը ջանացել է տալ Անդրանիկի՝ մարդ եւ ռազմիկ Անդրանիկի՝ կենդանի, խօսուն պատկերը այնպէս, ինչպէս որ տեսել է ինքը: Թէ ո՞րքան է յաջողուել հեղինակի այդ մտադրութիւնը՝ ընթերցողին կը մնայ դատել: Բայց հեղինակը աշխատել է միշտ հաւատարիմ մնալ իրականութեան եւ ճշմարտութեան:

Այս հատորը ո՛չ ամբողջութեամբ յուշ է, ո՛չ չոր պատմութիւն եւ ոչ վէպ, այլ թէ՛ մէկը, թէ՛ միւսը եւ թէ երրորդը: Իբրեւ գրական ձեւ այս հատորի մէջ կան եւ վիպական էջեր, կայ եւ յուշ ու պատմութիւն: Բայց այդ ամէնի մէջ չկայ մի տող, որ չհամապատասխանի հեղինակի տեսած եւ լսած իրողութիւններին: Հեղինակը խուսափել է յիշատակել ուրիշներից լսածները Անդրանիկի մասին եւ գրի է առել միայն այն, ինչ որ ինքն է տեսել եւ այն, ինչ որ ինքն է լսել Անդրանիկի բերանից:

Անդրանիկի մասին շատ բան է գրուած եւ յաճախ չափազանցուած եւ անհիշդ կերպով: Անդրանիկին վերագրուած են բաներ, որ նա չի արել եւ շատ անգամ զանց են առնուել նրա կատարած իրական գործերը: Աժան գովեստներ են շռայլուել Անդրանիկի հասցէին, այդ ձեւով մեծացնելու մեր ազգային հերոսին, մինչդեռ Անդրանիկի մասին ասուած պարզ սովորական ճշմարտութիւնը աւելի լաւ լոյսի տակ պիտի ներկայացնէր մեզ նրա կատարած դրական գործերը, առանց, միեւնոյն ժամանակ աչք փակելու նրա մարդկային տկարութիւնների վրայ:

Յուշերի մէջ կարող են մոռացումներ լինել, քանի որ յուշագրողի միակ աղբիւրը իր յիշողութիւնն է, որ կարող է, երբեմն, դաւաճանել իրեն:

Այս հատորի հեղինակը, սակայն, թոյլ չի տուել իրեն գիտակցաբար շեղուել իրականութիւնից եւ ոտնահարել ճշմարտութիւնը:

Այդ ձեւով գրուած այս գիրքը, թերեւս, օգտակար լինի ապագայ պատմագրին գծելու համար ամբողջական դէմքը այն բացառիկ հայի, որի անունը՝ Անդրանիկ՝ բոցեղէն տառերով գրուեց եզակի դէմքերով այնքան հարուստ Հայ Ազատագրական Շարժման պատմութեան էջերի վրայ եւ հայ սրտի մէջ:

Այս հատորի նիւթը ոչ միայն Անդրանիկն է, այլ նաեւ նրա հրամանի տակ կռուած Հայ Կամաւորական Առաջին Գնդի այն շրջանի գործունէութիւնը, որին ականատես ու մասնակից է եղել հեղինակը:

Այդ էլ նիւթ է ապագայ պատմագրի համար:

Այս հատորը սկսած է գրուել 1935–ին եւ ահա լրանում է 1957–ին:

Կռուի դաշտում օրը օրին պահած իմ օրագիրը եւ քաշած բազմաթիւ լուսանկարները մնացել են Հայաստանում: Բարեբախտ դիպուածով իմ ձեռքն են հասել միայն մի քանիսը այդ լուսանկարներից, որոնց գետեղում եմ այս հատորում, մեր գնդի անցած ճամբաների քարտէզների հետ միասին:

* * *

Անդրանիկ Ուզունեանը ծնուել է 1866 թուին Շապին Գարահիսարում:

Իր փոքրկայոյզ կեանքից յետոյ, 1922–ին եկել է Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգները եւ հաստատուել Կալիֆորնիայի Ֆրէզնօ քաղաքում, ուր եւ վախճանուել է 1927–ին, Օգոստոս 30–ին:

Իր աճիւնը փոխադրուած է Ֆրանսա եւ հանգչում է Պէր Լաշէզ գերեզմանատան մէջ:

Եգիպտահայերից նուէր ստացած իր սուրը ուղարկուած է Հայաստան եւ, ինչպէս հաւաստիացնում են, պահւում է Հայաստանի Պետական Թանգարանում:

ՎԱՐԴԳԷՍ ԱՀԱՐՈՆԵԱՆ

Նիւ Եօրք
1957

ԱՆԾԱՆՕԹԸ

Ձմեռ էր։

Մի օր ես, Թիֆլիսի ռուսական դիմնազիոններից մէկի աշակերտ, երբ դպրոցից տուն եկայ, մեր հիւրասրահում, հօրս հետ զրոյցի նստած դտայ մի անծանօթի, որին առաջին անդամն էի հանդիպում մեր տանը։

Այն խոր ուշադրութիւնը, որով հայրս լսում էր այդ նոր այցելուի պատմածները, ակամայից դրաւեց նաեւ իմ ուշադրութիւնը եւ հետաքրքրութիւն արթնացրեց իմ մէջ դէպի անծանօթ հիւրը։

Միջահասակ, լայնաթիկունք եւ համաչափ մարմնակազմով մի տղամարդ էր նա։ Բաղմոցի վրայ նստած էր արեւելցու պէս ծալապատիկ։ Հագած էր եւրոպական ձեւի պարզ զգեստ։ Կրծքի ամբողջ լայնութեամբ ձգուած ժամացոյցի ոսկէ շղթան եւ նստուածքը արեւելցի վաճառականի երեւոյթ էին տալիս նրան։

Առատ, ալիքաձեւ սեւ մազեր ունէր, թաւ մօրուք, հաստ բեղեր եւ վառվռուն, անհանդիստ, ժպտուն աչքեր, որոնց հայեացքը իսկոյն դրաւում, նուաճում էր դիմացինին։ Քիչ անդամ մարդուս հայեացքը կարող է այնքան խորունկ լինել, որքան էր իրենը։

Երբ յուզւում էր, թաւ յօնքերի միացման տեղից դէպի վեր, դէպի լայն ճակատը ձգուող երկու կնճիռները դառնում էին խոր ակօսներ։

Խօսում էր թաւ, կրծքի խորքից եկող հաճելի ձայնով։ Իր ծիծաղը անբռնաղբօսիկ, երկարատեւ եւ հնչուն էր՝ մանկական ծիծաղի պէս։

Ծխում էր դրեթէ անընդհատ, մէկ ծխիկից անմիջապէս յետոյ միւսը վառելով, այնպէս որ իր դէմքը ամբողջ ժամանակ թւում էր պարուրուած կապտաւուն շղարշով։ Ծխի այդ կապոյտ քօղի տակ իր անհանդիստ աչքերի հայեացքը ասես հեռանում էր եւ դառնում էր երազուն ու խորհրդաւոր։

Երբ ես ներս մտայ, մեր հիւրը ինչ որ պատմութիւն էր անում։ Հայրս, ինչպէս ասացի, նրա ուշադիր ունկնդիրն էր։

Առաջին իսկ հայեացքից նկատելի էր մի մտերմութիւն հօրս եւ մեր հիւրի միջեւ, ասես հին, երկար տարիների բարեկամներ լինէին, թէեւ, դրանից առաջ ես երբեք այդ մարդուն մեր տանը չէի տեսել:

Չեմ յիշում, թէ ի՞նչ բառերով, բայց յիշում եմ, որ հայրս ինձ ներկայացրեց մեր հիւրին այնպէս, ինչպէս մէկը պիտի ներկայացնէր իր որդին, իր լաւ, հին բարեկամին, թէ «տե՛ս, սա էլ իմ տղան է»:

Անծանօթը միայն մի վայրկեան ընդհատեց իր խօսքը, մեկնելով ինձ իր ջղուտ, ուժեղ ձեռքը, որի մէջ ամբողջապէս կորաւ իմ թաթը: Ու նորէն շարունակեց իր ընդհատած պատմութիւնը:

Պատմում էր ինչ որ կռիւներից Թուրքա–Հայաստանում: Մուշ, Սասուն, Գոմեր, Շէնիք, Սեմալ, Աղթամար, Վան եւ ուրիշ անուններ կրկնւում էին նրա պատմութեան մէջ:

1904–ի վերջն էր:

* * *

Այդ եւ նախորդ տարին բազմաթիւ հայդուկային խմբեր էին անցել ռուս–թուրքական սահմանից դէպի Թուրքա–Հայաստան եւ մեզ մօտ, Կովկասում, բերնէ բերան պատմւում էին մէկը միւսից յանդուգն, մէկը միւսից խիզախ կռիւները հայ հայդուկների թուրք եւ քիւրդ ոյժերի դէմ:

Ոչ միայն տարեց մարդիկ եւ երիտասարդներ, այլ եւ դըպրոցական աշակերտներ, պատանիներ ոգեւորուած էին այն ամէնով, ինչ որ կատարւում էր սահմանից այն կողմը եւ որի արձագանգը գալիս, հասնում էր մեզ մեր մեծերից լսած պատմութիւններով եւ թատրական աշուղների երգերի միջոցով:

Մեր, աշակերտներիս ձեռքն էր անցնում երբեմն «Դրօշակ»ը, որի մէջ հայդուկային կռիւների նկարագրութիւնները եւ Աղբիւր–Սերոբի, Պետոյի, Վաղդէնի, Անդրանիկի եւ ուրիշների նկարները մեզ խանդավառում էին աննկարագրելի կերպով:

Ամէնից աւելի մեր երեւակայութիւնը յափշտակել էր Անդրանիկը, որի մասին առասպելներ էին պատմւում: Նրա անուան հետ կապուած ամենաանչան դէպքն իսկ մեզ համար աւելի հետաքրքրական, աւելի կարեւոր էր, քան թէ ուրիշների ամենամեծ սխրագործութիւնները:

Նախորդ ամառը սահմանն անցած բազմաթիւ հայդուկային խմբերի մեծ մասը ձախորդութեան էր հանդիպել: Ոգեւորուել էինք ամէն մէկ խմբի յաջողութիւններով եւ մինչեւ արցունք տրտմել նրանց ձախորդութիւնների համար: Բայց ամէնից աւելի

մեզ տխրեցրել էր ձախորդութիւնն այն խմբի, որի մէջ էր եղել Անդրանիկի քրոջ տղան, որ սպանուել էր առաջին խակ կռուում: Դէպի Սասուն, դէպի իր առասպելական քեռին դնացող այդ երիտասարդի մահը կարծես մեզանից ամէն մէկին հասած անձնական դժբախտութիւն լինէր:

Թանկ ու սիրելի էին մեզ համար ամէնքը, բոլոր այդ անծանօթ երիտասարդները, որոնք անցնում էին սահմանը, բայց ամէնից աւելի թանկ էր այն մէկը, որ գնում էր հասնելու իր քեռու «հաւարին»: Այդ երիտասարդի ոչ միայն ողբերգական վախճանը, այլ իր դոյութիւնն խակ հետաքրքրութեան ու յափշտակութեան աղբիւր էր մեզ համար:

Անդրանի՜կ, հէքիաթային, առասպելական մի էակ եւ... քրոջ որդի: Մի՞թէ Անդրանիկի նման մարդիկ էլ քոյր ու եղբայր, քրոջ եւ եղբօր որդի են ունենում, ինչպէս սովորական մարդիկ: Եթէ այո, ուրեմն, ի՜նչ լաւ կը լինէր, որ մենք էլ լինէինք նրա քրոջ կամ եղբօր որդին:

Բնական էր, ուրեմն, այն յափշտակութիւնը, որով ես լսում էի մեր հիւրի պատմութիւնները: Գոհ էի, որ հայրս չէր արգելում ինձ ուղածիս չափ երկար մնալ միեւնոյն սենեակում իրեն եւ մեր հիւրի հետ:

Անծանօթի պատմածներից երեւում էր, որ ինքը մասնակցել է իր նկարագրած կռիւներին: Ինձ թւում էր անհաւատալի, որ իմ դիմաց նստած այս մարդը եղել է «այնտեղ», սահմանի այն կողմը եւ հիմա, պարզ ձեւով պատմում է իր դլխից անցած-դարձածներն այնպէս, ինչպէս ամէն օր մեր տունը եկող-դնացող այցելուները: Եւ սակայն, անկարելի էր կասկածել իր պատմածների ճշմարտութիւնը, այնպէս անկեղծ, այնպէս համոզեցուցիչ էր իր խօսքը: Այնպէս դեղեցիկ էլ պատմել գիտէր, որ իր նկարագրած դէպքերը եւ անձերը վառ կերպով պատկերանում էին աչքիդ առջեւ: Ես լսում էի նրան յափշտակութեամբ, պատրաստ էի օրերով չհեռանալ նրա մօտից:

Բայց ո՞վ էր այս մարդը:

Ո՞ր մէկն էր սա այն առասպելական ռազմիկներից, որոնց անունները եւ իրենց գործերին հիւսուած երգերն այնպէս խանդավառում էին մեզ:

Հայրս, մայրս եւ մեր տունը եկող-դնացող հիւրերը դիմում էին նրան իբրեւ «պարոն Պարոյր» կամ պարզապէս Պարոյր: Հօրս հարցնել չէի համարձակում, իսկ մայրս, որ աւելի զիջող էր իմ

թախանձանքներին, նկատելի ճիգ էր գործ դնում իր վրայ՝ չբանալու համար ինձ հետաքրքրող գաղտնիքը:

* * *

Օրերն անցնում էին:

Ես ամէն օր տեսնում էին մեր հիւրին, որ թէեւ դուրսն էր գիշերում, բայց առաւօտից մինչեւ ուշ գիշեր մեր տանն էր:

Ամէն օր մի քիչ աւելի էի ընտելանում, մտերմանում իր հետ, բայց նա՝ «պարոն Պարոյրը»՝ շարունակում էր մնալ ինձ համար մի հետաքրքրական եւ տանջող գաղտնիք:

Մի երեկոյ մեր տանը սովորականից աւելի մարդ էր հաւաքուել: Ես օգնում էի մօրս՝ հիւրերին թէյ տալու: Գոհ էի, որ այդ պատճառով կարող էի յաճախ ել ու մուտ անել հիւրասենեակը:

Պարոն Պարոյրը, ինչպէս միշտ, ներկաների ուշադրութեան կենտրոնն էր: Նա էր ամէնից շատ խօսողը, նրան էին լսում ամէնքը:

Ռուս-ճապոնական պատերազմի տարին էր: Թերթերը ամէն օր ռուսական նորանոր պարտութիւնների լուրեր էին հաղորդում: Ճապոնացիները, հէնց այդ օրերը, գրաւել էին Պօրտ Արտուրը, խլելով ռուսներից ահագին թւով գերիներ, զէնք ու ռազմամթերք:

— Եթէ ճապոններու խլած ադ մօսինի փամփուշտները մեր ձեռքն ըլլային, մենք լեռնէն վար չէինք իջներ: Ամէն մէկ զէնքի մէկ երկու հարիւր փամփուշտ հաղիւ ունէինք, ասում էր պարոն Պարոյրը, երբ ներս մտայ թէյի բաժակներով:

Այդ օրը պարոն Պարոյրը շատ յուզուած էր խօսում: Դժգոհութեան, մեղադրանքի, պահանջի շեշտ կար իր խօսքի եւ ձայնի մէջ:

Թէյի բաժակները հաւաքած ես վերադարձայ սեղանատուն եւ պատմեցի մօրս, որ մեր հիւրը շատ յուզուած է:

— Ի՞նչ անի խեղճը չբարկանայ. քրոջ տղան ի դուր տեղն է սպանուել, ասաց մայրս աւելի շատ ինքն իրեն խօսելով, քան թէ խօսքն ինձ ուղղելով:

— Ո՞վ, ո՞ւմ քրոջ տղան, հարցրի ես եւ, չգիտեմ ինչո՛ւ, անմիջապէս յիշեցի նախորդ ամառը Սասուն հասնելու փորձ արած հայդուկային խումբը եւ Անդրանիկի քրոջ որդու վախճանը:

Ինձ թւաց, որ միտքս տանջող հանելուկը լուծել եմ:

— Ոչինչ, ոչինչ, չգիտեմ, հէնց էնպէս ասացի, չփոթուած ասաց մայրս:

Ես կրկին հիւրասրահ վերադարձայ եւ սկսեցի ուշադրու-

թեամբ դիտել պարոն Պարոյրի դէմքը։ Նոյն դէմքն էր, որ տեսել էի նկարների վրայ, միայն մօրուքն էր աւելացել։ Նոյն աչքերը, նոյն ճակատը, նոյն թաւ բեղերը՝ Անդրանիկն էր։

Զարմանքից եւ ուրախութիւնից ինչ անելս չգիտէի։

Անդրանիկը մեր տա՞նը։

Սասո՛ւնն ուր, մեր տունն ուր։

Անկասկած էր, սակայն, որ մեր հիւրասրահում նստած «պարոն Պարոյրը» Անդրանիկն էր։ Էլ ուրիշ ո՞վ կարող էր այն պատմութիւններն անել, որ անում էր պարոն Պարոյրը։

Խեղճ մայրս դրեթէ սարսափեց, երբ ես վերադարձայ նրա մօտ եւ յաղթական կերպով յայտարարեցի, որ ես գիտեմ, որ մեր հիւրը Անդրանիկն է։

— Ձասե՛ս, մա՛տաղ, չասե՛ս, ո՛չ ոքի չասես,— թախանձում էր մայրս։

Հասկանում էի, որ ոչ ոքի պէտք չէր ասել, բայց այնպէս կ՚ուզէի առաջին իսկ հանդիպած ընկերոջս, մի բարեկամի կամ նոյնիսկ մի անծանօթի ասել, բառաչ.

— Գիտէ՞ք, պարոն Պարոյրը Անդրանիկն է։

Ինքս իմ աչքում մեծացել էի։ Ես մի այնպիսի բան գիտէի, որ իմ ընկերներից ոչ ոք չգիտէր, ես տեսել էի մի մարդ, որին ամէնքը պիտի ուզէին, բայց չէին կարող տեսնել։

Թատրական աշուղները երգում էին փողոցներում եւ բակերում—

«Անդրանիկը քաջ, իր ընկերներով,
Կ՚ուզէ պատերազմ, կը սպասէ դարնան»...

ԽԷՁՈՅԻ ԴԱՐԴԸ

Անցաւ մի երկու շաբաթ եւ մի օր պարոն Պարոյրը հրաժեշտ տուեց մեզ ու մեկնեց։

Նրա մեկնելուց յետոյ մեր տանը յաճախ խօսք էր լինում իր մասին։ Ծնողներիս եւ իմ միջեւ լռելեայն համաձայնութիւն էր կայացել։ Նրանք գիտէին, որ ես գիտեմ, թէ ո՛վ էր մեր խորհրդաւոր հիւրը, բայց երբեք զգալ չէին տալիս, որ ես գիտեմ, երբեք չէին արտասանում նրա իսկական անունը։ «Պարոն Պարոյրը» մնում էր պարոն Պարոյր մեզ համար։

Եւ ահա, մի օր, հայրս ճաշի վրայ պատմեց, որ իրեն գրել են Բաքուից, որ պարոն Պարոյրը մեկնել է այնտեղից եւ անցել սահմանը դէպի Եւրոպա:

Պարոն Պարոյրը անցել է սահմանը, ասել է թէ վտանգից ազատ է եւ ես կարող եմ ինձ տանջող դաղտնիքի բեռը բաժանել ուրիշ մէկի հետ:

Բայց ո՞ւմ հետ, ո՞ւմ կարելի է վստահել...

Խէչոյի, մեր խոհարար Խէչոյին:

Խէչօն եւ ես հին բարեկամներ էինք: Մենք իրար ճանաչել էինք շատ աւելի առաջ, քան թէ Խէչոյի մեր տունը ծառայութեան մտնելը:

Ծաղկաձորի Ռընդամալ գիւղից էր Խէչօն:

Կապուտակ Սեւանի ափերին լեռներով, անտառներով, ծաղիկներով, աղբիւրներով եւ որսով հարուստ մի անկիւնն է մեր աշխարհի Ծաղկաձորը:

Ամառը՝ շքեղօրէն պճնուած մի հարս է այդ լեռներում: Ձմեռը՝ իր ձիւնամրրիկով, բուք ու փոթորիկներով՝ դաժան, ցասկոտ մի ծերունի:

Թէեւ փոքր էի, երբ հօրեղբայրս մի ամառ ինձ տարաւ Ծաղկաձոր, բայց այդ գեղեցիկ բնութեան ինձ վրայ թողած տպաւորութիւնը մնաց անջնջելի:

Ես սիրում էի իմ հայրենի գիւղը, որտեղից մինչեւ այդ երբեք չէի հեռացել: Ընդարձակ, լայնածաւալ դաշտի մէջ, շրջապատուած բարձր լեռներով, որոնց վրայ վեհօրէն իշխում է Մասիսը եւ որոնց ետեւում աշխարհը վերջանում էր ինձ համար, փոշոտ ճամբաներով, պղտոր առուներով, խաղողի այգիներով եւ երկնասլաց բարդիներով մեր գիւղը:

Ծաղկաձորը ո՜րքան տարբեր աշխարհ էր ինձ համար: Այստեղ չկար մեր դաշտի ընդարձակ հարթութիւնը՝ լեռ ու ձոր, լեռ ու ձոր:

Հեռուից մեր գիւղին նայող լեռներն այնքան բարձր էին, այնպէս լերկ ու խոժոռ, իսկ այս սարերը կանաչ ու ծաղիկներով կամ խիտ անտառներով ծածկուած ու այնքան մօտիկ, որ թւում էր, թէ վազելով մինչեւ կատարները կարելի էր բարձրանալ: Մեր գիւղի պղտոր առուների փոխարէն այստեղ վճիտ աղբիւրներ կային հէնց Ծաղկաձորի փողոցներում: Եւ այս գիւղը այնպէ՜ս տարբեր մեր գիւղից իր լայն փողոցներով, փայտաշէն, մաքուր տներով, ճերմակ պատերով եւ փողոցների վրայ նայող լայն պատու-

հաններով։ Մեր գիւղի հողաշէն եկեղեցու փոխարէն այստեղ, գիւղի ծայրին կար սրբատաշ քարերով կառուցուած մի վանք, որի գմբեթի շուրջ, առաւօտից մինչեւ երեկոյ աղաւնիների երամներ էին դառնում։

Կաթնաղբիւրը, Աղաւնու վանքը, անտառի մթին շաւիղները,— այս ամէնը այնպէս տարբեր էր իմ հայրենի գիւղից։ Եւ մանաւանդ այդ տարօրինակ ռուսները, որոնց նմանը ես երբեք չէի տեսել։

Մեր գիւղում ես ռուսներ տեսել էի։

Ռուս էր մեր ոստիկանապետը՝ պրիստաւը, ռուս էին ուսադիրներով, պսպղուն կոճակներով եւ զրնգացող կօշիկներ հագած կողակները, որոնց ձեռքին միշտ մտրակ կար, ռուս էր հաստատիր, դանդաղաքայլ պօպը՝ ռուս տէրտէրը՝ որի բամբ ձայնը մեզ, գիւղի երեխաներիս նոյնքան վախ էր ազդում, որքան կողակի կեռ թուրն ու մտրակը։

Ծաղկաձորում ես զարմանքով ուրիշ տեսակ ռուսներ տեսայ։ Երկար մօրուքով եւ երկարավիզ կօշիկներ հագած այս ռուսները, մեր գիւղացիների պէս, ուսերին բահ ու դերանդի դրած դաշտ էին գնում։ Կանայք ու աղջիկներ, գոյնզգոյն թաշկինակներով գլուխները կապած, գոյլերով ջուր էին կրում կամ կով կթում մեր գիւղի հարսների եւ աղջիկների պէս։ Փողոցներում մեզ պէս երեխաներ էին խաղում։

«Էսպէս էլ ռո՞ւս կը լինի», մտածում էի ես եւ չէի կարողանում լուծել այն հարցը, թէ ո՞րն է իսկական ռուսը — մեր գիւղի ոստիկանապետն ու կողա՞կը, թէ մեր գիւղացիների պէս բահն ու դերանդին ուսերին դաշտ գնացող այս երկարամօրուք մարդիկ։

Ծաղկաձորումն էր, որ ես առաջին անգամ հանդիպեցի ուընդամալցի Խէչոյին։ Հօրեղբօրս տան ծառան էր Խէչօն։ Հօրեղբօրս տանը այնքան էին ընտելացել Խէչոյին, որ նա դադարել էր սոսկ ծառայ լինելուց եւ դարձել էր ընտանիքի մի անդամ։ Ինձ համար Խէչօն մի հէքիաթային արարած էր, որովհետեւ հօրեղբօրս հետ, որսորդական հրացանն ուսից կախ, որսկան շունն առջեւը ձգած, որսի էր գնում։

Խէչօն այնքա՜ն բան գիտէր,— Աղաւնու վանքի պատմութիւնը, Կաթնաղբիւրի հէքիաթը, մեղր դողացող արջի պատմութիւնը եւ դեռ էլ ինչ ասես որ չգիտէր Խէչօն։

Ու սրինդ նուագել մեղմ, տխուր ելեւէջներով։

Տարիներ յետոյ, երբ Խէչօն մեր տունը ծառայութեան մտաւ, ինձ թուաց, որ նա Ծաղկաձորը փոխադրեց մեր խոհանոցը, ուր իր հետ ապրում էին դիւղին պատմութիւնները, հէքիաթները, որսորդական արկածները, Կաթնաղբիւրն ու Աղաւնու վանքը եւ մելամաղձոտ սրինգը:

Քաղաքում ապրում, չնչում էր դիւղով:

Գիւղում թողել էր կնոջը, երկու զաւակներին եւ ծերունի հօրը:

Ամառները, երբ մենք մէկ երկու ամիս ամառանոց էինք գընում, Խէչօն վերադառնում էր Ռընդամալ՝ օգնելու հօրը հունձի եւ կալ ու կուտի մէջ: Իրենց արտի բերքը չէր կերակրում ընտանիքը եւ աշնան Խէչօն քաղաք էր դալիս վաստակի:

Տարին երկու անդամ ծանր մտահոգութիւններ ունէր Խէչօն: Մէկ աշնանը, երբ պէտք էր հողի հարկը վճարել եւ մէկ էլ ձմեռուան կէսին, երբ իրենց արտից եկած ցորենը սպառւում էր ու պէտք էր տան համար ցորեն դնել, յաջորդ հունձին հասնելու համար:

Այդ երկու տագնապներից դուրս Խէչօն խաղ ու խնդումով էր աշխատում: Երեկոները, երբ օրուայ գործը լրացնէր, նստում էր խոհանոցում, մեզ, երեխաներիս իր շուրջն առնում եւ հէքիաթներ պատմում, կամ հանում իր սրինգը եւ մելամաղձոտ, տըխուր ելեւէջներով մեզ կախուած պահում իր սրինգից:

Արսպէս էր մեր Խէչօն:

Խէչօն ամէնից ապահով մարդն էր, որին կարելի էր ասել թէ ո՞վ էր մեր տան հիւրը: Նա էլ էր տեսել պարոն Պարոյրին, առանց կասկածելու, թէ ո՞վ էր պարոն Պարոյրը եւ ես վստահ էի, որ Խէչօն չի դաւաճանի, դուրսը ոչ ոքի չի ասի:

Որոշեցի Խէչոյի հետ բաժանել իմ թանկ գաղտնիքը եւ նոյն օրը, երբ պարոն Պարոյրի եւրոպական սահմանն անցնելու լուրը ստացուեց, ես մտայ խոհանոցը:

— Խէչօ:

— Հա՛մմէ:

— Խէչօ, գիտե՞ս թէ դու ում համար կերակուր էիր եփում, գիտե՞ս, թէ ով էր պարոն Պարոյրը:

— Զէ... ընչի՞ որ, տարակուսանքով հարցրեց Խէչօն:

— Անդրանիկն էր,— մէկէն պոռթկացի ես:

— Եա, ո՞նց թէ,— չուարած հարցրեց Խէչօն:

— Հապա՛, Անդրանիկն էր, Սասունից էր եկել,— վրայ բերի ես:

Խէչօն մի պահ լուռ մնաց, ապա առաջին վայրկեանի շփոթութիւնից ուշքի եկած, դիմեց ինձ.

— Ընչի՞ ընձի էն կախ*) չասիր,— հարցրեց կոտրուած ձայնով:

— Որ ասէի, ի՞նչ կ'անէիր, Խէչօ:

— Ի՞նչ կ'անէի... Խէչօն մի պահ մտածեց, ծոծրակը քորեց եւ ապա վճռական կերպով ասաց.

— Կը պառկէի դրամ չէմքին, կ'ասէի՝ «քէլէ իմ վրայէն, քէ զուրբան». ես էնոր հոգուն զուրբան: Ախ, պստիկ տղայ, էս ի՞նչ դարդ էր որ դու գցեցիր իմ սիրտը:

Իր պաշտամունքն արտայայտելու այդ անպաճոյճ ձեւը յուզիչ էր:

Ինձ յանցաւոր զգացի, որ զրկել էի Խէչոյին այդքան մեծ երջանկութիւնից:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԺԸՆԵՒՈՒՄ

Անցաւ մի քանի ամիս:

Այդ ամառ մենք ամբողջ ընտանիքով գնացինք արտասահման, Զուիցերիա, ուր գտնւում էր հայրս, որ մեզնից մօտ երկու ամիս առաջ էր մեկնել Թիֆլիսից: Զուիցերիայում մենք կանգ առանք Ժընեւում, ուր գտնւում էր «Դրօշակ»ի խմբագրատունը: Կովկասում «Դրօշակ»ը մենք կարդում էինք գաղտնի եւ ես, իմ տարիքի պատանիներից շատերի նման գիտէի, թէ ի՛նչ էր բարակ, ծխախոտի թղթի նման բարակ թղթի վրայ տպագրուած եւ գաղտնի, ամենամեծ զգուշութեամբ ձեռքէ ձեռք անցնող այդ թերթը: Կարդացել էի «Դրօշակ»-ում անունները Քրիստափոր Միքայէլեանի, Է. Ակնունու, Սիամանթոյի, Մ. Վարանդեանի, Հայ Գուսանի՝ որ Աւ. Իսահակեանն էր եւ Ղարիբի, որ դիտէի հօրս կեղծանունն էր:

Գիտէի, որ դրանցից Քր. Միքայէլեանը չկայ այլեւս:

Կովկասից հօրս մեկնելուց մօտ մի ամիս առաջ, ապրիլին մի հեռագիր եկաւ հօրս հասցէին: Ես եւ մայրս տունն էինք, երբ

*) կախ՝ ժամանակ:

հայրս բացեց հեռագիրը, կարդաց, մի վայրկեան շշմած երեւոյթ ստացաւ եւ ապա բարձրաձայն հեկեկաց։

Ապշած մօրս հարցումին, թէ ի՞նչ է պատահել, հայրս պատասխանեց, որ Քրիստափորը սպանուել է ռումբի պայթիւնով։ Այդ էր դուժում Ժընեւից ուղարկուած հեռագիրը։

Շատ չանցած՝ հայրս մեկնեց Եւրոպա, կարդադրելով որ մենք հետեւենք իրեն, երբ սկսուի իմ դպրոցի ամառային արձակուրդը։

Եւ ահա մենք Ժընեւում ենք, որտեղից մեզ համար անծանօթ ու խորհրդաւոր ճանապարհներով գալիս եւ մեզ էր հասնում բարակ թղթի վրայ տպագրուած «Դրօշակ»-ը եւ որտեղից ուղարկուած այն հեռագիրը արցունք քամեց հօրս աչքերից։

Հասկանալի է, ուրեմն, այն պատանեկան հետաքրքրութիւնը, որով ես սպասում էի ժամ առաջ տեսնել «Դրօշակ»-ի խմբագրատունը։ Ժընեւ մեր հասնելու յաջորդ օրը հայրս մեզ տարաւ «Դրօշակ»-ի խմբագրատունը։

Մի քիչ ոլորապտոյտ, երկու կողմից պարտէզներով շրջապատուած վիլլաների միջով էր անցնում այն ծառաղարդ փողոցը, որ կոչւում էր Շըմէն դը Ռոզրէ եւ որի ծայրում, Բօն դեսի ափին գտնւում էր «Դրօշակ»-ի խմբագրատունը։

Ոչ ընդարձակ պարտէզի գրեթէ մէջտեղը, մի քիչ աւելի փողոցին մօտիկ բարձրանում էր եռայարկանի մի կոկիկ շէնք։ Շէնքի առաջին յարկը յատկացուած էր «Դրօշակ»-ի խմբագրութեան, երկրորդ յարկում գտնւում էր «Դրօշակ»-ի դրաշարատունը, իսկ երրորդ յարկի փոքրիկ բնակարանում ապրում էր Տիար Անտոնը։

Ի բեռ ուրախութիւն մեր ամբողջ ընտանիքի, «Դրօշակ»-ի խմբագրատանը գտնուողների մէջ մենք տեսանք նաեւ Անդրանիկին։ Մենք նրան հանդիպեցինք հարազատի նման։ Նոյնքան ջերմութեամբ ընդունեց մեզ Անդրանիկը։ Զարմանալի էր, որ ես առաջին վայրկեանից Անդրանիկին իր սեփական անունով սկսեցի կոչել, եւ Անդրանիկն էլ ընդունեց այդ այնպէս, ինչպէս մի մեծ եղբայր պիտի ընդունէր որ իր փոքր եղբայրը սեփական անունով կոչէր իրեն։ Հոգուս խորքում զգում էի, որ Անդրանիկին Պարոյր կոչելը կեղծիք է, մինչդեռ ես պիտի ուզէի իր իսկական անունով կոչել նրան, որի անունը Կովկասում բոլորի շրթունքի վրայ էր եւ որ սիրելի էր ամէնքին։ Հասկանալի էր այն անհրաժեշտութիւնը, որ ստիպել էր Թիֆլիսում Պարոյր անունով կոչել Անդրանիկին, բայց այստեղ այդ անհրաժեշտութիւնը չկար եւ

ես հպարտ ու երջանիկ էի, որ կարող եմ Անդրանիկին Անդրանիկ կոչել եւ նա էլ թոյլ էր տալիս որ այդպէս լինի:

Ինձ տարեկից կովկասահայ պատանեկութեան մեծ մասի նման ես էլ խանդավառուած էի մեր ազատագրական շարժումով, ես էլ տեղեակ էի, որոշ չափով, այն անց ու դարձերին, որ տեղի էին ունենում Կովկասում, օգնելու համար արեւմտահայ ազատագրական շարժման: Բայց այդ բոլորի մասին իմ գիտցածը շատ բան չէր: Ռուսական դիմնազիայի հայ աշակերտական դաղտնի միութեան մէջ մենք կարդում էինք Բաֆֆու վէպերը, «Դրօշակ» ամսագիրը, «Դրօշակ»ի հրատարակած յեղափոխական պատմուածքները յոյն, բոլդար եւ սերբ ազատագրական շարժումների պատմութիւնից եւ Ղարիբի պատմուածները մեր ազատագրական շարժման պատմութիւնից:

Եւ այդքանը հերիք էր, որպէսզի «Դրօշակ»-ի խմբագրատունը եւ այնտեղ դտնուող անձերն ու սիրող մթնոլորտը հարազատ լինէին ինձ համար:

Քրիստափոր Միքայէլեանին չէի տեսել երբեք, բայց այնքան էի լսել նրա մասին, որ մի քանի ժամ «Դրօշակ»-ի շէնքում անցնելուց յետոյ, ինձ սկսեց թուալ, որ ես տեսել եմ Քրիստափոր Միքայէլեանին եւ հիմա «Դրօշակ»-ի շէնքում սաւառնում է նրա ոգին:

Տիար Անտոնը, որ բնակւում էր «Դրօշակ»-ի շէնքում, վարում էր շէնքի հոգատարութիւնը: Կարելի էր առաջին իսկ հանդիպումից նկատել, որ նա կատարում էր իրեն վստահուած շէնքի խնամքը այնպէս, ինչպէս Ջերմեռանդ հաւատացեալը սրբազան երկիւղածութեամբ հոգ է տանում իր խնամքին յանձնուած տաճարին:

«Դրօշակ»-ի շէնքը ցոյց տալուց յետոյ, տիար Անտոնը տարաւ մեզ ցոյց տալու «Դրօշակ»-ի փոքրիկ պարտէզը: Տիար Անտոնը բացատրեց մեզ, որ պարտէզի խնամքը տանելիս է եղել Քրիստափորը, որ ծառ ու ծաղիկ սիրահար է եղել: Նա մեզ առաջնորդեց դէպի պարտէզի մի անկիւնը, ուր երեւում էին երկու փոքրիկ բլրակներ, մէկը հաղիւ երկու ոտք, իսկ միւսը երեք ոտք բարձրութեամբ:

— Ասոնք Մեծ ու Պզտիկ Արարատներն են, զոյս Քրիստափոր իր ձեռքով շինած է,— երկիւղած պաշտամունքով յայտնեց մեզ տիար Անտոնը:

Այնուհետեւ ես ամէն օր գնում էի «Դրօշակ»-ի խմբագրատունը, ուր միշտ հանդիպում էի միեւնոյն անձերին, որոնց հան-

դիպել էի մեր առաջին այցելութեան օրը: Այնտեղ էր միշտ նաեւ Անդրանիկը, որին հանդիպելը մեծ հաճոյք էր ինձ համար:

Այդ տարիները Կովկասում սկսել էր ընդհանրանալ հեծանիւը, որ սակայն մատչելի չէր ամէն մի պատանու համար, մինչդեռ այստեղ ես տեսնում էի անթիւ աշակերտներ, ուսանողներ, բանուորներ կամ պարզ քաղաքացիներ, որոնք ճամբորդում էին հեծանիւով: Ես նոյնիսկ տեսայ զուիցերիական բանակի ամբողջ զօրամասեր, որոնք հեծանիւով էին ճամբորդում: Ժընեւի փողոցները այնքան հարթ ու ողորկ էին, համեմատած խոշոր քարերով սալայատակուած Թիֆլիսի փողոցների հետ, որ անտարակոյս հաճոյք պիտի լինէր Ժընեւի փողոցներում հեծանիւ քշելը: Ու ես որոշեցի հեծանիւ նստել սովորել:

«Դրօշակ»-ի շէնքից ոչ հեռու, հազիւ երկու-երեք հարիւր քայլի վրայ, Բօն դետի ափին կար մի ընդարձակ, պարապ ու հարթ տարածութիւն: Հիանալի տեղ հեծանիւ քշել սովորելու համար:: Վարձեցի մի հեծանիւ եւ սկսեցի վարժութիւն անել:

Անդրանիկը հետաքրքրուեց, թէ ես ի՞նչ եմ անում: Բացատրեցի:

Անգործութիւնից ձանձրացած Անդրանիկը ինքն էլ ուզեց հեծանիւ վարել սովորել:

— Հատ մըն ալ ինծի համար վարձէ եւ վաղը միասին երթանք,— ասաց նա մի օր:

Յաջորդ օրը երկու հեծանիւներով եկայ «Դրօշակ»-ի խմբագրատունը եւ Անդրանիկի հետ միասին գնացինք Բօնի ափը: Բացատրեցի Անդրանիկին հեծանիւի կազմութիւնը, ինքը նստեց հեծանիւը, ես կողքից քայլելով օգնեցի որոշ տարածութիւն քշելու եւ ապա, իր թելադրութեամբ, ազատ ձգեցի իրեն, որ մենակ քշի: Հազիւ մէկ-երկու տասնեակ քայլ անցած, Անդրանիկը հեծանիւի հետ միասին գլորուեց գետին եւ իր հնչուն, լիաթոք ու այնքան հաճելի ծիծաղով, որ լսել էի Թիֆլիսում, ծիծաղել սկսեց: Ապա ոտքի ելաւ, ինքն իրեն շտկեց եւ նորից նստեց հեծանիւը, նորից կրկնեցինք միեւնոյն փորձը մի քանի անգամ եւ միշտ միեւնոյն հետեւանքով:

— Ես աս սատանայական բանը սովրիլ չեմ կրնար,— յայտարարեց ինձ, թոթուեց իր հագուստները եւ քայլեց դէպի «Դրօշակ»-ի շէնքը:

ԱՍ ՔՈՒ ԸՐԱԾԴ ԿԸ ՀԱԻՆԻ՞Ս

Շատ չանցած մենք ամբողջ ընտանիքով մեկնեցինք ամարանոց, Վօ կանտոնի Բալէդ գիւղը: Մեկնելուց առաջ հայրս խօսք առաւ Անդրանիկից մի քանի օրով մեր հիւրը լինել այդ գիւղում: Անդրանիկը խոստացաւ անպայման գալ:

Բալէդը Զուիցերիայի սքանչելի վայրերից մէկն է: Ասենք Զուիցերիայի ո՞ր անկիւնը սքանչելի չէ:

Անտառապատ լեռներից մէկի լանջերին է փռուած Բալէդը, որի առջեւ բացւում է մի հիանալի տեսարան դէպի ձորը եւ հանդիպակաց լեռները: Զուիցերիայից դէպի Իտալիա տանող երկաթուղագծի Վալորը կայարանը պիտի իջնել եւ ապա երկու-երեք մղոն մայրիի հոյակապ անտառի միջով անցնող ոլորապտոյտ ճամբայով բարձրանալ Բալէդ:

Յուլիսի կէսին էր, որ մի օր հայրս ստացաւ մի հեռագիր, որ կարդալուց յետոյ սկսեց ծիծաղել:

— Տեսէք, թէ ի՞նչ է հեռագրել Անդրանիկը. «Հրամայում եմ ժամը չորսին դիմաւորել ինձ Վալորը կայարանում. Անդրանիկ»: Ի՞նչ պիտի մտածի հեռագրական պաշտօնեան,— ո՞վ է այս մարդը, որ Զուիցերիայում մի օտարականի հրաման է ուղղում:

Ժամը չորսից առաջ Վալորը կայարանն էինք հայրս եւ ես:

Գնացքը հասաւ զուիցերիական ճշդապահութեամբ: Անդրանիկը ժպտադէմ իջաւ գնացքից եւ երբ տեղեկացաւ, որ մինչեւ մեր բնակած գիւղը երկար ճանապարհ չէ, ուղեց որ կառք չնստենք, այլ քայլելով գնանք: Եւ ղրուցելով ճանապարհ ընկանք դէպի Բալէդ:

Անտառի միջից բացուած ճանապարհի երկու կողմը բարձրանում էին հաստաբուն, բարձրակատար, շքեղ մայրիներ: Մի տեղ, ուր անտառը աւելի խտացաւ, Անդրանիկը մի ուշադիր հայեացք նետեց ծառերին եւ դարձաւ հօրս.

— Աւետիս, եթէ Սասունն ասանկ անտառներ ունենար, մենք Սասունէն վար չէինք իջներ: Սասնոյ անտառներու ծառերը քիչ են եւ կարճահասակ, հաղիւ մարդու մը հասակ կրնան ծածկել:

Ասաց ու մի պահ լռեց, երեւի իր յուշերը տարան իրեն դէպի Սասունի կարճահասակ ու նօսր անտառները, որոնք լաւ չէին պաշտպանել Անդրանիկին եւ իր զինակիցներին:

Շատ չանցած հասանք Բալէդ:

Երեկոյեան ընթրիքից յետոյ, երբ հաւաքուեցինք հիւրա-

սենեակում, Անդրանիկը մռայլուեց եւ դարձաւ սակաւախօս։ Հայրս խսկոյն նկատեց այդ փոփոխութիւնը եւ դիմեց Անդրանիկին.

— Ի՞նչ պատահեց քեզ, Անդրանիկ, տրամադրութիւնդ տեղը չի երեւում։

— Բան մը պատահած չէ, պատասխանեց Անդրանիկը։

— Չէ, մի բան պատահել է, դու այդպէս չէիր, երբ կայարանից եկանք,— պնդեց հայրս։

— Աղէկ, ասեմ. ես քու ըրածդ կը հաւանի՞ս, Աւետիս։

— Ի՞նչ եմ արել ես։

— Չե՞ս դիտեր թէ ինչ ըրած ես,— աւելի ու աւելի տաքանալով վրայ բերեց Անդրանիկը։ Ես քեզի ասի, թէ Հաղբէն զարնուեցաւ։

— Ոչ, չասացիր, պատասխանեց հայրս ժպտալով։

— Ապա ինչո՞ւ «Դրօշակ»-ին մէջ գրած ես, թէ Հաղբէն զարնուեցաւ։

— Կռիւ էր, այնպէս չէ՞, Անդրանիկ, եւ Հաղբէն կարող էր զարկուել։

— Այո՛, կրնար, բայց չզարնուեցաւ, իսկ դուն գրած ես, թէ զարնուեցաւ։ Հիմա այդ «Դրօշակ» կ'երթայ Սասուն, հոն կը կարդան եւ կ'ըսեն, թէ Անդրանիկ դացեր է Եւրոպա եւ սուտ կը խօսի։ Եղա՞ւ սա քու ըրածդ, գրեթէ վրդովուած յայտարարեց Անդրանիկ։

Մեզ համար պարզուեց Անդրանիկին յուզում պատճառած խնդիրը։

Անդրանիկը իր պատմած բաղմաթիւ գրուագների շարքին պատմել էր նաեւ հետեւեալ դէպքը։

Սասունի կռիւների ժամանակ Թուրք բանակը յարձակուել է Գոմեր գիւղի վրայ, ուր ապաստանած է եղել հայդուկների մի խումբ Անդրանիկի հրամանի տակ։ Թուրքական դերազանց ուժերի ճնշման տակ հայդուկների խումբը ստիպուած է լինում քաշուել դէպի լեռնային բարձունքները։ Թրքական բարբարոսութիւններին չենթարկուելու համար Գոմերի բնակչութիւնն էլ հայդուկների հետ քաշւում է լեռները, նախապէս կրակի տալով գիւղի տները, որպէսզի թշնամին ապաստան ու պարէն չգտնի գիւղում։

Աճապարանքի մէջ գիւղացիներին չի յաջողւում կրակի տալ բոլոր տները։

Չվառուած տների մէջ է լինում նաեւ գիւղի քահանայի տու-

նը։ Նահանջող բազմութեան մէջ է իր անվախութեամբ յայտնի մի որբեւայրի կին, Հաղրէ անունով, որ ինչ որ առիթով ոխ է պահել գիւղի քահանայի դէմ։ Հաղրէն նկատելով որ իր ատելի քահանայի տունը կրակի տրուած չէ,— «Վա՛յ, իրիցու տուն մնաց», բացագանչելով վազում, իջնում է գիւղը, հրդեհում քահանայի տունը եւ թշնամու կրակի տակ դալիս կրկին միանում է նահանջող բազմութեան։

Անդրանիկի պատմած այս փոքրիկ դրուագը հայրս զարդարել էր «բանաստեղծական սուտով» Անդրանիկին նուիրուած «Հաղրէն» վերնագրով մի պատմուածքի մէջ։

Հօրս այդ պատմուածքում Հաղրէն ներկայացուած է իբրեւ երեք անգամ ամուսնացած եւ երեք անգամ այրիացած, առնական շարժ ու ձեւերով մի անզաւակ պառաւ կին։ Գոմեր գիւղի կանայք երբ չար կատակով հեգնում էին անզաւակ Հաղրէի ամլութիւնը, Հաղրէն, վրդովուած պատասխանում էր.

— Հողս ձեր գլխին, գեղի զըմմէն ճըժեր իմը չէ՞ն։

Ասում էր, բայց դէպի փոքրիկ ճըժերն անտարբեր էր, սիրում էր միայն ընտիր-ընտիր հերոսներին, մի Սերոբ, մի Մուրադ եւ վերջին օրերում երազում էր Անդրանիկին, որին տակաւին չէր տեսել։

Ահա այս Հաղրէն է, որ կրակ է տալիս Գոմեր գիւղը ամէն անգամ, երբ թուրքերը յարձակւում են Գոմերի վրայ։

Ահա այս Հաղրէն է, որ երազում է Անդրանիկի մասին եւ երբ գիւղի կանայք հարցնում են.— Հաղրէ՛, նորէն ե՞րբ պիտի վառես գիւղը, Հաղրէն պատասխանում է.

— Այ, էն սարերի ասլանը երբ ցած գայ եւ նշան անի՝ կը վառեմ։

Սարերի Ասլանը Անդրանիկն էր։

Եւ ահա մի օր Սարերի Ասլանը իջնում է Գոմեր։

Նորից կռիւ է Գոմերի վրայ, անհաւասար կռիւ եւ գոմերցիները նորից կրակ են տալիս իրենց տները ու հայդուկների հետ քաշւում են լեռը։

Հաղրէն նկատում է որ իրեն համար ատելի քահանայի տունը վառուած չի, թշնամու գնդակների տարափի տակ յետ է դառնում գիւղը, կրակ տալիս քահանայի տունը եւ անվնաս վերադառնում գիւղից վեր դիրք բռնած հայդուկների մօտ։

Հաղրէն տեսնում է, որ կռուող հայդուկներից մէկի առջեւ պատը ցածր է, եւ կուրծքը անպաշտպան։

— Վայ, քոռանայ Հաղրէն, բացագանչում է պառաւը, եւ

մի ահագին քար գրկած, տանում է դնելու այդ հայդուկի կրծքի առջեւ: Հէնց այդ վայրկեանին թշնամու դնդակը տապալում է Հազրէին:

Այն հայդուկը, որի կուրծքն էր ուզում պատսպարել Հազրէն, կռանում է, քնքշութեամբ բռնում պառաւի գլուխը եւ իր ծնկանը դնում:

«Պառաւն աչքերը կխարաց, ձեռները տարածեց եւ մէկին փնտռում էր:

— Ի՞նչ կ'ուզես, Հազրէ:

— Սարերի... Ասլանին... Անդրա... լաւ...

Նա չէր իմանում, որ իր գլուխը գրկողը հէնց Սարերի Ասլանն է, եւ ինքն, առանց ճանաչելու, նրա կրծքի առաջ էր քար դնում, նրան էր զոհ դնացել: «Ես եմ», հազիւ մրմնջաց յուզուած տղամարդը. հերոսի աչքերը թացացան, նա աւելի կռացաւ պառաւի վրայ եւ որդու պէս համբուրեց նրա սառն ճակատը:

Հազրէի բազուկները յետին թափով փարեցին նրա պարանոցով եւ նա հազիւ մրմնջաց.

— Ես էլ... մատաղ... Անդրան... Սարերի Ասլան... լաւ... իմ լաւ...»

Այսպէս էր նկարագրել Հազրէին հայրս:

Հօրս այդ պատմուածքը հրատարակուել էր «Դրօշակ»-ի վերջին թիւի մէջ, որ լոյս էր տեսել մի քանի օր առաջ եւ Անդրանիկը կարդացել էր այն, մեր բնակած գիւղը գալուց առաջ:

Անդրանիկը հազիւ գրել կարդալ գիտէր: Նրա դպրոցական տարրական կրթութիւնն էլ, հաւանաբար, լրիւ չէր եղել: Անդրանիկը պարզ էր ու անմիջական իր մտածումի եւ այդ մտածումը արտայայտելու մէջ: Նրա համար անըմբռնելի էր, թէ ի՞նչպէս կարելի է տպագրուած խօսքի մէջ շեղուել իրականութիւնից: Նրա համար բանաստեղծական անվնաս սուտն իսկ ծանր մեղանչումն էր ճշմարտութեան դէմ:

Իր պատմածը մի փոքրիկ, աննշան փաստ էր: Հազրէն, թշնամու դնդակների տակ վառել էր իրենց գիւղի քահանայի տունը եւ ապա եկել ու մխացել նահանջող բազմութեան:

Հազրէն կարո՞ղ էր կռուող հայդուկներից մէկի կրծքի առջեւ քար դնել, պաշտպանելու համար հայդուկին թշնամու դնդակներից: Այո՛, կարող էր, բայց այդպիսի բան չի արել:

Կռիւ էր եւ Հազրէն կարո՞ղ էր սպանուել այդ կռուում: Այո՛, կարող էր, բայց չի սպանուել:

Հայրս բաւական դժուարութիւն ունեցաւ բացատրելու եւ,

որքան կարելի է ըմբռնելի դարձնելու Անդրանիկի համար «գեղարուեստական սուտը» դրականութեան մէջ։ Անդրանիկը հանդիսատացաւ եւ վերստացաւ բարեկամական շրջանակում իր սովորական բացսիրտ, նոյնիսկ զուարթ տրամադրութիւնը։

Անդրանիկը սքանչելի պատմող էր։ Իբրեւ պատմող կարելի էր հաւասար դնել Յովհաննէս Թումանեանի, հօրս եւ, թէեւ մի քիչ կակաղ, բայց նոյնպէս հիանալի պատմող Աւետիք Իսահակեանի հետ։ Անդրանիկի պատմածները, լինէին դրանք իր յեղափոխական, ռազմական անցեալից եւ կամ կեանքի առօրեայից, եթէ բառացի դրի առնուէին, կը լինէին մի մի դրական անթերի պատմուածքներ։ Իր պատմած ամենազեղեցիկ պատմութիւններից մի քանիսը Սասունի — լաւ չեմ յիշում Շէնի՞ք, թէ Սեմալ գիւղի Ռէս Խէչոյի կեանքի դրուագներն էին։ Սիրուն էր մանաւանդ այն պատմութիւնը, թէ ինչպէս Ռէս Խէչօն պատժել էր իր վեթակներից մեղր գողացող արջին։

Թիֆլիսում Անդրանիկը պատմել էր Աղբիւր Սերոբին դաւադրութեամբ սպանող քիւրդ Բըշարէ Խալիլ բէգի սպանութիւնը, կատարուած իր՝ Անդրանիկի՝ ձեռքով։

Հազրէի շուրջ տեղի ունեցած միջադէպի երեկոյեան, մի քիչ աւելի ուշ, երբ Անդրանիկի տրամադրութիւնը լաւացել էր, մայրս խնդրեց, որ Անդրանիկը կրկին պատմի Բըշարէ Խալիլի սպանութիւնը։ Ես չեմ յիշում որեւէ դէպք, երբ Անդրանիկը մերժած լինէր մօրս խօսքը։ Նա վերաբերում էր մօրս ինչպէս հարազատ, սիրելի քրոջ։ Ուստի մօրս խօսքը երկու անել չտուեց եւ սկսեց Բըշարէ Խալիլի սպանութեան պատմութիւնը, որի էական մասը հետեւեալն էր.

Տեղեկանալով որ Բըշարէ Խալիլը իր մի քանի խուլամներով ինչ որ մի տեղից իր գիւղն է վերադառնում, Անդրանիկը որոշում է իր հայդուկային խմբով դարան մտնել եւ սպանել այդ արիւնռուշտ գազանին։ Անդրանիկի կարգադրութեամբ իր զինակիցները պիտի մաքրէին Խալիլի խուլամների հաշիւը, իսկ Խալիլի դատաստանը պիտի ձգէին իրեն՝ Անդրանիկին։

Հայդուկները իրենց դարաններից հրացանի են բռնում խուլամներին, մինչ քրդերի խմբի առջեւից ձիաւարող Խալիլը արագ քշում է իր նժոյգը ազատուելու համար հետապնդումից։ Երբ Խալիլը հասնում է այն դիրքին, ուր դարան մտած է լինում Անդրանիկը, վերջինս նշան է բռնում Խալիլին եւ թէեւ վրիպում է, բայց վիրաւորում է Խալիլի ձիուն, որ դետին է տապալւում։ Խալիլն ընկնում է իր ձիու տակ եւ չէ կարողանում ոտքի բարձրա-

նալ, ղէնքի դիմելու համար։ Անդրանիկը դուրս է ցատկում իր դարանից, չոքում Խալիլի կրծքին, քաշում, նետում է նրա վիզը փաթաթուած մետաքսէ թաշկինակը եւ Խալիլի մաղերից բռնելով, Խալիլի սեփական կեռ դաշոյնով*) կտրում նրա գլուխը։

Ահա այդ պատմութիւնն էր, որ կրկին պատմել սկսեց Անդրանիկը։

Պատմելիս Անդրանիկը սովորաբար այնքան աշխոյժ, այնքան ոգեւորութիւն էր դնում իր խօսքի մէջ, որ ունկնդիրներին թւում էր, թէ իրենց աչքի առջեւն է կատարւում նկարագրուած դէպքը։ Այս անգամ էլ Անդրանիկը ոգեւորութեամբ էր պատմում մեզ արդէն ծանօթ դրուագը։

Եւ ահա, երբ հասաւ այնտեղ, ուր նկարագրում էր, թէ ինչպէս ինքը բռնել է Խալիլի մաղերից եւ կտրել նրա գլուխը, ես յանկարծ զգացի, որ վեր եմ բարձրանում իմ նստած աթոռի վերայից ու միաժամանակ հնչեց մօրս սրտապատառ ճիչը։— «Ամա՛ն, Անդրանիկ, տղայիս մի սպանիր» եւ այդ ճիչին յաջորդած Անդրանիկի լիաթոք, հնչուն ծիծաղը։

Իր պատմութիւնով ոգեւորուած Անդրանիկը իմ մաղերից բռնած փորձել է ցոյց տալ, թէ ինչպէս է կտրել Խալիլի գլուխը, սարսափի մատնելով խեղճ մօրս։

Երկու օր Անդրանիկը մեր հիւրը եղաւ Բալէդում, երկու օր հօրս հետ թափառեց Բալէդի անտառներում, լեռներում ու ձորերում, եւ ամէն տեղ իրեն դրաւողը եղաւ ոչ թէ զուիցերիական սքանչելի բնանկարի գեղեցկութիւնը, այլ այն, թէ ռազմական ինչ առաւելութիւններ պիտի ներկայացնի այդ բլուրը, կամ այն դագաթը, եթէ այս վայրերը կռուի դաշտի վերածուեն։

Երբ սեպտեմբերին մենք ժընեւ վերադարձանք, Անդրանիկը այնտեղ չէր։

Նա մեկնել էր Բուլղարիա, ուր ծրագրել էր հաստատել իր բնակութիւնը։

---

*) Այդ դաշոյնը Անդրանիկը նուիրել է Հ. Յ. Դաշնակցութեան եւ այժմ գտնւում է Դաշնակցութեան թանգարանում։

ՊԱՏԵՐԱԶՄԸ

Անցաւ ինը տարի։

1914–ի օգոստոս ամիսն էր։

Արդէն սկսուել էր Համաշխարհային Առաջին Պատերազմը, որին Ռուսաստանը մասնակցում էր ճակատելով Գերմանիայի եւ Աւստրեւ-Հունգարիայի դէմ։

Թէեւ Թուրքիան դեռ պատերազմի մէջ չէր մտել, բայց ոչ ոքի մտքում կասկած չկար, որ վաղ թէ ուշ Թուրքիան էլ կռուի մէջ պիտի մտնի։

Եւ ահա, օգոստոսի վերջերը Բուլղարիայից Թիֆլիս եկաւ Անդրանիկը, որ իջեւանեց մեր տանը։ Մեր ընտանիքը նրան ընդունեց հարազատի նման, որին երկար տարիներ չէինք տեսել եւ որին կարօտել էինք ամէնքս։

Կովկասում շարժում էր սկսուել կազմակերպելու հայ կամաւորական դնդեր, օժանդակելու ռուս բանակին եւ, մասնաւորապէս, պաշտպանելու արեւմտահայութիւնը Թուրքական հաւանական բարբարոսութիւններից։ Այդ շարժումը վարում էր ականաւոր հայ քաղաքական գործիչներից կազմուած Ազգային Բիւրօն։

Անդրանիկը Թիֆլիս հասնելուց յետոյ այդ շարժումը սկսեց աւելի ճեւ ու կերպարանք ստանալ։ Անդրանիկը մի քանի անգամ տեսակցութիւններ ունեցաւ ռուսական Կովկասեան Բանակի սպայակոյտի վարիչների հետ։

Շատ չանցած, մեր ընակած տան, Բերութեան փողոց թիւ 60–ի դիմացի շէնքում բացուեց հայկական «շտաբ»–ի՝ սպայակոյտի՝ դրասենեակը, որ զբաղուեց կամաւորներ արձանագրելով եւ առհասարակ կամաւորական դնդերի կազմակերպութեան գործերով։ Անդրանիկի ներկայութեան պատճառով մեր տունը դարձաւ հայ ռազմական եւ քաղաքական ղեկավարների ժամադրավայր։ Սեպտեմբերի վերջերը Անդրանիկը մեկնեց Իրան, Սալմաստ, ուր հաւաքուել էին իր հրամանին ենթակայ հայ կամաւորական առաջին դնդի ոյժերը։ Հոկտեմբեր 18–ին,— հին տոմարով,— սկսուեց ռուս–Թուրքական պատերազմը եւ Անդրանիկի դունդը մեկնեց ռազմաճակատ։

1914–ին Անդրանիկի դունդը մասնակցեց մի քանի կռիւների Իրան ներխուժած Թուրքական բանակի դէմ, իսկ 1915–ի գարնանը, զօրավար Թ. Նազարբէկեանի հրամանի տակ մասնակցեց

Դիլմանի վճռական ճակատամարտին։ Դիլմանի տակ ջարդուած Թուրքական բանակը, Խալիլ փաշայի հրամանի տակ, հապճեպով նահանջեց Վասպուրական։ Ռուսական ոյժերը, որոնց յառաջապահն էր Անդրանիկի գունդը, կրնկակոխ հալածեցին Խալիլ փաշայի բանակի մնացորդները եւ մայիսի երկրորդ կէսին հասան Վան, որ ազատագրուել էր Թուրքական պաշարումից եւ ուր հասել էին արդէն հայ կամաւորական միւս երեք գնդերը,— Երկրորդ Գունդը՝ Դրոյի, Երրորդ Գունդը՝ Համազասպի եւ Չորրորդ Գունդը Քեռու հրամանի տակ։ Հայ կամաւորական չորս գնդերն էլ մասնակցեցին այն ծանր կռիւներին, որ յունիսի ընթացքին ռուսական բանակը մղեց Թուրքերի դէմ Վանի լճի հարաւային ափերի վրայ։ Յուլիսի կէսին ռուսական ոյժերը եւ մեր կամաւորական գնդերը հասել էին Վանի լճի արեւմտեան ափի Ուրթափ եւ Դատվան գիւղերը, երբ սկսուեց ռուսական ընդհանուր նահանջը այդ ճակատի վրայ։

Ռուսական բանակը նահանջում էր երկու թեւերով։ Մէկ թեւը, Վանայ լճի հարաւային ափով դէպի Սուրբ, Ոստան, Վան եւ ապա Արճակ–Սարայի գծով դէպի Իրան։ Ռուսական բանակի միւս թեւը նահանջում էր Վանի լճի հիւսիսային ափով Ախլաթ, Ալջաւազ, Արճէշ, Բերկրի եւ Արազայի դաշտ գծով դէպի Կովկաս։

Վան քաղաքի եւ Արճակի, Շատախի ու Մոկսի հայ գիւղերի բնակչութիւնը սկիզբ քաշուէր նահանջող ռուս բանակի հետ կամ Բերկրի–Արազայի դաշտ գծով դէպի Կովկաս կամ Արճակ–Սարայի գծով դէպի Իրան։ Արճակ–Սարայի գծով դէպի Իրան նահանջող հայութեան թիկունքը պաշտպանելու պարտականութիւնը ընկած էր Քեռու եւ Համազասպի գնդերի վրայ, իսկ

---

*) Ռուսական գնդերը կազմուած են չորս գումարտակներից, որոնցից ամէն մէկը բաղկացած է չորս վաշտերից՝ ամէն մէկը 250 զինուորով։

Հայ կամաւորական գնդերը մի մի գումարտակի ոյժ ունէին՝ շուրջ հազար ռազմիկ։

Ռուսական գնդերի գումարտակները ուրոյն, անկախ զինուորական միաւորներ չէին, այլ գնդի բաղկացուցիչ մասեր։ Մինչդեռ հայ կամաւորական գնդերը թէեւ ռուսական գումարտակների ոյժ ունէին, բայց զինուորական անկախ, ուրոյն միաւորներ էին, այդ պատճառով ես նրանց գնդեր եմ անուանում։

Բերկրի–Աբաղայի դաշտ դծով նահանջողների պաշտպանությունը դրուած էր Անդրանիկի եւ Դրոյի դնդերի վրայ:

Այդ օրերին ես գտնուում էի Վանում: Ես դնացել էի Վան այնտեղից ռազմաճակատ անցնելու եւ միանալու Անդրանիկի դնդին: Յուլիս 15 էր, երբ Արմէն Գարոյին Կովկասից Վան ուղեկցող մի քանի ընկերների հետ Վան հասանք: Մեր Վան հասնելու յաջորդ օրն իսկ նահանջի շշուկներ տարածուեցին քաղաքում:

Այդ օրերում Վան էին գտնուում հայ կամաւորական դնդերի սպայակոյտը եւ կամաւորական շարժումը ղեկավարող մի շարք ականաւոր ընկերներ,— Վանի Արամը, Խանասորի Վարդանը, Նիկոլ Աղբալեանը, բժիշկ Համօ Օհանջանեանը, Արմէն Գարօն, Սիրական Տիգրանեանը, Կոստեա Համբարձումեանը եւ Վանի ղեկավար դործիչներից մի քանիսը: Նահանջի պաշտօնական տեղեկութիւնն ստանալուց յետոյ, այս ղեկավարները ժողով դումարեցին, քննելու եւ լուծելու մի ծանրակշիռ խնդիր — արդեօք նահանջե՞լ ռուսների հետ, թէ մնալ Վանում եւ պաշտպանուել Թուրքական ոյժերի դէմ, մինչեւ որ ռուսները կրկին վերադառնային Վան:

Թէ ի՞նչն էր ստիպում ռուսներին նահանջել եւ այնքան հապճեպ կերպով, մենք, ի հարկէ, չդիտէինք, բայց կասկած չկար, որ այդ նահանջը ժամանակաւոր է եւ ռուսները կրկին պիտի վերադառնան Վան:

Ես պաշտօնական ոչ մի հանդամանք չունէի ներկայ լինելու այդ տեսակ մի ժողովի, բայց Արմէն Գարօն ինձ էլ տարաւ այդ ժողովին այն ենթադրութեամբ, որ ռուս հրամանատարութեան դրութիւն ուղղելու պէտք պիտի լինի եւ ես կարող եմ օգտակար լինել ժողովին:

Նահանջե՞լ ռուսների հետ, թէ մնալ Վանում եւ պաշտպանուել մինչեւ ռուսների վերադարձը:

Ռուս հրամանատարութեան հրամանը առանց այլ եւ այլի դործադրելու եւ նահանջելու կողմնակից էին Վարդանը, Արմէն Գարօն եւ բժիշկ Համօ Օհանջանեանը:

Վանից քաշուելուն վճռական կերպով դէմ էր Արամը, որ իր տեսակէտը պարզեց մօտաւորապէս հետեւեալ բառերով.

«Մենք մի ամբողջ ամիս դիմադրեցինք թուրք բանակին եւ թուրք ու քիւրդ դինուած խուժանին, ունենալով միայն հազիւ հազար կտոր դէնք, որից մօտ 400–ը ատրճանակներ էին, մնացածի մի մասը որսորդական հրացաններ եւ միայն հինդ հարիւ-

րի չափ կանոնաւոր կռուի հրացաններ, շատ սահմանափակ քանակութեամբ ռազմամթերքով: Հիմա Վանի պաշտպանութեան համար մենք կարող ենք ունենալ մեր կամաւորական չորս գնդերը, որոնց կռուողների թիւը, հակառակ նրանց կլրած կորուստների, երեք հազարի կը հասնի: Վանի եւ Մոկսի ու Շատախի երիտասարդութիւնից կարելի է զինել մէկ կամ երկու հազար հոգի եւս: Ռուսները կարող են անսպառ ռազմամթերք տրամադրել մեզ, ինչպէս նաեւ պարէն: Մեր դէմ գալիք թուրքական ոյժերը շատ չեն կարող լինել, թերեւս մի քիչ աւելի, քան ապրիլեան կռիւներին: Ռուսները չեն կարող թոյլ տալ որ ռազմաճակատը փոխադրուի իրենց սահմաններից ներս: Հաւանաբար շատ չանցած նրանք կրկին պիտի վերադառնան: Մինչեւ ռուսների վերադարձը մենք կարող ենք պաշտպանել այս հայութիւնը, մինչ գաղթը կարող է այս ժողովրդի մէջքը կոտրել»:

Արամի հետ համաձայն էին Կոստեա Համբարձումեանը, Նիկոլ Աղբալեանը եւ Վանի զեկավար ընկերները: Ն. Աղբալեանը իր սովորական պատկերալից ու կտրուկ ոճով ձեւակերպեց իր ասելիքը. «Ռուսները գնո՞ւմ են՝ թող գնան, մենք էստեղ ենք. ռուսները կը գնան ու կը դան, մենք էլի էստեղ ենք:»

Այդ ժողովի եզրակացութիւնը եղաւ այն, որ որոշուեց ռուս հրամանատարութեան ուղղել մի դրութիւն եւ խնդրել որ ռուսները, նահանջի դէպքում Վանի պաշտպանութեան համար Վան քաշեն հայ կամաւորական չորս գնդերը. Վանի երիտասարդութիւնը զինելու համար տրամադրեն ռուս բանակի զինապահեստներում գտնուած յաւելեալ զէնքն ու ռազմամթերքը, ինչպէս նաեւ պարէնի պահեստները: Բացի դրանից, եթէ կարելի է տրամադրեն անթել հեռագրի մի կայան՝ հեռագրող մասնագէտներով:

Այս կէտերով դրութիւն կազմելը յանձնարարուեց ինձ:

Ռուս հրամանատարութեան պատասխանը եղաւ կարճ ու կտրուկ.

Ռուս բանակը եւ հայ կամաւորական գնդերը պիտի նահանջեն: Զէնք, ռազմամթերք ու պարէն, որքան որ հնարաւոր է՝ պիտի տարուի, իսկ մնացածը պիտի ոչնչացուի, թշնամու ձեռքը չձգելու համար: Այս հրամանը ստանալուց յետոյ, մինչեւ երեք օր Վանի եւ շրջակայքի բնակչութիւնը կարող է նահանջել Բերկրի–Աբաղայի դաշտ գծով, իսկ երեք օրից յետոյ Արճակ–Սարայի գծով դէպի Իրան:

Ու սկսուեց սարսափելի գաղթը:

Վանից՝ Բերկրի–Աբաղայի դաշտ դծով նահանջող ժողովրդի թիկունքի պաշտպանութիւնը, ինչպէս ասացի, ընկած էր Արճէշից դէպի Բերկրի եւ Աբաղա նահանջող Անդրանիկի եւ Դրոյի գնդերի վրայ: Մինչեւ դրեթէ Մշոյ դաշտ հասած ռուս յաղթական բանակի այս անակնկալ նահանջը շատ ծանր էր ազդել մեր կամաւորական գնդերի հրամանատարութեան վրայ: Ամէնից աւելի հոգեպէս խորտակուած էր Անդրանիկը, որ յոյս էր ունեցել, թէ ռուսական արշաւը պիտի շարունակուի դէպի Մուշ եւ հնարաւոր պիտի լինի օգնութեան հասնել Սասուն ապաստանած մի քանի տասնեակ հազար սասունցիներին եւ մշեցիներին: Ցուսախաբ եւ դաղդաղած Անդրանիկը իր գնդի հրամանատարութիւնը յանձնել էր իր օգնական, հայդուկային կռիւների հինաւուրց զինակից մշեցի Սմբատին, իսկ ինքը, մի խումբ ձիաւորներով շտապել էր անցնել Կովկաս:

Վանից Բերկրի–Աբաղայի դաշտ դծով ճանապարհ ընկած դաղթականութեան վերջին խմբերից մէկի հետ Բերկրիի ձորն էինք հասել, երբ դաղթականութիւնը ենթարկուեց քրդական հրոսախմբերի յարձակման: Գրեթէ կրնկակոխ նրանց յետեւից հասած Դրոյի գունդը հալածեց քրդերին եւ բռնեց Բերկրի ձորի հիւսիսային բարձունքները, մինչեւ որ դաղթականութեան վերջին խումբը անցաւ այդ վտանգաւոր կիրճից ու մտաւ Աբաղայի դաշտը:

Վանից մեկնելուց չորս օր յետոյ, մի գիշեր, երբ դաղթողների պարտասուած բազմութեան հետ կարճատեւ հանգիստ էինք առնում Աբաղայի դաշտում, լուր տարածուեց, որ Անդրանիկը, իր հեծելազօրի մի խմբով անցաւ Կովկաս:

Երեք օր յետոյ ես տեսայ Անդրանիկին Իգդիրում, իմ հայրենական տանը, ուր իջել էր նա:

ՔԻՒՐԴԵՐԸ ԵՐԵՒԱՆԻ ՓՈՂՈՑՆԵՐՈՒՄ...

Արամը ճիշդ էր կշռել կացութիւնը ռուսները Վանը լքելուց առաջ: Վանի դաղթականութեան վերջին խմբերը հազիւ Արարատեան Դաշտ հասած, ռուսական հրամանատարութիւնը սկսեց պատրաստութիւն տեսնել, նորից դէպի Վան արշաւելու:

Արարատեան Դաշտ հասած Անդրանիկի եւ Դրոյի գնդերն էլ

սկսեցին վերակազմուել եւ ռուսական արշաւին մասնակցելու պատրաստութիւններ տեսնել: Հոգեպէս խորտակուած Անդրանիկը մերժում էր այլ եւս գործ ունենալ ռուս հրամանատարութեան հետ, մերժում էր շարունակել իր գնդի ղեկավարութիւնը: Գնդի վերակազմութեան գործը եւ հրամանատարութիւնը ստանձնել էր Անդրանիկի օգնական տարօնցի Սմբատը:

Իգդիրում երկար չմնաց Անդրանիկը, շատ չանցած նա իր թիկնապահների խմբով փոխադրուեց Իգդիրից ոչ հեռու Բլուր գիւղը, մեր դաւառում անուանի Կամսարականների կալուածը, ուր Կամսարական ընտանիքը դրկաբաց ընդունեց Անդրանիկին եւ ամէն յարմարութիւն տրամադրեց նրա հանգստի համար: Բայց Անդրանիկը այդտեղ էլ երկար չմնաց: Հոգեպէս ցնցուած, դաղաղած Անդրանիկը կարծես հանգստի տեղ չէր գտնում իր ալեկոծ հոգու համար: Շատ չանցած նա ձգեց Բլուրը եւ մեկնեց Երեւան:

Ես որոշել էի չբաժանուել Անդրանիկից, ուստի ես էլ գնացի Երեւան:

Երեւանի հայութիւնը դրկաբաց ընդունեց Անդրանիկին: Ամէն դուռ բաց էր նրա առջեւ, ամէն մի երեւանցի իրեն հպարտ ու երջանիկ պիտի զգար, եթէ Անդրանիկը ոտք դնէր նրա տունը եւ մի պատառ հաց կիսէր նրա սեղանի վրայ: Բայց Անդրանիկը ապրում էր մեկուսացած, ոչ մարդ էր ընդունում եւ ոչ հրաւէր: Նա, ըստ երեւոյթին, Վասպուրականից ռուսական նահանջի խորտակիչ տպաւորութեան տակ էր:

Այդ պարզուեց մի հրաւէրի առթիւ:

Որքան յիշում եմ, դա միակ հրաւէրն էր, որ ընդունեց Անդրանիկը:

Հրաւիրողը դրագէտ Լէոյի աւագ դուստր տիկին Արմենուհին էր, որ Երեւանի Ցարութիւնեան անուանի ընտանիքի հարսն էր:

Ճաշի սեղանի շուրջը նստած էին, ի միջի այլոց, Խորէն Արքեպիսկոպոս Մուրադպէկեան՝ Երեւանի Թեմի Առաջնորդ եւ հետագային եղերաբախտ Կաթողիկոս Ամենայն Հայոց, Արմէն Գարօ, հայ կամաւորական Հինդերորդ Գնդի հրամանատար իշխան Յովսէփ Արղութեան եւ բազմաթիւ ուրիշներ:

Անդրանիկը, լուռ ու մռայլ, նստած էր ճաշասեղանի դլուխը եւ դրեթէ չէր լսում իրեն ուղղուած բաժակաճառերը: Անդրանիկի տրամադրութիւնը աղդում էր ներկաների վրայ եւ ճաշկերոյթը հոգեճաշի երեւոյթ էր ստանում:

Ճաշի ընթացքում սեղանակիցներից մէկը մի տոմս տուեց ինձ։ Բացեցի եւ իսկոյն ճանաչեցի Անդրանիկի անվարժ գիրը։ Ինձ ուղղուած այդ տոմսի մէջ Անդրանիկը գրել էր հետեւեալը.

«Վարդգէս, երբ ստանաս այս գրութիւնս, ելիր սեղանէն եւ փողոց դնա։ Քիչ ետքը եկուր եւ յայտնէ, որ Թուրքերը մտած են Սուրմալու. զօրավար Օգանովսկի իր շտաբը Իգդիրէն փոխադրած է Էջմիածին եւ հեռադրած է, որ կամաւորական Հինդերորդ գունդը անմիջապէս ռազմաճակատ մեկնի. Անդրանիկ։»

Կարդացի եւ մի վայրկեան շուարած մնացի։

Եթէ կատակ է, Անդրանիկը կատակ անելու սովորութիւն չունի եւ, յամենայն դէպս, այս վայրկեանիս շատ հեռու է կատակ անելու տրամադրութիւնից։ Իսկ եթէ կատակ չէ, այլ իրականութիւն, այդքան ծանրակշիռ լուրը հաղորդելու ինչ տարօրինակ ձեւ է սա։ Եւ սակայն, ես երկար կանգ չառայ այդ տարակուսանքի վրայ ու շտապեցի կատարել դրեթէ հրամանի ձեւով ինձ ուղղուած թելադրութիւնը։

Դուրս ելայ փողոց եւ 5–10 րոպէ յետոյ ներս մտայ ճաշասենեակը եւ, շփոթութիւն ու յուզում կեղծելով, բառ առ բառ կրկնեցի Անդրանիկի գրածը։ Աննկարագրելի յուզում առաջ եկաւ սենեակում։ Տղամարդիկ ելան իրենց տեղերից եւ մի քանիսը շրջապատեցին ինձ, կանայք գունատուեցին, տանտիկնոջ սկեսուրը քիչ մնաց որ ուշաթափուէր, իսկ Արմէն Գարօն մօտեցաւ ինձ եւ խստութեամբ ասաց.

— Ա՛ս ի՞նչ յիմար կատակ է կ՚ընես։

Այս ամբողջ իրարանցումի մէջ միայն Անդրանիկն էր, որ լուռ ու անվրդով նստած էր իր տեղում։ Ես մատնուեցի անասելի շուարումի եւ ինչ անելս չգիտէի։ Անդրանիկը գրեթէ մի ամբողջ րոպէ լուռ մնաց, ինձ սարսափելի վիճակի մատնելով։

Վերջապէս նա ոտքի կանգնեց եւ ձեռքի տիրական շարժումով հանդարտեցնելով ներկաներին, ասաց.

— Հանդիստ ձգեցէք Վարդգէսը։ Ան իմ ըսածն ըրաւ։ Թուրքերը Սուրմալու մտած չեն եւ ոչ ալ զօրավար Օգանովսկի Էջմիածին փոխադրած է իր շտաբը։ Բայց այդ ամէնը կրնար պատահիլ։ Հոս նստեր կը զուարճանաք, Անդրանիկին կենացը կը խմէք, իսկ ինծի անանկ կուգայ, որ Թուրք ու քիւրդ լեցուեր են Երեւանի փողոցները, ձեր կիներն ու աղջիկները կը տանին, ձեր մանուկները կը մորթեն, ձեր տունները թալանի կուտան եւ կը վառեն։ Հոն եղաւ այդ չէ՞, եւ ի՞նչպէս եղաւ, քար քարի վրայ

չթողուցին, ինչո՞ւ չի կրնար հոս ալ ըլլալ։ Ատոր մասին խորհեցէք, եւ ոչ թէ Անդրանիկին կենացը դաւաթ պարպեցէք։

Անդրանիկը այս բոլորն ասաց այնպիսի յուզումով, այնպիսի շեշտով, որ քիչ էր մնում պատուհաններից դուրս նայէինք, ստուգելու համար, թէ իսկապէ՞ս թուրքերը եւ քիւրդերը լցուել են Երեւանի փողոցները։

Պարզ էր, որ Անդրանիկի հոգին տառապում էր։ Իր սիրած վայրերին՝ Մշոյ Դաշտին եւ Սասունին՝ եւ իր սիրած սասունցիներին ու մշեցիներին դրեթէ հասած լինելուց յետոյ դլխիկոր վերադառնալը խոր խոցել էր նրա սիրտը եւ նա հանդիստ չունէր։ Յետադային ուրիշ առիթներով էլ ես տեսայ, թէ որքա՜ն խոր կերպով էր կապուած Անդրանիկը Հայաստանի այդ վայրերի ժողովրդին, մանաւանդ սասունցիներին, որոնց հետ ապրել ու պայքարել էր, ուրախացել ու տրտմել էր։

Բայց Անդրանիկի կրած յուսախաբութեան մէջ ի՞նչ յանցանք ունէին իր սեղանակիցները։ Ընդհակառակը, Երեւանի Յարութիւնեան ընտանիքի չէն սեղանի շուրջ հաւաքուածները այն հայերից էին, որոնք Անդրանիկի նման խորապէս տառապում էին հայ ժողովրդի դլխին պայթած աղէտի համար եւ մտահոգ էին դալիքի համար։ Անդրանիկը, սակայն, հոգեկան այնպիսի վիճակի մէջ էր, որ ոչինչ հաշուի չէր առնում։ Նրան պէտք էին իր ցաւը հասկացող ունկնդիրներ, որոնց առջեւ թափէր իր սրտի կսկիծն ու դառնութիւնը։ Եւ իր սեղանակիցները այդ տեսակ ունկնդիրներ էին։

Անդրանիկի անօրինակ ելոյթը սառ ջուր լցրեց ներկաների դլխին, որոնց, ինչպէս ասում են, քթից եկաւ իրենց կերած-խըմածը եւ ամէն մարդ շտապեց վայրկեան առաջ մեկնել հիւրընկալ տնից։

* * *

Իշխան Յովսէփ Արղութեանի հրամանի տակ դրուած կամաւորական Հինդերորդ Գունդը կազմակերպւում եւ մարզւում էր Երեւանից հաղիւ 4–5 մղոն հեռու դտնուող Քանաքեռ գիւղում։ Մեր տխուր ճաշկերոյթից մի քանի օր յետոյ Արղութեանի հրաւէրով Անդրանիկը այցելեց այդ գնդի բանակատեղին։ Այդ այցելութեան առթիւ Իշխան Արղութեանը ռազմափորձի հանեց իր գունդը։ Արղութեանի խնդրանքով Անդրանիկը ստանձնեց գնդի կէսի հրամանատարութիւնը, իսկ միւս կէսը վարեց Արղութեանն ինքը՝ փորձնական ճակատամարտի մէջ։

Ճակատամարտի յաղթանակը տարաւ Անդրանիկը։

Անկախ իր ռազմական կարողութիւնից, Անդրանիկը այդ օրը Արղութեանի հիւրն էր եւ պէտք էր որ ինքը տանէր յաղթանակը:

Անդրանիկի դունդը վերակազմուել էր Իգդիրում եւ պատրաստ էր ռազմաճակատ մեկնել: Անդրանիկը շարունակում էր մերժել իր դնդի գլուխն անցնել:

Այդ օրերը կամաւորական դնդերի գործերով Երեւան էր եկել Ռոստոմը: Ռոստոմը մէկն էր, որի խօսքը, ո՛ւմ էլ որ ուղղուած լինէր այդ խօսքը, չէր կարող մերժումի հանդիպել: Ռոստոմը պնդեց, որ Անդրանիկը գնայ Իգդիր, ճանապարհ դնէ իր դունդը եւ խոստանայ աւելի ուշ միանալ դնդին: Անդրանիկն այդպէս էլ արեց: Նա գնաց Իգդիր, կրկին ու կրկին Սմբատին նշանակեց իրեն փոխարինող հրամանատար, յաջողութիւն մաղթեց դնդին եւ խոստացաւ շատ չանցած հասնել ռազմաճակատ:

Եւ Հայ Կամաւորական Առաջին Գունդը Արարատի ստորոտով, Զընդըլի լեռնանցքով կրկին շարժուեց դէպի Վասպուրական, դէպի ռազմաճակատ:

Անդրանիկը նորէն վերադարձաւ Երեւան:

Սեպտեմբերի սկիզբն էր: Երկու շաբաթ էլ Երեւանում մնալուց յետոյ Անդրանիկը մեկնեց Թիֆլիս:

Ես խնդրել էի եւ Անդրանիկը համաձայնել էր ինձ իր հետ ռազմաճակատ տանել: Այդ պատճառով ես էլ գնացի Թիֆլիս:

ՀՐԱՇՔԸ

Շաբաթներ անցան Թիֆլիսում, բայց Անդրանիկը ռազմաճակատ մեկնելու տրամադրութիւն ցոյց չէր տալիս: Վասպուրականից ռուսական բանակի անակնկալ նահանջի պատճառած ցասումը, ըստ երեւոյթին, դեռ չէր մեղմացել Անդրանիկի հոգում եւ նա շարունակում էր մերժել ռազմաճակատ մեկնել:

Մինչ այդ, նոյեմբերի սկիզբը, Քանաքեռում հիմնուեց զինուորական մի դպրոց հայ կամաւորներից սպաներ պատրաստելու համար: Վասպուրականը եւ Կոդովիտը (Ալաշկերտը) գրաւուած էին ռուսական Զորրորդ Զօրաբանակի կողմից, որ կուում էր զօրավար Օգանովսկու հրամանի տակ: Մի պարզ, բարի եւ կարելի է ասել, հայերին բարեկամ մարդ էր զօրավար Օգանովսկին: Հայ կամաւորական դնդերը, շատ քիչ բացառութեամբ,

նրա հրամանի տակ էին կռուում։ Նա շատ լաւ ճանաչում էր հայ կամաւորական դնդերի հրամանատարներին եւ կամաւորական շարժման թիկունք կանգնած քաղաքական ու հասարակական կազմակերպութիւնները եւ դրանց ղեկավարներին։ Եւ այդ էր պատճառը, որ առանց դժուարութեան ընդառաջ էր դնացել հայերի համար մասնաւոր սպայական դպրոց բանալու ծրագրին։

Քանաքեռում բացուած սպայական դպրոցի ուսուցիչները նշանակուած էին զօրավար Օգանովսկու սպայակոյտի սպաներից։ Դրանցից ես յիշում եմ ռուս դնդապետ Զէնկեվիչին, լատվիացի փոխ դնդապետ Օզոլին եւ մեր տաղանդաւոր դերասան տեղակալ Արշօ (Արշաւիր) Շահխաթունուն։

Հաշուի առնելով, որ սպայական կրթութիւն ստանալուց յետոյ կարող եմ աւելի օգտակար լինել հայ կամաւորական դնդերին, ես վերադարձայ Երեւան եւ մտայ Քանաքեռի սպայական դպրոցը։ Դժբախտաբար այդ սպայական դպրոցը հաղիւ մի քանի շաբաթ տեւեց եւ փակուեց։ 1915-ի օգոստոսին կոմս Վորոնցով-Դաշկովի փոխարէն Կովկասի փոխարքայ եւ կովկասեան ճակատի դերագոյն հրամանատար նշանակուեց մեծ իշխան Նիկոլայ Նիկոլայեւիչը, հայատեաց եւ առհասարակ օտարատեաց մէկը։ Նրա հայատեաց քաղաքականութեան արտայայտութիւններից մէկը եղաւ այդ սպայական դպրոցի փակումը։ Շտապեմ աւելացնել, որ յաջորդ տարին Նիկոլայ Նիկոլայեւիչը ցրել տուեց հայ կամաւորական բոլոր դնդերը։

Դեկտեմբերի սկիզբն էր, երբ Թիֆլիս վերադառնալով, տեսայ որ Անդրանիկը, որ դարձեալ մեր տունն էր իջեւանել, պատրաստւում էր ռազմաճակատ մեկնել։

Նա չմերժեց իմ խնդրանքը եւ համաձայնեց ինձ իր հետ տանել իբրեւ իր համարզ եւ դնդի քարտուղար։

Դեկտեմբերի կէսն էր, երբ մեկնեցինք Թիֆլիսից։

Անդրանիկի դունդը այդ ժամանակ գտնւում էր Վանի լճի հիւսիսային ափին, Արճէշում։

Մեր դնդին հասնելու համար երկու ճանապարհ կար։ Առաջինը եւ կարճը Արարատեան Դաշտից, Հայկական Պարի լեռնաշղթան կտրելով բարձրանալ Բայազէդի Հովիտը, ապա թափառէզի լեռնանցքով իջնել Արաղայի Դաշտը եւ Բերկրիի վրայով հասնել Արճէշ։ Թէեւ կարճ էր այդ ճանապարհը, բայց ձմեռ ժամանակ, մեր լեռներում բարդ բարդ դիզուած ձիւնի միջով, առանց հանգստի կայանների, քրդական հրոսակախմբերի յանկարծական յարձակումներին ենթակայ այդ դծով գնալը դրե-

թէ անկարելի էր։ Մնում էր այդ ռազմաճակատի ռուսական բանակի պարենաւորման դլխաւոր, թէեւ շատ երկար դիծը,— Հին Զուղայի, Խոյի, Կոտուր-Սարայի, Վանի եւ Բերկրիի վրայով։ Մենք այդ դծով պիտի դնայինք։

Մեր առաջին կայանը եղաւ Հին Զուղան, ուր Անդրանիկը ստիպուած էր կանդ առնել իր դնդի հեծելազօրին պակասող ձիեր դնելու եւ այլ կարդադրութիւններ անելու համար։

Ցերեկները Անդրանիկը եւ իր ուղեկիցները զբաղուած էին այդ կարդադրութիւններով, իսկ երեկոներն անցընում էին զրոյցով կամ թղթախաղով։ Ով ծառայել է բանակում, նա դիտէ, որ թղթախաղը զինուորականների սովորական ժամանցն է։

Մի երեկոյ մեր ուղեկիցների մեծ մասը զբաղուած էր թղթախաղով։ Անդրանիկը չէր մասնակցում, այլ կամ մի անկիւն քաշուած, մէկը միւսի ետեւից ծխիկներ էր վառում, թաղուած իր մտքերի մէջ, եւ կամ, ոտքի կանդնում եւ յետ ու առաջ քայլում բաւական ընդարձակ սենեակի երկարութեամբ, երբեմն երբեմն կանդ առնելով խաղացողների սեղանի առջեւ։ Այդպիսի մի վայրկեանի Անդրանիկը դիմեց սեղանի հակառակ կողմը նստածներից մէկին եւ դրեթէ հրամայական շեշտով ասաց.

— Պանքա ըսէ, տղա՛յ։

Նա, որին ուղղուած էր Անդրանիկի խօսքը, դլուխը վեր բարձրացրեց եւ զարմանքով նայեց Անդրանիկին։Սեղանի հակառակ կողմը կանդնած Անդրանիկը չէր կարող տեսած լինել իր խաղաթղթերը եւ ուստի ի՞նչպէս կարող էր այդքան վճռական կերպով թելադրել բանկ յայտարարել։ Ուր մնաց որ, եթէ նոյնիսկ հնարաւոր լինէր, Անդրանիկը չէր կարող թոյլ տալ իրեն, ուրիշի խաղաթղթերը ստուդելուց յետոյ խառնուել նրա խաղին։ Դիմացինի տարակուսանքը եւ տատանումը տեսնելով, Անդրանիկը նորից կրկնեց իր թելադրութիւնը.

— Պանքայ ըսէ, կ՚ըսեմ քեղի, եթէ կորսնցնես, ես կը վճարեմ։

Թէեւ տարակուսանքով, բայց Անդրանիկի հովանաւորեալը «բանկ» յայտարարեց եւ երբ բոլորը իրենց թղթերը բացին, սեղանի վրայի արծաթեայ դրամների կոյտը անցաւ նրա ձեռքը։

Խաղը շարունակուեց, Անդրանիկը հեռացաւ սեղանից եւ վերսկսեց իր երթ ու դարձը սենեակի երկարութեամբ։ Նա կարծես թէ այլ եւս ուշադրութիւն չէր դարձնում խաղին եւ ամբողջապէս տարուած էր իր մտքերով, միշտ մի վառուած ծխիկ իր ձեռքում։ Շատ չանցած, սակայն, նա նորից կանդ առաւ սեղանի

առջեւ եւ այս անգամ մի ուրիշ խաղացողի կրկնեց իր կէս հրամայական թելադրութիւնը.

— Պանքայ ըսէ, տղա՛յ:

Այս անգամ Անդրանիկի թելադրութիւնը աւելի արագ կատարուեց եւ դրամների կոյտը անցաւ Անդրանիկի ընտրած խաղացողի ձեռքը: Սակայն, այս անգամ, միւս խաղացողների դէմքերը ակնյայտնի դժգոհութեան արտայայտութիւն ստացան: Զգիտեմ, նկատե՞ց Անդրանիկը այդ թէ ոչ, բայց դրանից յետոյ այլ եւս չմօտեցաւ թղթախաղի սեղանին:

Մեզ բոլորիս էլ զարմանք պատճառեց Անդրանիկի արածը:

Պարզ էր, որ նա խաղացողների թղթերը տեսնելուց յետոյ չէր որ անում էր իր ընտրութիւնը: Դա շատ տգեղ բան պիտի լինէր իր կողմից: Նա նոյնիսկ մէկ երկու րոպէ կանգ չէր առնում խաղացողների մօտ եւ ապա անում իր ընտրութիւնը, այլ անդադար յետ ու առաջ քայլելու ժամանակ, յանկարծ կանգ էր առնում եւ անմիջապէս մատնանշում իր ընտրած խաղացողին: Ի՞նչն էր, սակայն, որ այդպէս անխաբ կերպով թելադրում էր նրան անել իր ընտրութիւնը, ես չէի կարողանում բացատրել ինձ այդ երեւոյթը, իսկ հարցնել Անդրանիկին այդ մասին, ես չէի համարձակւում:

Կէս դիշերը վաղուց անցել էր, երբ խաղը վերջացաւ եւ պառկեցինք քնելու:

Ես դիշերում էի Անդրանիկի հետ միեւնոյն սենեակում: Հազիւ թէ մէկ երկու ժամ էր անցել մեր քնով տարուելուց, երբ մեր սենեակի դուռը բախեցին:

Ընդոստ ցատկեցի տեղիցս եւ ձայն տուի.

— Ո՞վ է այդ:

— Հեռագիր Անդրանիկին, պատասխանեց մէկը դրսից՝ ռուսերէն:

Դուռը բաց արի եւ առայ հեռագիրը:

— Ի՞նչ է այդ, տղայ, հարցրեց Անդրանիկը, որ արթնացել եւ նստել էր իր անկողնում:

— Հեռագիր է քեզ:

— Կարդա՛, նայիմ:

Կարդացի եւ թարգմանեցի.

«Մուրադը 12 ընկերներով ափ է իջել Բաթում. մանրամասնութիւնները նամակով. Ռոստոմ:»

— Հրաշք է, մրմնջաց Անդրանիկը, իր մարմնի շուրջը փաթաթեց վերմակը, մի ծխիկ վառեց եւ մնաց նստած:

Մի քանի րոպէ յետոյ, աւելի շուտ ինքն իրեն հետ խօսելով, քան թէ խօսքն ինձ ուղղելով, նորից կրկնեց.

— Հրաշք է:

Եւ խորասուզուած իր մտքերի մէջ, շարունակեց այդպէս նստած մնալ, մէկը միւսի յետեւից ծխիկներ վառելով: Բաւական երկար ժամանակ արթուն մնացի եւ ես, բայց վերջ ի վերջոյ քունը յաղթեց ինձ:

Երբ առաւօտեան զարթնեցի, Անդրանիկը արդէն ոտքի վրայ էր:

Զգիտեմ, ինձանից յետոյ ինքն է՞լ քնել էր, թէ մինչեւ լոյս արթուն էր մնացել, տարուած անցեալի յուշերով:

Երբ մի տարի յետոյ Զապէլ Եսայեանը գրի առաւ եւ լոյս ընծայեց Մուրադի եւ իր ընկերների արիւնոտ Ոդիսականը, այն ժամանակ տեսանք որ կատարուածը իսկապէս հրաշքի պէս բան է եղել:

Եւ այդ հրաշքը իրագործողը եղել է Մուրադի հեռատեսութիւնը, իրատես վճռականութիւնը, հաւասարակշռութիւնը եւ անվեհեր քաջութիւնը:

ԴԷՊԻ ԽՈՅ

Մի քանի օր յետոյ Ջուղայից մեկնեցինք դէպի Խոյ:

Իրանի հողը մտնելու համար պիտի անցնէինք Արաքսից, որ այդտեղ ռուս-իրանեան սահմանն էր կազմում:

Մեր հինաւուրց Ջուղան Արաքսի ձախ ափին է: Ջուղայից դէպի Արաքսի աջ ափը նետուած կամուրջն է միացնում Կովկասը Իրանին: Պատերազմի պատճառով ռուս-իրանեան սահմանադլխից մինչեւ Խոյ, Սալմաստ եւ Ուրմիա դրաւուած էր ռուսական բանակի կողմից եւ այդ բոլոր շրջանների ճանապարհների պաշտպանութիւնը դտնւում էր ռուսական բանակի ձեռքում: Արաքսի կամուրջի երկու կողմն էլ պահակներ էին դրուած:

Ջուղայից մենք մեկնեցինք ձիու կառքերով — ֆայտոններով, որոնցից առաջինի մէջ նստած էինք՝ Անդրանիկը, երկու թիկնապահ եւ ես: Երբ մեր կառքը հասաւ կամուրջին եւ դրեթէ հաւասարուել էր կամուրջի երկու կողմերը կանգնած պահակներին, նրանցից մէկը, որ մեր կառքի աջ կողմն էր կանգնած, գըլ-

խով հազիւ նկատելի նշան արեց իր դիմացը, մեղնից դէպի ձախ կանգնած միւս պահակին եւ երկուսը մէկէն բարձրացրին իրենց հրացանները ու պատուի կեցան։

Հայե՞ր էին այդ զինուորները, թէ օտարներ, կարելի չէր հասկանալ, բայց որոշ էր, որ նրանք լուր ունէին, թէ ով էր մեր կառքով ճամբորդողը։ Նրանք չէին կարող Անդրանիկին ռուսական բանակի սպայի տեղ դնել, որովհետեւ թէեւ Անդրանիկը զինուորական համազգեստով էր, ինչպէս նաեւ միւսներս, բայց իր վրայ չէր կրում որեւէ նշան, որ սպայական աստիճան ցոյց տար։ Ակներեւ էր, որ Անդրանիկի հռչակը տարածուել էր նաեւ ռուսական բանակում։ Ցետագային ես ուրիշ առիթներով էլ տեսայ դրա ապացոյցը։

Այդ դիշեր մենք կանգ առանք բանակին սպասարկող սննդակայաններից մէկում։ Այդ սննդակայանները կազմակերպուած էին Ռուսաստանի Քաղաքների Միութեան եւ Նահանգային Ինքնավարութիւնների կողմից, եւ դրանց պաշտօնէութիւնը կազմուած էր ոչ զինուորականներից, այլ քաղաքացիներից, որոնց մէջ կային նաեւ կանայք։

Մեր ինքնանած կայանում պաշտօնավարում էր մի հայուհի, Ռուսաստանի խորքերից եկած մի երիտասարդ աղջիկ, որ մի քիչ դժուարութեամբ էր խօսում հայերէն։ Տեսնելով հայերից բաղկացած մեր խումբը եւ նկատելով այն ուշադրութիւնը, որով մենք շրջապատել էինք Անդրանիկին, օրիորդը հետաքրքրուեց իմանալ, թէ ո՞վ ենք մենք։

Ու պէտք էր տեսնել նախ իր շուարումը, ապա հիացումը, երբ տեղեկացաւ, որ մեր ուշադրութեան առարկան Անդրանիկն է։ Խնդրեց, որ իրեն ներկայացնենք Անդրանիկին, որին իր հիացումը յայտնելու համար բառ չէր կարողանում գտնել։ Երջանիկ է, ասաց, որ բախտ է ունենում տեսնել հայոց հերոսին եւ, ի հարկէ, անյապաղ պիտի գրի իր ծնողներին, այս երջանիկ հանդիպման մասին։

Ապա թողեց մեզ եւ անցաւ կայանի մէկ մասից միւսը, կարգադրութիւններ անելու թանկագին հիւրի ճաշի եւ հանգստի մասին։ Եւ արեց ինչ որ հնարաւոր էր յարմարութիւններ ստեղծելու Անդրանիկի համար։

Ցաջորդ առաւօտ դրեթէ արցունքոտ աչքերով էր որ ճամբու դրեց մեզ այդ համակրելի հայուհին։

* * *

Մեր յաջորդ կայանը Խոյից ոչ հեռու գտնուող հայկական մեծ եւ շէն Սէյդաւար գիւղն էր։

Մի մեծ ծառաստան էր Սէյդաւարը, որի դրեթէ ամէն մի շէնքը շրջապատուած էր ընդարձակ պարտէզով: Լայն ու կանոնաւոր փողոցներով հոսում էին ջրառատ առուներ: Ընդարձակ եւ լուսառատ սենեակներով եւ խոշոր հացատներով շէնքերը վկայում էին բնակիչների բարեկեցիկ կեանքի մասին:

Մեզ ընդունեցին ջերմութեամբ եւ հանդստաւէտ բնակարաններ տրամադրեցին մեր բնակութեան համար:

Սէյդաւարում պիտի մնայինք մի քանի օր, մինչեւ որ կարողանայինք այդտեղ կամ Խոյ քաղաքում դնել մեր դնդի հեծելազօրին տակաւին պակասող ձիերը եւ շարունակել մեր ճանապարհը դէպի Վան ու այնտեղից էլ ռազմաճակատ:

Սէյդաւարից երկու անդամ պէտք եղաւ Խոյ գնալ թէ՛ ներկայանալու Խոյ, Սալմաստ, Ուրմիա եւ Վասպուրական ռազմաբեմի վերին հրամանատար զօրավար Զերնօզուբովին, որին ենթակայ էր, ի հարկէ, նաեւ մեր դունդը եւ թէ՛ գնումներ անելու համար:

Թէեւ դեկտեմբերի կէսն էր, բայց այստեղ ո՛չ ձիւն կայ եւ ոչ էլ ղղալի ցուրտ է: Պայծառ արեւոտ մի օր է եւ մեր փոքրաթիւ հեծելազունդը քառասմբակ կտրում է Սէյդաւարի եւ Խոյի միջեւ ընկած ընդարձակ ու հարթ դաշտավայրը: Մեր հեծելազնդի առջեւից, սրարշաւ նժոյգի վրայ ձիավարում է Անդրանիկը:

Գրաւիչ պատկեր է ներկայացնում ձիավարող Անդրանիկը:

Անդրանիկը եւ իր նժոյգը կարծես միակտուր քարից կերտուած եւ կամ մետաղից ձուլուած մի արձան լինեն: Անդրանիկի ուժեղ ձեռքով սանձուած երիվարը, որքան էլ կատաղի լինի նա, չի կարող անել եւ ոչ մի շարժում, որ ենթակայ չլինի հեծեալի կամքին: Իր նժոյգի ծառս լինելու, կամ ոստնելու եւ ոչ մի յանկարծական փորձ չի կարող անակնկալի բերել Անդրանիկին, որ զամուած է թամբին: Ու զարմանում ես, թէ ե՞րբ եւ ո՞ւր է այսպէս ձիավարել սովորել այս հայդուկը, որ իր կեանքն անցրել է Հայաստանի լեռներն ու ձորերը ոտքով կտրելով:

Խոյում Անդրանիկը մի կարճ այցելութիւն տուեց զօրավար Զերնօզուբովին, որը, դիտէինք դեռ Կովկասում, շատ էլ բարեացակամ չի տրամադրուած դէպի հայերը: Շատ խօսելիք չունէր Անդրանիկը այդ զօրավարի հետ, քանի որ Անդրանիկի դունդը ռազմաճակատում անմիջականօրէն ենթակայ չէր Զերնօզուբովին: Անդրանիկինը, պարզապէս, մի քաղաքավարական այցելութիւն էր:

Մինչեւ երեկոյ, մինչեւ Սէյդաւար վերադառնալը դեռ բա-

ական ժամանակ կայ եւ երկու երեք ընկերներով մտնում ենք Խոյի ծածկուած շուկան՝ գնումներ անելու։ Ծածկուած երկար միջանցքի երկու կողմում շարուած են իրար սեղմուած փոքրիկ, փայտաշէն կրպակներ։ Կրպակների դէպի միջանցքը նայող կողմը դռներ չունեն։ Դռների փոխարէն այդ կողմը նայող տախտակէ պատը հանուած է, այնպէս որ կրպակի ներսը ամբողջութեամբ բացւում է այցելուի առջեւ։

Կրպակը այնքան փոքր է, որ նրա մէջտեղը նստած խանութպանը, եթէ իր ձեռքերը մեկնելու լինի, կարող է առանց դժուարութեան հասնել իր երկու կողմի եւ թիկունքի պատերին, որոնց թարեկների վրայ շարուած են ապրանքները։ Բացի այդ թարեկներից, կրպակի առաջամասում էլ շարուած են զանազան ապրանքներով լիքը տոպրակներ։ Այդ տոպրակների շարքի եւ խանութպանի միջեւ դրուած է կրակարանը, իսկ նրա կողքին նարկիլէն, որի ծխամորճը մերթ ընդ մերթ իր շրթունքներին է մօտեցնում խանութպանը։

Իր աչքերը կիսախուփ են եւ դէմքը երազուն։

— Համշարի, համիչ, ընկոյզ ունե՞ս,— հարցնում ես խանութպանին։

Պատասխանի փոխարէն համշարին, առանց կիսախուփ աչքերը բանալու, մի թեթեւ շարժումով գլուխը յետ է ձգում հասկացնելու համար, թէ չունի, կամ, աւելի ճիշդ, ասելու համար, — «հանդիստ թող ինձ»,— մինչդեռ, եթէ ձեռքը պարզելու լինէր, կարող էր, առանց տեղից շարժուելու, քո ուզածը վերցնել եւ քեզ տալ։

Պատերազմ է իր երկրի շուրջը, տեղ տեղ նոյնիսկ իր երկրի սահմաններից ներս,— անհաւանական է որ նա լսած չլինի, որ աշխարհաւեր պատերազմի հրդեհը ճարակում է բազմաթիւ երկիրներ,— նրա փոյթը չէ, խաղաղ ժամանակների նման նա ամէն առաւօտ բացում է իր կրպակը, վառում է իր կրակարանը, պատրաստում իր նարկիլէն եւ օրուայ ընթացքում աւելի շատ նարկիլէ է քաշում ու երազում, քան թէ առեւտուր անում եւ մուհէզինի երեկոյեան աղօթքի հրաւէրի հետ փակում է իր կրպակը ու քայլում դէպի տուն, յաջորդ առաւօտ կրկնելու նոյնը, ինչ որ արել է այսօր, երէկ եւ տարիներ շարունակ։

Դանդաղաշարժ, երազկոտ եւ փիլիսոփայող Արեւելքը տեսնելու համար պէտք է գնալ Իրան։

Վերադառնում ենք Սէյդաւար եւ երկու օր յետոյ, մեր գը-

նումները լրացրած, մեկնում ենք դէպի Վան՝ Կոտուր–Սարայ–Արճակ դծով:

Սէյդաւարից մեկնելու յաջորդ օրը մտնում ենք Վասպուրական եւ մեզ դիմաւորում է Հայաստանի դառնաշունչ ձմեռը: Ձիւնի հաստ սաւանը ծածկել է ոչ միայն լեռ ու ձոր, այլ եւ Սարայ–Արճակ–Վան բանուկ ճամբան, որով գինուորք, ռազմամթերք ու պարէն է փոխադրւում Վասպուրականի ճակատի վրայ կըռուող զօրամասերին: Ձիւնը տեղ տեղ այնքան խոր է, որ մեր ձիերը մինչեւ փորերը թաղւում են ձիւնի մէջ: Ձորերում փչող կատաղի քամին թափանցում է մինչեւ մեր ոսկորները:

Օրը դէպի երեկոյ է թեքուել: Սարայ հասնելու համար մի քանի ժամուայ ճամբայ կայ կտրելու, երբ մտնում ենք մի փոքրիկ հայկական գիւղ, ուր կենդանութեան չունչ է երեւում, երդիկներից ծուխ է բարձրանում: Մեծ Եղեռնից ազատուած մի քանի ընտանիքներ վերադարձել եւ վառել են հայրենական թոնիրները:

Կանգ ենք առնում մեր յոգնած ձիերին մի փոքր դադար տալու եւ ապա շարունակելու մեր ճամբան նոյն օրը Սարայ հասնելու համար, բայց գիւղացիները տեղեկանալով, որ մեր խմբով անցնողը Անդրանիկն է, թախանձագին խնդրում են, որ նա իրենց աղ ու հացը չմերժի: Անդրանիկը համաձայնում է եւ որոշում այդ գիւղում գիշերել:

Ճաշի սեղանի վրայ գինին եւ օղին բաւական առատ էր եւ տղաներից ոմանց գլուխները տաքացան: Ճաշից յետոյ ամբողջ խմբով դուրս եկան բակը եւ ձիւնի վրայ շուրջպար բռնեցին:

Անդրանիկի գլուխն էլ բաւական տաքացել էր եւ շատ չանցած նա էլ միացաւ պարողների խմբին եւ անցաւ շուրջպարի գլուխը:

Օրը երեկոյանում էր: Գորշ ամպերով ծածկուած երկնքից խաւարը մէկէն իջաւ եւ պատեց ամէն ինչ:

Ներս քաշուեցինք եւ այդ գիշեր մեր խոնջած մարմինները հանգիստ առան տաք քուրսու շուրջը:

Յաջորդ առաւօտ կանուխ մեկնեցինք եւ գիշերը հասանք Վան:

ՎԱՆԻՑ ԱՐՃԷՇ

Վանում Անդրանիկը անելիք չունէր։ Իր գունդը գտնուում էր Վանի լճի հիւսիսային ափի վրայ՝ Արճէշում։ Մի քանի օր Վանում կանգ առնելուց յետոյ, պիտի մեկնէինք Արճէշ։

Ռազմաճակատը խաղաղ էր, ոչ մեր եւ ոչ էլ թշնամու կողմից որեւէ ռազմական շարժումի լուր չկար, ուստի շատ էլ շտապելու պէտք չկար ճակատը հասնելու համար։

Վանի շրջանի հրամանատարն էր, եթէ յիշողութիւնս չի դաւաճանում ինձ, Սէրգէեւ անունով մի ռուս զօրավար։

Վան հասնելու յաջորդ օրն իսկ Անդրանիկը այցելութիւն տուեց զօրավար Սէրգէեւին։ Զօրավարը շատ ուշադիր, գրեթէ ջերմ վերաբերում ցոյց տուեց Անդրանիկին։ Ըստ երեւոյթին, նա տեղեկութիւններ ունէր Անդրանիկի ով լինելու մասին։ Ես կատարում էի Անդրանիկի թարգմանի դերը։

Իմ ստացած տպաւորութիւնը զօրավար Սէրգէեւից այն էր, որ նա մէկն էր այն հաղուագիւտ ռուս բարձրաստիճան զինուորականներից, որոնք անկեղծ համակրանք ունէին հայ ժողովրդի հանդէպ։ Նա պարզ ու դիւրահաղորդ մարդ էր, ինչպէս որ լինում են սովորաբար ռուս մտաւորականները։ Պատերազմի առթիւ զօրակոչի ենթարկուելուց առաջ զօրավար Սէրգէեւը աշխատակցելիս է եղել ռուս գրական պարբերաթերթերին։ Զրոյցի ընթացքին տեղեկանալով որ ես Մոսկուայի Համալսարանումն եմ ստացել իմ բարձրագոյն կրթութիւնը եւ հետաքրքրւում եմ գրականութիւնով, զօրավարը տուեց ինձ կարդալու իր մէկ բանաստեղծութիւնը, որի նիւթը առնուած էր մի քանի ամիս առաջ տեղի ունեցած Հայկական Եղեռնից։ Զօրավարի նկարագրած քստմնելի դէպքը կատարուել էր Բերկրիի մօտիկ Գործոթ գիւղում, որի ամբողջ բնակչութիւնը սրի էր քաշուել Թուրք բորենիների ձեռքով։ Այդ գիւղի մեծ ու պստիկը կոտորելուց յետոյ, Թուրք բորենիները ողջ էին թողել միայն մի մարդկային էակ՝ մի պառաւ կին՝ նախապէս փորելով թշուառ պառաւի երկու աչքերը։ Մի անհաւատալի հրաշքով կոյր պառաւը կարողացել էր ապրել բոլորովին ամայի գիւղում մինչեւ որ դէպի Վան արշաւող ռուսական բանակի յառաջապահ հայ կամաւորական դնդերը հասել են Բերկրիի շրջանը։ Հայ կամաւորների մէջ է եղել գործոթցի մի

երիտասարդ, որ գնացել է իր հայրենի գիւղը, տեսնելու թէ ո՞վ է մեռած, ո՞վ է ողջ եւ հանդիպել է միակ ողջ էակին,— թուրք բարբարոսների ձեռքով կուրացուած իր պառաւ մօրը:



Ահա այս ողբերգական դէպքն էր նիւթ ծառայել ռուս զօրավարի բանաստեղծական ստեղծագործութեան:

Դեկտեմբերի վերջն էր: Երեք օր յետոյ Նոր Տարին էր: Երբ իրենից հրաժեշտ էինք առնում, զօրավարը հրաւիրեց Անդրանիկին իր հիւրը լինել Նոր Տարուան դիշերը:

Ընայած յուլիսեան մեծ նահանջին, որ հիմն ի վեր քայքայեց Վասպուրականի ազատուած հայութեան տնտեսութիւնը, Վանում կեանքը դրեթէ բնականոն վիճակ էր ստացել: Կովկաս ապաստանած Վասպուրականցիների մի մասը վերադարձել էր հայրենիք: Վանեցիներից բացի, Այգեստանում հաստատուել էին ռազմաճակատը սպասարկող մի շարք զինուորական եւ քաղաքացիական հիմնարկութիւններ: Դրանց մէջ էր նաեւ Քաղաքների Միութիւնը, որի պաշտօնեաները, շատ քիչ բացառութեամբ, հայեր էին եւ շատերն էլ մեր ծանօթներն ու բարեկամները Կովկասից:

Նոր Տարուան գիշերը Անդրանիկը կարճ այցելութիւն տուեց ռուս զօրավարին, շնորհաւորեց նրա Նոր Տարին, կենացը խմեց, որին ի պատասխան զօրավարը բաժակ բարձրացրեց Անդրանիկի կենացը եւ շատ չանցած մեկնեցինք: Անդրանիկի ռուսերէն չգիտնալը դժուարացնում էր երկարատեւ այցելութիւնները կամ զրոյցները իր ռուս հիւրընկալների հետ:

Սպայակոյտի շէնքից դուրս գալուց յետոյ, մենք գնացինք Քաղաքների Միութեան շէնքը, ուր հարազատ մթնոլորտի մէջ դիմաւորեցինք Նոր Տարին:

Երկու օր յետոյ Վանից մեկնեցինք Արճէշ, միանալու մեր գնդին: Վանից մինչեւ Ալիւր ու մինչեւ Ջանիկ գիւղերի մեծ մասը վերաբնակուած էր վերադարձած վասպուրականցիներով: Ապշեցուցիչ է հայ ժողովրդի տոկունութիւնը եւ կեանքին հզօր կերպով փարած չինարար կամքը: Կարծես թէ մի քանի ամիս առաջ այս գիւղերի գլխին չէր պայթել հրէշածին Թուրքի ձեռքով շըղթայազերծուած արիւնոտ մրրիկը: Երդիկներից նորէն պալան պալան ծուխ է բարձրանում, տների ներսը, թոնիրների շուրջը երեւի խմոր են հունցում հայ կանայք, փողոցներում անց ու դարձ կայ եւ կեանքը կրկին վերադարձել է երէկ ամայի եւ կիսաւեր այս գիւղերը:

Գիշերեցինք Ալիւրում եւ յաջորդ առաւօտ մեկնեցինք Ալիւրից եւ երեկոյ չեղած հասանք Արճէշ:

Արճէշից երեք չորս մղոն հեռաւորութեան վրայ Անդրանիկին դիմաւորելու էր եկել հինաւուրց հայդուկ, անվեհեր մարտիկ մշեցի Սմբատը, որ Անդրանիկի բացակայութեան վարում էր գնդի հրամանատարութիւնը: Սմբատին ուղեկցում էր մեր գնդի հեծելազօրի մի մասը:

Առանց ձիերից իջնելու, Անդրանիկն ու Սմբատը ողջագուրուեցին, ապա Անդրանիկն ինձ իր մօտ կանչեց եւ ասաց.

— Տղոցը քանի մը խօսք ըսէ:

Անակնկալ էր այդ թելադրութիւնը ինձ համար, բայց եւ այնպէս ես ջանացի մի քանի մտքեր իրար կապել:

Ես նախ մեր հրամանատարի՝ Անդրանիկի դրուատիքն արի, ապա սկսեցի բացատրել, որ ամենահանճարեղ հրամանատարն իսկ ոչինչ չի կարող անել, եթէ չլինեն նրան ենթակայ արի եւ

կարդալահ զինուորները։ Ցաղթանակը շահողը, տանողը որքան քաջ հրամանատարն է, նոյնքան իր բանակը, իր զինուորները...

Այս խօսքերիս վրայ էր, որ մէկ էլ Անդրանիկը իր ձիու գլուխը դարձրեց դէպի Արճէշ եւ ասպանդակեց։

Հեծելազունդը քառասմբակ հետեւեց նրան։

Ճառս մնաց կիսատ...

ԻՄ «ՐԱԶՎԵԴԿԱ»Ն...

Անդրանիկը Արճէշ հասնելուց յետոյ մեր գունդը երկու շաբաթի չափ մնաց Արճէշում։

Բերկրիից սկսած մինչեւ Ախլաթ հայկական գիւղերն ու աւանները Վանի լճի հիւսիսային, արեւկող ափի վրայ են։ Թէեւ յունուար ամիսն էր եւ ամէն կողմ ձիւն ու սառոյց, բայց արեւ օրերին լճի այդ քարքարոտ ափը այնքան տաք էր լինում, որ մեր տղաներից ոմանք քիչ էր մնում լճում լողանալու փորձութեան ենթարկուէին։ Լողանալը չլողացան, բայց այդպիսի արեւոտ օրերից օգտուելով իրենց ճերմակեղէնն էին լուանում լճի ափին, իսկ երբեմն էլ, արեւից տաքացած լճափնեայ քարերի վրայ նըստոտած, իրենց ոտքերը կախում էին լճի ջրերի մէջ։

Այդ արեւոտ օրերում լճի այդ ափը այնքան տաք էր լինում, որ ձիւնի ներկայութիւնը մեր շուրջը տարօրինակ էր թւում։ Իսկ լճափի քարքարոտ, ժայռոտ տեղերում ձիւնը բոլորովին հալւում էր եւ թւում էր, որ դարուն է եկել։

Այդպիսի արեւոտ «դարնանային» մի օր Անդրանիկը հրամայեց իր թիկնապահներին ձիերը թամբել եւ յայտնեց, որ գնալու է հետախուզման։ Անդրանիկը ինձ ազատել էր պահակութիւն, հետախուզում եւ նման պարտականութիւններ կատարելուց։ Այդ պատճառով էր, երեւի, որ իր հետ հետախուզման գնացողների մէջ իմ անունը չկար։ Բայց ես ինքս խնդրեցի, որ ինձ եւս թոյլ տայ միանալու իր պահակախմբին։ Անդրանիկը խնդրանքս չմերժեց։ Մինչեւ որ ես էլ իմ պատրաստութիւնը տեսայ, Անդրա-

նիկը հեծաւ իր Ասլանը եւ, իր պահակախումբը ետեւը ձգած, բռնեց դէպի արեւմուտք, դէպի Արծկէ (Ալջավազ) տանող ճանապարհը:

— Մեր ետեւէն եկուր, ասաց ինձ եւ քշեց իր ձին:

Վանի լճից հեռացած լեռները Արճէշի մօտ դալիս կուտակւում են լճափին եւ ամէն մի սար, ամէն մի բլուր, ամէն մի ժայռ կարծես մի ճիգով է բռնուած,— որքան կարելի է առաջ անցնել իր ետեւից եկողներից եւ առաջինը հասնել Բզնունեաց ծովի կապոյտ ջրերին:

Արճէշից անմիջապէս դէպի արեւմուտք ճանապարհը անցնում է այդ քար ու ժայռերի միջով՝ ջրերին մօտիկ:

Քանի որ Անդրանիկը եւ իր հեծելազունդը ինձնից առաջ էին, ոչ մէկ վտանգ կար ինձ համար մենակ գնալու ու հասնելու նրանց: Ճանապարհից դէպի աջ ժայռ ու լեռ էր, եւ ոչ մի կածան, ոչ մի արահետ չէր իջնում այդ ժայռ ու լեռներից ցած, դէպի իմ անցնելիք ճանապարհը, իսկ դէպի ձախ Վանի լճի ջրերն էին:

Լուսանկարչական գործիքս եւ զինուորական քարտէզի պայուսակը ուսիցս կախ, հրացանս թիկունքիս նետած, ձիուս սանձը աղատ ձգած, բռնեցի ինձնից առաջ անցած արշաւախմբի ճամբան:

Արճէշից հազիւ մէկ կամ երկու մղոն անցած, իմ առջեւ բացուեց մի բաւական ընդարձակ ծովախորշ: Դէպի աջ, դէպի հիւսիս Վանայ լճի ջրերը մխրճուել էին հողի սիրտը եւ յետ մղել ափը իր վրայի լեռ ու բլուրներով: Ծովածոցի եռանկիւնի կատարի վրայ մի փոքրիկ անտառ կար: Արճէշից եկող ճամբան նախ դառնում էր դէպի աջ, դէպի հիւսիս, հեռանում էր լճից, եւ եռանկիւնի մի կողմով հասնում էր մինչեւ անտառակը, անցնում անտառակի միջով, ապա մէկէն դէպի ձախ, դէպի հարաւ դառնալով կրկին մօտենում էր լճին:

Երբ հասայ այդ ծովախորշին եւ աչքս շուրջս ածեցի, տեսայ որ դիմացս, ծովախորշի միւս կողմը,— այնտեղ, ուր անտառակից դուրս եկած դլխաւոր ճանապարհը դէպի վեր, դէպի ժայռերն է բարձրանում՝ կանգնած է մեր ձիաւորներից մէկը: Ես, փոխանակ երկար ճանապարհին հետեւելու, կտրեցի անտառակի եւ լճի միջեւ հարթ տարածութիւնը, եւ կարճ, շեղակի շաւիղով հասայ միայնակ ձիաւորին:

— Ո՞ւր է Անդրանիկը, հարցրի ես:

— Հոն, վարը, ծառերուն մէջ, պատասխանեց կամաւոր ըն-

կերս, ձեռքը դէպի անտառակը ուղղելով։

— Իսկ դո՞ւ ուր ես գնում, հարցրի։

— Փաշան երեք տղաներ աւելի առաջ խրկած է, կ'երթամ ըսելու որ ետ դան։

— Ես կը գնամ եւ տղաներին կը կանչեմ։ Դու գնա եւ ասա Անդրանիկին, որ ես տղաների հետ կը դամ։

Խօսակիցս իր ձին քշեց դէպի անտառակը, իսկ ես շարունակեցի լճից վեր բարձրացող ժայռերի կատարներով դէպի Ալչաւաղ տանող ճամբան։ Քառորդ ժամ չանցած հասայ տղաներին եւ չորսս միասին բռնեցինք վերադարձի ճանապարհը։

Տղաներն ասացին, որ ոչ մի տեղ թշնամու հետքի չեն հանդիպած։

Համոզուած լինելով, որ իմ ուղարկած լուրի վրայ Անդրանիկը արդէն Արճէշ վերադարձած կը լինի, առանց շտապելու յետ էինք գնում դէպի Արճէշ։ Ոչ միայն չէինք շտապում, այլ եւ մէկերկու դեղանկար անկիւններում երեք ընկերներիս վար իջնել տուի ձիերից եւ լուսանկարեցի, ինչ որ իրենց շատ հաճոյք պատճառեց։ Ու այսպէս լաւ տրամադրութեամբ, պայծառ, արեւոտ մի օր, յաջող հետախուզում կատարած լինելուց յետոյ, չորս ընկերներով հասանք ծովախորշին եւ սկսեցինք վայրէջք դէպի անտառակը։

Այն կէտից, ուր սկսւում էր վայրէջքը եւ մինչեւ անտառակը այնքան մեծ տարածութիւն չէր, որ մենք իսկոյն չնկատէինք անտառակից դուրս, հարթութեան վրայ ձիաւորների մի խումբ։

Անդրանիկն էր, իր հետ մնացած ձիաւորներով։

Մի վատ նախազգացում ունեցայ, որ մենք սխալ ենք արել ուշանալով, եւ այդ ուշանալու պատասխանատուն ես էի։ Ես չէի մտածել, որ անձամբ հետախուզման դուրս եկած Անդրանիկը չէր վերադառնայ Արճէշ, մինչեւ որ իր հետ հետախուզման դուրս եկած բոլոր զինուորները չմիանային իրեն։

Մի քիչ արագացրինք մեր ձիերի քայլը։ Արդէն այնքան մօտ էինք խմբին, որ մեր ականջին էր հասնում Անդրանիկի ցասկոտ ձայնը, թէեւ իր բառերը յստակ չէինք լսում։ Իսկ երբ այնքան մօտեցանք, որ այլ եւս պարզ կարելի էր լսել իր ասածները, առաջին նախադասութիւնը, որ լսեցի, հետեւեալն էր՝ իմ հասցէին.

— Հը՛...Վարդգէս Ահարոնեան «բաղվեղկայի» կ'երթայ...

Իր ձայնի մէջ թէ՛ հեգնանք, թէ՛ վրդովմունք կար։

Ապա խօսքը մեր խմբին ուղղելով, հրամայեց.

— Հո՛ս եկէք։

Զորսս, իրար ետեւից քշեցինք մեր ձիերը դէպի Անդրանիկը։ Ես խմբի մէջ վերջինն էի։

Ընկերներս մէկը միւսի ետեւից մօտեցան Անդրանիկին։ Անդրանիկը բարձրացրեց իր մտրակը եւ երեսախառն մի հարուած իջեցրեց իրեն մօտեցած առաջին ընկերոջս, որ անմռունչ ընդունեց այդ սարսափելի հարուածը։ Նոյնը կրկնուեց նաեւ երկրորդի եւ երրորդի հետ։ Այդ բոլորը տեւեց հազիւ մի քանի երկվայրկեան։

Մահուան դատապարտուածի պէս ես էլ ձիս քշեցի դէպի Անդրանիկը եւ այդ մի քանի երկվայրկեաններում կայծակի արագութեամբ մտքեր անցան ուղեղիս միջից. «Այս ի՞նչ վերաբերմունք է... Սխալի համար չեն պատժի մարդու... Իսկ եթէ յանցանք ենք գործել, դրա համար զինուորական պատիժներ գոյութիւն ունեն... Իսկ սա՞... սա կոպտութիւն եւ անարդանք է... Ի՞նչ անեմ, ատրճանակս ճակատիս դնեմ այդ անարդանքից ազատուելու համար, թէ՞...»

Երեք չորս քայլ էր մնացել, որ ձիս հաւասարուէր Անդրանիկին, երբ նա յանկարծ իր ձիու դլուխը դարձրեց դէպի Արճէշ եւ ասպանդակեց։ Պահակախումբը քառատրոփ հետեւեց նրան։

Խորտակուած ու դլխիկոր ես էլ հետեւեցի իրենց։

ԱՍԼԱՆԸ

Փոքրիկ, դեղեցիկ դլուխ, մանրիկ ականջներ եւ հեզ, խելացի աչքեր ունէր այն նժոյդը։

Թուխ բիծերով զարդարուն գորշ գոյնի մորթը նրան տալիս էր վաղրի տեսք։ Նուրբ, բարակ ոտքերը մատնում էին նրա ազնուացեղ ծագումը։ Երբ սլանում էր քառատրոփ, իր ոտքերը կորցընում էին իրենց ուղղահայեաց դիրքը, ձգւում էին աջ ու ձախ եւ զուգահեռ կազմում ճանապարհի հետ։ Սրարշաւ վաղքի ժամանակ, թւում էր, թէ իր փորը քսւում էր դետնին։

Ասպանդակի մի թեթեւ շարժում հերիք էր, որ Ասլանը ռուն-

գերը լայն բացած, իր կեռ վզի կորութիւնն աւելի շեշտած՝ սլանար մրրկի պէս։

Սարայի կռուից յետոյ, Սարայի ասորիները նուիրել էին այդ նժոյգը Անդրանիկին։ Եւ Անդրանիկը կապուել էր Ասլանին, ինչպէս իր ամենահաւատարիմ զինակցին։

Որքան Ասլանի սրարշաւ վազքը, նոյնքան այդ ամեհի նժոյգին զսպելու ցանկութիւնն էր դրաւել Անդրանիկին։ Իր ուժեղ բազուկների համար հաճոյք էր իրենց կամքին ենթարկել այդ կատաղի նժոյգը։

Ասլանն, իր հերթին, շատ պիտի ուզէր իր քմահաճոյքներին ենթարկել իր տիրոջը, բայց զգում էր, որ այս հեծեալը տարբեր է իր ճանաչածներից։

Իրար բաղխուած երկու կամքերի մի խուլ պայքար, մի անդուլ մրցում էր, թէ ո՞վ է աւելի զօրաւոր։

Անդրանիկի ձեռքերի ոյժին միացել էր զոյգ երասանակներով սանձը, զսպելու համար Ասլանին։

Այդ խօլ պայքարի մէջ Անդրանիկը ձեռք էր բերել մի իրաւունք միայն՝ ուղած վայրկեանին դրաւել Ասլանի թամբը։

Ասլանն, իր հերթին, զիջել էր իր կռնակը միայն, բայց ոչ իր ազատութիւնը՝ սլանալու իր ուզած ուղղութեամբ եւ ուզած արագութեամբ, իր հետ տանելով իր թամբի վրայ արձանացած հեծեալին։ Երբ Ասլանը ցնցում էր բաշը եւ վար կախում գլուխը, այդ նշան էր, որ նա վերսկսում է տակաւին տանուլ չտուած պայքարը իր ազատութեան համար։

Անդրանիկի բազուկների մկանների վայրկենական պրկումը եւ երասանակների կարճուելը յիշեցնում էին Ասլանին, որ իր մարտահրաւէրն ընդունուած է։

Եւ երկու կամքերի մրցումը վերսկսւում էր։

Թէեւ Ասլանի թամբին վերջնականապէս տիրացած, Անդրանիկը, սակայն, դանդաղ ունէր Ասլանից.

— Օր մը այս շուն չան որդի ձին առնէ պիտի գիս եւ ուղղակի թուրքերուն բանակը տանէ։

Որքան գոհ պիտի լինէր Ասլանը, եթէ լսել ու հասկանալ կարողանար այդ բառերը։ Դա իր տիրոջ եւ մրցակցի պարտութեան խոստովանութիւնն էր գրեթէ։

Երբ իր թամբը պարապ էր եւ իր երասանակները գլխից վար կախուած, Ասլանը մեր դնդի ձիերի մէջ ամէնից հեզ, ամէնից խեղճ կենդանին էր։ Այդ պահերին մի փոքրիկ երեխայ իսկ կարող էր բռնել նրա սանձից եւ ուզած տեղը տանել։ Բայց երբ գունդը

շարժման մէջ էր եւ Անդրանիկը Ասլանի թամբի վրայ, այն ժամանակ այդ զարմանալի կենդանին բոլորովին կերպարանափոխուում էր։

Ասլանն իրեն համար սահմանած անխախտ օրէնքներ ունէր։

Որեւէ նժոյգ պէտք չէ որ Ասլանից առաջ անցնէր։

Այդ դեռ քիչ էր։

Իրեն հետեւող ոչ մի նժոյգ պէտք չէ այնքան մօտենար Ասլանին, որ իր սմբակների ձայնը հասնէր Ասլանի ականջին։

Լաւ էր, եթէ դարուն կամ ամառ էր եւ ճամբաները հարթ-հաւասար։ Բայց երբ ձմեռ էր եւ բարդ բարդ ձիւնը ծածկել էր լեռ ու ձոր, դաշտ ու ճամբայ եւ բարձրացել մինչեւ մեր ձիերի կուրծքերը, այն ժամանակ դրեթէ տանջանք էր տեսնել Ասլանի ճիդերը, անխախտ պահելու համար մեր հեծելազօրի միւս ձիերին իրենից բաժանող տարածութիւնը։ Առաջ ընկած, մեն-մենակ, կուրծքը դէմ տուած ձիւնի հսկայ կոյտերին, նա ճեղքում, ճամբայ էր բացում ձիւնի դաշտերում, ինչպէս ալիքները պատառող նաւը լայնածաւալ ծովում։

Եւ դարձեալ զանգատ ունէր Անդրանիկը, այս անգամ իր հաւատարիմ զինակիցներից.

— Սա տղաքը բնաւ չեն խորհիր, թէ թշնամին կրնայ զարնել ինծի. միշտ կը ձգեն, որ ես մինակս առջեւէն երթամ։

Արդար չէր Անդրանիկի տրտունջը։

Իր զինակիցների մէջ չկար մէկը, որ խնայէր կուրծք դէմ դնել, պաշտպանելու համար իր հրամանատարին թշնամու հարուածից։ Հետեւակ կռիւների մէջ քանի՛-քանի անգամներ նուիրուած զինակիցները ստիպուած են եղել, ոտքի տակ տալով յարդանքն ու ակնածանքը դէպի իրենց հրամանատարը, ետ քաշել Անդրանիկին կռուի առաջաւոր դիրքերից դէպի աւելի ապահով դիրքեր։

Տարբեր էր, երբ Անդրանիկը Ասլանի վրայ էր։ Այդ դէպքում Անդրանիկի ապահովութեան խնդիրը լուծուղը ոչ Անդրանիկն էր, ոչ էլ իր զինակիցները, այլ Ասլանը։ Ասլանի վրայ Անդրանիկը ուզէր, թէ չուզէր, միշտ առաջ էր, շատ առաջ իր դնդից։

Ասլանը սիրում էր Անդրանիկին։

Մի օր Անդրանիկը Դատվանից Սուրբ էր գնում։

Քսան-քսանհինգ ձիաւորներ էինք իր հետ։

Ձիս յոգնած էր եւ, մի ընկերոջ հետ, ետ մնացի խմբից։

Ոլորապտոյտ ճամբան, Վանի լճի հարաւային եզերքով, մերթ կորչում էր, մերթ նորից երեւում։ Ճանապարհի ոլորների

հետ մեր առջեւից գնացող խումբը մերթ ծածկւում էր, մերթ կրկին երեւում։

Ոչ հեռու, լճահայեաց բարձր մի բլրի լանջին երեւաց Սուրբ գիւղը։ Այնտեղ պիտի հանգստանայինք։

Մեր առջեւից գնացող խումբը շեղուեց ճանապարհից եւ մոտեցաւ լճին։ Ձիերը քշեցին լիճը։ Գարնան հալոցի ժամանակ էր, ձիերի ոտքերը ցեխոտած։ Նախ քան ախոռ քաշելը պէտք էր մաքրել կենդանիներին։ Անդրանիկը միշտ ուշադիր էր, որ ձիերի հոգատարութիւնը չպակասի։

Թէեւ այն տեղը, ուր խումբը ձիերը քշեց լիճը, բաւական հեռու էր գիւղից, ոտքով մինչեւ գիւղը քայլելու համար, եւ ճամբաներն էլ ցեխոտ, բայց մենք նկատեցինք, որ լճից դուրս գալուց յետոյ, ամբողջ խումբը իջել էր ձիերից։ Երբ հասանք խըմբին, տեսանք որ, Անդրանիկը ոտքից դլուխ թրջուած էր։

Իմ զարմացական հարցումին, թէ ինչո՞ւ Անդրանիկը թըրջուել է, տղաներից մէկը պատասխանեց, որ Անդրանիկը լիճն է ընկել եւ հասկացրեց, որ շատ հարց ու փորձ չանեմ։

Հասանք Սուրբ։

Գիւղում պահակաղօր կար եւ, իբրեւ բացառութիւն, նաեւ մի քանի տուն հայ բնակիչներ։

Անդրանիկը հագուստները փոխեց, կրակ վառել տուեց եւ նստեց կրակի առջեւ։

Մի դաւաթ կոնեակը եւ ծխախոտը ցրեցին իր մռայլը եւ պատմեց իր դլխին եկածը։

Երբ ձիերը քշել են լիճը, Ասլանը, ըստ իր սովորութեան, ամէնից առաջ է անցել։ Ափից հաղիւ 10–15 քայլ առաջացած, ուր ջուրը դեռ ծանծաղ է, Ասլանը մէկէն ծառացել է եւ Անդրանիկին վար նետել։ Ասլանը յանկարծ զգացել է, որ իր առջեւ լճի յատակը մէկէն սկսել է խորանալ եւ, վտանդից յետ քաշուելու համար, ընդոստ ծառացել է, վար ձգելով Անդրանիկին։

— Ջուրի մէջ զգացի, թէ ինչպէս Ասլանը կը ջանար իր առջեւի ոտքերը ետ բերել ետեւի ոտքերու քով, ամուր դետնի վրայ։ Ու այդ ատեն էր, որ իր մէկ ոտքը եկաւ իմ դլխուս։ Ձեռ կրնար երեւակայել, թէ խեղճ կենդանին ի՞նչ ճիդ ըրաւ որ, առանց դլուխս ճզմելու, միայն երեք ոտքով կարենար ազատիլ այդ վիճակէն։ Շատ խելացի է այդ շուն շան որդի ձին, լրացրեց իր պատմութիւնը ժպտալով Անդրանիկը։

Անդրանիկի տրամադրութիւնը կարելի էր չափել իր վերաբերմունքով դէպի Ասլանը։

Ճիշդ է, որ նա միշտ էլ ուշադիր էր դէպի իր հաւատարիմ ընկերը, միշտ հոգածու, որ Ասլանին մաքուր պահեն, որ նա խոտն ու դարին անպակաս եւ, ուր որ հնարաւոր է, ախոռը տաք ու չոր լինի: Նա այդ հոգածութիւնն ունէր նաեւ մեր գնդի հեծելազօրի միւս ձիերի վերաբերմամբ: Կռուից կամ արշաւանքից յետոյ, երբ ամէն մի զինուոր շտապում էր իրեն համար տաք ու հանգիստ անկիւն գտնել, Անդրանիկը սաստում էր ձիաւորներին.

— Սուտ չէ Թուրքին ըսածը, թէ հայը երբ ձի հեծնէ՝ Աստուած կը մոռնայ, երբ ձիէն իջնէ՝ ձին կը մոռնայ: Հոգ տարէք ձեր ձիերուն, օր մը ձեր կեանքը փրկողն անոնք կրնան ըլլալ:

Երբ բանակը շարժուելու հրաման չունէր, եւ Անդրանիկը պատուիրել էր, որ Ասլանին դուրս հանեն ախոռից, դա նշան էր, որ Անդրանիկի տրամադրութիւնը տեղն է, եւ իր ձեռքով պիտի հոգ տանի Ասլանին: Բերիչ, տաք ջուր եւ սապոն էր պահանջում, սոթտում իր թեւերը եւ սկսում էր քերել ու լուանալ Ասլանին:

Ասլանից դուրս, ուրիշ ոչ ոք Անդրանիկի քնքշութեան հասնող ուշադրութեան ու խնամքին չէր արժանանում:

«ԵՍ ՊԻՏԻ ՁԵՐ ՎԵՐԻՆ ՀՐԱՄԱՆԱՏԱՐՆ ԸԼԼԱՅԻ···»

1915-ի ամառը, Վասպուրականի մեծ նահանջից առաջ, ռուսական ճակատը այդ շրջանում սկսւում էր Վանի լճի հարաւ արեւմտեան ափից՝ Դատվանից, ապա անցնում Ախլաթի վրայով մինչեւ Մանազկերտ ու այնտեղից էլ Դուրթախի վրայով մինչեւ Ալաշկերտ:

Վասպուրականի նահանջից յետոյ այդ ճակատը յետ էր քաշուել դէպի արեւելք եւ կրճատուել:

Երբ Անդրանիկը հասաւ Արճէշ, այդ կրճատուած ճակատը սկսւում էր Ոստանից, ապա անցնելով Վանի եւ Բերկրիի վրայով հասնում էր Արճէշ եւ այնտեղից Պատնոս ու Ալաշկերտ:

Պատնոսում գտնւում էր Դրոյի գունդը:

Արճէշը կանոնաւոր եւ անկաշկանդ կապ ունէր Վանի հետ: Պատնոսի հետ Արճէշի կապը ոչ միայն կանոնաւոր չէր, այլ եւ յարատեւ վտանգի ենթակայ:

Արճէշը Պատնոսից բաժանուած է Ծաղկանց լեռներով — Ալա դաղով։ Արճէշից Պատնոս տանող միակ դիծը անցնում է Ալադաղը կտրող Զիլանի ձորով, որ ենթակայ էր այդ շրջանում ապրող Զիլանի քիւրդ ցեղախմբի յարձակումներին։

Եւ ահա, Արճէշի ռուսական զօրախմբի եւ Պատնոսի շրջանի ռուս ոյժերի միջեւ կապ հաստատելու համար մեր դունդը եւ ռուս կողակների մի հարիւրակ Արճէշից, եւ Դրոյի դունդը Պատնոսից մի քանի անգամ արշաւանք են կազմակերպել Զիլանի ձորը թշնամուց ազատ պահելու համար։ Բայց ամէն անգամ Զիլանի ձորը



թշնամուց մաքրելուց յետոյ, երբ մեր ոյժերը Արճէշ ու Պատնոս են վերադարձել, քիւրդերը, շատ չանցած, նորից լցել են Զիլանի ձորը։ Դրան յաջորդել է նոր արշաւանք։ Եւ այսպէս, հոկտեմբերի ու նոյեմբերի ընթացքում մեր եւ Դրոյի դունդը ստիպուած են եղել մի քանի անգամ, բաւական զոհեր տալով մաքրել Զիլանի ձորը, մինչեւ որ դեկտեմբերին ձիւնը ծածկել է Ալա դաղը եւ անկարելի դարձել ռազմական շարժումները այդ շրջանում։

Զիլանի ձորի կռիւները ղեկավարել էր Սմբատը եւ այդ

կռիւների մասին զեկուցումը Սմբատը տուեց Անդրանիկին, հէնց որ Անդրանիկը Արճէշ հասաւ:

Անդրանիկի Արճէշ հասնելուց գրեթէ երկու շաբաթ էր անցել, բայց ռազմական շարժման ոչ մի նշան չէր նկատւում Արճէշի ռուսական զօրամասի մէջ: Նոյեմբերի վերջից սկսած մինչեւ յունուարի կէսը ռազմական ոչ մի շարժում չէր կատարել Արճէշի զօրամասը: Ի՞նչ էին ռուս հրամանատարութեան յետագայ ռազմական ծրագիրները, մինչեւ ե՞րբ պիտի շարունակուէր այդ սպասողական դրութիւնը, մենք չգիտէինք: Ինչպէս յետագային տեսանք, ռուս անմիջական հրամանատարութիւնը ռազմական որեւէ գործողութեան մասին մեր գնդին հրաման էր տալիս կամ հէնց այդ գործողութեան օրը եւ կամ մէկ օր առաջ:

Նախորդ ամառուան ռուսական խուճապահար նահանջի դառնութիւնը դեռ չէր մոռացել Անդրանիկը: Նա համոզուած չէր, որ նոյնը տեղի պիտի չունենայ նաեւ այս տարի, հէնց այս ձմեռ: Եւ եթէ ռուսները նորէն հապճեպով քաշուէին այս տեղերից, Անդրանիկը պատրաստ պիտի լինէր իր գլխի ճարը տեսնելու, նա պիտի մտածէր, ռուսներից անկախ իր գունդը փրկելու մասին:

Նա չէր վստահում ռուս հրամանատարութեան: Մանաւանդ սկսած այն օրուանից, երբ ցար Նիկոլայ Երկրորդի հօրեղբօրորդի մեծ իշխան Նիկոլայ Նիկոլայեւիչը արեւմտեան ճակատի դերագոյն հրամանատարի պաշտօնից հեռացուել էր եւ նշանակուել ընդհանուր հրամանատար Կովկասեան ճակատի: Մեզ հասած տեղեկութիւնն այն էր, որ մեծ իշխան Նիկոլայը հայատեաց մէկն է: Մեծ իշխան Նիկոլայի հրամանատարութեան օրով Կովկասեան ճակատի հրամանատարներին ուղղուած մի քանի կարգադրութիւններ ու հրամաններ եկան հաստատելու մեր ստացած տեղեկութիւնները: Վերջապէս մեծ իշխան Նիկոլայի հրամանով էր, որ 1916-ի սեպտեմբերին ցրուեցին հայ կամաւորական գնդերը: Արճէշում մեզ տեղեկութիւն հասաւ, որ Կովկասեան բանակի հրամանատարութիւնը ռազմաճակատի մեծ ու փոքր հրամանատարներին ուղղած գաղտնի հրամանով խստիւ հրահանգել էր, որ Թուրքերից գրաւուած վայրերում ռուս բանակը լաւ վերաբերմունք ցոյց տայ տեղացի Թուրք եւ քիւրդ բնակչութեան: Միաժամանակ հրահանգուած էր, միջոցներ ձեռք առնել, որ հայ կամաւորները որեւէ նեղութիւն չպատճառեն Թուրքերին եւ քիւրդերին:

— Ասոնց վստահելու չէ, ասաց Անդրանիկը մի օր. սա քարտէսդ հոս բեր նայինք:

Իր առջեւ փռեցի երկու վերստանոց կոչուող ռուսական պատերազմական քարտէզը եւ ցոյց տուի իր փնտռած կէտերն ու ճամբաները։

Քարտէզի վրայ ծռած Անդրանիկը ուշի ուշով ուսումնասիրում այն ուղիները, որոնք պիտի հանէին մեզ Թշնամու շրջապատումից։

Զգիտեմ թէ ի՞նչ ճամբաներ ընտրեց Անդրանիկը, բայց գիտէի, վստահ էի, որ ինչպէս էլ կտրէր Թշնամին մեր նահանջի ճամբաները, այս հին օրերի փորձուած հայդուկը, եթէ դիպուածի զոհ չդնար, պիտի օղակումից դուրս հանէր իր դունդը։

Այդ բանում Անդրանիկին կարելի էր անսահման վստահել։

Անդործութիւնը, սպասողական անորոշ վիճակը ջղայնացնում էր Անդրանիկին։

Անդրանիկի բնակութեան համար տրամադրուած էր երկյարկանի մի տուն, որի երկրորդ յարկն ունէր բաւական ընդարձակ մի սենեակ։ Դա մեր ննջարանն էր, ուր Անդրանիկի հետ քնում էինք մի քանի հոգի՝ Սմբատը, Անդրանիկի քրոջ որդի Երուանդը, ես եւ Անդրանիկի երեք թիկնապահները։

Մի օր, կէս դիշերից շատ անց, ես ընդոստ զարթնեցի բարձրաձայն խօսակցութիւնից։

Երբ աչքերս բաց արի, երկու մոմերի աղօտ լոյսի տակ տեսայ Անդրանիկին, նստած իր անկողնում։ Նրա դիմաց նստած էր Սմբատը։ Մի քիչ աւելի հեռուն նստոտած էին թիկնապահ տղաները։

Անդրանիկը, յուզուած, շարունակում էր, ըստ երեւոյթին, բաւական ժամանակ առաջ սկսած իր խօսքը։

Նա ասում էր.

— Ի՞նչ եղաւ, ո՞ւր գնաց Մշոյ Դաշտի հարիւր հազարաւոր ժողովուրդը. ի՞նչ եղան, ո՞ւր դացին սասունցիք։ Մի՞թէ ամէնքը մեռան, մի՞թէ ոչ ոք մնաց Մշոյ Դաշտի եւ Սասնոյ մէջ... Կուզան, կ՚անցնին աչքերուս առջեւէն մեծ ու պզտիկ, այր ու կին, ծեր ու երիտասարդ... հազարնե՛րով, հազարներով... ու չեմ կրնար քնանալ... Ի՞նչ եղաւ Կոտոյի Հաջին, ի՞նչ եղաւ Վարդան վարդապետը...

Ապա մի կարճ պահ լռելուց յետոյ, ցասումով դարձաւ դէպի ակնածութեամբ իրեն ունկնդրող զինակիցները.

— Ա՛հ, ե՛ս պիտի ըլլայի ձեր վերին հրամանատարը, ե՛ս։ Պիտի ձդէի, որ ասանկ հանդիստ քնանայի՞ք հոս։ Օր ու դիշեր քալեցնէի պիտի, մինչեւ որ հասնէինք Մշոյ Դաշտ, Առաքելոց

Վանք, մինչեւ որ ելլէինք Սասուն ու Տալւորիկ։ Բայց հիմա ես ի՞նչ կրնամ ընել... ես ուրիշի հրամանին ենթակայ, իմ ձեռք ու ոտք կապած...

Խօսում էր, խօսում, թափում էր սրտի դառնութիւնն ու կըսկիծը, որ բոլորիս էր, եւ իրար ետեւից վառում էր ծխիկները, որոնց ծուխը էլ աւելի աղօտացնում էր հաղիւ պլպլացող մոմերի արդէն խակ աղօտ լոյսը։

Մշեցի Սմբատը, որի սիրտը անտարակոյս խոցոտում էին Անդրանիկի խօսքերը, այնուամենայնիւ աշխատում էր հանդարտեցնել իր աւագ ընկերոջը։

Գրեթէ լուսաբաց էր, երբ Անդրանիկը դլուխը կրկին բարձին դրեց։

Սմբատը եւ միւսներս հետեւեցինք մեր հրամանատարի օրինակին։

«Ե՛Ս ԵՄ ՊԵՏԸ»

Յունուարի կէսն է։

Մեր զօրամասը հրաման է ստացել շարժուել Արճէշից դէպի արեւմուտք եւ դրաւել Սիփանի ստորոտում Նորշէն հայկական գիւղը։

Ամպամած, մռայլ առաւօտ է, երբ շարժւում ենք առաջ։

Զօրամասի յառաջապահի դերը յանձնուած է մեր դնդին։ Անդրանիկի ուղածն էլ հէնց այդ է,— առաջինը կռուի բռնուել թշնամու հետ։

Մինչեւ կէսօր անարդել շարժւում ենք դէպի արեւմուտք։ Ոչ մի տեղ թշնամի չի երեւում։ Մեր ձախ կողմը Վանայ լիճն է, որ մերթ մօտենում, մերթ հեռանում է մեզնից, նայած թէ ճանապարհը որքան մօտիկ կամ որքան հեռու է անցնում լճափից։

Թէեւ երկինքը շարունակում է ամպամած լինել, բայց ամպերը աւելի նօսրացած են եւ վաղ առաւօտեան մշուշապատ մըթնոլորտը երթալով պայծառանում է։

Ճանապարհը անցնում է լճի ափի հետ դրեթէ զուգահեռ։ Ճանապարհի երկարութեամբ մեղ ուղեկցում է բլուրների եւ սարերի համարեա անընդհատ մի շղթայ։

Կէսօրն անց էր, երբ մեր զօրասիւնը հասաւ մի բաւական ըն-

դարձակ լեռնադաշտ։ Մեզ ուղեկցող լեռնաշղթան հեռացել է լճից դեպի հիւսիս։ Դրա փոխարէն, հիւսիսից դէպի հարաւ, լճափին ուղղահայեաց տարածւում է մի բաւական բարձր լեռնաշղթայ, որ պատնէշի նման փակել է մեր ճանապարհը։ Մեր ճանապարհը անցնում է այդ լեռնաշղթայի դրեթէ մէջտեղից։

Մեր յառաջապահները այդ լեռնաշղթայի ստորոտը չհասած,


Սիսիան
Ամուլ
Ամիրան
Ամիրան
Գեղարքունիք
Գեղարքունիք
Գեղարքունիք

Անդրանիկը հրամայեց մեր դումարտակին պատրաստուել կռուի։

Մի կողակ սրարշաւ հասաւ մեզ եւ պատուի կենալով Անդրանիկի առջեւ, ասաց, որ գնդապետ Վասիլեւը իր մօտ է կանչում Անդրանիկին։ Անդրանիկը իր ձիու գլուխը դարձրեց դէպի գնդապետի գտնուած տեղը։ Ես եւ կողակը կրնկակոխ հետեւեցինք իրեն։ Շատ չանցած հասանք մի քանի սպաներով շրջապատուած գնդապետ Վասիլեւին։

Գնդապետը, իմ միջոցով, դիմեց Անդրանիկին.

— Ի՞նչ է պատրաստուում անել Անդրանիկը։

Գնդապետի հարցումը Թարգմանեցի Անդրանիկին։

— Ըսէ, որ կռուի կը պատրաստուիմ. Թշնամին արդէն կրակ կը տեղայ, պատասխանեց Անդրանիկը։

Երբ իր պատասխանը Թարգմանեցի, գնդապետն ասաց.

— Մեզ հրամայուած է գնալ եւ գրաւել Նորշէնը, բայց կըռուի չբռնուել։

— Բայց Թշնամին բռնած է լեռնակատարները եւ գոցած է Նորշէն տանող ճամբան։ Առանց կռուի Թշնամին ճամբայ չի տար մեզի, պատասխանեց Անդրանիկը։

— Միեւնոյն է, մենք կռուի հրաման չունենք, նորից պնդեց գնդապետ Վասիլեւը։

— Ըսէ ատոր, որ ես չեմ ձգեր, որ Թշնամին կրակ բանայ իմ տղոց վրայ եւ անոնք չզարնեն, պատասխանեց Անդրանիկը, մի քիչ բարձրացնելով իր ձայնը։

Երբ Անդրանիկին վերջին խօսքերը Թարգմանեցի Վասիլեւին, նա վրդովուած ասաց.

— Սկաժիտէ եմու, չտօ զդես եա՛ նաչալնիկ ատրեադա։

(Ասացէք նրան, որ այստեղ ես եմ զօրամասի պետը։)

Ես գիտէի, որ Անդրանիկը ինը տարի ապրել էր Բուլղարիայում եւ ուստի պէտք է ծանօթ լինի բուլղարերէնին, որ բաւական նման է ռուսերէնին։ Բացի դրանից, գրեթէ մէկ ու կէս տարուայ շփումը ռուս բանակի հետ զինուորական աստիճանների անուններ եւ զինուորական հրամաններ էր սովորեցրել Անդրանիկին։ Այդ պատճառով չզարմացայ, երբ Անդրանիկը, այլ եւս առանց սպասելու իմ Թարգմանութեան, աջ ձեռքը զարկեց իր կրծքին եւ, իր հերթին վրդովուած, նետեց զարմացած ռուսին.

— Եա՛ նաչալնիկ։

(Ես եմ պետը։)

Ապա ձիու գլուխը դարձրեց դէպի մեր դումարտակը եւ երբ

այնքան մօտեցանք դումարտակին, որ կամաւորները կարող էին լսել իր ձայնը, նա վաշտերին նետեց իր հրամանը.

— Ցէպ, պերեօդ... (Շղթա՛յ, յառա՛ջ):

Անդրանիկը երբ զայրացած էր, հրամայում էր ռուսերէն եւ հայհոյում էր Թուրքերէն:

Մեր վաշտերը շղթայ կազմեցին եւ սկսեցին լեռնաշղթան ի վեր մագլցել դէպի Թշնամու դիրքերը: Թշնամու կրակը սաստկացաւ: Այժմ կանոնաւոր համազարկեր էին պայթում մեր շարքերի դլխին:

Անդրանիկը, առանց ձիուց իջնելու, գնդակների տարափի տակ հետեւում էր կռուին: Ես ստիպուած էի իր կողքը մնալ, նոյնպէս առանց ձիուցս իջնելու: Գնդակները սուլում էին դլխիս վրայից, ականջներիս տակ: Այդ վայրկեաններին ես շատ պիտի ուզէի լինել շղթայ կապած զինակիցներիս հետ, լեռն ի վեր մագլցելիս, մի քարի ետեւ, մի փոսի մէջ աւելի ապահով պիտի զգայի Թշնամու գնդակներից, քան Թէ ձիուս վրայ, գրեթէ բաց դաշտում կանգնած, իբրեւ փառաւոր Թիրախ Թշնամի հրացանաձիգների համար:

Այդ մտքերս ընդհատեց Անդրանիկի ձայնը.

— Տղա՛յ, գնա ըսէ այդ փոլքովնիկին, որ Թնդանօթները բանալ տայ եւ ծեծէ, նայէ՛, աս, աս եւ այն կատարները,— եւ Անդրանիկը ձեռքով ցոյց տուեց Թշնամու այն դիրքերը, որ պէտք է ռմբակոծուէին:

Ես շտապեցի գնդապետ Վասիլեւի մօտ եւ հաղորդեցի նրան Անդրանիկի ասածը: Գնդապետը լսեց, բայց ինձ ոչինչ չպատասխանեց: Սակայն, երբ ինձ Անդրանիկից բաժանող տարածութեան հաղիւ կէսն էի անցել, մեր Թնդանօթներն սկսեցին որոտալ եւ պայթող ռումբերի ծուխը կախուեց ճիշդ այն կատարների վրայ, որ մատնանշել էր Անդրանիկը:

Մեր վաշտերը շարունակում էին առաջանալ Թշնամու կրակի տակ: Մերոնք դեռ լեռնաշղթայի բարձրութեան կէսին չէին հասած, երբ Թշնամու կրակը սկսեց նուազել եւ շատ չանցած՝ խսպառ դադարեց: Թշնամին յետ քաշուեց լեռնաշղթայի ետեւը: Դէպի Սիփան տանող ճամբան բաց էր մեր առջեւ:

Անդրանիկը կրկին դարձաւ դէպի ինձ.

— Գնա՛ ըսէ այդ հէրիֆին, որ ճամբան բաց է, թող դայ ու քալէ:

Թշնամին այլ եւս հապճեպով նահանջում էր:

Մեր Թնդանօթները ծեծում էին նրա նահանջի ճամբան:

Այդ կռուի ընթացքում թշնամին հրետանի հրապարակ չբերեց։ Պարզ էր, որ մեր դէմ կռուողները կանոնաւոր բանակի յետնապահ եւ հետախոյզ խմբեր են եւ աւելի շատ քրդական անկանոն ռազմիկներ։ Թուրքական բանակի կանոնաւոր ոյժը այս ճակատի վրայ յետ է քաշուել մինչեւ Արծկէ (Ալջաւազ), թերեւս մինչեւ Ախլաթ։

Դեռ երեկոյ չեղած մենք հասնում ենք Սիփանի ստորոտը եւ դրաւում Նորշէն գիւղը, որ մեր դումարտակին հրամայուած է պահել իր ձեռքում, մինչեւ նոր կարգադրութիւն։

ՆՈՐՇԷՆՑԻ ԿՐՊՕՆ

Երկու օր Նորշէնում բանակելուց յետոյ, մեր ղնդին հրամայուեց փոխադրուել Փէշնագոմեր գիւղը։

Թէ՛ Նորշէնը եւ թէ Փէշնագոմերը գտնւում են Սիփանի արեւելեան ստորոտներում։ Նորշէնը Սիփանից դէպի արեւելք ձգուող բլուրներից մէկի վրայ է, մինչ Փէշնագոմերը Սիփանի բոլորովին ստորոտում տարածուող բաւական ընդարձակ մի դաշտավայրի վրայ։ Փէշնագոմերը գտնւում է դէպի Արծկէ — Ալջաւազ տանող ճանապարհի վրայ։ Նորշէնից Փէշնագոմեր մեր փոխադրուելը նշան է, որ արշաւանքը վերսկսուելու է։

Այստեղ չկան այլ եւս Արճէշի գրեթէ դարնանային արեւը եւ ջերմ օդը։ Սիփանը ոտքից մինչեւ կատար թանձր ձիւնի սաւան է առել իր վրայ։ Ձիւնի հաստ շերտով է ծածկուած նաեւ Փէշնագոմերի դաշտը։

Արշաւանքի հրամանի ենք սպասում, բայց այդ հրամանը դեռ չի գալիս։

Անդրանիկը, իր անմիջական շրջապատի մարդկանցով, տեղաւորուել է մի ընդարձակ թոնրատան մէջ։ Թոնրի մէջ ճարճատող կրակը ախորժ ջերմութիւն է տարածում։ Կէսօրուայ ճաշից յետոյ Անդրանիկն ու Սմբատը մի մի գաւաթ սեւ սուրճ իրենց առջեւ դրած՝ զրոյցի են բռնուած։

Իրենց հերթապահութիւնը լրացրած երկու պահակներ ներս մտան, ոտքից գլուխ ձիւնով ծածկուած։ Նրանց հետ ներս մտաւ 11–12 տարեկան մի տղայ։ Գլխին մի քոլոզ, վրան բաճկոնի նման մի բան, բարակ, կապոյտ սատինից մի տաբատ, ոտքերին տրեխ եւ բրդէ գուլպաներ։

— Ո՞վ է այդ տղան, հարցրեց Անդրանիկը։

— Հայ տղայ մըն է, փաշա, Ալջաւազի կողմէն կուգար, Սիփանի փէշերէն վար իջաւ, պատասխանեց պահակ կամաւորներից մէկը։

— Հոս եկուր, նայիմ, տղայ,— դարձաւ Անդրանիկը տղային։

Տղան վարանումով մօտեցաւ Անդրանիկին։

— Անունդ ի՞նչ է, հարցրեց Անդրանիկը։

— Կրպօ, պատասխանեց տղան. ես Նորշէնցի եմ, մեր գիւղ հոնա սարի վրայ.—ու ձեռքը մեկնեց իրենց գիւղի ուղղութեամբ։

— Ուրկէ՞ կուգաս, տղայ, ինչպէ՞ս գտար մեզ, շարունակեց իր հարց ու փորձն Անդրանիկը։

— Ես Քոչերերէն կուգամ։ Հինգ օր առաջ քիւրդեր Նորշէնէն եւ Փէշնադոմերէն փախան Քոչերեր։ Իմ աղէն ալ էնոնց խետ էր։ Էն վախտ որ քրդեր սկսան իրենց քոչ կապել, ես խասկցայ, որ ուռուս կուգայ։ Պահուըտեցայ, որ մնամ Նորշէն, չուրի ուռուս գայ։ Աղաս խասկցաւ, գտաւ զիս, տփեց, ըսաւ որ գլուխս կը կտրէ, թէ որ իրեն խետ չերթամ։ Գացի իր խետ չուրի Քոչերեր։ Գացի, ամմա, խորհեցայ փախիլ։Երէկ չէ առջի օր, երբ մութն ինկաւ, երկու հաց դողցայ, պախեցի, պառկեցայ եւ սուտ քուն ըրի։ Էն կախ որ ամէնքը քնացան, ես յուշիկ տունէն դուրս ելայ, բռնեցի Փէշնադոմերի ճամբան ու քալեցի։ Քալեցի չուրի լուս, լուսուն ճամբան ձգեցի, կը վախնայի քիւրդ եա տաճիկ զիս տեսնան։ Ելայ Սիփանայ փէշ, նստայ քարի մը տակ, փշուր ըմ խաց կերայ, դինջացայ, ամմա իմ ձեռ ու ոտ պաղաւ, պուղ կտրաւ։ Երբ իրիկուն եղաւ, ելայ նորէն քալեցի, քալեցի, չուրի լուսուն խասայ Փէշնադոմերայ վերի քարեր։ Հոնտեղէն տեսայ, որ մուխ կ'ելլէ Փէշնադոմերայ երդիքներէն. ըսի՝ փառք Աստծու, ուռուս հոս է։ Ցուշիկ, յուշիկ իջայ Փէշնադոմերայ քարերէն, տեսայ ձեր խարախօլ։ Ձեր խարախօլ կանչեց.— Տղայ, դուն վո՞վ ես։ Ըսի՝ ախպրտիք, ես խայ եմ։ Էն կախ խարախօլ առաւ զիս հոս բերաւ։

— Տղայ, դուն ի՞նչպէս ինկար այդ քիւրդ աղային ձեռքը, հարցրեց Անդրանիկը։

— Խերու դարուն քրդեր զարկին մեր գեղի վրայ, թալեցին ու ջարդեցին։ Իմ խէր ու մէր սպաննեցին, իմ քրոջ նշանած մորթեցին, զիս ալ, իմ քրոջ խետ քիւրդ աղա Մամադ առաւ տարաւ։ Իմ քուր ըրաւ իրեն կնիկ, զիս ալ կարգեց հօտաղ իր ոչխարներու վրայ։ Ա՛խ, ախպրտի՛ք, դուք չէք գինայ մենք ինչ քաշած ենք

աղ անօրէններու ձեռքէն։ Իմ խեղճ քուր մնաց այդ չուն քիւրդին ձեռք։ Այդ անօրէն թափ թաժա տասնոց մ'ունէր։ Ինչ ըրի չըրի, չկրցի դողնալ։ Թէ որ դողնայի, ես ալ քիւրդ մը, եա թուրք մը կը զարնէի, իմ սիրտ կը ռահաթնար... Վա՜խ, իմ խեղճ քուր,— մրմնջաց Կրպօն եւ իր աչքերը թացացան։

— Տարէք այս տղան, կերակրեցէք եւ հոդ տարէք, — ասաց Անդրանիկը։

Անդրանիկի թիկնապահներից երկուսը տարան Կրպոյին, նստեցրին տաք թոնրին մօտիկ եւ կերակրեցին ու հիւրասիրեցին տղային, ով ինչով կարող էր։

Շատ չանցած դրսից լուր եկաւ, որ Սիփանի լանջերից մի ուրիշ մանուկ է իջնում։ Կրպոյին հոդ տանող երկու կամաւորները դուրս ելան տնից նորեկին դիմաւորելու։ Կրպօն, որ արդէն տաքացել ու կշտացել էր, միացաւ նրանց։

Բաւական ժամանակ անցաւ։ Եթէ նոր եկող տղան այնքան մօտեցած է եղել Փէշնադոմերին, որ մեր պահակները տեսել են նրան եւ լուր են ուղարկել մեր հրամանատարին, այդ նորեկին արդէն պէտք է որ բերած ու հասցրած լինէին մեր բնակած տունը։ Մինչդեռ լուր բերելու գնացողներն էլ չվերադարձան։ Նոյնիսկ Անդրանիկը, որ հետաքրքրուած էր տեսնելու այդ նոր մանուկին հարցրեց, թէ ինչո՞ւ ուշացան գնացողները։ Ներսը դըտնուող կամաւորներից մէկը դուրս ելաւ լուր բերելու։ Դուրս ելաւ տնից եւ գրեթէ անմիջապէս վերադարձաւ։ Նրա յետեւից ներս մտան նորեկին բերելու համար գնացած երկու կամաւորները եւ Կրպօն։

Երկրորդ տղան չկար։

— Ո՞ւր է միւս տղան,— հարցրեց Անդրանիկը։

Երկու կամաւորները, թուաց թէ, մի քիչ վարանեցին անմիջապէս պատասխանելու Անդրանիկին։

Մի քիչ ջղայնացած, Անդրանիկը կրկին հարցրեց.

— Ձեզի կ'ըսեմ՝ ի՞նչ եղաւ միւս տղան։

— Տղան մեռաւ, փաշա, պատասխանեց կամաւորներից մէկը։

— Ի՞նչպէս թէ մեռաւ,— զարմացած հարցրեց Անդրանիկը։

— Կրպօն զարկաւ, փաշա,— եղաւ պատասխանը։

— Ինչո՞ւ զարկաւ։

— Հայ չէր, փաշա, քիւրդի լամուկ էր,— պատասխանեց առաջին կամաւորը։

Ապա պատմեց, որ երբ իրենք բաւական մօտեցած են եղել

Սիփանի լանջից իջնող տղային,— որ, մօտաւորապէս Կրպոյի տարիքին է եղել,— Կրպօն բարձրաձայն կանչել է.

— Տղայ, դուն վո՞վ ես:

Նորեկը պատասխան չի տուել: Եւ շարունակել է առաջանալ դէպի Կրպօն ու պահակները: Այն ժամանակ Կրպօն կրկնել է իր հարցումը քիւրդերէն: Նորեկը քիւրդերէն պատասխան է տուել:

«Այդ վայրկեանին անանկ բան պատահեցաւ, որ ոչ իմ մըտքէս կրնար անցնիլ, ոչ ալ իմ ընկերոջ: Ես չհասկցայ, թէ ինչպէս Կրպօն արագ դուրս քաշեց իմ դաշոյնս իր պատեանէն եւ սկսաւ վազել դէպի քիւրդ տղան: Ես ու ընկերս իր ետեւէն վազեցինք, բայց մինչեւ որ հասանք անոնց, Կրպօն դաշոյնը խրեց քիւրտ տղու կուրծքը: Տղան ինկաւ գետին, անգամ մը, երկուք ցնցուեցաւ եւ տեղն ու տեղը անշարժ մնաց: Երեւի Կրպոյի հարուածը ճիշդ սրտին էր եկած», լրացրեց իր պատմութիւնը պահակը:

Կրպօն կանգնած թոնրատան դրանը մօտիկ սիւնի տակ, անայլայլ լսում էր իր արածի պատմութիւնը: Նրա հայեացքը, որ ուղղուած էր Անդրանիկին, կարծես թէ ուզում էր ասել,— «դուցէ ձեր օրէնքով իմ արածը արդար չէ, բայց թշնամու ինձ սովորեցրած օրէնքով արդար է»:

Նայում էի այդ փոքրիկ վրիժառուին եւ մտածում, որ արիւնռուշտ ու անարդ թշնամին նոյնիսկ մեր մանուկների մէջ սպանել է դուրը դէպի իր նմանը:

ԴԷՊԻ ԱՐԾԿԷ

Յունուար 31–ն է։

Մեր զօրամասը հրաման է ստանում առաջ շարժուել դէպի Արծկէ — Ալջաւազ։ Սիփանը միշտ մեր աջ կողմն է, մինչ Վանայ լիճը մեզնից դէպի ձախ է։

Սիփանի ստորոտով շրջաղարձ ենք անում։

Պայծառ արեւոտ օր է։

Մեր գունդը, ինչպէս միշտ, յառաջապահ է։

Մինչեւ կէսօր հասնում ենք լայնանիստ Սիփանի դէպի Վանայ լիճը դարձած լանջերի դրեթէ ճիշդ մէջտեղը։ Այստեղ, Սիփանի արեւահայեաց ստորոտը եւ լճի ափը դրեթէ ձիւնից ազատ են։ Տեղ տեղ հալուող ձիւնից դուրս եկած փոքրիկ առուակներ են վազում դէպի լիճը։

Այդտեղ, դէպի Ալջաւազ տանող գլխաւոր ճանապարհը բաժանւում է երկուսի. մի ճիւղը, գլխաւորը, անցնում է լճափին աւելի մօտիկ Քոչերեր եւ Ներքին Սիփան գիւղերի միջով, իսկ միւսը, լճից աւելի հեռու, Սիփանի լանջով, Վերին Սիփան գիւղի մօտից։

Անդրանիկը, մեր հետեւակի գլուխն անցած, բռնում է լճափի ճամբան, մինչ Սմբատին հրահանգում է, մեր գնդի հեծելազօրով շարժուել Վերին Սիփանի ճամբայով եւ միանալ իրեն Ալջաւազի տակ, որ շատ հեռու չէ այլ եւս։

Վերին Սիփան գիւղից անցնում եւ շարունակում ենք առաջանալ դէպի Ալջաւազ։

Միշտ Սիփանի լանջերի վրայ ենք։ Ալջաւազը այդ լանջերի ստորոտումն է։

* * *

Դեռ Ալջաւազ չհասած, Սիփանը մի սքանչելի պատկեր է պարզում մեր առջեւ։

Եւ ոչ միայն Սիփանը։ Այլ եւ Բզնունեաց Ծովը իրեն շրջապատող մեծ ու փոքր լեռներով, որոնք բոլորն էլ Բզնունեաց Ծովի չորս կողմը ասես վիթխարի մի շուրջպար բռնած իրար հըրհըրում, իրար ուսի են բարձրանում, աշխատելով մէկը միւսից առաջ անցնել, որքան կարելի է աւելի մօտենալու Բզնունեաց Ծովին, նրա ջրերում իրենց պատկերը դիտելու համար։

Այդպէս են Վարագն ու Եղերովը, այդպէս է Արտոսը, այդպէս են Ներովթն ու Գրգուռը, այդպէս են Սուրբի լեռնաշղթան

եւ Ռշտունեաց լեռները, որոնք հարաւից, Ռշտունեաց աշխարհից թափ առած դրոհ են տուել դէպի Բղնունեաց Ծովն ու երբ այդ թափով հասել են Բղնունեաց Ծովի ջրերին, մէկէն կանգ են առել իրենց խօլ վազքի մէջ եւ վիթխարի պատնէշով իջել են ջրերի մէջ ու դեռ լճի յատակին չհասած, կարծես թէ փորձ են անում յետ քաշուել դէպի Ռշտունիք:

Բայց ի զուր:

Իրար ետեւից սեղմող լեռնակոյտերը անզօր են դարձնում լճի վրայ կախուած պատնէշի դէպի Ռշտունիք վերադարձի բոլոր ճիգերը: Եւ դա շարժում է Բղնունեաց Ծովի զայրոյթը, որ իր ալիքներով անդուլ ծեծում է այդ ափը՝ մերթ միայն դժկամ ու թեթեւակի, երբ պայծառ է օրը, եւ մերթ ցասկոտ ու ամեհի թափով, երբ փոթորիկն է պայթում Բղնունեաց Ծովի վրայ:

Շուրջանակի անցիր Բղնունեաց Ծովի չորս բոլորը, ու ոչ մի տեղ չես հանդիպի այնպիսի հսկայ, անմատչելի պատնէշի, որ կազմում է Բղնունեաց Ծովի ափը հարաւից՝ Ռշտունիքից:

Ռշտունիքից իջիր Վայոց Ձոր, անցիր Արտամետից մինչեւ Վան ու Աւանց, այդ տարածութեան վրայ լճափը այնպէս աննկատելի է իջնում դէպի լճի ջրերը, որ չդիտես՝ հո՞ղն է տեղի տալիս ջրերի առջեւ, թէ ջրերն են յետ քաշւում մայր հողի առջեւ: Այդտեղ ալիքները չեն ծեծում ափերը, այլ դալիս եւ մեղմութեամբ թաւալում են ափի աւազների վրայ այնքան հեռու, որքան որ իրենց թափն է թոյլ տալիս, եւ ապա մեղմութեամբ յետ քաշւում, շատ չանցած կրկին թաւալելու լճափնեայ աւազների վրայ ու կրկին յետ քաշուելու:

Ու զայրոյթ չկայ ջրերի դէպի ափը այդ արշաւի մէջ, այլ մի տեսակ քնքշանք ու դդուանք:

Եւ այդպէս են Բղնունեաց Ծովի ափերը շատ տեղ, Վանից մինչեւ Բերկրի ու Արճէշ, մինչեւ Ալջաւազ ու Դատվան:

Բղնունեաց Ծովի չորս բոլորը Հայոց Լեռների վիթխարի շուրջպարի մէջ սքանչելի է մանաւանդ Սիփանը, որ այնպէս յիշեցնում է իր մեծ եղբօրը՝ Մասիսին, որ կարծես թէ հեռուից, հիւսիսից հսկում է իր կրտսեր եղբօր վրայ:

Թւում է, որ մի օր, ժամանակից դուրս մի օր, Սիփանը շարժուել է հիւսիսից, իր աւագ եղբօր, Մասիսի մօտից ու եկել է միանալու Բղնունեաց Ծովի շուրջպար բռնած Հայոց Լեռներին: Բայց դէպի Բղնունեաց Ծովը իր երթի մէջ արտօրանք չի դրել Սիփանը: Իր վեհապանծ ընթացքի մէջ Սիփանը յաճախ իր հայեացքը դէպի յետ, դէպի հիւսիս է դարձրել, տեսնելու, թէ արդ-

եօք դեռ երեւո՞ւմ է իր մեծ եղբայրը՝ Մասիսը։ Ու քանի դեռ տեսել է հայեացքով իրեն հետեւող աւագ եղբօր արծաթապատ գագաթը, շարունակել է իր երթը, մինչեւ հասել է Բզնունեաց Ծովին։

Ու կանգ է առել այնքան մօտիկ Բզնունեաց Ծովին, որ փոթորկի ժամին ալիքների շառաչը հասնի իր ականջին, եւ այնքան հեռու, որ իր վէս հասակը չարտացոլի Բզնունեաց Ծովի կապոյտ ջրերի մէջ։

Իր դեղեցիկ գագաթը դիտելու համար Սիփան իր ստորոտում դրկել է մի փայլուն հայելի,— վճիտ ջրով լիքը մի փոքրիկ լճակ, որ տեղաւորուել է Սիփանի դէպի Բզնունեաց Ծովը նայող լանջի վրայ։

Ու երբ պայծառ է օրը, ինչպէս այսօր, Սիփանը ժպտում է այդ լճակ հայելիի մէջ։

Ի՜նչ դեղեցիկ ես, հայրենի աշխարհ...

* * *

Մեր ճանապարհն անցնում է այդ լճակի առջեւից եւ լինում է դէպի հարաւ արեւմուտք, դէպի Ալջաւազ, որ ահա տարածուած է մեր առջեւ։

Ալջաւազից մէկ-երկու մղոն հեռաւորութեան վրայ Վանայ լճի ափով եկող ճամբան միանում է մեր հետեւած ճանապարհին, որով մենք շարունակում ենք առաջանալ դէպի Ալջաւազ։

Ոչ մի նշան չկայ, որ մեզ մտածել տայ, որ մեր դնդի գլխաւոր ոյժերը Անդրանիկի ղեկավարութեամբ մտել են Ալջաւազ։

Արդէն հաղիւ երկու երեք հարիւր քայլ հեռաւորութեան վրայ ենք Ալջաւազի առաջին շէնքերից։ Ալջաւազը մի մեծ ծառաստանի է նման։ Ամէն մի տուն շրջապատուած է հողաշէն պարիսպով պատած պարտէզով, այնպէս որ ամէն մի տուն մի փոքրիկ բերդ է պաշտպանուելու համար։

Աւանը բոլորովին ամայի է, կենդանութեան եւ ոչ մի նշան։

Արդէն հասել ենք Ալջաւազի գլխաւոր փողոցին եւ պատրաստւում ենք ներս մտնել, երբ, շատ մօտիկից հրացանների մի համազարկ դիմաւորում է մեզ։

Թշնամին դեռ Ալջաւազում է։ Գնդակները սուլելով անցնում են մեր գլուխների վրայից։

Սմբատը հրամայում է մեզ յետ դառնալ։ Մեր ձիերի գլուխները դարձնում ենք յետ, դէպի Վերին Սիփան, որ, կռուի համար, Ալջաւազի վրայ տիրապետող դիրքեր ունի։

Թշնամու կողմից ոչ մի փորձ դուրս գալու պատնէշների ե-

տեւից եւ կռուի բռնուելու։ Այդ մի համաղարկն էլ կարծես նշան էր թշնամու կողմից՝ իր ներկայութիւնը մեզ տեղեկացնելու համար։ Մինչդեռ, եթէ թշնամին հինգ կամ տաս բոպէ համբերութիւն ունենար կրակ չբանալու եւ թոյլ տար որ մենք մխրճուէինք Ալջաւազի նեղ փողոցների մէջ, կարող էր, առանց դժուարութեան ոչնչացնել մեր փոքրիկ զօրախումբը։

Ինձ համար անըմբռնելի մնաց, թէ ի՞նչպէս կարող էր Սմբատի նման փորձուած մի ռազմիկ, առանց հետախուզում կատարելու, իր զօրախումբը մտցնել մի տեղ, որ մինչեւ այդ թշնամու ձեռքն էր եղել։

Արեւն արդէն մայր է մտել, երբ մենք հասնում ենք Վերին Սիփան։

Շատ չանցած, Վարի Սիփանից դալիս են Անդրանիկի ուղարկած երկու սուրհանդակներ, եւ հաղորդում են Անդրանիկին հրամանը՝ դիշերել Վերին Սիփանում եւ յաջորդ առաւօտ միանալ իրեն Վարի Սիփանում։

Այդ հրամանը հաղորդելուց բացի, մեր երկու ընկերները պատմեցին, որ մեր գունդը տաք կռիւ է ունեցել Քոչերեր գիւղում ամրացած քիւրդերի հետ։ Քոչերերը այնքան հեռու է Վերին Սիփանից, որ կռուի ձայնը մեզ չի հասել, մանաւանդ որ հրետանի գործածուած չի եղել, այլ միայն հրացանային կրակ։

Ռուսական ոյժերը կռուի մէջ նետելու պէտք չի զգացել մեր զօրամասի հրամանատար գնդապետ Վասիլեւը։ Կռիւը մղել են մեր գնդի երկու վաշտերը։ Թուրքական կանոնաւոր ոյժերը արդէն քաշուած են եղել, երբ մեր զօրամասը հասել է Քոչերեր։ Դիմադրողները եղել են միայն քիւրդերը, որոնց մեծ մասը կռուի հէնց սկզբից նահանջել է դէպի Ալջաւազ։

Այդ նահանջողներն էին, որ նախորդ օրը կրակեցին մեր վրայ։

Ցուսահատ դիմադրութիւն են ցոյց տուել քիւրդերի երկու խմբեր, որոնցից մէկը ամրացած է եղել մի մեծ տան մէջ։ Տան դուռը խորտակելու եւ ներս խուժելու փորձը մերոնց նստել է մի քանի վիրաւոր եւ երկու սպանուած։ Մեր տղաներից մի քանիսը կտուրն են բարձրացել եւ փորձել են երդիքից կրակի բռնել պաշարուածներից։ Ներսը գտնուողների կրակից այդտեղ էլ սպանուել է մէկը։

Քիւրդերի դիմադրութիւնից վրդովուած Անդրանիկի մէջ գլուխ է բարձրացրել հին հայդուկը, որ մոռանալով հրամանատարի իր հանդամանքը, փորձել է նետուել կռուի մէջ։

Իր շուրջը գտնուած կամաւորները, այլ եւս մէկ կողմ դրած հրամանատարի հանդէպ փափկանկատութիւնը, յետ են քաշել Անդրանիկին։

Այլ եւս անտեղի զոհեր չտալու համար, մերոնք չէնքի շուրջը խոտ են դիզել եւ կրակ տուել։ Պաշարուածները ընչահեղձ դուրս են նետուել եւ մէկիկ մէկիկ ընկել մերոնց զնդակների տակ։

Այսպէս պատմեցին կռուին մասնակցած մեր երկու զինակիցները։

Յաջորդ առաւօտ մեր ձիաւոր խումբը իջաւ Վարի Սիփան։

Բայց դեռ Վարի Սիփան չհասած՝ իրար ետեւից երեք համազարկերի ձայն է հասնում մեր ականջին։ Նախորդ օրուայ կռուին սպանուած եւ Վարի Սիփանում հողին յանձնուած մեր երեք ընկերներին տրուած զինուորական վերջին պատիւն է դա*)։

Երբ Անդրանիկին ուղեկցող մեր հեծելազօրի մասը միացաւ մեզ, ես տեսայ, որ Անդրանիկի թիկնապահներից մէկը, բուլգարահայ Ռուբէնը, իր ձիու թամբի վրայ դրկել է 2–3 տարեկան մի երեխայ։ Սեւ, խոշոր աչքերով, սեւ խռիւ մազերով, կարմրաթուշ, անուշ դէմքով մի մանուկ է դա։

Զարմացած հարցրի Ռուբէնին, թէ ի՞նչ երեխայ է դա։

— Քիւրդի լամուկ մըն է, պատասխանեց Ռուբէնը։ Մայրը, փախուստի ատեն, սպանուեր էր եւ ինկեր էր ճամբու եզրը։ Այս երեխան մօր դիակին քով նստած, կուլար։ Փաշան, երբ տեսաւ, հրամայեց, որ վերցնեմ երեխան եւ ըսաւ.— «Հոդ տար այս երեխային, եթէ իր դլուխէն մազ մը իյնայ, ձեռքէս չես ազատիր։» Կարծես թէ քիչ հոդ ունէի, հիմա ալ այս լամուկին հոդը պիտի տանիմ, լրացրեց Ռուբէնը։

Անշուշտ, մինչեւ վերջը մեզ հետ պիտի չպտըտցնէինք այդ երեխային, առաջին յարմար առիթով պիտի ուղարկէինք դէպի թիկունքը, բայց մինչեւ այդ քաշելիք ունէր խեղճ Ռուբէնը։

Զարմանալի էր Անդրանիկը, թշնամի քիւրդի հանդէպ անողոք, իսկ որբ մնացած քիւրդ երեխայի հանդէպ քնքոյշ լինելու չափ ուշադիր ու հոգատար։

Առանց կռուի մտնում ենք Ալջաւազ եւ առանց կանգ առնելու, շարունակում ենք առաջ շարժուել դէպի Ախլաթ։

---

*) Այդ սպանուածներից երկուսը ամերիկահայ կամաւորներ էին, անդամներ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Բոստընի արուարձան Վօթըրթաունի Կոմիտէի։ Դրանցից մէկը Արշակ Տարօնի, իսկ միւսը Յովհաննէս Ոսկերչեան։

Դարձեալ արեւոտ եւ կէս դարնանային մի օր է։

Վանայ լճի այս արեւահայեաց ափը տեղ տեղ ազատ է ձիւնից, թէեւ դեռ փետրուար մէկն է միայն։ Ճանապարհը ձգւում է բարձրից, լերան լանջերի վրայով, իսկ դէպի ձախ, վարը, մեր ոտքերի տակ ծփում է լիճը։

Արեւն այնքան ջերմ է այսօր, լիճը այնպէս ծիծղուն, որ մոռանում ես, թէ ո՞ւր եւ ինչո՞ւ համար ես գնում։ Մեր գնդի տղաները քայլում են թեթեւ ու կայտառ, ասես մի հաճելի զբօսանքի ենք դուրս եկել, մինչդեռ պատերազմի աստուածն արդէն արձակել է մեզնից շատերի մահուան վճիռը,— ոմանք կ՝ընկնեն դուցէ այսօր, դուցէ մի քանի ժամ յետոյ, ոմանք՝ վաղը, ուրիշներ օրեր յետոյ, եւ այսպէս, մինչեւ որ գայ յաղթանակը, որ, վստահ ենք, թէ պիտի գայ մի օր։

Անդրանիկը, մեր գնդի հեծելազօրի եւ մի քանի տասնեակ կողակների գլուխն անցած, առաջ է շարժւում։ Ինձ հրամայում է մնալ մեր հետեւակի հետ եւ կապ պահել մեր զօրամասի հրամանատար գնդապետ Վասիլեւի հետ։

Կէս օր է։

Ալջաւազը եւ Սիփանը մնացել են մեր յետեւում։

Բայց դաշտում բանակելուց եւ ճաշելուց յետոյ, մեր զօրամասը շարունակում էր իր երթը դէպի Ախլաթ, երբ փրփրակալած ձիու վրայ մի կողակ սրարշաւ եկաւ Ախլաթի կողմից։

Ես գնդապետ Վասիլեւի կողքն էի, երբ կողակը իր ձին սանձեց եւ բարեւի կենալով գնդապետի առջեւ, զեկուցեց.

— Ձերդ բարձր աղնուութիւն, մենք հասանք թշնամու յետնապահներին եւ Անդրանիկը հրամայում է, որ հետեւակը արագացնի իր քայլը։

— Անդրանիկը չի կարող հրամայել ինձ, պոռթկաց գնդապետ Վասիլեւը։

Իր հրամանատարի զայրոյթից շշմած կողակը շտապեց ուղղել իր ասածը.

— Այնպէս որ... ձերդ բարձր աղնուութիւն, Անդրանիկը խնդրեց, որ հետեւակը արագ շարժուի։

Կողակի համար Անդրանիկը, թէեւ ուսադիրներ չունէր, բայց իրակա՛ն հրամանատար էր, որ կարող էր հրամայել, եւ որ ոչ թէ խուսափում էր կռուից, այլ կռիւ էր փնտռում, ու միշտ յառաջապահ էր։ Մինչդեռ գնդապետ Վասիլեւի կասկածելի արիութիւնը շատ ցած էր գնահատւում իրեն ենթակայ զինուորների կողմից։

Կողակները սովորաբար արի մարդիկ են եւ քաջ ռազմիկների հռչակ են վայելում Ռուսաստանում։ Այդպէս չէր, սակայն, այդ տարօրինակ կողակը՝ գնդապետ Վասիլեւը։ Կռուի դաշտում նրան հետաքրքրողը մի բան էր միայն,— թշնամուց խլուած աւարը, դլխաւորապէս մսացու կենդանիները, որ կարելի էր ներկայացնել բանակի համբարակութեան իբրեւ դրամով գնուած եւ փոխարժէքը սեփական դրպանը դնել։

Իսկոյն մեր գնդի մնացած ձիաւորներս եւ կողակները քշեցինք մեր ձիերը, իսկ հետեւակ վաշտերն արագացրին իրենց քայլը։ Արեւը մօտ էր մայրամուտին, երբ հասանք Ախլաթ։

Մինչեւ մեր հետեւակի Ախլաթ հասնելը, Անդրանիկը, մեր գնդի հեծելազօրով եւ երեք-չորս տասնեակ կողակներով կռուի է բռնուել թուրքական նահանջող ոյժերի վերջապահների հետ։ Անդրանիկը հետապնդել է թշնամուն մինչեւ Ախլաթ։ Մինչեւ Անդրանիկի Ախլաթ հասնելը թուրքական ժանդարմերիան եւ քիւրդերը փախել են Ախլաթից, թողնելով Ախլաթի փողոցներում մի քանի տասնեակ դիակներ։

Ախլաթը պարպելով թուրքերը քաշւում են Կարմունջ, ու այնտեղից բռնում Դատվանի ճամբան։ Նրանք պաշտպանում են դէպի Դատվան քաշուող թուրք եւ քիւրդ դաղթողների թիկունքը։

Ես հեռանում եմ ռուս հրամանատարից եւ գնում եմ փնտռելու Անդրանիկին։

Հասնում եմ բլուրի այն շղթային, որ տիրապետում է Կարմունջ գիւղի վրայ։ Կողակների մի տասնեակ Կարմունջին նայող բլուրներից մէկի վրայ դիրք բռնած, իր հրացանների կրակի տակ է պահում խուճապահար թուրք եւ քիւրդ բազմութիւնը, որ Կարմունջից դէպի Դատվան է փախչում։

Կարմունջում ոչ մի շարժում չկայ։ Թուրքական բանակի հետքը չի երեւում Կարմունջում։ Կողակների հրացանների կրակը դադարում է հետզհետէ, որովհետեւ դէպի Դատվան քաշուող բազմութիւնը կողակների հրացանների գնդակների հասողութիւնից դուրս է արդէն։

Թէեւ ձմրան երեկոն հեռու չէ, բայց մեր շրջակայքը յստակ երեւում է այնքան հեռու, որքան կարող է կտրել մեր աչքը։

Մէկ էլ մի տարօրինակ բան է կատարւում մեր աչքի առջեւ։

Հեռացող բազմութիւնից զատւում է մի մարդ եւ մեն մենակ դառնում է դէպի պարպուած Կարմունջը։ Մարդը, երեսը դէպի մեզ դարձրած, առանց շտապելու դալիս է դէպի Կարմունջ։

Նա անտարակոյս գիտէ, որ այս բլուրների վրայ նստած են իր թշնամիները, որոնք քիչ առաջ հրացանի էին բռնում նահանջող թուրքական ոյժերը: Եւ սակայն այդ արդեւք չէ, որ նա շարունակի իր ընթացքը դէպի մեզ:

Մարդը հետզհետէ այնքան է մօտենում, որ մեր հրացանների գնդակների հասողութեան մէջ է այլ եւս:

Ու մի անբացատրելի չարութիւն է բռնում բլուրի վրայ դիրք մտած կողակների տասնեակին: Բոլոր հրացանները ուղղւում են դէպի հանդարտ, անվրդով քայլող մարդը եւ սկսում են կրակ տեղալ: Մի տարօրինակ, ներքին մղում ստիպում է որ ես էլ միանամ կողակների հրացանաձգութեան:

Դէպի Դատվան տանող ճամբան այնքան մօտ է անցնում լճափին, որ մեր գնդակները թափւում են լիճը եւ երբեմն ջրի ցնցուղներ նետում վեր:

Ասենք ես մի երեւելի նշանառու չեմ, ապա այս կողակնե՞րը:

Մարդը հասաւ գիւղի առաջին շէնքերին, մի կարճ պահ ծածկուեց այդ շէնքերի պատերի տակ եւ ապա դուրս եկաւ, մի խոշոր պարկ նետած իր ուսին: Եւ նոյն հանդարտ, անվրդով քայլով կրկին բռնեց դէպի Դատվան տանող ճամբան: Մեր հրացանները ճարճատում են անընդհատ: Լճի ջրից բարձրացող ցնցուղները ցոյց են տալիս, որ մեր գնդակները ցատկռտում են այդ տարօրինակ մարդու շուրջը, որ շարունակում է իր անխռով ընթացքը: Վերջապէս մարդը այնքան է հեռանում, որ մեր գնդակները այլ եւս չեն կարող հասնել նրան: Մենք դադարեցնում ենք մեր կրակը: Եւ ահա այդ ժամանակ է, որ մարդը սկսում է վազել:

Արդեօք իսկապէ՞ս դոյութիւն ունի ճակատագիր ասածդ, որ վարում է մեր բախտը: Եւ այդ մարդու ճակատին գրուած չէր, որ նա այսօր պիտի ընկնէր մեր գնդակներից, մտածում եմ ես եւ կողակների հետ իջնում բլուրից եւ ուղղւում դէպի Ախլաթ:

Արդէն սկսել է մթնել:

Ախլաթի շէնքերին հազիւ մօտեցած, մեր եռեւից հասնում է մեր գնդի հեծելազօրի գլուխն անցած Անդրանիկը, որ նկատում է ինձ ու ցասկոտ հարցնում.

— Ա՛ս ո՞ւրկէ կուգաս:

— Կարմունջից վեր կողակների գրաւած դիրքերից եմ գալիս, ձեզ էի փնտռում, պատասխանում եմ ես:

— Քեզի ո՞վ է իրաւունք տուած, որ դիրքերը երթաս: Քաշուէ դնա թիկունքը, ռուս հրամանատարին քով: Իսկ եթէ սպան-

ուխս, ես ի՞նչ պատասխան պիտի տամ քու մօրդ, վրդովուած վրայ է բերում Անդրանիկը։

Այս զարմանալի մարդու հոգատարութիւնն էլ ցասումով ու հրամանով է արտայայտւում։

ԱԽԼԱԹԻՑ ԴԱՏՎԱՆ

Հինգ օր մնացինք Ախլաթում։

Փետրուար եօթն է։

Մեր զօրամասը հրաման է ստանում շարժուել դէպի Դատվան։

Ախլաթի մօտ վերջանում է այն սարահարթը, որ Ալջաւազից սկսած տարածւում է մինչեւ Ախլաթ։

Ախլաթից Դատվան տանող ճանապարհի վրայ առաջին գիւղն է Կարմունջը, որ թշնամին լքեց հինգ օր առաջ։ Իջնում ենք Ախլաթից դէպի հարաւ, անցնում ենք լուռ ու ամայի Կարմունջից եւ հասնում նոյնպէս ամայի Ծղակ։

Այդտեղից սկսած ճամբան մօտենում է լճի եզերքին։

Արճէշից դրեթէ մինչեւ Ախլաթ մեզ ուղեկցող կէս գարնանային եղանակը մէկէն փոխւում է Հայաստանի ահեղաշունչ ձմեռուան։ Զորս կողմը խոր ձիւնի սաւանը ծածկել է ամէն ինչ։ Երկինքը մռայլ է եւ մինչեւ ոսկորներիդ ծուծը թափանցող ցուրտը աւելի եւս սաստկանում է Նեմրութից փչող քամիով, որ սուր դանակի պէս կտրում է դէմքդ։

Մեր ճամբան դէպի ձախ է թեքւում եւ աւելի եւս մօտենում Բղնունեաց Ծովին։ Այժմ մեր ճանապարհը անցնում է Բղնունեաց Ծովի ճիշդ ափով։

Փոթորիկ է։

Նեմրութից փչող հողմերի տակ Բղնունեաց Ծովի բլրացող ալիքները անվերջ շարքերով գալիս են, ծեծում ափի ժայռերը, ջուր ու փրփուր փչում դէպի մեզ, թրջում մեր ձիերի ոտքերը ու յետ փախչում նոր, աւելի ուժգին թափով յարձակուելու համար։

Ճանապարհը հետզհետէ դէպի աջ է թեքւում, հեռանում լճից եւ բարձրանում Նեմրութի ստորոտի լանջերի վրայ։

Հիմա էլ լեռներից փչող կատաղի հողմերն են ձիւնի թանձր փոշի բարձրացնում, ծեծում մեր յոգնած ձիերին, ծեփում մեր

բերանը, կտրում մեր շունչը։ Ամէն մի քանի տասնեակ քայլից յետոյ ստիպուած ենք կանգնեցնել մեր ձիերը, նրանց դաւակները դարձնել քամու հոսանքի դէմ եւ շունչ առնել։ Սարսափելի, շամփրող ցուրտ է։ Ձեռք ու ոտքս այնպէս են սառել, որ թողել եմ սանձը եւ յանձնուել ձիուս։ Ասենք սանձի պէտք չկայ այս սարսափելի ձիւնամրրիկի մէջ։ Զի ու ձիաւոր միասին ենք պայքարում կատաղի տարրերքի դէմ։ Խելացի կենդանին քայլում է դանդաղ ու զգոյշ, աշխատելով դուրս չընկնել նեղ շաւղից, որ բացուած է խոր ձիւնի մէջ։ Հայոց Աշխարհի սահմռկեցուցիչ բուքն է ծեծում մեզ, եւ տանջանքով մեզ իրենց վրայ կրող ձիերին։

Մեզնից դէպի աջ, կատարը ամպերի մէջ մխրճած Նեմրութն է, որ մեզ վրայ է արձակել իր հողմերի կատաղութիւնը։

Ինչո՞ւ են ցասկոտել մեր դէմ Նեմրութն ու Բզնունեաց Ծովը։

Արդեո՞ք նրա համար, որ մենք այստեղ չէինք, երբ անարդ թշնամին սրածում էր Նեմրութի լանջերին եւ այս ափերին փըռուած հայ շէներն ու աւանները։

Նեմրութի լանջին է արծուաբոյնը՝ Սոխորդը՝ Աղբիւր Սերոբի հայրենի գիւղը։ Այդտեղից էր իջնում այդ զմայլելի ռազմիկը եւ խոհուն յեղափոխականը, որին մեր ժողովուրդը մի անուշ մականուն տուեց՝ Աղբիւր։ Իջնում էր եւ հարուածում ջարդարար ու լէշակեր քիւրդ ու թուրք այն վոհմակներին, որոնք ահա մի քանի շաբաթ է, ինչ ծեծուած շների պէս փախչում են մեր առջեւից։

Հիմա լուռ ու ամայի է Սոխորդը, ինչպէս լուռ ու ամայի են Հայոց Աշխարհի բոլոր այն գիւղերն ու աւանները, որոնցից անցնում է կնճռոտ ճակատներով այս մռայլ մարդկանց՝ հայ ռազմիկների դունդը։

Զարհուրելի, խեղդող, սպանիչ է հայոց շէնների այս ամայութիւնը։

Թող չառաջի կռիւը, թող որոտան թնդանօթները, թող հոսի արիւնը, թող ընկնեն չանթահարուածները, թող հառաջեն մահամերձ վիրաւորները,— թող լինի դժոխք, բայց ոչ այս մահասարսուռ լռութիւնը, որ չի խախտւում կեանքի ամենափոքր նշոյլով։

Ա՛հ, յաւէտ նղովուած թշնամի...

Բարեբախտաբար շուտով ճամբան իջնում է ցած մի շարք բլուրների պաշտպանութեան տակ։ Այստեղ քամին այնպէս կատաղի չէ եւ մենք մի քիչ ազատ շունչ ենք քաշում։

Հեռուում սկսում է ուրուագծուել Դաւվանը։

Պարզ աչքով երեւում է, թէ ինչպէս մեր յառաջապահները մօտենում են գիւղին։ Լսւում են հրացանների հատ ու կտոր պայթիւններ, որ սակայն շուտով դադարում են։ Մեր յառաջապահները մտնում են գիւղը։

Արդէն մութն իջել էր Նեմրութից եւ Գրդուռից, երբ դադրած ու սառած մեր զօրամասը մտաւ Դաւվան, որ թշնամին առանց կռուի ձգեց մեզ։

Այստեղ էլ, ինչպէս ամէն տեղ, ուր ոտք դրինք մենք, քաղցից ու ցրտից մեռած կենդանիների լէշեր են ամէն կողմ՝ թէ՛ դուրսը, փողոցներում եւ թէ շէնքերի մէջ։

Ամէն մարդ աշխատում է վայրկեան առաջ մի տաք անկիւն գտնել, ազատուելու համար դուրսը ոռնացող բուքից։ Անդրանիկի թիկնապահ տղաները մի բաւական ընդարձակ թոնրատուն մաքրում եւ վառում են տան կենտրոնում փորուած թոնիրը։

Անդրանիկը զրոյցի էր բռնուած իր շուրջը հաւաքուածների հետ։ Թիկնապահներից մի երկուսը զբաղուած էին ընթրիքի պատրաստութեամբ։

Անդրանիկի սովորութիւններից մէկն էր որեւէ տեղ բանակելու ժամանակ տեղեկանալ, թէ իր Ասլանի մասին հոգ տարուա՞ծ է։ Նա սաստիկ վրդովում էր, երբ նկատում էր, որ մեր գնդի ձիաւորներից ոմանք, տեղ հասնելուն պէս, զբաղւում են իրենց կարիքները հոգալով եւ յետոյ միայն յիշում են իրենց ձիերի մասին։

Անդրանիկը մոլի ծխող էր։ Իր ծխախոտը, սեւ սուրճը եւ կոնեակը անպակաս պիտի լինին։ Հայաստանի ցրտաշունչ ձմրանը կոնեակը ջերմութիւն հայթայթելու միջոցներից մէկն էր։ Անպակաս պիտի լինէր Ասլանի խոտն ու դարին։ Այդ բոլորը բարձւում էր մի ձիու վրայ եւ ուր որ հնարաւոր էր, նորոգւում էր այդ պաշարը։

Դաւվանում ոչ միայն դարի, այլ նոյնիսկ մի խուրձ խոտ չգտնուեց մեր ձիերի համար։ Բանակի պարենակիր ուղտերի կարաւանը ուշացել էր։ Մեր գնդի հեծելազօրի եւ կողակների ձիերը, ամբողջ օրը ձիւնամրրիկի մէջ ճանապարհ կտրելուց յետոյ, Դաւվանի բարդիների կեղեւներից զատ ուրիշ ոչինչ չունէին ուտելու։

— Ասլանին խոտ ու դարի տրուեցա՞ւ,— հարցրեց Անդրանիկը։

Թիկնապահներից մէկը դուրս գնաց տեղեկութիւն բերելու,

Ու երբ վերադարձաւ, անխոհեմութիւն ունեցաւ ասելու, որ Ասլանին յատկացուած խոտն ու դարին, մեր ձիաւորներից ոմանք առել ու կերցրել են իրենց ձիերին:

— Ի՞նչ,— ցասմնալից որոտաց Անդրանիկը,— հոս բերէք այդ տղան:

Անդրանիկի խօսքը Ասլանին հոգ տանող Ռուբէնի մասին էր, որ մեր գնդի անուշ բնաւորութեան տէր տղաներից մէկն էր եւ հոգով ու սրտով նուիրուած էր Անդրանիկին, որի համար պատրաստ էր իր կեանքը չխնայել:

Երբ Ռուբէնը ներս մտաւ եւ քայլեց դէպի Անդրանիկը, վերջինս չսպասեց Ռուբէնի մօտենալուն, այլ ինքը նետուեց դէպի նորեկը եւ բռունցքով մի քանի հարուած իջեցրեց տղայի գլխին: Ներկաները շտապեցին Անդրանիկի ձեռքից առնել տղային եւ դուրս հանել:

Դրանից յետոյ տեղի ունեցածը անակնկալ ու շշմեցուցիչ էր ներկաներիս համար: Ռուբէնին իր ձեռքից առնելը կարծես թէ աւելի բորբոքեց Անդրանիկի ցասումը, որ պայթեց ներկաների գլխին:

Անդրանիկից բացի թոնրատան մէջ ութ-ինը հոգի կար: Անդրանիկը դարձաւ եւ թոնրի բոլորտիքը շուրջանակի կանգնածներից որին որ հանդիպեց, մի ապտակ իջեցրեց: Նրա ապտակներից ղերծ մնացինք երեք հոգի՝ Սմբատը, վաշտապետ Արտաշէս Սուքիասեանը եւ ես: Ապտակ ուտողներից մէկը Անդրանիկի քրոջ որդի Երուանդ Փափազեանն էր, որ դիշեր ցերեկ հոգ էր տանում իր քեռուն: Զգիտեմ, Անդրանիկի կողմից ինձ խնայելը մտածուա՞ծ էր, թէ դիպուածի արդիւնք:

Այդ ծանր պատկերը ճնշեց մեր բոլորի հոգիները՝ մռայլուեցինք ու լռեցինք: Միայն Սմբատն էր, որ աշխատում էր կցկտուր զրոյց պահել Անդրանիկի հետ:

Ու այդպէս անցաւ ամբողջ երեկոն, մինչեւ որ մի մի պատառ հաց ուտելուց յետոյ, ամէն մէկս մի անկիւն քաշուեց եւ տառատոկի մէջ փաթաթուած փորձեց քնել:

Անդրանիկի այդ կոշտ վերաբերմունքը, երբեմն, հանդիպում էր բուռն բողոքի իր ստորադրեալների կողմից: Այսպէս, մի անդամ, զինուորների ներկայութեամբ Անդրանիկը ապտակել էր մի քանի հոգու, ի միջի այլոց, նաեւ վաշտապետ զէյթունցի Ցովնանին:

Պատուախնդիր Ցովնանը ցասումով դիմել է Անդրանիկին.

— Ա՛ս ի՞նչ խայտառակութիւն է, ալ մեզի պատիւ չմնաց

մեր զինուորներուն քով։ Ես այլ եւս քու վաշտապետը չեմ. այսօրուընէ կը ձգեմ ու կ՚երթամ...

— Տղա՛յ, դուն չե՞ս հասկնար, որ քեզի զարնողը Անդրանիկն է,— մեղմացած եւ մի քիչ զարմանքով դիտել է տուել Անդրանիկը։

Ուշադրաւ է Անդրանիկի այդ տարօրինակ թուացող դիտողութիւնը։ Ի՞նչ էր ուզեցել դրանով ասել Անդրանիկը։

Կամ այն, որ Անդրանիկի նման մէկից ապտակ ստանալը պատիւ պիտի նկատուի. եւ կամ, Անդրանիկից ստացուած ապտակը հրամանատարից իր ստորադասեալին հասցրած պատիժ չէ, այլ աւագ եղբօրից իր կրտսեր եղբօրն ուղղուած, թէկուզ կոպիտ մի սաստ։ Ես համոզուած եմ, որ Անդրանիկի արարքը պէտք է բացատրել այդ երկրորդ իմաստով։

Այլապէս, իր ստորադրեալին պատժող հրամանատարը չէր դառնայ, եւ չէր ասի.

— Տղա՛յ, դուն չե՞ս հասկնար, որ քեզի զարնողը Անդրանիկն է...

ՐԱՀՎԷ ԴՈՒՐԱՆԻ ԿՌԻՒԸ

Դատվանից անմիջապէս դէպի արեւմուտք սկսւում է Բահվէի լեռնաղաչտը, որ երեք կողմից շրջապատուած է լեռներով եւ մէկ կողմից՝ արեւելքից՝ Վանի լճով: Եթէ Դատվանից նայես արեւելք, թիկունքդ դարձրած Վանի լճին, քո աջ կողմում կը տեսնես Գըրդուռը, որ մի տարօրինակ լեռ է: Կոնաձեւ այդ լեռը կարծես ամբողջապէս մի վիթխարի ժայռից է տաշուած եւ, ամեռ ժամանակ, ինչպէս հիմա, իր քարէ կողերի վրայ ձիւն չի մնում, այլ սահում է վար եւ կամ քամիներն են առնում այդ ձիւնը ու մաղում Բահվէ Դուրանի վրայ: Եւ մինչ Գրդուռի շուրջը ամէն ինչ ծածկուած է ձիւնի հաստ սաւանի տակ, Գրդուռը մի վիթխարի սեւ քար է, որ բաղմել է չորս կողմի ձիւնի ճերմակութեան վրայ:

Արեւմուտքից, Սասնոյ լեռների շարունակութիւնը կազմող Խութի լեռների մի թեւը Մշոյ Դաշտի երկարութեամբ գալիս եւ հասնում է մինչեւ Բահվէ Դուրան: Իսկ հարաւ-արեւելքից Ռըշտունեաց լեռների շարունակութիւնն է, որ Վանի լճի հարաւային ափով գալիս ու նոյնպէս հասնում է Բահվէ Դուրան: Բահվէ Դուրանում խաչաձեւում են Մուշից, Բաղէշից, Սուրբից եւ Դատվանից եկող ճամբաները:

Բահվէ Դուրանում դիզուած ձիւնը տեղ տեղ 10–15 կանգուն խորութիւն ունի: Հիմա, փետրուարի սկիզբը, Բահվէ Դուրանը ծածկուած ձիւնի մակերեսը հարթ ու հաւասար է, ինչպէս սպիտակ սփռոցով ծածկուած սեղանի երեսը: Բայց երբ գարնանը ձիւնը հալուեց, Բահվէ Դուրանում բացուեցին խորտ ու բորտեր, քարակոյտեր ու փոսեր, բլուրներ ու փոքրիկ ձորեր, որոնց մէջ կարող էին ծածկուել զինուորների վաշտեր, բեռնատար սայլեր, ուղտերի կարաւաններ,— ամեռ ժամանակ այդ բոլոր դար ու փոսերը ծածկուած, հաւասարեցուած էին ձիւնով:

Թշնամին ամրացել է այդ ձիւնապատ լեռնաղաչտում:

Մեր զօրամասին օգնական ոյժեր են գալիս Մանազկերտ—Կարմունջ—Դատվան գծով: Բայց այդ ոյժերը դեռ չեն հասել, մեզ հասել է միայն մեր նոր հրամանատարութիւնը: Մեր այս ամբողջ ճակատի ընդհանուր հրամանատար է նշանակուած զօրավար Աբացիեւը, Հիւսիսային Կովկասի մահմեդական լեռնականներից, որի հայատեցութեան մասին լուրեր են հասել մեզ:

Մեր գնդի եւ մեզ զինակից ռուսական ոյժերի անմիջական հրամանատար, երկչոտ Վասիլեւի փոխարէն նշանակուած է զըն-

դապետ Ֆիլիպով։ Զօրավար Աբացիեւը եւ գնդապետ Ֆիլիպովը, իրենց սպայակոյտերով հասել են Դատվան։

Փետրուար 8-ն է։

Վանի լիճը եւ Դատվանը թողնում ենք մեր յետեւում եւ շարժւում դէպի Բահվէ Դուրան։

Բահվէ Դուրանի դրեթէ մէջտեղը, Դատվանից 4-5 մղոն հեռու բարձրանում է մի հսկայ չէնք Ալամեք խան անունով։

Մեզնից դէպի աջ Գրդուռն է, իսկ Գրդուռից ոչ հեռու Շամիրամ գիւղն է շրջապատուած երեք բլուրներով։ Այդ բլուրների վը-



բայ, 1904-ին, մի բուռն ընկերներով թուրք բանակի դէմ կռուել է Անդրանիկը, որ այժմ առաջնորդում է մեր վաշտերը իրեն ծանօթ ուղիներով։

Լեռների կատարները դեռ ծածկուած են մշուշով։

Մինչեւ այստեղ նահանջած թշնամին, ըստ երեւոյթին, այստեղ ճակատ է յարդարել։ Թշնամու ձեռքն է Մուշից Բաղէշ երկարուող ճանապարհը եւ Ալամեք խանը։ Թշնամու շղթաները տարածուած են Գրգուռի ստորոտից, Բահվէ Դուրանի ամբողջ լայնութեամբ, մինչեւ Բաղէշի ձորաբերանը։

Մեր վաշտերը շարժւում են առաջ։

Առաջին հրացանները պայթեցին։ Յառաջապահներն ընդհարուեցին։

Մեր վաշտերի շղթան սկսեց խրամներ փորել։ Այս կակուղ եւ խոր ձիւնի մէջ բնաւ դժուար չէ,— հրացանիդ կոթով փորիր որքան խորը կ՚ուզես եւ թաղուիր մէջը։

Շատ չանցած թուրքական թնդանօթները որոտալ սկսեցին այնտեղից, ուր Մուշից, Ոստանից եւ Դատվանից եկող ճամբաները միանում են Բաղէշի ձորը, մեր հինաւուրց Սալնոյ ձորը մտնելու համար։

Մեր դաշտային թնդանօթները Ախլաթից այս կողմ անցնել չկարողացան ճանապարհի դժուարութիւնների պատճառով։ Մեզ ուղեկցեցին մեր լեռնային թնդանօթների մարտկոցները։ Երբ այդ մարտկոցները կարգի դրուեցին, մեր ռումբերը սկսեցին պատասխանել թշնամուն։

Երեք ուղղութիւնով՝ Ոստանից, Ախլաթից եւ գլխաւորապէս Մուշից նահանջող թուրքական զօրամասերը ամրացել են այստեղ եւ դիմադրում են մեզ։ Թէեւ թշնամին՝ ինչպէս պարզուեց կռուի ընթացքում՝ մեզնից գերազանց ոյժ ունի, սակայն նախայարձակը մենք ենք։ Իրզրումն ընկել է, Մուշը գրաւուել է, թուրքերը խուճապի են մատնուել։ Յաղթականները, սովորաբար, ինքնավստահ են լինում։ Ուստի, հակառակ մեր թուական տկարութեան, յարձակուողը մենք ենք։

Մեր վաշտերի շղթաները, մինչեւ գրեթէ ծնկները թաղուած ձիւնի մէջ, սկսում են առաջանալ։ Կրակը, որ սկսուեց մեր ձախ թեւից, տարածուեց ամբողջ ճակատի երկարութեամբ, Բաղէշի ձորաբերանից մինչեւ Գրգուռի լանջերը։

Կէսօրն անցաւ։

Երկու կողմից էլ հրետանու եւ հրացանների ու գնդացիրների կրակը սաստկացաւ։

Թուրքական հրետանին այսօր շատ անյաջող է զարկում, իսկ իր ռումբերի մեծ մասը չի պայթում։

Ռուսական սպայակոյտի եւ Անդրանիկի հետ ձիւնէ մի թում-

բի վրայ նստած հետեւում ենք մեր եւ թշնամու վաշտերի շարժումներին։

Մի ռումբ պայթեց մեզնից 40–50 քայլի վրայ. ուրիշ մէկն ընկաւ մեզնից հազիւ 8–10 քայլ հեռու, բայց չպայթեց։

— Տեսնես ո՞ւմ աղօթքներին ենք պարտական մեր կեանքը, ժպտալով ինձ դիմեց կովկասեան լեռնականներից բարձրահասակ, դեղեցկադէմ երիտասարդ փոխ-դնդապետը։

— Անշուշտ, մեր մայրերի, վրայ բերի ես։

— Ես մայր չունեմ, ասաց փոխ-դնդապետը։

— Ուրեմն, ձեր զաւակների, շարունակեցի ես։

— Ամուսնացած չեմ, նորից ժպտաց փոխ-դնդապետը։

— Էհ, վերջապէս աշխարհում մէկին լաւութիւն արած կը լինէք, նրա աղօթքներին, ասացի ես։

Թէեւ թուրք թնդանօթաձիգները շատ ճախող էին այդ օրը, այնուամենայնիւ մեր սպայակոյտը բարւոք համարեց փոխել իր դիտարանը։

— Կը փախին կոր... քմծիծաղով քթի տակ քրթմնջաց Անդրանիկը։

Կրակը սաստկացաւ մեր աջ թեւի՝ Մուշից եկող ճանապարհի վրայ, ուր կռւում էր մեր առաջին վաշտը։

Այլ եւս հրացանների զատ զատ պայթիւններ չեն, որ լսւում են, այլ իրար հիւսուած խշշոց, որ յիշեցնում է ծովի աւազուտ ափի վրայ փշրուող ալիքների խշրտուքը։—

— Խը՛շշ, խը՛շշ, խը՛շշ...

Հեռադիտակը աչքերին դրած եւ մեր վաշտերի շարժումներին հետեւող Անդրանիկը յանկարծ վար կախեց հեռադիտակը եւ բացագանչեց.

— Վայ շուն շանորդիներ, սասունցիներու պէս լաքան*) հագած են...

Ապա իր մօտ կանգնածներին բացատրեց, որ դիտակով տեսել է, թէ ինչպէս ձիւնի վրայ արագ են շարժւում թշնամու զինուորներից մի քանիսը, որոնք, ըստ երեւոյթին, կապ են պահում ճակատի կռուողների եւ թիկունքում պատսպարուած հրամանատարութեան միջեւ։ Տեսել է եւ անմիջապէս յիշել, որ սասունցիները ձիւնի վրայ թեթեւ քայլելու համար լաքան են հագնում։

---

*) Լաքան–փայտէ կօշիկ, որ չուաններով կապում են ոտքերին ձիւնի վրայ քայլելու ժամանակ, որպէսզի ձիւնի մէջ չխրուեն։ Լաքանի գործածութիւնը տարածուած է Սասունում։

Անդրանիկը կրկին մօտեցաւ մեր լեռնային թնդանօթների մարտկոցին։

Մեր գլուխների վրայից սուրալով անցնող թուրքական ռումբերի արձակած սուլոցին եւ թուրքական թնդանօթների որոտին մի պահ ուշադրութեամբ ականջ դնելուց յետոյ, Անդրանիկը, իմ միջոցով դիմեց մարտկոցի հրամանատար ռուս սպային.

— Կը տեսնե՞ս այդ շէնքը, ասաց Անդրանիկը ձեռքը ուղղելով դէպի Բահվէ Դուրանի մէջտեղը բարձրացող Ալամեք խանը։ Այդ շէնքի աջ անկիւնի ճիշդ քովը թող դարնեն, թուրքական թնդանօթները հոն են։

Թնդանօթաձիգ ռուս սպան թերահաւատութեամբ վերաբերուեց Անդրանիկի ասածին, որ ես թարգմանեցի իրեն համար։ Եւ ի՞նչպէս թերահաւատութեամբ չվերաբերուէր։ Ինքը՝ թնդանօթաձիգ սպայ, որ հրետանիի դպրոցում է ստացել իր զինուորական կրթութիւնը, չի կարող թշնամու թնդանօթների որոտով ճըշդել այդ թնդանօթների տեղը, այս կամաւորների հրամանատա՞րն է, որ կարող է անել այն, ինչ որ ինքը, թնդանօթաձիգ սպան չի կարող անել։

— Ասացէք ձեր հրամանատարին, որ մեր թնդանօթների ռումբերը չեն կարող հասնել այդ շէնքին։ Թուրքերի թնդանօթները դաշտային են եւ աւելի հեռու են զարկում, քան մերոնք։ Թուրքերի աւելի հեռաձիգ թնդանօթների հարուածներից խուսափելու համար, մենք ստիպուած եղանք յառաջացած դիրքից ետ քաշել մեր մարտկոցը, բացատրեց թնդանօթաձիգ սպան եւ դրանով փակեց խնդիրը։

Մի շաբաթ յետոյ, երբ Ալամեք խանը անցաւ մեր ձեռքը, մենք տեսանք, թէ որքան ճիշդ էր Անդրանիկի ասածը թուրքական թնդանօթների տեղի մասին։

Մեր հրամանատարութիւնը խնայեց իր սակաւաթիւ ոյժերը եւ դրոհի չուղարկեց մեր վաշտերը։ Իսկ թուրքերը, որոնք, ըստ երեւոյթին, միայն պաշտպանողական կռիւ էին մղում, նոյնպէս դրոհելու փորձ չարին։

Թուրքական վաշտերը իրենց կռնակը տուել էին Մուշից դէպի Բաղէշ—Սղերդ տանող ճանապարհին։ Հեռադիտակով կարելի էր պարզ կերպով տեսնել, թէ ինչպէս այդ ճանապարհով Մշոյ Դաշտից դէպի Բաղէշ էր շարժւում թուրք եւ քիւրդ դաղթականութեան անընդհատ հոսանքը։ Պարզ էր, որ թուրք բանակի դիմադրութեան գլխաւոր, եթէ ոչ միակ նպատակը այդ դաղթականութեան պաշտպանութիւնն էր։

Երեկոյ եղաւ։

Թնդանօթները եւ հրացանները կամաց կամաց լռեցին։

Մանրամաղ ձիւնը եւ հետզհետէ թանձրացող խաւարը ծածկեցին իրարից երկու կռուող բանակները։

Թուրքերը, միայն շնորհիւ իրենց գերազանց ոյժերին կարողացան պահել իրենց թաղաւորող դիրքերը եւ այդպիսով ապահովել Մշոյ դաշտից դէպի Բաղէշ շարժուող թուրք եւ քիւրդ հրակայ գաղթականութեան նահանջը։

ԴԱՏՎԱՆՈՒՄ

Զնայած իր գերազանց ոյժերին եւ աւելի հեռաձիգ հրետանիին, թշնամին ոչ յաջորդ օրը եւ ոչ էլ յետագայ օրերը հակայարձակում չգործեց։ Մեր հրամանատարութիւնն էլ մեր տկար ոյժերով նոր յարձակման փորձ չարեց։ Մեր հրամանատարութեան համար փետրուար 8-ի կռիւը, որ մեր գնդից խլեց 8-10 զոհ, թշնամու ոյժը չափելու ծառայեց։

Մեր զօրամասը դադար առաւ եւ սպասեց օգնական ոյժերի, որոնք չուշացան։ Նախ մեզ հասան մեր նոր եւ անմիջական հրամանատար գնդապետ Ֆիլիպովին ենթակայ զօրքերը։ Ապա լուր եկաւ, որ դէպի Բահվէ Դուրան են շարժւում երկու ուրիշ զօրամասեր՝ մէկը Ոստանից, Վանի լճի հարաւային ափով՝ գնդապետ Զեմցովի հրամանի տակ, իսկ միւսը՝ Մշոյ Դաշտից՝ գնդապետ Նասկովի հրամանի տակ։

Փետրուար 8-ի կռուից յետոյ անցաւ եօթ օր, մինչեւ որ այս զօրամասերը հասան Բահվէ Դուրան։ Մինչեւ փետրուար 15-ը, երբ կրկին հրաման ստացանք առաջ շարժուելու, մենք մնացինք Դատվան, մատնուած անգործութեան, բացի պահակութիւն կատարելուց։

Այդ ամբողջ շաբաթուան ընթացքում Դատվան էր գտնւում զօրավար Աբացիեւը, որ չուշացրեց ցոյց տալ մեզ իր հայատեաց դէմքը։

Դատվան հասած չհասած՝ նա ձերբակալել տուեց մեր գընդից երեք կամաւորներ այն ամբաստանութեամբ, որ իբր թէ, մեր այդ ընկերները անզէն քիւրդեր եւ թուրքեր են սպանել։

Անդրանիկի դիմումը զօրավարին ապարդիւն անցաւ։ Անդ-

Անդրանիկի բոլոր բացատրութիւններին Արացիեւը մի պատասխան ունէր,— այդ կամաւորները պատերազմական ատեանի պիտի յանձնուեն։ Այդ սպառնալիքին նա միացրեց նաեւ այն, որ իբր թէ մեր կամաւորները անկարգապահ են, որ կանոնաւոր պահակութիւն չեն անում, որով վտանգում են զօրամասի ապահովութիւնը։

Դրանով վերջացաւ Անդրանիկի առաջին տեսակցութիւնը զօրավար Արացիեւի հետ։

Այդ տեսակցութիւնից երկու օր յետոյ մի սարսափելի ձիւնամրրիկ պայթեց Բահվէ Դուրանում։

Կատաղի հողմը իր թեւերին էր առնում Գրդուռի եւ Խութայ լեռների ձիւնը, մաղում Բահվէի վրայ, խառնում Բահվէի ձիւներին, կրկին վեր բարձրացնում իր պտուտակաւոր թեւերին, նետում դէպի վեր, նորէն վար նետում, փչում Բահվէի վրայ եւ օդը լցնում կաթնանման զանգուածով։ Լեռ ու դաշտ պատած էր այդ ձիւնէ թանձր փոշիով, որ անկարելի էր դարձնում անմիջական շուրջդ, նոյնիսկ մի քանի քայլի վրայ որեւէ բան տեսնելը։ Օդ չէր, որ շնչում էինք, այլ ձիւնէ փոշի, որ շունչդ էր բռնում ու խեղդում։ Քամու մի քանի վայրկեանի դադարը, կամ ուղղութիւնը փոխելը հնար էր տալիս շունչ քաշելու, յաջորդ վայրկեանին կրկին դիմաւորելու համար հուժկու մրրիկի կատաղութիւնը։ Երկինք ու դետին խառնուել էին իրար։

Ո՞վ դիտէ, քանի՜ քանի դժբախտ ճամբորդներ բքախեղդ են եղել այս լեռնադաշտում այսպիսի ձիւնամրրիկի բռնուելով։

Անդրանիկի դրաւած թոնրատան դուռը բացուեց եւ ներս մտաւ մարդկային կերպարանքի նմանող ձիւնէ մի զանգուած։ Այդ զանգուածի կատարին ցցուած հրացանի սուինից կարելի էր հասկանալ, որ ներս մտնողը զինուոր է։ Մեր դնդի կամաւորներից մէկն էր, որ դիմեց Անդրանիկին։

— Փաշա, Աստծու սիրոյն, ալ չենք կրնար տոկալ, դիրքերու վրայ հսկող պահակները կը խեղդուին, եթէ հրաման չտաս, որ յետ քաշուին։

Զեկոյց տուողը Ամերիկայից եկած կամաւորներից մէկն էր, որին տարիներ յետոյ պիտի հանդիպէի Նիւ Եօրքում։

— Տղայ, դարձաւ ինձ Անդրանիկը, տար այս կամաւորը զօրավար Արացիեւին քով եւ ըսէ, որ պահակները այլ եւս չեն կըրնար կենալ դիրքերուն վրայ։ Ըսէ, որ թշնամին ալ մարդ է, ան ալ մարմին ունի, ան ալ չի կրնար տոկալ աս փոթորիկին։ Ո՞վ կրնայ այս թիփիին դուրսը կենալ։ Ըսէ, որ հրաման տայ յետ կանչեմ տղաքս։ Շո՛ւտ դացէք։

Ձիւնակոլոլ պահակի հետ դնացինք զօրավար Աբացիեւի բը-նակած տունը։ Զօրավարին սպասարկող զինուորին ասացի, որ Անդրանիկի կողմից եկած եմ զեկուցելու զօրավարին։ Ներս մտաւ լուր տալու զօրավարին եւ ապա յետ եկաւ ու մեզ ներս առաջ-նորդեց։

— Այս ի՞նչ է, հարցրեց զօրավար Աբացիեւը, մատով ցոյց տալով կողքս կանգնած ձիւնաշաղաղ պահակին։

Բացատրեցի խնդիրը։ Զօրավարը դարձաւ իրեն սպասարկող զինուորին.

— Տա՛ր այս մարդուն մի տաք տեղ, տաք թէյ եւ տաք կերա-կուր տուր. չո՛ւտ։

Ապա դառնալով ինձ, ասաց.

— Ասացէք Անդրանիկին, որ պահակները կարող է յետ քա-շել, մինչեւ որ փոթորիկը մի քիչ հանդարտի։ Նաեւ ասացէք Անդրանիկին, որ վաղը կէսօրին կ՚ուզեմ տեսնել իրեն կարեւոր գործի համար։

Զօրավար Աբացիեւի խօսակցութեան ձեւից եւ ուշադրու-թիւնից ակնյայտնի էր, որ նա ուրիշ անդամների նման թշնա-մական տրամադրութիւն չունէր մեր հանդէպ։

Յաջորդ օրը Անդրանիկը, ինձ իր հետ առնելով, ներկայա-ցաւ Աբացիեւին։ Հաղիւ էինք ներս մտել եւ բարեւել իրեն, երբ Աբացիեւը հրամայեց իրեն սպասարկող զինուորին, որ մեր երե-քիս համար թէյ բերի։ Այս արդէն անսովոր ուշադրութիւն էր Աբացիեւի կողմից։

— Ասացէք Անդրանիկին, որ ես ստուգում կատարել տուի եւ պարզուեց, որ ձեր գնդի երեք կամաւորները անդէն մարդ չեն սպանել, ուստի հրաման տուի որ բանտից արձակեն նրանց եւ վերադարձնեն ձեր գունդը, ասաց Աբացիեւը։ Բացի դրանից, ասացէք Անդրանիկին, որ վաղը առաւօտ մեր զօրամասը առաջ պիտի շարժուի դէպի Բիթլիս, որի դրաւումը այլ եւս պէտք չէ որ ուշանայ։ Մեր զօրամասը պիտի դրաւի Բիթլիսի ձորաբերանը, որտեղ մեզ պիտի միանան Ոստանից եկող գնդապետ Զեմցովի եւ Մուշից եկող գնդապետ Նասկովի զօրամասերը։ Ձեր գունդը պի-տի դտնուի գնդապետ Ֆիլիպովի անմիջական հրամանի տակ։

Ապա, մի պահ լռելուց յետոյ, զօրավար Աբացիեւը շարու-նակեց.

— Ի՞նչ է Անդրանիկի կարծիքը վաղուան մեր արշաւանքի մասին։ Ենթադրում եմ, որ նրան լաւ ծանօթ է այս շրջանի տե-ղագրութիւնը։

Անդրանիկը պարզեց յաջորդ օրուայ կռուի իր յատակագիծը, որ ես բառ առ բառ թարգմանեցի զօրավար Աբացիեւին։

Այս անգամ զօրավարը դրեթէ սիրալիր բաժանուեց Անդրանիկից։

Յաջորդ օրը մեր գնդին էլ տրուեց դրաւոր «օրուան հրամանը»։ Այդ հրամանը սեղմ, բայց դրեթէ բառացի կազմուած էր Անդրանիկի նախորդ օրուան ասածներից։ Միայն թէ հրամանի տակ ստորագրուած էր ոչ թէ Անդրանիկի, այլ գեներալ լէյտնանտ Աբացիեւի անունը։

«Օրուան հրաման»-ի մէջ զօրամասի առաջապահի պաշտօնը յանձնուած էր մեր գնդին։ Աբացիեւը, իր մի բաժակ թէյը եւ կեղծ սիրալիրութիւնը թանդ էր նստեցրել մեզ։

Նա խնայել էր ռուսական գնդերին կռուի առաջին ծանրութեան գոհերը, որ ռուսների փոխարէն պիտի տայինք մենք։

ԴԷՊԻ ԲԱՂԷՇ

Փետրուար 15-ն է։

Մեր զօրամասը շարժւում է դէպի Բաղէշ։

Երեք օր առաջուան փոթորկից հետք չէ մնացել։ Երկինքը ամպամած է, բայց ցուրտը այնպէս սաստիկ չէ, ինչպէս երեք օր առաջ։ Սառը քամուց կարծրացած ձիւնի վրայ քայլելը դժուար չէ։

Մօտ երեք ժամ քայլելուց յետոյ հասնում ենք Ալամեք խան, որ մինչեւ երէկ թշնամու ձեռքն էր։ Այսօր թշնամի չի երեւում Ալամեք խանի շրջակայքում։

Մի հսկայ շէնք է Ալամեք խանը, որ ծանր գանգուածով նըստած է Բահվէ Դուրանի դրեթէ մէջտեղը։ Ալամեք խան մտնելուց առաջ Անդրանիկը մօտեցաւ շէնքի հիւսիս արեւելեան անկիւնին։ Ըստ երեւոյթին նա ուզում էր ստուգել, թէ արդեօք մի քանի օր առաջ ինքը ճի՞շդ էր կռահել թուրքական թնդանօթների տեղը։ Մեզ՝ իրեն ուղեկցողներիս առջեւ բացուեց Ալամեք խանի հիւսիս-արեւելեան անկիւնին կից, ձիւնի մէջ փորուած 10-15 ոտք լայնութեամբ եւ նոյնքան երկարութեամբ ու խորութեամբ մի սենեակ։ Այդ ձիւնէ սենեակի արեւելեան, հիւսիսային եւ հարաւային կողմերը ուղղահայեաց պատեր էին, իսկ արեւմտեան պատի փո-

խարէն չինուած էր դաշտի ձիւնի մակերեսից դէպի սենեակի յատակը հետզհետէ իջնող մի ճամբայ։ Թուրքերի յետ քաշուելուց յետոյ նոր ձիւն չէր եկել, ուստի ձիւնի մէջ պարզ ու որոշ երեւում էին Թուրքական թնդանօթների անիւների թողած հետքերը։

Այդ յայտնութիւնը ուղղակի ապշեցուցիչ էր։ Ուրեմն Անդրանիկը բացարձակապէս իրաւացի էր, երբ մի շաբաթ առաջ թելադրում էր մեր զօրամասի թնդանօթաձիգներին ծեծել Ալամեք խանի այս անկիւնը։ Նա այնքան ճիշդ էր կռահել Թուրքական հրետանու տեղը որ, կարծես թէ, ինքն իր ձեռքով էր տեղաւորել այդտեղ թնդանօթները։

Ներս մտանք Ալամեք խանը, որի կենտրոնում զինուորները այս ու այն կողմից հաւաքած վառելիքով խարոյկ էին վառել։ Խարոյկի շուրջը հաւաքուած էին մի քանի սպաներ, որոնց մէջ էր նաեւ մեր զօրամասի սպայակոյտի պետ գնդապետ Շատիլովը։ Սպաների այդ խմբից մի քիչ հեռու աշխատում էին դաշտային հեռախօսի գիծը զետեղող զինուորները։

Հեռախօսային գծի վրայ աշխատողներին տեսնելով, Անդրանիկը մօտեցաւ գնդապետ Շատիլովի խմբին եւ ասաց ինձ.

— Ըսէ՛ այդ փոլքովնիկին, որ Մուշէն եկող զօրամասէն պաթալիոն մը ղրկեն Թախթալիի ձորը, Բաղէշը պաշտպանող Թուրքական ոյժերուն կռնակն անցնելու համար։ Այդ ձորը նեղ է եւ ձմեռ ատեն թնդանօթ չի կրնար անցնիլ այդ տեղէն։ Թող պաթալիոնը իրեն հետ միայն «փուլեմետներ»*) տանէ։

Երբ Անդրանիկի ասածները թարգմանեցի գնդապետ Շատիլովին, վերջինի դէմքի վրայ հազիւ նշմարելի հեգնական ժպիտ ուրուագծուեց,— այսինքն թէ՝ Անդրանիկը ի՞նչ գիտէ, թէ ո՞ր տեղից, դէպի ո՞ւր եւ ի՞նչ ոյժեր պիտի ուղարկել։

Բարեբախտաբար Անդրանիկը չնկատեց այդ հեգնական ժպիտը, իր ուշադրութիւնը այդ վայրկեանին դարձած էր իրեն մօտեցող Սմբատին։

Հինգ–տաս րոպէ հազիւ էր անցել, երբ հեռախօսի գիծը կարգի դնող զինուորներից մէկը մօտեցաւ գնդապետ Շատիլովին եւ զեկուցեց, որ Մուշից եկող զօրամասի հետ հեռախօսային կապը հաստատուած է։

Գնդապետ Շատիլովը անմիջապէս մօտեցաւ հեռախօսի գիծը վարող զինուորին եւ թելադրեց հետեւեալ հեռախօսագիրը.

«Մուշից եկող զօրամասի պետ գնդապետ Նասկովին.

---

*) «Փուլեմետ» ռուսերէն գնդացիր, արագահարուած։

Ձեր զօրամասից մի դումարտակ չորս գնդացիրով ուղարկեցէք Թախթալիի ձորով անցնելու համար Բիթլիսը պաշտպանող թուրքական ոյժերի թիկունքը:

Ստորագրել է — Սպայակոյտի պետ գնդապետ
ՇԱՏԻԼՈՎ»

Անդրանիկին հեղնողը՝ Անդրանիկի թելադրածը հրամայեց բայց··· իր անունից:

Ձմրան երեկոն սկսել էր իջնել, երբ մեր զօրամասը Ալամեք խանից շարժուեց դէպի Բաղէշի ձորաբերանը: Հրամայուած է վերսկսել յարձակումը: Սակայն թուրքերը չսպասեցին մեր յարձակման եւ յետ քաշուեցին:

Մեր հետեւակը նետւում է առաջ հետապնդելու խուսափող թշնամուն եւ մտնում ենք Բաղէշի ձորը: Երեկոյեան ժամը չորսն է, երբ հասնում ենք Բաշ խան կոչուած քարւանսարան: Անցնում ենք երեք-չորս կանգուն խորութեամբ ձիւնի մէջ փորուած թուրքական լքուած խրամատների մօտից:

Դէպի Բաղէշ իրենց նահանջը ապահովելու համար թուրքերը դիմադրութեան մի փորձ են անում Բաշ խանի եւ Բաղէշին աւելի մօտիկ Պապչէն խանի միջեւ գտնուող բլուրների շղթայի առջեւ փորած իրենց դիրքերում: Ժամանակը ուշ է եւ կռիւը հազիւ սկսած՝ դադարում է: Հետզհետէ խտացող մութը վերջ է դնում հրացանային եւ թնդանօթային կրակին:

Երեկոյեան ժամը 10-ն էր, երբ մեր զօրախմբի անմիջական հրամանատար գնդապետ Ֆիլիպովը իր մօտ կանչեց Անդրանիկին: Անդրանիկը, ինձ իր հետ առնելով, ներկայացաւ գնդապետ Ֆիլիպովին, որ մի բարեհամբոյր, համակրելի մարդու տպաւորութիւն թողեց մեր վրայ:

Գնդապետ Ֆիլիպովը ասաց Անդրանիկին, որ ինքը լսել է Անդրանիկի մասին եւ որ Անդրանիկի ներկայութիւնը շատ օգտակար պիտի լինի իր՝ Ֆիլիպովի՝ զօրախմբի զինուորական գործողութիւնների յաջողութեան համար: Ապա մեր դէմ ճակատող թուրքական ոյժերի մասին իր ունեցած տեղեկութիւնները հաղորդելուց յետոյ հրահանգեց, որ կէս դիշերին մեր դունդը շարժուի առաջ եւ առանց գնդակ արձակելու, սուինամարտով գրաւէ թուրքական խրամատները:

Տասնեւհինգ ժամ է ոտքի վրայ ենք, եթէ չհաշուենք Ալամեք խանում մեր կարճատեւ դադարը:

Ցուրտ է, անտանելի ցուրտ է Բաղէշի ձորում, ուր անդադար

փչում է հիւսիսային քամին։ Թւում է որ ցուրտը թափանցում է մեր ոսկորների ծուծը, այլեւս երբեք այնտեղից դուրս չգալու համար։

Նահանջող թուրքական բանակի ոտքերի տակ կարծրացել է նեղ ճանապարհի ձիւնը։ Ճանապարհի աջ ու ձախ կողմերը, ուր ձիւնը կակուղ է, մինչեւ ծնկներդ թաղւում ես ձիւնի մէջ։

Ոչ մի յոյս տաք անկիւն գտնելու։ Ձիւն ամէն կողմ՝ կ՝ուզես ոտքի վրայ մնայ, կ՝ուզես նստիր կամ պառկիր,— ձիւն է, ձիւն, միայն ձիւն ամէն կողմ։ Քաղաքը, ուր ջերմութիւն եւ հանգիստ կայ, թշնամու ձեռքն է։ Բաղձալի ջերմութեան ու հանգստի տիրանալու համար պէտք է խլես թշնամու ձեռքից քաղաքը։

Կէս գիշերից անց է, երբ յարձակման հրաման է տրւում։ Անաղմուկ առաջ ենք շարժւում։ Տեղ տեղ միայն կակուղ ձիւնը փըխըրւում է մեր ոտքերի տակ՝

«Խըրփ, խըրփ, խըրփ»...

Զգոյշ ենք եւ պատրաստ ամէն րոպէ սուինների դիմելու։

Հասնում ենք թուրքական խրամներին, որ սակայն թափուր են թշնամուց։ Թուրքերը լքել են նաեւ պաշտպանութեան այս գիծը եւ քաշուել են Բաղէշ։

Գիշերուայ ժամը 3-ն է։

Կծկւում ենք թուրքական խրամների մէջ քամուց պաշտպանուելու եւ հանգստանալու համար։

Փաթաթւում եմ տառատոկիս մէջ եւ աշխատում եմ քնել։

Բայց ի՞նչպէս քնել, երբ այնպէ՛ս ցուրտ է, այնպէ՛ս ցուրտ։ Գլուխդ ես ծածկում տառատոկով, ոտքերդ են սառչում, ոտքերդ ես փաթաթում՝ գլուխդ ու ձեռքերդ են սառչում։ Զնայած յոգնութեան եւ անքնութեան՝ անկարելի է քնել։ Ոտքի ես կանգնում, կեցած տեղդ ոտքերով գետինն ես դոփում, ձեռքերդ ես շփում, կուրծքդ ես ծեծում, մի քիչ տաքացնելու համար սառած մարմինը դ,— ի զո՞ւր։ Կրկին պառկում ես, նորէն ոտքի ցատկում եւ այդպէս մի քանի ժամ, մինչեւ որ մեր շարքերով, բերնէ բերան է անցնում հրամանը,— «Գո՛ւնդ, ոտքի՛... յառա՛ջ...»

Ոտքի եմ կանգնում, ձիս քաշում յետեւից եւ քայլում։

Լուսաբացը մօտ է։

Մի ժամ է, ինչ քայլում ենք։

Թեքւում ենք դէպի աջ, մի շարք բլուրների ետեւ, որոնց թիկունքից էր կրակում երէկ թշնամու հրետանին։

Վարը, այդ բլուրների ստորոտում փռուած է Պապչէնի բա-

ական ընդարձակ դաշտը, որի հիւսիսային կողմում բարձրանում է Պապչէն խանի ահագին շէնքը:

Պապչէն խանից աւելի հիւսիս, Խուրթի լեռների ստորոտում Պապչէն գիւղն է, ուր կռիւ է ունեցել Աղբիւր Սերոբը 1899-ին:

Տէ՛ր Աստուած, կա՞յ մի անկիւն մեր հայրենիքում, որ ներկուած չլինի մեր հերոսների եւ նահատակների արիւնով:

Մեր կանգնած տեղից դէպի հարաւ, Պապչէնի դաշտի ծայրում, Բաղէշի ձորի լայնութեամբ ձգւում է բլուրների մի շարք, որ պատնէշի նման պաշտպանում է իր ետեւում ծածկուած Բաղէշ քաղաքը:

Լուսացաւ. արեւը ծագեց:

Դիմացի լեռների ատամնաւոր կատարները կաս կարմիր կտրեցին:

Ձիւնը, ասես, վառուել սկսեց: Բիչ յետոյ լեռնակատարների ձիւնը դեղնեց, դունատուեց եւ ապա փայլեց արեւի ճառագայթների տակ չլացուցիչ փայլով, որ աչքերդ է խոտղում:

Բաղաքի առջեւը փակող բլուրների վրայ երեւացին թշնամու շղթաները:

Մեր դունդը՝ միշտ յառաջապահ՝ սկսեց իջնել դէպի Պապչէնի դաշտը, որ բաժանում է մեզ թշնամուց:

Պայծառ առաւօտ է: Արեւը, աչքերդ կուրացնելու չափ փայլեցնում է առջեւդ փռուած ձիւնը: Դեռ ոչ մի ձայն չի խախտում շրջապատի լռութիւնը:

Տարօրինակ են կռուից առաջ այդ վայրկեանները:

Երկու կողմից մարդկային երկու զանգուածներ երեւութապէս անմեղ շարժումներ են անում՝ բարձրանում են, իջնում, փորում են, ինչ որ բաներ են տեղաւորում փոսերի մէջ: Դեռ եւս ոչինչ չի մատնում երեւութապէս անմեղ այդ շարժումներին հետեւելիք փոթորիկը: Փոթորկից առաջ ծովի խորհրդաւոր խաղաղութիւն է այս:

Մեր վաշտերը, շղթայ կապած, կտրում են Պապչէնի դաշտը եւ աշխատում են , որքան կարելի է, մօտենալ թշնամու ամրացած դիրքերին: Պայծառ արեւով ողողուած ճերմակ ձիւնի վրայ մեր վաշտերը հիանալի թիրախ են թշնամու հրացանաձիգների համար: Մերոնք դեռ թշնամու զնդակների հասողութիւնից դուրս են, ուստի դեռ լուռ են թշնամու հրաձիգները:

Բայց շատ չանցած, ահա, թշնամու դիրքերից հատ ու կըտոր հրացաններ են սկսում պայթել: Մեր վաշտերը կասեցնում են իրենց քայլը եւ սկսում են խրամներ փորել խոր ձիւնի մէջ: Թըշ-

նամու հատ ու կտոր հրացանաձգութիւնը հետզհետէ վերածւում է միահամուռ որոտի։ Դրան պատասխանում են մեր վաշտերը, որ արդէն թաղուել են իրենց փորած խրամների մէջ։

Մեր վաշտերի դիրքաւորուելը նշան է մեր հրետանու համար, կրակ բանալու թշնամու դիրքերի դէմ։ Թուրքական հրետանին պատասխանում է մեզ։

Կռիւն սկսուեց։

Թուրքերը բռնել են Բաղէշի ձորի լայնութեամբ քաղաքի առջեւը փակող բլուրների շղթան եւ մեկնել են իրենց թեւերը դէպի ձորի երկարութեամբ աջ ու ձախ բարձրացող լեռնակատարները այնքան բարձր, որքան որ դա հնարաւոր է տարուան այս եղանակին, խոր ձիւնի մէջ։

Նախապէս պատրաստուած դիրքերի վրայ թուրքերը ուժեղ դիմադրութիւն են ցոյց տալիս։

Շրջադարձ անել այս նեղ ձորում, դրկելու համար թշնամու թեւերը եւ ստիպելու նրան յետ քաշուել՝ անկարելի է։ Ձորի երկու կողմերում բարձրացող լեռնակատարները դժուարամատչելի են նոյնիսկ ամառը, էլ ուր մնաց հիմա, երբ ձիւնի հաստ սաւանով են ծածկուած դրանք։ Ստիպուած ենք ճակատից հարուածել թշնամուն եւ քայլ առ քայլ խլել նրա դիրքերը։ Իսկ սա կապուած է ծանր զոհերի հետ, որ ստիպուած է տալ մեր՝ միշտ յառաջապահ գունդը։

Առաւօտեան արեւոտ ու խաղաղ օրը մէկէն փոխուեց։ Կէսօրից յետոյ սկսեց փչել մի կատաղի քամի, որ բարեբախտաբար, մեր թիկունքը, իսկ թուրքերի ճակատն է ծեծում։

Ցուրտ է, շատ ցուրտ։ Սառած մատները դժուարութեամբ են իջեցնում փամփուշտները հրացանի ամբարի մէջ։ Հաղարաւոր հրացաններից դուրս պոռթկացող որոտները ձուլւում են մի հզօր շառաչի մէջ, որի վրայ տիրապետում են թնդանօթների բոմբիւնները։ Սրճաղանդը խլում է այդ դոռոցները եւ նետում սարից սար, ձորից ձոր։

— Թուրքերն այսօր ռումբ ու փամփուշտ չեն խնայում, երեւի ուզում են սպառել իրենց ռազմամթերքը, որ աւարի չտան մեզ, կատակում է ռուս սպաներից մէկը, որի հետ կանգնած ենք մեր հրետանու մարտկոցներից մէկի մօտ։

Այդ մարտկոցը, նախորդ դիշերը մեր դնդի դրաւած բլուրներից մէկի յետեւից ռմբակոծում է թշնամու դիրքերը։

Թուրքական հրետանին այսօր ամենի լաւ նշան է առնում,

քան Բահվէ Դուրանի կռուում, թէեւ, այստեղ էլ, իր ռումբերի մեծ մասը, բարեբախտաբար, չի պայթում:

Տեղադրութեանը ռուսներից աւելի լաւ ծանօթ թուրք հրամանատարութիւնը կռահել է, թէ ո՞ւր կարող են զետեղուած լինել մեր հրետանու մարտկոցները: Մեր գլուխների վրայից սուրալ են սկսում թուրքական ռումբերը եւ ցած են թափւում ոչ շատ հեռու, երբեմն նոյնիսկ շատ վտանգաւոր լինելու չափ մօտիկ մեր թնդանօթներից:

Հրետանու ռումբերով բարձուած մեր ջորիները թնդանօթներից 10–15 քայլի վրայ են կանգնած: Թուրքական մի ռումբ ընկաւ այդ ջորիներից մէկի վրայ, բայց... չպայթեց: Միայն երեւակայել կարելի է, թէ ի՞նչ պիտի լինէր այդտեղ հաւաքուածների վիճակը, եթէ պայթէին այդ ռումբերը: Երեւակայել կարելի է, բայց այդ երեւակայողների մէջ մենք, յամենայն դէպս, չէինք լինի:

Անդրանիկը, առաւօտեան կռիւն սկսելուն պէս, նստեց իր ձին եւ երկու թիկնապահների ուղեկցութեամբ գնաց դէպի թշնամին առաջացող մեր վաշտերի շարժումներն ու դիրքերը մօտիկից դիտելու: Առաջաւոր դիրքերից վերադառնալուց յետոյ, Անդրանիկը մի առ ժամանակ մնաց հրետանու այն մարտկոցի մօտ, ուր հաւաքուած էին մեր զօրաբաժնի հրամանատար զօրավար Աբացիեւը եւ իր սպայակոյտի սպաները: Ամէն անգամ, որ մեր գլուխների վրայից օդը ճեղքող ֆշշոցով անցնում էին թշնամու ռումբերը, սպայակոյտի սպաները, բոլորը մէկ մինչեւ գետին էին խոնարհում իրենց գլուխները, ու երբ ռումբերը հեռանում էին, սպաները շտկում էին իրենց մէջքերը:

Ինքը՝ Աբացիեւը, որ սլացիկ հասակով դեղեցիկ տղամարդ էր, եւ քաջ մարդու անուն էր վայելում, բարդու ծառի նման դիք կանգնած էր մնում ռումբերի տակ:

Ռումբերից «խուսափելու» շարժում չէին անում ոչ Անդրանիկը եւ ոչ էլ նրա հետ գտնուած կամաւորները: Աբացիեւը տեսնում էր այդ բոլորը: Եւ ահա, երբ սպայակոյտի անդամները մեր գլուխների վրայից անցնող թուրքական ռումբերին հերթական խոնարհութիւնն արին, Աբացիեւը, հեղնական ժպիտը դէմքին, դարձաւ սպաներին.

— Կռանալն օգնում է, հա՞...

Հրամանատարի հեղնանքը սպանիչ էր եւ այնուհետեւ ոչ մի սպայ չփորձեց խոնարհուել թուրքական ռումբերի տակ:

Անդրանիկը նորից մեկնեց դէպի կռուի դիրքերը: Այս անգամ

նրան ուղեկցեց Թռուցիկ Գէորգը, որ մեր հինաւուրց հայդուկներից մէկն էր։ Անդրանիկը պատուիրեց ինձ մնալ զօրավար Արացիւրի մօտ։

Կէսօրից յետոյ ժամը չորսն էր։ Ձմրան կարճ օրուան արեւը սկսում էր թեքուել դէպի իր մուտքը։ Գրեթէ մի ժամ էր անցել Անդրանիկի եւ Թռուցիկ Գէորգի դէպի դիրքերը մեկնելուց յետոյ, երբ պատգարակի վրայ պառկած բերին Թռուցիկ Գէորգին։ Շատ չանցած դիրքերից վերադարձաւ Անդրանիկը, եւ պատմեց, որ երբ ինքը եւ Թռուցիկ Գէորգը հասել են Պապչէն խան, Գէորգն առաջինը իջել է իր ձիուց եւ ձեռքը մեկնել է Անդրանիկի ձիուսանձին, օգնելու համար Անդրանիկին վար իջնելու։ Բայց հէնց միեւնոյն վայրկեանին Գէորգը ձգել է Անդրանիկի ձիու սանձը, երկու ձեռքով բռնել է իր կողքը եւ նստել դետնին։

— Ես զարկուեցի, փաչա, ասել է Գէորգը։

— Ի՞նչ կը խօսիս, տղայ, կատա՞կ կ՚ընես, վրայ է բերել Անդրանիկը։

Բայց տեղի ունեցածը կատակ չի եղել, այլ կռուի դաշտում պատահող մի շատ սովորական բան՝ Թռուցիկ Գէորգը թշնամուց մի գնդակ է ընդունել։ Աւելի ուշադրաւն այն էր, որ սա մէկն էր այն բազմաթիւ դէպքերից, երբ Անդրանիկի ճիշդ կողքին կանգնողները սպանուել կամ վիրաւորուել են, բայց Անդրանիկին չի դիպել թշնամու գնդակը։

Ու այնուհետեւ էլ չդիպաւ երբեք...։

Կռիւը շարունակուեց միեւնոյն ուժգնութեամբ մինչեւ երեկոյ։ Մշուշը իջաւ լեռներից եւ դրկեց սար ու ձոր։ Թնդանօթները լռել են արդէն։ Վերջին հատ ու կենտ հրացաններն էլ լռեցին։ Խաւարը պատեց չորս կողմը։

Երկու թշնամի բանակները յետ քաշուեցին իրարից հանդիստ առնելու ձիւնի մէջ փորուած ցուրտ ու խոնաւ խրամատներում։ Հերթապահ վաշտերը մնացին պահակ կենալու մեր առաջաւոր դիրքերին։

Մեր գնդին փոխարինեց ռուսական մի գունդ, իսկ մեզ հրամայուեց յետ քաշուել, հանգստանալու համար հայկական Ծաղր գիւղում։

Երեսունվեց ժամ է, ինչ մեր գունդը ոտքի վրայ է։ Քայլել է Դատվանից մինչեւ Բաղէշի դռները եւ մի ամբողջ օրուայ կռուի առաջին ժամերի ծանրութիւնը կրել է իր ուսերին, տալով 80 սպանուած ու վիրաւոր, իր թուի գրեթէ տաս տոկոսը։

Ցողնած ենք, քաղցած ու սառած։ Մանաւանդ սառած։

Երազում եմ մրոտ խրճիթի եւ ծխացող թոնրի ջերմութեան մասին։

Դանդաղ է քայլում յողնած ձիս, որ անտրտունջ կիսում է ինձ հետ մեղ բաժին ընկած նեղութիւնները։

ԾԻԱՐ ԳԻՒՂՈՒՄ

Դէպի Ծւար տանող ճամբան Բաշ խանի մօտ բաժանւում է Բահվէից Բաղէշ տանող գլխաւոր ճանապարհից։ Տարուայ այս եղանակին, սակայն, երբ ձիւնը լեռնակուտակ դիզուել է մեր չորս կողմը, դէպի Ծւար տանողը այլեւս ճամբայ չէ, այլ խոր ձիւնի մէջ փորուած մի նրբանցք։

Երկու կողմից եօթ – ութ կանգուն բարձրութեամբ ձիւնէ պատերի մէջ սեղմուած այդ նրբանցքը միայն այնքան լայնութիւն ունի, որ հակառակ կողմերից եկող երկու ձիաւորներ հաղիւ կարող են մէկը միւսին ճանապարհ տալ։ Իսկ նրբանցքի խորութիւնը այնքան է, որ ձիաւորը բոլորովին ծածկւում է ձիւնէ պատերի մէջ։ Զիուս վրայից ձեռքս բարձրացնում եմ, բայց չեմ կարողանում հասցնել ձիւնէ պատի կատարին։ Եւ դեռ ձիւնի խորութիւնը դրանից աւելի է. որովհետեւ տեղ տեղ, ուր նրբանցքի յատակի ձիւնը լաւ տրորուած ու ամրացած չէ, մեր ձիերը մինչեւ իրենց ծնկները թաղւում են ձիւնի մէջ։

Մօտ կէս ժամ մենք ճամբորդում ենք այդ ձիւնէ նրբանցքով, որից յետոյ մեր ճանապարհը դուրս է գալիս ձիւնի մակերեսի վրայ եւ մագլցում է բլուրն ի վեր։ Կէս գիշերն անց է, երբ հասնում ենք Ծւար, որ բլուրի գագաւոր լանջի վրայ է։

Այստեղ էլ նոյն պատկերն է, որին հանդիպել ենք մեր ամբողջ արշաւի ընթացքում,— ամայութիւն ամէն կողմ, կենդանի ոչ մի չունչ եւ փողոցների ու շէնքերի մէջ թափուած կենդանիների լէշեր։

Այս գիւղում է տեղաւորուած եղել թուրքական բանակի պարէնի պահեստը։

Ահա թէ ինչո՞ւ թուրքերը ահագին աշխատանք են թափել, դէպի այս կիսաւեր ու ամայի գիւղը, խոր ձիւնի մէջ ճանապարհ բանալու համար։

Ինչպէս բոլոր կիսաւեր եւ ամայի գիւղ ու քաղաքներում, ուր բանակել է մեր դունդը, այստեղ էլ, մեր գնդի առաջին գործն է լինում բնակելի շէնքերը պարպել կենդանիների լէշերից: Բարեբախտութիւն է, որ մեր շուրջը ձիւն ու ձմեռ է եւ այս լէշերը սառել, սառոյց են կտրել ու չեն ապականել օդը: Ապա թէ ոչ, տարուայ տաք եղանակներին, այս լէշերի դարշահոտութիւնը թոյլ պիտի չտար նոյնիսկ մօտենալ այս վայրին:

Մինչ մեր գնդի ձիաւորները զբաղուած էին իրենց ձիերը ախոռների մէջ տեղաւորելով եւ նրանց ուտելիք հայթայթելով, մեր հետեւակը մաքրում էր թոնրատները: Շատ չանցած բաւական տներ մաքրուած եւ թոնիրները վառուած են: Բոցավառ թոնիրների մէջ չոր փայտերի ուրախ ճարճատիւնը ամենաքաղցր երաժշտութիւնն է մեզ համար: Թոնրի շուրջն եմ դառնում եւ զարմանքով զգում, որ թոնրի ջերմութիւնը սկսում է ազդել իմ վրայ եւ տաքութիւնը տարածւում է մարմնիս մէջ, մինչդեռ մի քանի ժամ առաջ ինձ թւում էր, որ մարմինս այլեւս երբեք պիտի չտաքանայ:

Թուրքական բանակի մատակարարման պահեստից մեր ձեռքն են անցնում պաքսիմատներ եւ չորացուած ու աղացուած լուբիայի կարծրացուած փոքրիկ աղիւսակներ, որ եռման ջրի մէջ հեշտութեամբ լուծւում եւ տաք ապուր են դառնում: Լուբիայի ապուրը, պաքսիմատները եւ շաքարով թէյը այդ դիշեր մի հաղուագիւտ կերպով համեղ ընթրիք են կազմում մեզ համար: Ես չեմ յիշում, որ դրանից առաջ ես երբեւիցէ այդքան համեղ ապուր կերած եւ այդքան բուրումնաւէտ թէյ խմած լինէի:

Քառասուն ժամուայ անքնութիւնից յետոյ, թոնրի շուրթին մօտիկ, պայուսակս դլխիս տակ եմ դնում, փաթաթւում տառատոկիս մէջ, որ աշխարհի վրայ ամենափափուկ անկողինն է ինձ համար եւ քնում մեռածի նման:

Յաջորդ օրը դարձեալ արեւոտ, պայծառ օր է:

Փետրուարի 17-ն է:

Հեռուից լսւում են թնդանօթների խուլ բոմբիւնները:

Կռիւը շարունակւում է, այս անդամ առանց մեզ:

Ամբողջ օրը ո՛չ լուր ունենք ռազմաճակատից եւ ոչ էլ մեր հանգիստը խանդարող հրաման է հասնում մեզ:

Երեկոյ եղաւ:

Հրամանատարութիւնից տակաւին ոչ մի հրաման չկայ:

Եթէ մեր դումարտակը նորից ճակատ պիտի ուղարկուի, մասնակցելու յաջորդ օրուայ կռուին, այդ դէպքում այդ մասին հրա-

մանը մինչեւ հիմա պէտք է որ եկած լինէր։ Ճակատի դիրքերի վրայ զօրամասերի փոփոխութիւնը, երէկուանից սկսած, կատարւում է դիշերով, թշնամու ուշադրութիւնը չգրաւելու համար։ Եւ քանի որ մինչեւ հիմա մեզ դիրքերը ուղարկելու հրաման չի եկել, այդ նշանակում է, որ մեր առջեւ կայ հանդիստ քընով անցնելու մի դիշեր էլ։

Ընթրիքից յետոյ, որ այլ եւս այնպէս համով չի թւում մեզ, ինչպէս երէկ դիշեր, բոլորւում ենք օրհնած թոնրի շուրջը, փաթաթւում մեր տառատոկների մէջ եւ քնում։ Հաղիւ ենք քնով անցել, երբ ինձ արթնացնում են եւ Անդրանիկի մօտ կանչում։

Անդրանիկի առջեւ կանգնած է մի կոզակ։

— Տես ի՞նչ կ՚ըսէ այս կոզակին բերած թուղթը, ասում է Անդրանիկը, ինձ մեկնելով մի թղթի կտոր։

Գնդապետ Ֆիլիպովի մատիտով գրած հրամանն է.

«Հայկական առաջին Դրուժինայի պետ Անդրանիկին.

Տեղեկութիւն ունենք, որ Բիթլիսը այրւում է։ Առանց յապաղումի ընդհանուր յարձակում պիտի սկսենք։ Անմիջապէս ճամբայ հանեցէք ձեր դրուժինան դէպի Բաշ խան։ Գնդապետ Ֆիլիպով»։

Կոզակը վերադառնում է Բաշ խան։

Մեր դումարտակը շտապով պատրաստւում եւ շարժւում է դէպի Բաշ խան։

Ծարից հաղիւ ենք իջել եւ հասել ձիւնի մէջ փորուած նըրբանցքին, երբ մթութեան մէջ մեր առջեւ ուրուագծւում է մի ձիաւոր։

— Ո՞վ է գալիս, ձայն է տալիս մեր յառաջապահը։

— Կոզակ սուրհանդակ. հրաման գնդապետ Ֆիլիպովից, դրուժինայի պետ Անդրանիկին, պատասխանում է կոզակը։

Մոմ եմ վառում եւ կարդում գնդապետ Ֆիլիպովի գրածը.

«Յարձակումը յետաձգուած է. վերադարձէք ձեր տեղը. վաղը կէսօրից յետոյ, ժամը չորսին եկէք Բաշ խան զինուորական խորհրդի. Գնդապետ Ֆիլիպով։»

Վերադառնում ենք Ծար, եւ գոհ ենք որ կարող ենք շարունակել մեր ընդհատուած հանգիստն ու քունը։

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Յաջորդ օրը, որոշուած ժամին Անդրանիկը ինձ եւ երկու թիկնապահ իր հետ առնելով հասաւ Բաշ խան, որ շարունակում է մեր զօրաբանակի սպայակոյտի կենտրոնը լինել:

Անդրանիկին ընդունում են երեք զօրամասերի հրամանատարները՝ գնդապետներ Նասկով, Զեմցով եւ Ֆիլիպով: Այս վերջինը Անդրանիկի անմիջական հրամանատարն է, ուստի Անդրանիկի հետ խօսողը նա է:

Գնդապետ Ֆիլիպովը յայտնում է, որ մեր զօրաբանակի հրամանատար զօրավար Արացիւեը որոշել է դիշերային անակնկալ յարձակումով դրաւել Բաղէշը: Դիշերային յարձակման մանրամասն ծրագրի կազմութիւնը եւ գործադրութիւնը յանձնուած է Նասկով եւ Զեմցով գնդապետներին եւ իրեն՝ Ֆիլիպովին:

— Ես ուզում եմ, որ Անդրանիկը անի մեզ իր թելադրութիւնները այս ռազմական ծրագրի գործադրութեան մասին, ասաց Ֆիլիպովը:

Երբ թարգմանեցի Ֆիլիպովի ասածը, Անդրանիկը թուղթ ու մատիտ ուզեց:

— Քանի՞ հոգիով պիտի կատարուի այդ դիշերային յարձակումը, հարցրեց Անդրանիկը:

— Վեց հազար, պատասխանեց Ֆիլիպովը:

Անդրանիկը գծեց մեր ճակատի դիրքերը, ապա յայտնեց իր կարծիքը այն մասին, թէ ո՞ր դիրքից եւ ի՞նչպէս պիտի կատարուի յարձակումը:

Երեք գնդապետների եւ Անդրանիկի միջեւ խորհրդակցութեան արդիւնքը եղաւ այն, որ որոշուեց յարձակման համար տրամադրելի 6000 զինուորներից գրոհի նետել 5000 հոգի, իսկ պահեստի ոյժ պահել 1000 հոգի:

Այդ օրը, փետրուար 18-ին, մութն ընկնելուն պէս, գրոհի համար նշանակուած գնդերն ու գումարտակները պիտի դրաւեն ցերեկուան կռուին մեր ոյժերին ծառայած դիրքերն ու խրամատները: Այդ շարժումները պիտի կատարուեն այն հաշուով, որ գրոհի գնալիք զօրամասերը կէս գիշերին պատրաստ լինեն իրենց դիրքերում:

Կէս գիշերին երեք գնդապետները եւ Անդրանիկը մէկ մէկ վաշտի դլուխ անցած, պիտի հաւաքուեն Պապչէն խանում ու այն տեղից շարժուեն դէպի դիրքերը, փոխարինելու համար գրոհի

գնացող զօրամասերին։ Երբ գնդապետ Ֆիլիպովը սկսեց կարդադրել թէ դրոհի գնացող ո՞ր զօրամասը ո՞ր դիրքերից յարձակման պիտի դիմէ, մեր գնդին բաժին ընկան ծայրագոյն աջ թեւի բարձր լեռնային դիրքերը։ Եթէ մեր զօրամասին յաջողուէր խորտակել Թուրքերի դիմադրութիւնը, մեր գունդը ամենից ուշ պիտի կարողանար քաղաք մտնել։

Անդրանիկը, որին թարգմանեցի Ֆիլիպովի կարդադրութիւնը, վրդոված ասաց ինձ.

— Նայէ, ո՞ւր կը նետեն մեզ, հէ՛-լեռներուն կատարները։

Անդրանիկի խօսքը ուղղուած էր ինձ եւ ոչ թէ գնդապետ Ֆիլիպովին, ուստի թարգմանելու պէտք չկար։ Թէեւ ես չթարգմանեցի Անդրանիկի ասածը, բայց գնդապետ Ֆիլիպովը չէր կարող Անդրանիկի ձայնից չհասկնալ, որ նա վրդովուած է։ Ուստի իսկոյն հարցրեց ինձ.

— Ի՞նչ է ասում Անդրանիկը։

— Անդրանիկը դժգոհ է, որ իր գնդին յատկացուեցին ամենահեռաւոր դիրքերը։

— Խնդրում եմ ասացէք Անդրանիկին, որ ես իրաւունք եմ տալիս իրեն ընտրել իր դրուժինայի համար այն դիրքը, որ ինքն է ուզում, շտապով վրայ բերեց գնդապետ Ֆիլիպովը։ Ես չեմ ուզում, որ Անդրանիկը դժգոհ մնայ, աւելացրեց գնդապետը։

Ես թարգմանեցի Անդրանիկին Ֆիլիպովի ասածները։

— Զդէ՛, բան մըն ալ չեմ ուզեր. ըսէ իրեն, որ կ՚երթանք, ուրտեղ որ ինք նշանակած է, ասաց Անդրանիկը։

Ես թարգմանեցի Ֆիլիպովին Անդրանիկի ասածները։

Ֆիլիպովը կրկին դարձաւ Անդրանիկին.

— Մենք շատ ենք լսել Անդրանիկի քաջութեան մասին եւ նոր ապացոյցների պէտք չունենք։ Եթէ այս դիշերուայ յարձակման ժամանակ, մի դժբախտ դիպուածով մենք կորցնենք Անդրանիկին, դա կը լինի շատ ծանր, անդարմանելի կորուստ մեզ համար։ Ուստի ես խնդրում եմ, որ այս դիշերուան յարձակման ժամանակ իր դրուժինան ղեկավարէ իր օգնականը, իսկ Անդրանիկը, ինձ հետ միասին, մնայ պահեստի ոյժերի գլուխը։

Ես թարգմանեցի Ֆիլիպովի ասածները։

— Ըսէ՛, աղէկ, կը մնամ իրեն քով, կարճ կապեց Անդրանիկը։

Ապա հրաժեշտ առաւ երեք գնդապետներից եւ շտապեց դէպի մեր գունդը, դիշերային յարձակման համար հարկ եղած կարգադրութիւններն անելու։

Մեկնելուց առաջ Անդրանիկը պայմանաւորուեց, կէս գիշերին, մեր գնդի մի վաշտ առած, հանդիպել գնդապետ Ֆիլիպովին Պապչէն խանում:

ԳԻՇԵՐԱՅԻՆ ԳՐՈՀԸ

Փետրուար 18 լոյս 19-ի գիշերն է:

Ամպամած ու խաւար մի գիշեր Բաղէշի ձորում:

Լուռ ու անձայն դասաւորուում են վաշտերն ու գումարտակները եւ շարժուում դէպի իրենց համար նշանակուած դիրքերը:

Ճիշդ կէս գիշերին Անդրանիկը եւ գնդապետ Ֆիլիպովը, մի մի վաշտի գլուխ անցած, հանդիպում են իրար Պապչէն խանում: Եւ անմիջապէս շարժուում ենք դէպի դիրքերը, ուր մեզ են սպասում գրոհի նետուելիք զօրամասերը:

Մեր զօրասիւնի առջեւից գնում է գնդապետ Ֆիլիպովը, իր օգնական սպաներով, որոնց հետեւում է ռուսական վաշտը: Ռուսական վաշտին հետեւում է Անդրանիկը, որի յետեւից քայլում են մեր վաշտի կամաւորները: Քայլում ենք մէկս միւսի յետեւից կըրընկակոխ, ձիւնի մէջ բացուած նեղ շաւիղով:

Հաղիւ էինք 5–10 րոպէ քայլել անթափանց խաւարի մէջ, երբ Անդրանիկը դարձաւ ինձ.

— Թելեֆոն ըրէ փոլքովնիքին եւ ըսէ, որ ճամբան սխալ է:

«Թելեֆոն անել» նշանակում է բերնէ բերան լուր տալ մեր զօրասիւնի առջեւից գնացող գնդապետ Ֆիլիպովին: Ինձ մօտիկ ռուս զինուորի միջոցով հաղորդում եմ զինուորական շղթան ի վեր Անդրանիկի ասածը:

Երեք չորս րոպէ չանցած նոյն ձեւով գալիս է գնդապետ Ֆիլիպովի պատասխանը.

«Ճանապարհը ճիշդ է. ուղեցոյցները մեզ հետ են. հետեւեցէք մեզ»:

Գնդապետ Ֆիլիպովի պատասխանը հաղորդում եմ Անդրանիկին, որ դժգոհութեամբ ինչ որ քրթմնջում է քթի տակ եւ շարունակում է քայլել:

Խոր ձիւնի մէջ քայլելը հեշտ չէ եւ դրեթէ մի ժամ է անցնում, մինչեւ որ հասնում ենք Պապչէն գիւղը: Մեզնից առաջ այնտեղ հասած գնդապետ Ֆիլիպովը, իր օգնական սպաների եւ ուղեցոյց

երկու կողակների հետ, մտել է մի կիսաւեր տուն: Ուղեցոյց կողակները, որոնք նախորդ երկու օրուան կռիւների ընթացքում մի քանի անգամ դնացել են մեր դիրքերը, բացատրում են մեր գնալիք ճանապարհը, իսկ սպանները, վառուած երկու մոմերի աղօտ լոյսի տակ, զինուորական քարտէզի վրայ աշխատում են գտնել կողակների ցոյց տուած կէտերը: Անդրանիկը նորից պընդում է Ֆիլիպովին, որ մեր եկած ճանապարհը սխալ է, որ այդ ճանապարհով մենք դիրքերը չենք կարող հասնել: Անդրանիկի առարկութիւնը չի համոզում Ֆիլիպովին եւ մեր զօրասիւնը շարունակում է հետեւել ուղեցոյց կողակներին: Դեռ Պապչէն դիւղից դուրս չենք եկել, երբ Անդրանիկը նորից հրահանգում է ինձ.

— Թելեֆոն ըրէ փոլքովնիկին եւ ըսէ որ, ճամբան սխալ է եւ ես չեմ երթար այդ ճամբով:

Դարձեալ բերնէ բերան «հեռախօսում» ենք Անդրանիկի առածը:

Անմիջապէս դալիս է Ֆիլիպովի «հեռախօսային» պատասխանը.

— Անդրանիկը դիտէ՞ ճիշդ ճանապարհը եւ կը ստանձնի՞ մեզ այդ ճանապարհով դիրքերը հասցնելու պատասխանատուութիւնը:

— Ըսէ, որ կը ստանձնեմ. թող իրենք յետ դառնան եւ մեզի հետեւին, պատասխանում է Անդրանիկը:

Խաւար դիշերով, խոր ձիւնի մէջ անկարելի է մեր վաշտերի տեղերը փոխել, մնում է, որ ամէն մի զինուոր իր կանգնած տեղում շրջադարձ անի: Այդպիսով մեր վաշտը, որ յետնապահ էր, դառնում է յառաջապահ, իսկ ռուսները, որ յառաջապահ էին, դառնում են յետնապահ:

Մեր զօրասիւնը արդէն ուշացել է: Գրոհը չի կարող սկսուել, մինչեւ որ հրամանատարութիւնը լուր չունենայ, որ ամէն մի զօրամաս հասել է իրեն համար նշանակուած դիրքերը: Այդ նշանակում է որ գրոհը չի սկսուի, մինչեւ որ մենք չհասնենք մեր դիրքերը: Արդէն երկու ժամ է անցել յարձակման համար նշանակուած ժամկէտից: Եւ եթէ մենք դիշերային այս խաւարում դէպի դիրքերը ճանապարհ փնտռելով մի 2–3 ժամ էլ կորցնենք, արշալոյսը կը մօտենայ եւ դիշերային յարձական ամբողջ ծրագիրը ջուրը կ՝ընկնի:

Անդրանիկը առաջնորդում է մեր զօրասիւնը: Հասնում ենք, վերջապէս, Պապչէն խան, որտեղից մեկնել ենք մօտ երկու ժամ առաջ:

Պապշէն գիւղը Պապշէն խանից ուղղակի դէպի հիւսիս է դըտ-նըւում: Մենք, ուրեմն, Պապշէն խանից մեկնելով դէպի հիւսիս ենք գնացել: Իսկ հիմա, դարձեալ մեկնելով նոյն Պապշէն խանից, Անդրանիկը բռնում է հիւսիս-արեւմտեան ուղղութիւնը: Այդպէս կարելի է հասկանալ դիշերային այս խաւարի մէջ Անդրանիկի բռնած ճանապարհը:

Զորս-հինգ հարիւր քայլ դաշտով քայլելուց յետոյ, սկսում ենք բարձրանալ վեր:

Վերելքը ծանր է, ձիւնը՝ խոր:

Քայլում ենք մէկս միւսի յետեւից կրնկակոխ: Հէնց որ իմ առջեւից գնացող ընկերս բարձրացնում է իր ոտքը առաջ դնելու համար, ես շտապում եմ բռնել նրա ոտքի տեղը: Հրացանս փողն ի վեր թաղում եմ ձիւնի մէջ, յենւում վրան եւ մի քայլ անում առաջ: Ընկերս էլի մի քայլ արեց, ես կրկնում եմ նոյնը: Երբեմն սայթաքում ենք, դուրս ընկնում շաւղից, խրւում ձիւնի մէջ մինչեւ գօտիներս, կրկին բարձրանում եւ կրկին քայլում:

Վերջապէս լերան կատարն ենք, մեր խրամատների մէջ: Այդտեղ են, մեզնից առաջ հասած մեր երեք վաշտերը, Սմբատի հրամանի տակ:

Անդրանիկը դիշերային խաւարի մէջ կարողանում է հեշտութեամբ տեսնել այն ճանապարհները, որ ուրիշները չեն կարողանում յստակօրէն տեսնել օրը ցերեկով: Երբ յաջորդ առաւօտ լուսացաւ եւ մեր շուրջը նայեցինք, այն ճանապարհով, որով մեզ տանում էին կողակ ուղեցոյցները, մենք ոչ թէ մի քանի ժամից, այլ մի ամբողջ օր քայլելով հազիւ հասնէինք մեր դիրքերը:

Բոլոր զօրամասերը իրենց յատկացուած դիրքերը գրաւելուց յետոյ յարձակման ազդանշանը պիտի տար ձորի յատակով, Բաղէշ գետակի ափով գրոհն սկսող զօրամասը: Ազդանշանը պիտի լինէր ռուսական «ուռռա»-ն:

Անկասկած, ինչպէս մենք, նոյնպէս ամէն մի զինուոր սըրտատրոփ սպասում է ազդանշանին:

Ժամանակը դանդաղ է սահում: Լուռ է չորս կողմը: Միայն լեռնակատարների վրայ սուրացող քամին է խաղում ձիւների հետ , որ երբեմն նետում է մեր գլուխների վրայ:

Տառատոկիս քղանցքով ծածկած լուցկի եմ վառում: Առաւօտեան ժամը չորսն է:

Ու մէկ էլ յանկարծ, ձորի խորքից լսուեց մի խուլ «ուռռա՛»,

որ էլեքտրական հոսանքի պէս անցաւ վաշտից վաշտ, գնդից գունդ, ձորի յատակից դէպի աջ ու ձախ, դէպի վեր, դէպի լեռնակատարները, ու երբ հասաւ մեզ, դարձաւ հազարաւոր կըրծքերից պոռթկացող մի հուժկու մարտակոչ նետուած թշնամուն,— «ուռռա՛, ուռռա»...

Ցանկարծակիի եկած թուրքերի կողմից լսուեցին հատ ու կենտ կրակոցներ եւ անմիջապէս լռեցին: Մերոնց սուլիները, ըստ երեւոյթին, ժամանակ չտուին թուրքերին ուշքի գալու:

Մութ է, ոչինչ չի երեւում, բայց քանի որ թշնամին չկարողացաւ կրակ բանալ, այլեւս ակներեւ է, որ Բաղէշը պաշտպանող դիրքերի պատնէշն ընկել է:

Համաձայն մեզ տրուած հրամանի, երբ մեր գրոհող գնդերը գրաւէին թշնամու այդ տիրապետող դիրքերը, մենք, պահեստի վաշտերս, պիտի առաջ շարժուէինք բռնելու մեր յառաջապահների ձեռքով թշնամուց խլուած նոր դիրքերը:

Զիւների մէջ, դրեթէ գլորուելով, իջնում ենք մինչեւ թուրքական դիրքերի ստորոտը եւ ապա սկսում վեր մագլցել: Հասնում ենք այդ դիրքերը, ուր պիտի սպասենք հրամանի մեր յաջորդ անելիքի մասին:

Հետզհետէ սկսւում է առաւօտեան աղջամուղջը:

Թէեւ Բաղէշին տիրապետող բարձունքների վրայ ենք կանգնած, բայց դեռ ոչինչ չենք տեսնում: Քաղաքի կողմից անկանոն հրացանաձգութեան ձայներ են լսւում: Ակներեւ է, որ կռիւը փոխադրուել է քաղաքի փողոցները: Մեր գնդացիրները ճարճատել են սկսում:

Անհամբեր ենք իմանալու, թէ ի՞նչ է կատարւում քաղաքում, բայց մենք հրաման չունենք առաջ շարժուելու: Այդ նշանակում է, որ մերոնք օգնական ոյժերի պէտք չունեն: Ու մենք սպասում ենք պաղ, սառուցեայ խրամատներում:

Լոյսը հետզհետէ բացւում է:

Կամաց կամաց ուրուագծուել են սկսում քաղաքի շէնքերն ու փողոցները: Գնդապետ Ֆիլիպովը եւ Անդրանիկը, հեռադիտակները աչքերին, պրպտում են մեր առջեւ փռուած քաղաքը: Մէկ էլ, Անդրանիկը վար է առնում հեռադիտակը իր աչքերից եւ սեղմած բռունցքը սպառնագին դէպի թշնամին պարզած, բացագանչում է.

— Բաբանըն ջանընա*)..ատա՞նկ կը պաշտպանեն Բիթլիսը:

---

*) Թուրքերէն՝ «ձեր հօր հոգին...»:

Ա՛յ քեզ տարօրինակ բան։

Մի՞թէ Անդրանիկը գոհ պիտի լինէր, եթէ թշնամին այնպէս պաշտպանէր Բաղէշը, որ մենք կամ չկարողանայինք դրաւել այն, եւ կամ մեծ դժուարութեամբ ու նորանոր զոհերի գնով ձեռք բերէինք այդ քաղաքը։

Ի հարկէ՝ ո՛չ։

Որեւէ մէկից աւելի Անդրանիկն էր գոհ, որ արիւնռուչտ թշնամին ջարդուեց եւ Բաղէշը մեր ձեռքն ընկաւ։ Բայց այս դէպքում նրա մէջ խօսում էր ռազմադէտ զինուորականը։ Իրենց ունեցած ոյժերով, քաղաքը պաշտպանելու համար իրենց տրամադրելի ամուր դիրքերով Թուրքերը կարող էին երկար պաշտպանել Բաղէշը, բայց չկարողացան պաշտպանել։ Ահա թէ ինչո՞ւ էր զայրացած Անդրանիկը։ Իսկ մէկ երկու ժամ յետոյ պարզուեց, որ Անդրանիկի վրդովումը Թուրք հրամանատարութեան դէմ աւելի քան իրաւացի էր։

Արդէն լուսացել էր, երբ մենք հրաման ստացանք շարժուել դէպի քաղաք։ Մեր եւ գնդապետ Ֆիլիպովի վաշտերը իջան քաղաքի առաջին շէնքերը, որ Թուրքական բանակի զօրանոցներն էին։ Շատ չանցած մենք տեղեկացանք, որ ամէն երեկոյ, երբ դադարել է հրաձգէնների որոտը, եւ մութն ընկել, Թուրք հրամանատարութիւնը, օգտուելով խաւարից, յետ է քաշել կռուի դիրքերից իր ոյժերի մեծագոյն մասը եւ Թողել դիրքերում միայն սակաւաթիւ պահակներ։ Դիրքերից յետ քաշուած զօրամասերը ամբողջ գիշերը հանգստացել են տաք զօրանոցներում եւ դեռ լոյսը չբացուած, վերադարձել են իրենց տեղերը, վերսկսելու համար կռիւը մեր դէմ։

Մեր զօրաբանակի կռուող ոյժերը յետ էին քաշւում եւ նրանց տեղն էին անցնում յաջորդ օրուայ կռիւը մղելու համար նշանակուած զօրամասերը ամէն երեկոյ, երբ մութը պատում էր չորս կողմը։ Այսպիսով, տարուան այդ սարսափելի ցուրտ եղանակին, ամբողջ գիշեր,— ձմրան երկար գիշեր, որ տեւում էր 10–12 ժամ,— ձիւնէ խրամատների մէջ մեր մարտիկները տառապում էին ցրտից, մինչեւ որ լոյսը բացուէր եւ կռիւն սկսուէր։ Իսկ մեր դէմ ճակատող Թուրք ոյժերը գիշերը տաք զօրանոցներում քընած, հանգստացած եւ, անտարակոյս, լաւ էլ կերակրուած, ամէն օր եկած են եղել կռուելու մեր դէմ։

Վերջին գիշերը,— փետրուար 18 լոյս 19–ը մեր զօրաբանակի անակնկալ յարձակումը խանգարել է Թուրք սպաների եւ զինուորների քունը։ Մերոնց յանկարծակի յարձակման դէմ դնելու հա-

մար իրենց զօրանոցներից դուրս թափած թուրք զինուորները մի-այն անձնատուր լինելու ժամանակ են ունեցել, իսկ իրենց սպա-ներից շատերը դիշերային շապիկներով են դերի ընկել մերոնց ձեռքը:

Անդրանիկը դեռ լուր չունէր այդ մասին, երբ մեր դիրքից բռունցքը դեպի Բաղէշ ուղղած բացագանչեց.

«Բարանը՞ն ջանը՞նա... ատա՞նկ կը պաշտպանեն Բիթլիսը...»

Մենք՝ պահեստի ոյժերս՝ առանց դնդակ արձակելու մտանք քաղաք, որ դրեթէ ամբողջութեամբ արդէն մեր յարձակուող զօ-րագնդերի ձեռքումն էր:

Բաղէշը տեղաւորուած է մի երկայն ձորի մէջ:

Երբ մեր դրոհող զօրամասերը թուրքական վերջին դիրքերը պաշտպանող սակաւաթիւ ոյժերը սուինահար անելուց յետոյ խու-ժել են քաղաք, մեր յառաջապահները արագութեամբ արշաւել են մինչեւ քաղաքի հարաւային ծայրը, կտրելու համար դէպի Սը-ղերդ տանող նահանջի ճամբան: Թուրքական մէկ երկու փոքր զօրամասեր, օգտուելով դիշերային խաւարից, փորձել են քաղա-քից աջ ու ձախ բարձրացող լեռների վրայ դիրքեր բռնել: Լոյսը բացուելուն պէս, սակայն, նրանք նկատել են, որ ընկել են թա-կարդի մէջ,– մի կողմից մինչեւ քաղաքի հարաւային ծայրը հասած մեր յառաջապահների,– իսկ միւս կողմից՝ հիւսիսից ար-շաւող մեր գլխաւոր ոյժերի միջեւ: Օրուան լոյսով կարելի էր պարզ աչքով տեսնել թէ ինչպէս սպիտակ ձիւնի վրայ նշմարուող զանգուածներ շարժւում էին լեռն ի վեր: Դրանք թուրք զօրամա-սերն էին, որոնք թակարդից դուրս դալու ամուլ փորձ էին ա-նում: Դիմադրութեան մասին մտածելը ինքնասպանութիւն կը նշանակէր այդ զօրամասերի համար, միակ ելքը անձնատուութիւնն էր: Եւ դեռ կէսօր չեղած ողջ մնացած վերջին թուրք զինուորները անձնատուր եղան:

Բաղէշի կռիւները վերջացան:

Չորս օր առաջ, մեր յարձակման առաջին օրը, թշնամին ծանր զոհեր խլեց մեր զօրաբանակից եւ յատկապէս մեր կամաւորական դնդից: Չորս օր շարունակ տառապեցին մեր դնդերը սարսափելի ցրտից եւ սնունդի պակասից, երբ թշնամին լաւ կերակրւում, տաք չէնքերում հանգստանում եւ ապա դալիս էր ճակատելու մեր դէմ: Անկասկած մեր զօրաբանակի քաջած նեղութիւնների առաջ բերած դառնութիւնը դեր էր կատարել, որ մեր զինուորները ան-խընայ վարուէին թշնամու հետ: Եւ թշնամու վրայ շատ սուղ նստեց իր ջախջախիչ պարտութիւնը:

Փոքր չէր նաեւ մեր ձեռքն ընկած դերիների թիւը եւ պատերազմական աւարի քանակը: Մեր զօրաբանակի ձեռքն անցաւ 24 թնդանօթ,– որոնցից երկուսը դրաւել էր մեր գունդը՝ Սմբատի հրամանի տակ,– մի քանի հազար հրացան, ահագին ռազմամթերք եւ հազարից աւելի դերի:

Այդ երկու թնդանօթները դրաւող մեր վաշտը, պահակներ դնելով թնդանօթների վրայ, շարունակել է իր արշաւը: Մեր վաշտի յետեւից հասած ռուսական մի վաշտի հրամանատար, զէնքի դիմելու սպառնալիքով հեռացրել էր մեր պահակներին եւ տիրացել թնդանօթներին: Շտապեմ ասել, որ հետագային, Անդրանիկի բողոքի վրայ, գնդապետ Ֆիլիպովը ստուգել էր իրողութիւնը եւ իր զեկոյցի մէջ այդ թնդանօթները դրաւելու վարկը մեր գնդին տուել:

ԲԱՂԷՇՈՒՄ

Մինչեւ կէսօր ամէն ինչ խաղաղուեց քաղաքում:

Բաղէշում էլ, ի հարկէ, հայ բնակչութիւն չկար: Բաղէշի հայերը մասամբ կոտորուել էին Թուրք համաքաղաքացիների ձեռքով, մասամբ էլ տարագրուել եւ ոչնչացուել էին տարագրութեան ճամբաների վրայ:

Թուրք բնակչութեան մի մասը, մեր կռիւների ընթացքում, փախել էր դէպի Սղերդ, իսկ մի մասը մնացել էր քաղաքում:

Մեր զօրամասերը սկսեցին տեղաւորուել թէ՛ թուրքական զօրանոցներում, թէ՛ քաղաքի շէնքերում: Անդրանիկին տրամադրուած էր քաղաքից փախած մի թուրքի տուն:

Երբ տեղաւորուեցինք այդ տան մէջ եւ շուրջս նայեցի, տան մի անկիւնում, մանր մունր իրերի մէջ աչքիս ընկաւ երկու կազմուած գիրք: Թուրքերէն տպագրուած գիրք տեսնելու հետաքրքրութիւնից մղուած բաց արի այդ գրքերից մէկը եւ կարդացի առաջին էջի վրայ,– Հոմերի Իլիականը, բնագրէն թարգմանեց Հ. Արսէն Ղազիկեան: Միւս գիրքն էր,– Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան:

«Թուրքի» տունը Թուրքի ձեռքով կողոպտուած եւ դէպի Հայկական Գողգոթան քշուած հայի քրտինքով շինուած տուն է եղել: Զարդարար Թուրքի ձեռքով դէպի մահ քշուող հայը իր ետե-

.ում թողել է մարդկային հանճարի երկու մեծ ստեղծագործութիւնների սրբազան թերթերը, որոնք մի զոյգ տրեխի արժէք չունեն բուրթ ու ոճրագործ թուրք ցեղի համար, որ դարերով նըստեց Հոմերոսի եւ Նարեկացու հայրենիքների վրայ եւ ո՛չ միայն Հոմերոս եւ Նարեկացի չտուեց մարդկութեան, ոչ միայն Հոմերոս եւ Նարեկացի չկարդաց, այլ իր շուրջը սփռեց աւեր, արցունք եւ արիւն միայն: Այս երկու դրքերը եւ կողոպտուած ու կոտորուած հայի տունը, որ դարձել է «թուրքի տուն», պերճախօս խորհրդանիշն են այն դարաւոր պայքարի, որ մղուել է ու մղւում է լոյսի, ճշմարտութեան, արդարութեան նուիրուած հայ ժողովրդի, եւ խաւարից ծնուած ու հոդեկան խաւարի մէջ թաղուած թուրք ցեղի միջեւ...

Հաղիւ էինք տեղաւորուել մեր նոր բնակարանում, երբ դընդապետ Ֆիլիպովի կողմից ուղարկուած մի զինուոր եկաւ յայտնելու, որ դնդապետը ուզում է տեսնել Անդրանիկին: Ինձ իր հետ առնելով Անդրանիկը գնաց դնդապետի մօտ: Գնդապետ Ֆիլիպովը, իբրեւ մեր գնդի անմիջական վերին հրամանատար, դոհունակութիւն յայտնեց տարուած յաղթանակի եւ այդ յաղթանակի մէջ մեր գնդի կատարած դերի մասին: Անդրանիկն էլ ի՛ր կողմից իր գոհունակութիւնը յայտնեց գնդապետ Ֆիլիպովի նման հրամանատարին գործակից լինելու համար:

Քաղաքավարական այդ ներածութիւնից յետոյ գնդապետ Ֆիլիպովն ասաց.

— Ես խնդրում եմ, որ Անդրանիկը պատրաստէ մեզ համար այս վերջին օրերում մեր զօրաբաժնի մղած կռիւների ռազմական քարտէզը: Գլխաւոր սպայակոյտին ղեկոյց պատրաստելու համար այդպիսի քարտէզի պէտք ունեմ ես:

Թարգմանեցի Անդրանիկին Ֆիլիպովի ասածը: Բայց Անդրանիկի պատասխանը Ֆիլիպովին թարգմանելուց առաջ, ես խնդրեցի Անդրանիկին.

— Թոյլ տուր որ խնդրեմ, որ երբ գնդապետը օգտագործի քո գծելիք քարտէզը, վերադարձնի մեզ:

— Զգէ՛, ես ուրիշ հատ մը կը գծեմ քեզի համար, իսկոյն վրայ բերեց Անդրանիկը:

«Ուրիշ հատ մը կը գծեմ»,— ե՞րբ պիտի գծես, եւ արդեօք պիտի գծե՞ս, մտածեցի ես: Եւ իսկապէս, այնուհետեւ երբեք առիթ չեղաւ, որ նա կատարէր իր այդ խոստումը:

Անդրանիկը խոստացաւ կատարել Ֆիլիպովի խնդրանքը եւ երբ տուն վերադարձանք, թուղթ ու մատիտ առաւ եւ գծագրեց

Դատվանից մեկնելուց ի վեր մեր եւ թուրքերի դիրքերը եւ այդ դիրքերի յաջորդաբար թուրքերից մեր ձեռքն անցնելը։ Այդ քարտէզի վրայ մեր եւ թուրքական դիրքերը գծագրուած էին երկու տարբեր գոյնի մատիտներով։

Նոյն երեկոյեան այդ քարտէզը ես հասցրի գնդապետ Ֆիլիպովին։ Ինձ համար անբացատրելի մնաց, թէ ինչո՞ւ համար Ֆիլիպովն ուզեց, որ Անդրանիկը պատրաստէր այդ քարտէզը։ Սըխալ պիտի լինէր ենթադրել, որ Ֆիլիպովին ենթակայ սպաների մէջ չկար մէկը, որ կարողանար այդ անել։ Թերեւս Ֆիլիպովը նկատի էր ունեցել, որ Անդրանիկը աւելի ծանօթ է այդ վայրերին եւ ուստի, կարող էր աւելի ճշգրիտ քարտէզ պատրաստել։ Եւ կամ, Անդրանիկին այդ յանձնարարութիւնն անելով, Ֆիլիպովն ուզում էր դրանով ցոյց տալ իր կողմից Անդրանիկի ռազմական կարողութիւնների գնահատութիւնը եւ այդ կերպով չոյած լինել Անդրանիկի ինքնասիրութիւնը։

Դժբախտաբար դրանից յետոյ մենք երկար չմնացինք գնդապետ Ֆիլիպովի հրամանի տակ եւ ես չկարողացայ լուծել այդ հանելուկը։

* * *

Մեր Բաղէշ մտնելու յաջորդ օրը, քաղաքի այս ու այն անկիւններից մէջտեղ ելան մի քանի տասնեակ հայ տղամարդիկ, կանայք եւ երեխաներ, որոնք անլուր նուաստացումների գնով կարողացել էին փրկել իրենց կեանքը համատարած ջարդի օրերում։

Տեղեկութիւն հասաւ մեզ նաեւ, որ մի խումբ հայ աղջիկներ են փրկուել ամերիկեան միսիոնարական դպրոցի շէնքում։

Բաղէշ քաղաքից եւ շրջակայ հայ գիւղերից ռազմիկներ կայցին մեր գնդում։ Դրանցից 3–4 հոգու հետ գնացի տեսնելու այդ աղջիկներին։

Ամերիկեան դպրոցի շէնքը գտնուում էր քաղաքի հարաւային մասում, մի բլուրի վրայ։

Աղջիկները մեզ ընդունեցին դպրոցի ընդարձակ սրահում։

Սրահի մի անկիւնում կծկուել էին եւրոպական քաղաքակրթութեան խորհրդանիշներ,– մի դաշնամուր եւ վրան թենիս խաղալու պարագաներ,– յիշեցնելու համար, որ վայրագ, արիւնարբու Թուրքի ստեղծած այս դժոխքից դուրս կայ մի ուրիշ աշխարհ, ուր կանանց ու երեխաներին չեն լցնում շէնքերի մէջ եւ ողջ ողջ այրում, ուր նորածին մանուկների գլուխները չեն ջախջախում ժայռերի վրայ։

Դպրոցի նախկին աշակերտուհիները,– թուով 35–40 հոգի, 10–12 տարեկանից մինչեւ 16–18 տարեկան,– հաւաքուել էին այդ սրահում: Իրենց հարազատները թուրքական վայրագութեան զոհ դնացած, իսկ իրենք ամիսներ շարունակ եւ ամէն օր մահուան սպառնալիքի տակ ապրած ու հրաշքով ազատուած այս աղջիկները զարմանքով ու հիացումով էին դիտում մեր խումբը,– երիտասարդ հայ ռազմիկներին, որոնք մինչեւ այդ օրը անծանօթ էին իրենց, բայց այդ օրուանից սկսած հարազատ եղբայրների պէս պատրաստ էին իրենց կեանքի գնով պաշտպանել այս որբացած, անօգնական ու դժբախտ քոյրերին:

Ինձ հետ եկած կամաւորները հարց ու փորձի եւ զրոյցի բռնուեցին աղջիկների հետ: Ես լուռ դիտողի դերում էի: Երկար չէր կարող տեւել մեր այս հանդիպումը: Ամէն ժամ մեր գունդը կարող էր շարժուելու հրաման ստանալ եւ մենք չտապեցինք վերադառնալ մեր տեղերը:

Ճակատագրի մի քմահաճ խաղով Բաղէշում բարբարոս թուրքերի ձեռքից հրաշքով ազատուած այս աղջիկներից ոմանց, տարիներ յետոյ, ես պիտի հանդիպէի մեր հայրենիքից 5–6 հազար մղոն հեռու, աշխարհի միւս ծայրում՝ Ամերիկայում եւ այնտեղ լսէի իրենց փրկութեան պատմութիւնը:

Բայց այդ մասին յետոյ:

* * *

Երբ գնդապետ Ֆիլիպովի մօտից վերադարձայ, Անդրանիկը ինձ մեկնեց երկու դրութիւններ, որոնք մի քանի րոպէ առաջ էին ստացուել մեր զօրաբաժնի ընդհանուր հրամանատար զօրավար Աբացիեւից:

— Կարդա՛ ասենք, տեսնիմ, ասաց Անդրանիկը:

Այս դրութիւններից մէկը «օրուան հրաման» էր, ուղղուած մեր ամբողջ զօրաբաժնին: Այդ հրամանի մէջ Բաղէշի գրաւման համար մղուած կռիւների ընթացքում մեր զօրաբաժնի թափած ճիգերը եւ տուած զոհերը գնահատելուց յետոյ, զօրավար Աբացիեւը խիստ լեզուով դիտել էր տուել զինուորների անկարգապահութիւնը քաղաքում եւ տեղի ունեցող ապօրինութիւնները, կողոպուտն ու աւարառութիւնը: Իբրեւ աւարառու ու կողոպտիչ հրամանի մէջ յիշատակուած էր միայն մեր գնդի անունը:

Երկրորդ դրութիւնով հրամայւում էր մեր գնդին՝ յաջորդ առաւօտ կանուխ մեկնել քաղաքից դէպի Մշոյ դաշտը:

Աբացիեւի նպատակը ակներեւ էր:

Էրզրումից մինչեւ Մուշ, եւ Մուշից մինչեւ Բաղէշ ռուս բա-

նակի ձեռքն էր։ Այդ շրջաններում մօտիկ ապագայում ռազմական գործողութիւնների հաւանականութիւն չկար, ուրեմն մեր գունդը այլևս պէտք չէր Աբացիեւին։ Ընդհակառակը, մեր գնդի ներկայութիւնը, ըստ երեւոյթին, խառնում էր Աբացիեւի հաշիւները, ուստի նա որոշել էր հեռացնել մեզ քաղաքից իբրեւ «կողոպտիչներ», «աւարառուներ», որպէսզի մենք ականատես վկաներ չլինէինք իսկական աւարառուների՝ ռուս սպաների եւ զինուորների արարքներին։ Հայերի հարստութիւնը նախ Թուրքն էր կողոպտել, իսկ հիմա ռուսներն էին աւարի տալիս այդ հարստութիւնը։

Երբ երկու գրութիւնն էլ թարգմանեցի, Անդրանիկը սարսափելի վրդովուեց։

— Նստէ գրէ այդ... Անդրանիկը մի Թուրքերէն հայհոյանք աւելացրեց,—եւ ասէ, որ քաղաքէն չեմ ելլեր, գրէ՛, ասաց Անդրանիկը խօսքն ինձ ուղղելով։

Անդրանիկի գործածած Թուրքերէն բառը առաջին անգամ էի լսում իրենից եւ առանց հասկանալու վստահ էի, որ ծանր հայհոյանք է Աբացիեւի հասցէին։

— Թոյլ տուր ասել, որ կռուի դաշտում քո վերին հրամանատարին չես կարող գրել, թէ քաղաքէն դուրս չեմ ելլեր, դրա համար կարող է մեզ պատերազմական ատեանի յանձնել։ Մի քիչ տարբեր ձեւով կարելի է նոյն բանն ասել, դիտել տուի ես։

— Գրէ՛, ինչպէս որ կ՚ուզես, միայն ասէ, որ վաղը չեմ երթար, համաձայնեց Անդրանիկը։

Եւ կազմեցինք պատասխանը զօրավար Աբացիեւին այն իմաստով, որ մեր գունդը վերջին օրերի կռիւներից ու կրած նեղութիւններից այնպէս յոգնել է, որ եթէ զօրավարի հրամանը կատարելով Անդրանիկը իր գնդին հրաման տայ շարժուելու, դժուար թէ գնդի մարտիկները կարողանան կատարել այդ հրամանը։ Ուստի, կը խնդրուի, որ զօրավարը յետաձգէ մեր գնդի մեկնումը Բաղէշից։

Անդրանիկը, որ սովորել էր իր անունը ստորագրել լատինական տառերով,— ստորագրեց — Antranik.

Այդ գրութիւնը յանձնեց ինձ, որ տանեմ զօրավար Աբացիեւին։ Միաժամանակ ասաց, որ իր կողմից խնդրեմ Աբացիեւին, որ մեր զօրաբաժնի համար թիկնունքից պարէն ու ռազմամթերք բերած եւ պարապ վերադարձող դրաստներից մի քանիսը տրամադրուի մեզ, քաղաքում աղատուած հայ կանանց եւ աղջիկներին Վան, ու այնտեղից էլ Կովկաս փոխադրելու համար։

Աբացիեւը կտրականապէս մերժեց այդ խնդրանքը։

Այդ մերժումը լցրեց Անդրանիկի ցասումի բաժակը։

— Նստէ եւ սա գեներալին վրայ բողոք մը գրէ, ասաց Անդրանիկը։ Գրէ՛ եւ ըսէ՛, Բիթլիսը գրաւելու կռիւներու մէջ ամէնէն ծանր բեռը իմ զինուորներու վրայ ինկած էր եւ ամէնէն շատ զոհ իմ գունդը տուած է։ Բիթլիս գրաւելու գիշերը քաղաք մտնող առաջին գունդերէն մէկը իմ գունդս եղած է։ Իմ զինուորները թշնամիէն թնդանօթներ գրաւած են, իսկ ռուս սպայ մը եկած եւ իմ տղաներու ձեռքէն խլած է այդ թնդանօթները։ Քաղաք մտանք-չմտանք, գեներալը ուզեց մեզի քաղաքէն հանել դուրս։ Քաղաքին մէջ ինչ որ ալան թալան եղած է, իմ զինուորներու վրայ բարդած է։ Թուրքերու ձեռքէն աղատած մաս մը հայ կիներ ու աղջիկներ Վան ճամբելու համար խնդրեցի, որ «օպօզին»*) ձիերէն եւ ջորիներէն քանի մը հատ տրամադրէ, մերժեց։ Գրէ՛ եւ ըսէ՛, որ ես չեմ ուզեր այլեւս այս գեներալին ձեռքին տակ ծառայել։

Այդ իմաստով բողոքագիր կազմեցի, ուղղուած ճակատի հրամանատար զօրավար Իւդենիչին, Էրզրում։ Անդրանիկը նորէն գրեց լատին տառերով իր ստորագրութիւնը։ Եւ քանի որ օրէնքի համաձայն այդ բողոքագիրը պիտի ուղարկուէր նոյն ինքը զօրավար Աբացիեւի միջոցով, ուստի տարայ գրութիւնը եւ Աբացիեւի համհարզի միջոցով, յանձնել տուի զօրավարին։

Այդ բողոքագրի արձագանգը չուշացաւ։

Երեկոյ էր, երբ այդ բողոքագիրը հասցրի Աբացիեւին։

Մի ժամ չանցած եկաւ մի կողակ եւ հաղորդեց, որ Աբացիեւը պահանջում է, որ Անդրանիկը յաջորդ առաւօտ ժամը 10-ին ներկայանայ իրեն։

Յաջորդ առաւօտ Սմբատին եւ ինձ իր հետ առած Անդրանիկը ներկայացաւ զօրավար Աբացիեւին։

Երբ իր հրաւէրով նստեցինք, զօրավարը, իմ միջոցով դիմեց Անդրանիկին.

— Ասացէք Անդրանիկին, որ ես յարգում եմ իրեն եւ գնահատում իր քաջութիւնը։ Ի՞նչ է, սակայն, պատճառը, որ Անդրանիկը իմ վրայ բողոք է ուղարկել գլխաւոր սպայակոյտին։

Երբ թարգմանեցի Անդրանիկին Աբացիեւի ասածը, Անդրանիկը պատասխանեց.

— Ըսէ՛ գեներալին, որ ես ալ իրեն դէմ բան մը չունիմ, բայց ինք արդար վարուած չէ մեզի հետ։ Ըսէ իրեն...

---

*) Օբոզ,— ռուսերէն մթերատար սայլեր եւ դրաստներ։

Եւ Անդրանիկը կրկնեց Արացիւի երեսին այն մեղադրանքները, որ դրել էինք բողոքագրի մէջ եւ դեռ մի քանի մանրամասնութիւններ էլ աւելացրեց մեր գրածի վրայ։

Ու եզրակացրեց.

— Ասէ՛ գեներալին, որ ես չեմ ուզեր այլեւս իր հրամանին տակ մնալ։

Արացիւը լսեց արդէն իրեն ծանօթ մեղադրանքները եւ ոչինչ չպատասխանեց, բայց իր զօրաբաժնից հեռանալու Անդրանիկի պահանջի մասին ասաց.

— Այդ մասին ես չեմ կարող կարգադրութիւն անել։ Դա պիտի անի ընդհանուր սպայակոյտը, որին ուղարկուած է Անդրանիկի բողոքը։ Իսկ մինչեւ այդ կարգադրութեան ստացուելը Անդրանիկի դրուժինան պիտի մնայ իմ հրամանի տակ։

— Ասէ՛ ատոր, որ ես իր հրամանին տակ չեմ ուզեր մնալ, կըրկին պնդեց Անդրանիկը եւ տեսնելով, որ Արացիւը ոտքի կանգնեց, ինքն էլ ոտքի ելաւ։

Եւ դրանով վերջացաւ Անդրանիկի տեսակցութիւնը զօրավար Արացիւի հետ։

Արացիւը ոչ մի խօսք չարեց քաղաքից մեր գնդի մեկնելու համար իր տուած հրամանի մասին։

Դժուար է ենթադրել, որ զօրավար Արացիւը թոյլ տար, որ իրենից ստորադաս աստիճանի մի սպայ այնպիսի գիրք բռնէր իր հանդէպ, ինչպիսի գիրք բռնեց Անդրանիկը եւ, մանաւանդ, ենթադրել, որ ինքը, Արացիւը, թոյլ տալ իրեն այնպէս վարուել իր ստորադաս սպաներից մէկի հետ, ինչպէս որ վարուեց Անդրանիկի հետ։

Արդեո՞ք Անդրանիկը իր զօրաւոր անհատականութեամբ ակնածանք էր պարտադրում զօրավարին, թէ՞ Արացիւը գիտէր, որ Անդրանիկը մի սոսկական անհատ չէ, այլ մի ամբողջ ժողովրդի կողմից սիրուած ռազմիկ, որի թիկունքում կանգնած է նաեւ այդ ժողովրդի ազգային մեծ կազմակերպութիւնը — Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը։

ՄՇՈՅ ԴԱՇՏՈՒՄ

Զօրավար Արացիեւի հրահանգած օրից չորս օր յետոյ, փետրուար 24-ին մեր գունդը դուրս եկաւ Բաղէշից եւ շարժուեց դէպի Մշոյ դաշտը:

Մեր առաջին կայանը, ուր գիշերեցինք, Զխուր Նորշէն հայկական գիւղն էր, ուր վերջանում է Բահվէ Դուրանը եւ սկսւում է Մշոյ Դաշտը:

Զխուր Նորշէնում հաստատուած էր մեր Կամաւորական Երկրորդ գնդի վաշտերից մէկը, մեր յեղափոխական մարտիկներից Դէլի Ղազարի հրամանի տակ: Երկրորդ գունդը, Դրոյի հրամանի տակ, ռուսների հետ փետրուար 3-ին մտել է Մուշ քաղաքը: Մուշից Բաղէշ տանող գլխաւոր ճանապարհը պաշտպանելու համար Մուշից, Դրոյի գնդի այս մէկ վաշտը ուղարկուել է Զխուր Նորշէն:

Դէլի Ղազարը յարգալից ու ջերմ ընդունելութիւն ցոյց տըւեց Անդրանիկին: Իր վաշտի զինուորները աշխատում էին մէկը միւսին գերազանցել կարգապահութեան եւ յարգալից ուշադրութեան մէջ դէպի Անդրանիկը:

Դէլի Ղազարը, մինչեւ պատերազմը, ռուսական բանակի ծառայութեան մէջ չէր եղել զինուորական կարգապահութիւն սովորած լինելու համար: Եւ սակայն, նա կարողացել էր այնպիսի կարգապահութիւն պարտադրել իր զինուորներին, որ Անդրանիկը հիացած էր: Ու մի փոքր առիթ պատրուակ բռնելով, նա վերդովուած նետեց մեր գնդի զինուորների երեսին.

— Դո՛ւք ալ զինուոր էք, ասոնք ալ...

Կարծես թէ զինուորներն էին յանցաւորը, որ իրենց կարգապահութիւն սովորեցնող չէր եղել: Մեր գունդը անկարգապահ էր, հաւանաբար ամէնից անկարգապահը մեր կամաւորական գնդերի մէջ. բայց յանցանքը մեր գնդի կամաւորներինը չէր, ի հարկէ:

Մեր կամաւորական գնդերը, առհասարակ, զինավարժութեան եւ կարգապահութեան վարժուելու ժամանակ չէին ունենում: Հաղիւ մի գնդի զինուոր արձանագրուած եւ հրացան ըստացած, մեր կամաւորները ուղարկուում էին ռազմաճակատ: Կամաւորներ կային, որոնք իրենց կեանքում առաջին անգամ էին հրացան ձեռք առնում եւ մի քանի օր չանցած արդէն կռուի ճակատ ուղարկուում: Բայց այդ անվարժ ու յաճախ անկարգապահ

կամաւորները հիանալի կռուողներ էին։ Շատ չանցած, կռիւների մէջ կոփուած ռազմիկներ էին դառնում նրանք։

Մի գիշեր Զխուր Նորշէնում մնալուց յետոյ մեր գունդը, մեզ ընկերացող ռուսական զօրաբաժնի հետ շարժուեց Մշոյ Դաշտն ի վեր։

Զխուր Նորշէնից սկսած մինչեւ Մշոյ Դաշտի կենտրոնը, մինչեւ Խասդիւղ, Բաղէշից դէպի Մուշ տանող ճանապարհը անցնում է մի կողմից հայկական Տաւրոսի, իսկ միւս կողմից Մեղրագետի միջեւ։ Ճանապարհից դէպի ձախ բարձրանում է Հայկական Տաւրոսի լեռնաշղթան, իսկ դէպի աջ հոսում է Մեղրագետը։

Գեղեցիկ է Մեղրագետի ակունքը Զխուր Նորշէնի շրջակայքում։

Կլոր, սրբատաշ քարով շինուած մի բաւական ընդարձակ աւազանի յատակից բխում են արցունքի պէս վճիտ ջրերով բազմաթիւ աղբիւրներ, բերնէ բերան լցնում աւազանը, ապա դուրս թափւում ու կազմում են Մեղրագետը, մի փոքրիկ վտակ, որ իր ճանապարհին, աջից ու ձախից վտակներ ընդունելով իր մէջ մեծանում, լայնանում է եւ օձապտոյտ ոլորներով հոսում է Մշոյ Դաշտով ու դնում թափւում է Արածանիի՝ Հայկական Եփրատի մէջ։

Մեղրագետի ակունքից ոչ հեռու, գրեթէ աւազանին կից փռուած է թուրքական մի ընդարձակ գերեզմանատուն, որի կենտրոնում բարձրանում է արաբական ոճով կառուցուած մի կիսաւեր աշտարակ։

Ո՞վ գիտէ, ո՞ր արիւնռուշտ փաշայի կամ բէյի ոսկորներն են ամփոփուած այդ գոռող դամբարանի մէջ։

Ե՛ւ այդ գոռող դամբարանը, ե՛ւ նրա շուրջը փռուած մեծ ու փոքր դամբարանները ասես մեր հէքիաթների առասպելական վիշապները լինեն, որ եկել ու չոքել են հայ դեռի ակունքի շուրջը եւ ծծում, ծծում են՝ ցամաքեցնելու համար հայ դեռի կենսատու ջրերը...

Երկու օր է ինչ քայլում ենք Մշոյ Դաշտով։

Լուռ ու ամայի է Մշոյ Դաշտը։

Անցնում ենք բազմաթիւ հայկական գիւղերով, որտեղ մարդկային շունչի նշոյլ չկայ։ Միայն թշնամու հապճեպ փախուստի ժամանակ անտէր մնացած անասուններ են թափառում դէս ու դէն։

Գիւղերի շուրջը եւ փողոցներում, դոմերում եւ տներում մեռած կենդանիների անհամար լէշեր կան թափուած։ Անթիւ են

նաեւ Մուշից Բաղէշ տանող ճանապարհի երկարութեամբ թափուած կենդանիների լէշերն ու, տեղ տեղ էլ, սառած մարդկանց դիակները։ Այս ճանապարհով դէպի Սղերդ անցաւ քրդական եւ թուրքական բազմահազար դաղթականութիւնը, իր հետ տանելով Մշոյ Դաշտի, Խնուսի եւ Բուլանըխի հայութեան անբաւ հարստութիւնից եւ իր յետեւում թողնելով աւեր ու մահ։

Տեղ տեղ, աւելի շատ գիւղերի շուրջը, հալուել սկսող ձիւնի տակից դուրս են ցցւում անցեալ ամառ կոտորուած հայերի ոսկրակոյտեր։

Մշոյ դաշտը ոտք դնելու առաջին րոպէից սկսած, ճանապարհի ամբողջ երկարութեամբ լեռների կատարներով մեզ հետեւում են քիւրդերը, որ այս սարի գլխից, այն քարի ետեւից արձակում են մեր զօրամասի վրայ իրենց հրացանները, առանց համարձակուելու դաշտ իջնել։ Զենք ուղում ժամանակ վատնել եւ անցնում ենք, առանց նոյնիսկ պատասխանելու նրանց կրակին։

Սակայն այսօր քիւրդերը, խրախուսուած մեր լռութիւնից, երես են առել։ Նրանց յանդգնութիւնը հասել է մինչեւ այնտեղ, որ իջել են լեռներից եւ մտել լեռնալանջերին ընկած գիւղերը։ Մուսա բէգի քիւրդերն են, այն Մուսա բէգի, որ անցեալ տարի կոտորել է Մշոյ Դաշտի հայութիւնը։ Իր թոռը, բորենուց ծնած դայլի ձագը, 16 տարեկան Խալիլը, ասում են, իր ձիաւորներով հաւաքել է ութ հազարի չափ հայեր Ավղուդ գիւղում եւ շէնքերի մէջ փակած ողջ ողջ այրել է տուել։

Այնքան խիտ է եղել տներում փակուած բազմութիւնը, որ այրուելուց յետոյ ածխացած դիակները մնացել են կանգնած վիճակում իրարու սեղմուած։

Տէ՛ր Աստուած, ի՞նչը կարող է հատուցել այս զարհուրանքը։

Եւ հիմա այդ շնագայլերն են մեր դէմ կռուողները։

Մեր վաշտերից երկուսին հրամայուում է յետ մղել քրդերին, իսկ մնացած վաշտերը առաջ են շարժուում եւ մտնում են Մարնիկ գիւղը բանակելու։

Այստեղ էլ նոյն աւերը, նոյն ամայութիւնը, ինչ որ ամէն տեղ։

Գիւղի առջեւ, ձիւնի տակից դուրս են ցցուել երկրագործական նորագոյն գործիքներ՝ եւրոպական դուրգաններ, փոցխեր եւ կալսելու մեքենաներ՝ արեւմտեան թեքնիքայի վերջին խօսքը։

Ի՞նչ աւելի պերճախօս եւ աւելի ցնցող բան, քան աւարի տրուած, աւերուած ու կոտորուած հայ գիւղում անտէր մնացած այս գործիքները։ Հայ գիւղերի վերջին կծիկ թելն իսկ աւարի

տուող Թուրքն ու քիւրդը ձեռք չեն տուել այս գործիքներին։ Նը-
բանց ի՞նչ պէտք են գուբՃանն ու փոցխը, որոնք միայն ստեղծա-
գործել գիտեն հայի ձեռքում։

Մեր ողբերգական պատմութիւնը անցել է երկու բեւեռների
միջեւ՝ մի կողմից հայ ժողովրդի քաղաքակրթական ձգտումնե-
րը, նրա ստեղծագործական խոյանքները, իսկ միւս կողմից մեր
արտերը տրորող արիւնարբու բարբարոսների ձիերի սմբակ-
ները,— մի կողմից հայի գուբՃանը, իսկ միւս կողմից Թուրքի եա-
Թաղանը։

Լեռնալանջերի վրայ կռիւը սաստկացաւ։ Մեր հետեւակը
դուրս քշեց քրդերին լեռնալանջերի գիւղերից դէպի լեռնակա-
տարները, իսկ այդ դիրքերից նրանց դուրս հանեցին մեր Թնդա-
նօՃները։

Երեկոյ է եւ կռիւը հետզհետէ դադարում է։

Մարնիկ գիւղը լեփ լեցուն է կենդանիների լէշերով, շէնքերը
ներս մտնել անհնարին է։ Մնում է դուրսը դիշերել։ Բաց դաշ-
տում, գիւղի դէզերից խոտ ենք փռում ձիւնի վրայ եւ կակուղ
անկողիններ շինում ու հանդիստ քնում։

Յաջորդ օրը Մարնիկի շէնքերի մի մասը կենդանիների լէշե-
րից եւ աղբից մաքրուած էր, եւ մեր զօրամասը տեղաւորուեց
այդ շէնքերում։

Մի ընդարձակ հացատուն եւ մի դոմ էր տրամադրուած Անդ-
րանիկին եւ իր Թիկնապահների խմբին։

Արդէն երկրորդ օրն է, որ հաց չունենք։ Մեր պարէնը Բա-
ղէշից պիտի գայ, բայց, Բաղէշից մեր մեկնելուց ի վեր, դեռ
ոչինչ չենք ստացել։ Միս մասամբ ճարւում է, երբեմն զինուոր-
ները գտնում են ամայի գիւղերում կամ դաշտերում ողջ մնացած
անասուններ, բայց ալիւր կամ ցորեն՝ ոչ մի պտղունց։

Անդրանիկը, որ արդէն վրդովուած հեռացաւ Բաղէշից, նոր
պատճառ ունի զայրանալու զօրավար Աբացիեւի դէմ։

— Հեռագիր մը գրէ գեներալին, ասում է ինձ Անդրանիկը,
Մարնիկ գիւղը մեր հասնելու յաջորդ օրը։

— Ի՞նչ գրեմ, հարցնում եմ ես։

— Գրէ՝ գեներալ, մեզի զորձի դնել գիտես, հացի մասին
մտածել չի՞տես։

— Այդ ձեւով հեռագիր չենք կարող գրել մեր հրամանատա-
րին, առարկում եմ ես։

— Գրէ՛ կ'ըսեմ քեզի, որոտում է Անդրանիկը։

Գիտէի որ այդ ձեւով խմբագրուած հեռագիրը աժան պիտի

չնստէր մեզ։ Եթէ Անդրանիկը դայրացած էր Աբացիեւի դէմ, Աբացիեւն էլ ոչ պակաս դայրացած էր Անդրանիկի դէմ եւ այս հեռագիրը պատճառ պիտի բռնէր հաշիւ մաքրելու Անդրանիկի հետ։

Քանի որ Անդրանիկը ռուսերէն չգիտէր եւ վստահում էր ինձ, ես կարող էի մի քիչ տարբեր ձեւով խմբագրել այդ հեռագիրը եւ կանխել Աբացիեւի կողմից մեր դլխին պայթեցուելիք փոթորիկը։ Բայց դա Անդրանիկի վստահութիւնը չարաշահել կը լինէր։ Ուստի դրեցի բառացի, ինչ որ ասել էր Անդրանիկը։

Առաւ դրածս եւ ստորագրեց,— Antranik։

Հեռագիրը,— աւելի ճիշդ հեռախօսագիրը, քանի որ հեռախօսով պիտի հաղորդուէր այն,— դնաց։

Երկու ժամ չանցած ստացուեց զօրավար Աբացիեւի պատասխանը, որ հետեւեալն էր.

«Հայկական Առաջին Դրուժինայի հրամանատար Անդրանիկին խիստ դիտողութիւն իր հրամանատարին ուղղած հեռագրի մէջ անպատշաճ լեզու գործածած լինելու համար։ Անդրանիկի քարտուղարին, որ կազմել է այս հեռագիրը, ձերբակալել եւ ուղարկել Բաղէշ։ Զօրավար Աբացիեւ»։

Կարդացի եւ թարգմանեցի հեռագիրը Անդրանիկին։

Անդրանիկը լսեց եւ ասաց.

— Հեռագիր մըն ալ գրէ։

— Ի՞նչ գրեմ, հարցրի ես։

— Գրէ՝ զեներալ, իմ քարտուղարը իմ հրամանս է կատարած, ուստի իր յանցանքը իմ վրայ կ՝առնեմ։ Ուրիշ մէկը չունիմ, որ կրնայ իր գործը կատարել, ուստի կը խնդրեմ, որ իր պատիժը ինծի յանձնես։

Գրեցի իր ասածը, դարձեալ բառացի։ Անդրանիկը դարձեալ ստորագրեց եւ ուղարկեցինք այդ հեռագիրը։

Եթէ Աբացիեւը պնդէր ինձ Բաղէշ տանելու վրայ, առնուազն մի յիսնեակ ձիաւոր պէտք պիտի լինէր ինձ Բաղէշ հասցնելու համար։ Եւ այն էլ դեռ հարց էր, թէ ինձ ո՞ղջ պիտի հասցնէին, թէ մեռած։ Մուշից Բաղէշ տանող ճանապարհի երկարութեամբ ձգուող լեռնաշղթան բռնուած էր քիւրդերով, որոնք առիթ չէին փախցնում յարձակուելու մեր փոքրաթիւ զօրախմբերի վրայ։

Երկու երեք ժամ յետոյ եկաւ զօրավար Աբացիեւի պատասխանը.

«Հայկական Առաջին Դրուժինայի հրամանատար Անդրանիկին։ Ձեր քարտուղարի պատիժը Ձեզ եմ յանձնում։ Սակայն սահմանեցէք այնպիսի պատիժ, որ իր պաշտօնի պարտականութիւնների կատարման արգելք չլինի։ Զօրավար Աբացիեւ»։

Աբացիեւի հեռագիրը նշանակում էր, որ իմ պատիժը անուանական պատիժ պիտի լինէր, քանի որ արգելք պիտի չլինէր իմ պաշտօնի կատարման, այսինքն իմ աղատութիւնը կաշկանդուած պիտի չլինէր:

Այդպէս աղատուեցինք այդ մեծ դլխացաւանքից:

* * *

Երեկոյ է:

Գոմի մի ծայրում վառուած ակութի շուրջը բաւական տարածութիւն աւլուած, մաքրուած եւ խսիրով ու թաղիքով ծածկուած է:

Գոմի մեծ մասը դրաւել են Անդրանիկի եւ իր թիկնապահների ձիերը, որ ուտում են իրենց առջեւ լցուած առւոյտը, մերթ ընդ մերթ փնչացնելով, երբեմն էլ իրենց սմբակներով դուխելով գոմի սալայատակուած դետինը եւ կենդանութեան շունչ սփռելով իրենց շուրջը:

Սիւների ճրագկալների վրայ ամրացուած մի քանի մոմեր աղօտ լոյս են տարածում գոմում:

Ակութի երկու կողմում նստած են Անդրանիկն ու Սմբատը:

Ու թւում է, որ խաղաղ կեանքի մի երեկոյ է Մշոյ Դաշտի Մարնիկ գիւղում:

Բայց այդ միայն թւում է, դուրս արի այդ գոմից եւ կը չքանայ այդ պատրանքը ու քեզ կը պատի այն մահաշունչ լռութիւնն ու ամայութիւնը, որ ուղեկցում է մեզ հայրենի շաւիղներով մեր արշաւի առաջին օրից սկսած:

Մշոյ Դաշտը ոտք դնելու առաջին վայրկեանից սկսած հանդիպում ենք այն վայրերին, որոնք ականատես են եղել հայ ֆեդայիների մղած կռիւներին թուրք բանակի եւ քիւրդ հրոսակների հետ:

Այդ ֆեդայիներից երկուսը հիմա վարում են մեր դունդը:

Առաջինը Շապին Գարահիսարցի Անդրանիկն է, որի յեղափոխական գործունէութեան գլխաւոր ասպարէզը եղել են այս դաշտը եւ, մանաւանդ, այս դաշտի վրայ բարձրացող Սասնոյ լեռնաշղթան:

Անդրանիկի հին զինակիցներից մէկն է այժմեան իր օգնականը, որ ոչ միայն բազմաթիւ անգամներ Անդրանիկի հետ մասնակցել է այս դաշտում եւ այս լեռներում մղուած կռիւներին, այլ եւ ինքը այս դաշտի ծնունդ է՝ Մշոյ քաղաքացի Սմբատ Բորոյեանը:

Այս դաշտի ոչ միայն ամէն մի գիւղը, այլ եւ ամէն մի քարը տանում է այս երբեմնի ֆեդայիներին դէպի ոչ հեռաւոր անցեալը, երբ չէն էին այս դաշտի գիւղ ու աւանները, երբ աշխատում ու իր աղատութեան համար պայքարում էր այս դաշտի ժողովուրդը: Ու հիմա լուռ եւ ամայի է այս դաշտը, ուր մահն ու աւերածն են իշխում: Որքա՜ն խոր պիտի լինի այս երկու ռազմիկների կսկիծը ի տես հայրենի աշխարհի այս անօրինակ աւերի:

— Հոս կանչէ Ասլանը, դիմում է Անդրանիկը իր սպասին կեցած թիկնապահներից մէկին:

Ասլանը Անդրանիկին հոգով սրտով նուիրուած թիկնապահ տղաներից մէկն է: Նա հաճելի ձայն ունի եւ երգում է դեղջուկ պարզութեամբ ու յուզումով:

Ասլանին կանչելը նշան է, որ Անդրանիկի հոգին ալեկոծ է: Այդպիսի վայրկեաններում Ասլանի երգը սփոփանք է Անդրանիկի խռովայոյզ հոգու համար:

— Տղա՛յ, եկուր քիչ մը խաղ կանչէ, դիմում է Անդրանիկը ներս մտած Ասլանին:

Ասլանը սովորաբար սկսում էր հայկական երգերով եւ այս անգամ էլ սկսեց մեր ֆեդայիներին նուիրուած ժողովրդական երգերով: Հազիւ էր Ասլանը լրացրել իր առաջին երգը, որ Անդրանիկը ընդհատեց նրան եւ ասաց.

— Քիւրդերէն կանչէ, տղա՛յ:

Անդրանիկը սիրում էր Ասլանի երգած քիւրդերէն երգերը, որոնք մեծ մասով ռազմի երգեր էին: Սիրում էր, մանաւանդ, հայ ֆեդայիների հետ քիւրդերի մղած կռիւներին նուիրուած երգերը, որոնց մէջ քիւրդը հայ ռազմիկի դովքն է անում: Ռազմիկի համար ի՞նչ աւելի մեծ գնահատութիւն, քան թշնամու բերանից հնչած դովեստը: Եւ Անդրանիկը սիրում էր լսել հայ ռազմիկների դովքն անող քրդական երգերը...

Ասլանը դեռ շարունակում էր երգել, երբ ներս մտաւ դրսի պահակներից մէկը եւ զեկուցեց.

— Մալա Շէկո քիւրդերէն երկուքը եկեր եւ կ՝ուզեն փաշան տեսնել:

— Եթէ զինուած են, զինաթափ ըրէք, խուզարկեցէք եւ ներս բերէք, կարգադրեց Անդրանիկը:

Շատ չանցած, Անդրանիկի թիկնապահներից երկուսի ուղեկցութեամբ ներս մտան երկու երիտասարդ քիւրդեր՝ մէկը բարձրահասակ, նիհար, ջղուտ եւ չիկահեր, իսկ միւսը միջահասակ, թիկնեղ ու թխադէմ:

Իրենց ուղեկցող թիկնապահներից մէկը գլխով նշան արեց դէպի ակութի երկու կողմը նստած Անդրանիկն ու Սմբատը: Քիւրդերն ակնածանքով առաջացան դէպի Սմբատը եւ գլուխ խոնարհեցրին նրա առջեւ: Երբ նրանք իրենց գլուխները բարձրացրին, Սմբատը, ձեռքը Անդրանիկի ուղղութեամբ մեկնեց եւ ասաց.

— Փաշան ան է:

Քիւրդի համար, հաւանաբար, ռազմիկի արտաքին երեւոյթը իր հռչակին համապատասխան պիտի լինի: Եւ որովհետեւ Սմբատը յաղթանդամ արտաքին ունէր, ուստի քիւրդերը եզրակացրել էին, որ հռչակուած Անդրանիկ փաշան այս յաղթանդամ մարդն է լինելու: Երբ Սմբատը հասկացրեց նրանց իրենց սխալը, շփոթուած քիւրդերը դարձան դէպի Անդրանիկը եւ, երեւի, իրենց սխալը քաւած լինելու համար, աւելի խոնարհ գլուխ իջեցրին Անդրանիկի առջեւ:

— Ի՞նչ կայ, ինչո՞ւ եկած էք, հարցրեց Անդրանիկը:

Ինձ տարօրինակ թուաց այն, որ Սմբատն էլ, Անդրանիկն էլ հայերէն խօսեցին այդ քիւրդերի հետ: Իսկ բոլորովին զարմացայ, երբ բարձրահասակ քիւրդն էլ հայերէն պատասխանեց Անդրանիկին: Սմբատը յետոյ բացատրեց ինձ, որ Մալա Շէկօ, կամ Շէկօ Տուն քրդական աշիրէթը հայերին բարեկամ է եւ մեծ մասով հայախօս է: Մշոյ Դաշտի հայութեան մէջ աւանդութիւն կայ, որ Շէկօ Տուն քիւրդերը հայկական ծագում ունեն:

Բարձրահասակ քիւրդը, Անդրանիկին պատասխանելով պատմեց, որ նախորդ ամառը, Մշոյ Դաշտի հայութեան կոտորածի ժամանակ, իրենք ջանացել են ապաստան տալ եւ պաշտպանել հայերին: Իրենց աշիրէթի մօտ ապաստանել են 147 հոգի, մեծ ու փոքր, կին ու տղամարդ, մի քահանայի հետ միասին: Եւ հիմա իրենք եկել են հասկանալու, թէ Անդրանիկ փաշան ի՞նչ կարգադրութիւն պիտի անի իրենց մօտ ապաստանած այս հայերի մասին:

Անդրանիկը կարգադրեց, որ մեր քիւրդ բարեկամները իրենց մօտ ապաստանած հայերին բերեն ո՛չ թէ Մարնիկ, այլ Խասգիւղ, քանի որ յաջորդ օրը մեր գունդը պիտի փոխադրուէր Խասգիւղ: Կարգադրեց նաեւ, որ մեր տղաները հոգ տանեն, հիւրասիրեն քիւրդերին եւ յաջորդ առաւօտ ճանապարհ դնեն: Քիւրդերը խոստացան Խութ վերադառնալուն պէս հարկ եղածը կարգադրել, իրենց մօտ ապաստանած հայերին օր առաջ բերելու եւ մեղ յանձնելու համար:

ՍԱՍՈՒՆՑԻՆԵՐԸ

Մարտի մէկն է, եւ մեր դունդը Մարնիկից Խասդիւղ է անցնում։

Մեզնից առաջ Խասդիւղ էր հասել ռուսական մի զօրամաս, որ բաւական մաքրութիւն եւ կարգ ու կանոն էր մտցրել գիւղում եւ ուստի դժուար չեղաւ մեր դնդի համար բնակավայրեր գտնել ու տեղաւորուել։

Յաջորդ օրը մեր հեծելազօրից տաս ձիաւոր, առանց Անդրանիկից արտօնութիւն ստանալու գնացել էին Մուշ։ Այդ անկարգապահութիւնը շատ սուղ էր նստել իրենց վրայ։ Մուշից վերադարձին մեր ձիաւորները ենթարկուել էին անակնկալ յարձակման քիւրդերի կողմից։

Խասդիւղից դէպի հարաւ-արեւմուտք բարձրանում են Խութի լեռները, որոնց մի թեւը՝ Ծըծմակայ Քիթը՝ երկարուել է դէպի դաշտը, դէպի Մեղրագետ։

Նկատելով մեր ձիաւորների փոքրաթիւ խմբակը, քիւրդերը վար են իջել Ծըծմակայ Քթից, եւ երկու շղթայ կազմելով պահուել են առուների ու փոսերի մէջ։ Երբ մեր տղաները, առանց նկատելու դարան մտած թշնամուն, անցել են առաջին շղթան, քիւրդերը երկու կրակի մէջ են առել մերոնց։

Յանկարծակիի եկած մեր տղաները ժամանակ չեն ունեցել նոյնիսկ հրացանները իրենց ուսերից վար առնելու եւ քաշելով տասնոց ատրճանակները, յաջողել են ճեղքել թշնամու օղակը, տալով երկու սպանուած եւ մէկ վիրաւոր։

Եթէ այդ անկարգապահ եւ անխոհեմ տղաները հրամանատարութեան թոյլտուութեամբ գնացած լինէին Մուշ, հրամանատարութիւնը հարկ եղած կարգադրութիւնները կ՝անէր եւ միջոցներ ձեռք կ՝առնէր, որպէսզի նրանք այդպիսի անակնկալ յարձակման չենթարկուէին։

Մուշից վերադարձած ձիաւորները բերել էին մի նամակ, որ յանձնեցին Անդրանիկին։

Անդրանիկը կարդաց, ժպտաց եւ ինձ մեկնեց նամակը, ասելով.

— Կարդա՛։

Առայ ձեռքից եւ շտապով աչքի անցրի նամակը։

«Մեծարգոյ

Անդրանիկ փաշա. Բաղէշ.

Մեծարգոյ տէր, տարի մըն է, որ ամբողջ սասունցիներս ուժեղ հակայարձակումներով զբաղած ենք։ Բայց այսօր Ձեր բարի գալստեանը օգտուած ենք, եւ կրցանք հաւաքուիլ փետրուար 17–ին գալ Մուշ 328 տղաներով, 189 կին ու երեխայով եւ դեռ կուգան։ Կը յուսանք, որ դումարը դեռ մեծ կ'ըլլայ։

Գալով օրապահի մասին, օրապահն կը հայթայթուի ցեխի մէջ թափած հացահատիկներէ։

Իսկ մենք առայժմ շուարած ենք մեր ընելիքին... ատոր համար կը խնդրուի Ձեզմէ, որ Ձեր ուշադրութիւնը հրաւիրէք դէպի մեզ, այն է՝ թէ կարելի եղածին չափ շուտով հոս գաք։

Համբոյրներով
ՍԱՍՈՒՆՑԻՔ»

1916, 1 Մարտի
Մուշ

Ես հասկացայ մեր միշտ մռայլ հրամանատարի ժպիտն ու ուրախութիւնը։ Հայրենի շաւիղներով մեր յաղթական, բայց տըխուր արշաւի ընթացքում, նա շատ անդամ ինքն իրեն եւ մեզ տուել է իր ուղեղը չարչարող ցաւոտ հարցը.

— Տեսնես ի՞նչ եղան մեր սասունցիները, մի՞թէ ոչ ոք ազատեցաւ այդ լեռներու մէջ... ո՞չ ոք...

Եւ հիմա, այս լուրն ստանալով, նա չի կարողանում ծածկել իր անհուն ուրախութիւնը։ Անհամբեր է ժամ առաջ Մուշ հասնել։

Մեր դունդը հրաման չունի Խասդիւղից Մուշ անցնելու։ Անդրանիկը որոշում է մի խումբ ձիաւորներով գնալ Մուշ։

— Ըսէ տղաներուն, որ վաղը առտու շատ կանուխ ձիերը պատրաստ ընեն, Մուշ պիտի երթանք, ասում է նա ինձ։

Առաւօտ էր, երբ մեր փոքրիկ արշաւախումբը ճամբայ ելաւ Խասդիւղից դէպի Մուշ։

Գարնանամուտ է եւ արեւի ջերմութիւնը արդէն զգալի է։ Ձընհալի ջրերը ողողել են ամբողջ դաշտը։ Ճանապարհ չի երեւում։ Մեր ձիերը մինչեւ իրենց ծնկները թաղւում են փափուկ ցեխի մէջ։ Ժամ առաջ Մուշ հասնելու անհամբեր Անդրանիկը ասպանդակում է իր Ասլանին։ Մենք էլ ստիպուած ենք յետ չմնալ իրենից։ Մեր խեղճ ձիերը դժուարութեամբ են փոխում իրենց ոտքերը։ Կպչուն, մածուցիկ ցեխը ասես բռնում եւ ցած է քաշում նրանց։ Ուշիմ կենդանիները բնազդով փնտռում են աւելի հեշտ ուղիներ, որտեղ ցեխը այնքան խոր չէ, ջրերն այնպէս լճացած չեն։

Երկու ժամ յետոյ հասնում ենք Ծըծմակայ Քիթը, թեքւում

ենք մի փոքր դէպի ձախ, դէպի հարաւ եւ ահա, լեռների լանջերին երեւում է Մուշ քաղաքը:

Այստեղից սկսւում է այն մի քանի մղոն խճուղին, որ դնում հասնում է մինչեւ Մուշ: Թուրք կառավարութիւնը անհաշիւ գումարներ է դանձել ժողովրդից այս ողորմելի խճուղին շինելու, երկու խոշոր կենտրոններ — Մուշն ու Բաղէշը իրար հետ միացնելու համար, եւ սակայն հաղիւ այս 8–10 մղոն տարածութիւնն է շինուած:

Աղաւում ենք ցեխից, ճանապարհը հեշտանում է եւ մեր ձիերի ընթացքը արագանում: Մեր փոքրիկ հեծելախմբի առջեւից արշաւող Անդրանիկը ասպանդակում է իր սքանչելի Ալանին, որ սկսում է սուրալ քառասմբակ: Մենք էլ մտրակում ենք մեր նժոյգները:

Մեզնից դէպի ձախ, Մշոյ լեռներից մէկի լանջի վրայ, ձիւնի սպիտակութեան մէջ սեւին են տալիս ինչ որ շէնքեր: Դիտակով պարզ երեւում են սպիտակ վանքը եւ նրան յարակից շէնքերը:

— Առաքելոց վանքն է, ասում է իմ կողքից ձիավարող մշեցի ընկերս:

Այդտեղ, այդ վանքում, 1901 թուին հազարաւոր թուրք զինուորներով եւ քիւրդ հրոսակներով շրջապատուած իր փոքրաթիւ խմբով,— ընդամէնը 47 հոգի,— կռուել է Անդրանիկը: Քսանեւչորս օր շարունակ դիմադրել են թշնամուն հայ ֆեդայիները եւ ապա, ձմրան մի ցրտաշունչ դիշեր ճեղքել են թշնամու շղթան, խոյս տուել դէպի այն խոժոռ ժայռերը՝ Խեւ Օհաննէսի քարերը՝ որ կախուել են հանդիպակաց լերան կատարից, ու անցել են Սասուն:

Այժմ ամայի ու աւերակ է Առաքելոց վանքը, որ անցեալ ամառ իր վրայ է հրաւիրել թուրք եւ քիւրդ վոհմակների անսանձ կատաղութիւնը: Աւերել, քանդել են վանքը, բայց, բարեբախտաբար, վանքի դեղաքանդակ երենոսեայ դուռը փրկուել է բարբարոսների ձեռքից եւ այժմ դտնւում է Երեւանի թանգարանում:

Շուրջս լայնարձակ Մշոյ Դաշտն է չորս կողմից բարձրաբերձ լեռներով եզերուած: Ու մի վայրկեան մոռանում եմ ողբերգական իրականութիւնը: Թւում է ինձ, որ իմ սերնդի պատանեկութեան օրերում մեզ խանդավառող ռազմական դէպքերից մէկի ականատեսն եմ ես հիմա:

Թւում է, որ մեր փոքրիկ հեծելազնդի առջեւից արշաւողը կամաւորական գնդի հրամանատարը չէ այլ եւս, այլ այն անունկուն հայդուկը, որ Սասնոյ լեռներից իջած, իր մի բուռն ըն-

կերներով անցնում է հայրենի դաշտով ո՞վ դիտէ ինչ յանդուգն ու խիզախ մի ռազմական ձեռնարկ իրագործելու համար:

Չէ՞ որ մենք անցնում ենք Մշոյ Դաշտով, չէ՞ որ մեր առջեւն են Սասնոյ լեռները, որոնք տարիներով ապաստան ու ռազմավայր եղան այս անվեհեր մարտիկի՝ Անդրանիկի եւ իր զինակից ընկերների համար:

Մեր դիմացի դիւղը հեռու չէ արդէն: Ու ինձ թւում է, որ դիւղի ծայրին, դէպի աջ, այն թումբերի տակ մեղ են սպասում մեր ընկերները, որոնք պիտի լուր տան մեղ, թէ ո՞վքեր էին դիւղի վրայ յարձակուողները, ո՞ր կողմը խոյս տուին եւ ո՞րտեղից աւելի հեշտ է կտրել նրանց փախուստի ճամբան:

Հասնում ենք դիւղին, բայց ո՛չ չների հաչոց, ո՛չ մարդկանց շարժում, ո՛չ մանուկների կանչ ու աղաղակ,— լուռ է, լուռ ամէն ինչ, ինչպէս ամէն տեղ... ու ես սթափւում եմ:

Մենք այցի ենք եկել հայրենի աւերակներին...

Անձնատուր այդ խոհերին, չեմ նկատում, թէ ինչպէս հասել ենք Մուշ:

Մտնում ենք քաղաք:

Այս ձմեռուան ամբողջ արշաւանքի ընթացքում սա առաջին անգամն է, որ նոր դրաւած քաղաքում հայ բնակչութիւն ենք տեսնում:

Լեռներից, այս ու այն թաղստոցներից քաղաք են հաւաքուել ինչ ինչ հնարքներով ազատուած մի քանի հազար մշեցի քաղաքացիներ եւ դաշտի դիւղացիներ: Հինգ հարիւրից աւելի է ազատուած եւ Մուշ իջած սասունցիների թիւը:

Քաղաքում դեռ թարմ են ութ ամիս առաջ կատարուած զարհուրելի Եղեռնի հետքերը:

Հայկական թաղը ամբողջապէս կործանուած է: Ինչ որ չի կարողացել քանդել թնդանօթը, այն ոչնչացրել է բահ ու բրիչով զինուած վայրագ թուրք ամբոխը: Հայերին կոտորելուց յետոյ, թուրքերն աշխատել են հայի դոյութեան հետքերն անգամ ջնջել, քանդելով հրդեհից եւ ռմբակծութիւնից կիսաւեր եղած հայկական տները:

Շատ քիչ են այն տները, որոնց դէթ պատերը կանգուն են մնացել, միւսները վերածուել են քարերի եւ աղիւսների կոյտերի: Կանգուն մնացած կիսաւեր շէնքերի մէջ իմ ուշադրութիւնն է դրաւում մանաւանդ մէկը, որի տանիքը չկայ, մնացել են միայն պատերը, որոնք կրում են անթիւ գնդակների եւ ռումբերի հետ-

քեր։ Ինչպէս երեւում է, այդ տունը դրաւել է թուրք զօրքի եւ քիւրդ հրոսակների յատուկ ուշադրութիւնը։

— Այդ տան մէջ է պաշտպանուել վերջին օրը եւ սպանուել Կոտոյի Հաջին, բացատրում է մշեցի ընկերս, ի պատասխան իմ հարցին, թէ ի՞նչ շէնք է դա։

Հասկանալի է, թէ ինչո՞ւ են այդպէս յօշոտուել, այլանդակուել այդ պատերը, որոնք տեսել են թէ ինչպէս է կռուել եւ ընկել Մշոյ անվեհեր պաշտպանը անհաւասար, օրհասական պայքարում։

* * *

Շատ չանցած, այն տունը, ուր իջեւանել է Անդրանիկը, շրջապատւում է ահագին բազմութիւնով։ Դրանք գլխաւորապէս սասունցիներ են, որոնք եկել են ողջունելու իրենց երբեմնի առաջնորդին։

Ցուզիչ էր տեսնել այն ընդունելութիւնը, որ ցոյց տուին Անդրանիկին ամիսներով անօրինակ պայքար մղած եւ անհունապէս տառապած այս մարդիկ։ Ամէն մէկը աշխատում է մօտենալ Սասունի Արծուին, սեղմել նրա ձեռքը, յիշեցնել նրան անցեալի օրերը, անցեալ պայքարը, պատմել նրան իր ապրած անօրինակ ողբերգութիւնը եւ իր ցաւի մէջ լսել նրանից մի սփոփիչ, սրտապնդիչ խօսք։

Անդրանիկը դրեթէ բոլորին ճանաչում է, բոլորին յիշում իր զարմանալի սուր յիշողութեամբ։

— Ա՛տ դո՞ւն ես, Աղէ, դիմում է Անդրանիկը իրեն մօտիկ կանգնած մէկին։

— Ես եմ, պարոն։

— Ծերացեր ես։

— Դարդէն, քե ղուրբան, դարդէն։

— Ի՞նչ եղաւ Գրքօն։

— Սպանուեցաւ հերու ամառ Անտոքի վրայ։

— Իսկ Ափօ Մկրտչ։

— Անօթութենէ մեռաւ այս ձմեռ։

Եւ պատմում են, պատմում անվերջ։

Ամիսներով իրենց սրտում կուտակուած ցաւը պատուարը քանդած յորդած գետի նման դուրս է պոռթկում ամէն մէկի կրծքից մերթ ցաւագին, սրտապատառ ելեւէջներով, մերթ ցասկոտ, կատաղի, վրիժառու շեշտով։

Անդրանիկը լսում է կենտրոնացած ուշադրութեամբ։ Ծանօթ դէմքերի եւ վայրերի պատկերները շարան-շարան դալիս

անցնում են նրա աչքերի առջեւից այդ պատմութիւնների ընթացքում։ Նրան չեն հետաքրքրում, աւելի ճիշդ, նա չի սիրում, երբ պատմողը կանգ է առնում թուրքերի եւ քիւրդերի զաղանութիւնների քստմնելի մանրամասնութիւնների վրայ։ Նրան մի հարց է հետաքրքրում՝ կռուե՞լ է արդեօք եւ ի՞նչպէս է կռուել սասունցին։

Մի քանի հարց սասունցիների բռնած դիրքերի, կռուողների թուի, զէնքի, ռազմամթերքի եւ հացի պաշարի քանակի մասին, ու արդէն Անդրանիկի համար պարզ է Սասունում կատարուածը իր ամբողջ ողբերգական մանրամասնութիւններով։

Սասունը, ինչպէս եւ Մուշը, դիմադրել է թշնամուն, բայց շատ կարճ ժամանակ։

Կռիւներից եւ կոտորածից ազատուած 5–6 հազար սասունցիներ ապաստանել են Սասունի անառիկ վայրերը։ Միայն մի քանի տասնեակ հրացաններով զինուած, փամփուշտի չնչին պաշարով, կտրուած ամբողջ աշխարհից, չորս կողմից թշնամիներով շրջապատուած եւ սովի մատնուած այդ սասունցիները անենկարագրելի կերպով զարհուրելի վիճակի են մատնուած եղել։ Մարդիկ բառիս բուն իմաստով «քար են կրծել»։ Կերակրուել են ամէն բանով, ինչ որ կարելի էր ծամել՝ բոյսերի արմատներով, մեռած կենդանիների լէշերով, իրենց տրեխների կաշիով։ Այդ զարհուրելի պայմաններում սասունցիների մեծ մասը մեռել է սովից եւ միայն ուժեղ մարմնակազմ ունեցողները, մօտ հազար հոգի, կարողացել են դիմանալ մինչեւ ռուսական բանակի Մուշ մտնելը։ Դիմացածների մեծամասնութիւնը տղամարդիկ էին, մինչդեռ ուրիշ տեղերում մենք հակառակ երեւոյթ էինք տեսնում՝ թուրքերի ձեռքից ազատուածները միայն կանայք եւ երեխաներ էին լինում։

Միեւնոյն անօրինակ պայքարը մղել են եւ անպատմելի տառապանքների ենթարկուել Քանասար ապաստանած մշեցիները, որոնցից վերապրողները հիմա հաւաքուել են Մուշ։

Պաշարուած սասունցիներին մեծ ծառայութիւն է մատուցել Սասնոյ Տափրկ գիւղացի քիւրդ Հասանը։

Դա մի դեղեցիկ երիտասարդ էր, որ ապրում էր սասունցիների հետ Մուշում։ Խօսում էր սքանչելի հայերէն՝ Սասնոյ բարբառով։

Տարիներ առաջ տափրկցի Հասանը հալածուել է թուրք կառավարութեան կողմից եւ այդ ժամանակ սասունցիները նրան պատսպարել ու պաշտպանել են։ Այս պատերազմի ընթացքում

Հասանը ծառայելիս է եղել Թուրք բանակի մէջ, իբրեւ սարէնակիր եւ, շնորհիւ դրան, միշտ տեղեկութիւն է ունեցել ռազմաճակատի դրութեան մասին: Հասանը երբեմն կարողացել է գաղտնի կերպով ալիւր, ծխախոտ եւ դրսի աշխարհից տեղեկութիւններ հասցնել իր սասունցի բարեկամներին:

Այդ վիճակում էլ Թուրք կառավարութիւնը հանդիստ չի ձգել սասունցիներին: Տեղեկանալով որ Սասունում դեռ հայեր կան, Թուրք կառավարութիւնը մէկ երկու անգամ պատժիչ զօրախմբեր է ուղարկել, խուզարկելու Սասնոյ աւերակ գիւղերը: Այդպիսի դէպքերում սասունցիները հեռացել են գիւղերից եւ պատսպարուել լեռների ծերպերում, ժայռերի խոռոչներում, քարայրների մէջ, մինչեւ որ Թուրք զինուորները կրկին ու կրկին քարուքանդ են արել քանիցս աւերուած գիւղերը եւ հեռացել:

Վերջին անգամ, Մուշը գրաւուելուց տաս օր առաջ, յունուար 23-ին, երկու վաշտ Թուրք զինուորներ գնացել են խուզարկելու Գէլիէգուզան գիւղը, ուր ապաստանած են եղել սասունցիների մնացորդները: Պատրաստուելիք խուզարկութեան մասին լուր է տալիս Հասանը, միաժամանակ տեղեկացնելով, որ ռուսներն արդէն դրաւել են Կոփ-Բուլանըխ եւ յոյս կայ, որ շուտով Մուշ հասնեն:

Հասանի յոյսերը իրականանում են: Փետրուար 3-ին ռուսները մտնում են Մուշ եւ սասունցիները՝ յոգնած, տանջուած, ուժասպառ՝ ութ ամսուայ զարհուրելի պայքարից յետոյ, իջնում են Մուշ:

Եւ այժմ նրանք մեր առջեւն են:

Ինձ թւում էր, որ մենք յոյս ու հաւատ պիտի պիտի ներշնչենք անհունօրէն տառապած այդ մարդկանց: Եւ սակայն հիացմունքով տեսայ, որ կռուի, պայքարի ոգին կենդանի է նրանց մէջ այնպէս, ինչպէս որ այդ վայել է սասունցուն: Նրանք յոգնած են, տանջուած եւ ուժաթափ, բայց երբեք կորովազուրկ:

Սասունն ընկել է, բայց կենդանի է սասունցու սքանչելի մարտական ոգին:

Սասունցիներին տեսնելուց յետոյ Անդրանիկի համար պատերազմը կարծես թէ այլ եւս վերջացաւ:

* * *

Մուշ հասնելուց յետոյ տեղեկացանք, որ Մուշ է գտնւում զօրավար Թ. Նազարբէգեանը, որի հրամանի տակ, նախորդ տարի, Անդրանիկը մասնակցել էր Դիլմանի յաղթական ճակատամարտին: Անդրանիկը շտապեց այցելութիւն տալ զօրավար Նազարբէգեանին:

Զօրավար Նազարբէգեանը սիրալիր ընդունելութիւն ցոյց տուեց Անդրանիկին, եւ յայտնեց, որ Մուշից մինչեւ Բաղէշ ճակատի հրամանատարութիւնը իրեն է յանձնուած: Դա հաճելի լուր էր Անդրանիկի համար: Մեր գունդը, ուրեմն, այլեւս ենթակայ չի լինելու հայատեաց Արացիեւին:

Զօրավար Նազարբէգեանը յայտնեց նաեւ, որ մի քանի օրից մեր գունդը հրաման պիտի ստանայ Բաղէշ վերադառնալու:

Երբ զօրավար Նազարբէգեանի սպայակոյտի դրասենեակից դուրս եկանք, մեր դէմ ելաւ զօրավար Արացիեւը, որ երեւի գնում էր ներկայանալու իրեն փոխարինած Նազարբէգեանին: Նա Անդրանիկին եւ ինձ չտեսնել ձեւացրեց, մենք էլ անցանք առանց բարեւելու նրան: Դրանից յետոյ մենք այլեւս երբեք չհանդիպեցինք զօրավար Արացիեւին:

Երբ Խասգիւղ վերադարձանք, մեզ տեղեկացրին, որ Շէկո Տուն քիւրդերի պաշտպանած հայերը եկել եւ անցել են Մուշ, ինչ որ արդէն Անդրանիկի կարգադրութիւնն էր: Միաժամանակ Սմբատը հաղորդեց Անդրանիկին մի անախորժ լուր: Շէկո Տուն ցեղի պաշտպանած հայերին մինչեւ Խասգիւղ ուղեկցել են մեզ արդէն ծանօթ երկու քիւրդերը: Խասգիւղում գտնուող ռուս զօրամասի հրամանատարը ձերբակալել է տուել այդ քիւրդերին: Սմբատի միջամտութիւնը, տուած բացատրութիւնը, որ դրանք մեզ բարեկամ քիւրդեր են, չի օգնել: Ռուս սպան մերժել է ազատ արձակել քիւրդերին եւ զինուորական հսկողութեան տակ ուղարկել է Բաղէշ, մեր զօրաբաժնի կենտրոնը: Բաղէշի զօրամասի հրամանատար մնացել էր մեր բարեկամ գնդապետ Ֆիլիպովը:

Անդրանիկի թելադրութեամբ հեռագրեցի գնդապետ Ֆիլիպովին խնդրելով, որ իր մօտ ուղարկուած երկու քիւրդերի մասին կարգադրութիւն չանի, մինչեւ որ Անդրանիկը Բաղէշ հասնի:

Մի քանի օր յետոյ, զօրավար Նազարբէգեանի հրամանով, մեր գունդը շարժուեց դէպի Բաղէշ:

Գնդապետ Ֆիլիպովը, որ միշտ էլ բարեացակամ էր Անդրանիկի հանդէպ, լաւ ընդունեց նրան:

Մեր գնդի մասին զեկուցելուց յետոյ, Անդրանիկը անդրադարձաւ Շէկո Տուն երկու քիւրդերի խնդրին:

— Հարցուր փոլքովնիքին թէ, ինք, որ կը ճանչնայ զիս, ի՞նչ կը խորհի իմ մասին, կը հաւատա՞յ, որ ես կրնամ խնայել թուրք եւ քիւրդ թշնամիները, ասաց Անդրանիկը:

Թարգմանեցի Անդրանիկի ասածը Ֆիլիպովին։

— Որքան որ ես եմ ճանաչում Անդրանիկին, ես չեմ կարող հաւատալ, որ նա կարող է խնայել մեր դէմ կռուող թշնամիներին, պատասխանեց Ֆիլիպովը ժպտալով։

— Ըսէ՛, ուրեմն, փոլքովնիքին, որ երբ ես թշնամի մը համար կը բարեխօսեմ, այդ կը նշանակէ, որ ես զայն այլեւս թշնամի չեմ նկատեր։ Խասդիւղի մէջ ձերբակալուած քիւրդերը կը պատկանին այն ցեղին, որ հիմա մեր դէմ չի կռուիր։ Իսկ անցեալ տարի, երբ թուրքերը կը կոտորէին մեր ժողովուրդը, այդ ցեղի քիւրդերը ոչ միայն հայ կոտորած չեն, այլեւ պաշտպանած են մաս մը հայեր, որ բերին եւ մեզի յանձնեցին Խասդիւղի մէջ։ Կը խնդրեմ որ փոլքովնիքը վստահէ ինծի եւ ազատ արձակէ այդ քիւրդերը, ասաց Անդրանիկը։

— Ասացէք Անդրանիկին, որ ես այդ քիւրդերին կը դնեմ իր տրամադրութեան տակ. Անդրանիկը ազատ է իր ուզած ձեւով վարուել նրանց հետ, պատասխանեց գնդապետ Ֆիլիպովը։

Գնդապետ Ֆիլիպովից բաժանուելուց առաջ Անդրանիկը յայտնեց, որ մտադիր է շուտով արձակուրդ երթալ Կովկաս։

Հաղիւ էինք մենք վերադարձել մեր բնակած տունը, երբ երկու կողակներ բերին երկու քիւրդերին եւ մեզ յանձնեցին։ Անդրանիկը իր սենեակը կանչել տուեց քիւրդերին, բացատրեց, որ իրենց հետ պատահածը թիւրիմացութիւն է, նուէրներ տուեց երկսին էլ եւ բարի երթ մաղթելով, ազատ արձակեց Խութ երթալու։

Մեր բնակած տան պատշգամից երեւում էին Խութի լեռների շարունակութիւնը կազմող սարերը, որոնք իջնում են մինչեւ Բաղէշի ձորը։

Գարնանային պայծառ արեւոտ օր էր։ Շէկո Տուն քիւրդերը մեր բնակած տնից դուրս գալուց յետոյ ամրացրին իրենց տրեխների կապերը, քոլողները շտկեցին եւ թեթեւաքայլ այծեամների նման լեռն ի վեր, դէպի Խութ շարժուեցին։

Շատ չանցած, նրանք ծածկուեցին մեր հայեացքից։

ՀԱՅԻ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

Բաղէշ վերադառնալուց յետոյ տեղեկացանք, որ մեր գնդի ջանքերով ազատուած հայ կանայք եւ ամերիկեան վարժարանի մի խումբ աշակերտուհիները, Անդրանիկի հրահանգով Բաղէշ մնացած մի քանի կամաւորների պաշտպանութեան տակ մեկնել են Վան եւ այնտեղից էլ Կովկաս անցել:

Գոհ եղանք, ի հարկէ, որ թուրքական բարբարոսութիւնից ազատուած հայուհիները ապահով հասել են Կովկաս: Սակայն, իմ մտքից երբեք չէր կարող անցնել, որ մի օր ես պիտի նորից հանդիպեմ Բաղէշի ամերիկեան վարժարանի հայ աշակերտուհիներից ոմանց, եւ նրանց բերնից լսեմ իրենց զարմանալի փրկութեան պատմութիւնը, որ մի մռայլ, արիւնոտ հէքիաթի պիտի նմանուէր: Եւ ո՛ւր պիտի տեղի ունենար այդ հանդիպումը,— մեր հայրենի երկրից հազարաւոր մղոններ հեռու մի երկրում:

Այո՛, 1916-ին իմ մտքից չէր կարող անցնել այդ, բայց մօտ 15 տարի յետոյ տեղի ունեցաւ այդ հանդիպումը աշխարհի միւս ծայրում, Ատլանտեան ովկիանոսի ամերիկեան ափի վրայ:

Արդէն մի քանի տարի էր, ինչ հայի ճակատագիրը ինձ էլ նետել էր Ատլանտեանի արեւմտեան ափը՝ Նիւ Եօրք:

Նիւ Եօրքում ես ծանօթացայ Բաղէշի շրջանի Խուլթիկ գիւղացի Լեւոն Սէֆէրեանի եւ իր կնոջ՝ տիկին Լուսիայի հետ:

Մեր ծանօթութիւնից յետոյ երկրորդ հանդիպումին Լեւոն Սէֆէրեանի տանը, Լեւոնը դիմեց ինձ.

— Զիս կը յիշե՞ս, ես ալ Անդրանիկի բանակին մէջ էի:

— Ձեմ յիշում, դուք հազար հոգի էիք մեր գնդում, ես ի՞նչպէս կարող եմ յիշել ամէն մէկիդ, պատասխանեցի ես:

— Այդ շիտակ է, բայց եթէ դէպք մը պատմեմ, այն ատեն անպայման պիտի յիշես, ասաց Լեւոնը: Կը յիշե՞ս, որ Թիւրի բորան օր մը, Բահվէ Դուրանի դիրքերէն պահակ մը, ոտքէն դլուխ ձիւնով ծածկուած եկաւ Անդրանիկի քով: Անդրանիկը այդ պահակը քեզի հետ ուղարկեց զօրավար Արացիեւին քով:

— Անշուշտ, յիշում եմ, պատասխանեցի ես:

— Ձիւնով փաթթուած այդ պահակը ես էի, վրայ բերեց Լեւոնը:*)

---

*) 1915-ի մայիսին Լեւոն Սէֆէրեանը Լուզիտանիա նաւով Նիւ Եօրքից մեկնել է Լոնդոն, այնտեղից անցնելու համար Ռու-

— Իսկ ես, գիտէ՞ք թէ առաջին անգամ ուրտեղ տեսած եմ ձեզ, միացաւ մեր խօսակցութեան տիկին Լուսիան։

— Ես ձեզ հետ ծանօթացել եմ այստեղ, Նիւ Եօրքում։ Դրանից առաջ ես ձեզ ուրիշ տեղ չեմ հանդիպել, տիկին Լուսիա, տարակուսանքով ասացի ես։

— Ես ձեզ տեսած եմ, բայց դուք դիս տեսած չէք, ժպտալով ասաց տիկին Լուսիան։ Կը յիշէ՞ք, որ դուք, քանի մը կամաւոր ընկերներով եկաք Բաղէշի Ամերիկեան Վարժարանը։ Ես մէկն էի այն խումբ մը աղջիկներէն, որոնց տեսաք վարժարանի սրահին մէջ։ Ձեզի ընկերացող կամաւորներէն մէկը, ձեզ մատնանշելով, ըսաւ, որ դուք մեր դրագէտ Աւետիս Ահարոնեանի որդին էք։ Ահա թէ երբ եւ ուրտեղ տեսած եմ ձեզ առաջին անգամ։

Դա ինձ համար հաճելի անկնկալ էր, քանի որ հնարաւորութիւն էր ստեղծւում լսելու Բաղէշի ամերիկեան վարժարանի մի խումբ հայ աշակերտուհիներու աղատման պատմութիւնը։

Ու մի օր տիկին Լուսիան պատմեց այդ։

«Ես Բաղէշին մօտիկ Խուլթիկ գիւղէն եմ։ Իմ աղջիկութեան հայրանունս Գասպարեան է։

Ինծի հետ մեր գիւղէն, Բաղէշի շրջակայ ուրիշ գիւղերէն եւ Մշոյ դաշտէն բազմաթիւ հայ աղջիկներ գիշերօթիկ սանուհիներ էին Բաղէշի ամերիկեան Մաունթ Հօլիոք վարժարանին մէջ։

Արդէն դրեթէ տարի մըն էր, որ կը շարունակուէր 1914-ին սկսուած պատերազմը։ Թէեւ միշտ ալ կասկածներ կային, որ Թուրքերը, օգտուելով պատերազմական դրութենէն, կրնան հայկական ջարդեր կատարել, բայց մինչեւ 1915-ի ամառը մեր դըպրոցին մէջ կեանքը դրեթէ խաղաղ օրերու կանոնաւորութեամբ կը շարունակուէր։

Բայց ահա, 1915-ի ամառը, օր մը, քանի մը հայեր, Թուրքերու հալածանքներէն խուսափելով, եկան մեր վարժարանի մէջ ապաստան փնտռելու։ Այդ հայերէն ոմանք վիրաւորուած էին։ Անոնցմէ լսեցինք, որ քաղաքին մէջ Թուրքերը սկսած են կոտորել հայերը։ Մեր շէնքին մէջ ապաստան փնտռող հայերու յետեւէն

սաստան եւ միանալու հայ կամաւորական գնդերից մէկին։ Անգլիական ափերից ոչ հեռու, գերմանական մի սուզանաւ ականահարել եւ խորտակել է Լուզիտանիան։ Մօտ 2000 ճամբորդներից ազատուել են 80 հոգի։ Լ. Սէֆէրեանը ազատուողներից մէկն է եղել, որ շարունակել է իր ճանապարհը եւ, Կովկաս հասնելով, միացել է Անդրանիկի գնդին։

մեր չէնքը խուժեցին Թուրքեր ու դուրս տարին այդ դժբախտները: Անոնցմէ մէկ քանին սպաննեցին մեր դպրոցին չէնքին պատերուն տակ, դրեթէ մեր աչքերուն առջեւ:

Մենք, վարժարանի աղջիկներս, սարսափի մատնուեցանք: Գիտէինք, որ հերթը մեզի ալ պիտի հասնէր: Մանաւանդ, երբ լսեցինք, որ Թուրքերը մեր վարժարանի դիշերօթիկ տղաներու չէնքէն հանած ու տարած էին բոլոր տղաները: Վերջէն տեղեկացանք, որ Թուրքերը այդ բոլոր տղաները քաղաքէն դուրս տարած եւ կոտորած են:

Մենք կ'ապրէինք սարսափի տակ, եւ ամէն մէկ օրը մեր վերջին օրը կը նկատէինք: Բայց մեր վախճանի այդ օրը տարօրինակ կերպով կ'ուշանար: Հետզհետէ հասկցանք, որ մեր վարժարանի հիմնադիրներէն Միսս Շէյն եւ Միսս Մէրի եւ խնամակալուհի Միսս Իլէյն ամէն ջանք թափած են համոզելու Թուրքերը, որ սպաննելու փոխարէն մեզ աշխատցնեն: Քանի մը ամիս անոնք յաջողցուցին ապահովել մեր կեանքը: Այդ ժամանակի ընթացքին էր, որ Միսս Իլէյնը թիֆոյով հիւանդացաւ ու մեռաւ: Անոր մահէն յետոյ Թուրքերը ստիպեցին Միսս Շէյնը եւ Միսս Մէրին հեռանալ Բաղէշէն եւ Թուրքիայէն:

Միսս Շէյնը, Հայաստանի Հանրապետութեան անկախութեան շրջանին Հայաստան է դացած, մեր որբերը խնամած է, ապա, Հանրապետութեան անկումէն յետոյ, Ամերիկա վերադարձած է:

Միսս Շէյնի եւ Միսս Մէրիի մեկնելէն յետոյ, մեր փրկութեան գործը ձեռք առած է քրիստոնեայ արաբ մը, որ գինուորական բժիշկ էր Թուրքական բանակին մէջ: Մեզի՝ շուրջ քառասուն հայ աղջիկներուս համար նախախնամական դեր կատարած այդ բժիշկը հալէպցի դոկտոր Մուստաֆա Զէլէբին էր, արաբական նշանաւոր Զէլէբի ցեղէն:

Դոկտոր Մուստաֆա Զէլէբիի շահագրգռութիւնը առհասարակ հայերով եւ մեզմով ունի իր պատմութիւնը:

Բաղէշցի Վաղարշակ Բարայեան անունով մէկը ամուսնացած է բաղէշցի Յովսէփ եւ Անթառամ Գրիգորեաններու Սաթենիկ անունով աղջկան հետ եւ իր կնոջ, աներոջ ու զոքանչին հետ մեկնած է Ամերիկա ու հաստատուած հոս, Նիւ Եօրք, ուրտեղ մինչեւ 1913-ը զբաղած է եղեր գորգի վաճառականութիւնով:

Այդ թուականին Վաղարշակ Բարայեանը իր աներն ու զոքանչը Նիւ Եօրք ձգելով, առեւտրական գործերով վերադարձած է Բաղէշ իր կնոջ եւ երկու պզտիկ զաւակներուն հետ:

Բաղէշի մէջ Վաղարշակ Բարայեան իր առեւտրական գործերը տակաւին չլմնցուցած, սկսած է 1914-ի պատերազմը եւ Բարայեան ընտանիքը չէ կրցած դուրս ելլել Թուրքիայէն:

Բաղէշի մէջ Վաղարշակ Բարայեան ծանօթացած եւ բարեկամացած է Ֆրանսայի մէջ կրթութիւն ստացած դոկտոր Մուստաֆա Զէլէբիին հետ:

Նախազգալով հայերու դլխուն պայթելիք արիւնոտ փոթորիկը, Վաղարշակ Բարայեան օր մը ըսած է իր բարեկամ դոկտոր Զէլէբիին.

— Դոկտոր, ես գիտեմ մեր՝ հայերուս դլխուն դալիքը: Եթէ օր մը թուրքերը զիս սպաննեն, կը խնդրեմ որ, եթէ կրնաս, փրկես կիներս ու զաւակներս:

Վաղարշակ Բարայեանի մռայլ դուշակութիւնը իրականացաւ: Դրեթէ մեր աչքերուն առջեւ թուրքերը ջարդեցին Բաղէշի հայութիւնը: Եւ Վաղարշակ Բարայեան այդ կոտորածի առաջին զոհերէն մէկը եղաւ:

Դոկտոր Մուստաֆա Զէլէբին իր հայ բարեկամին տուած խոստումը յարգած եւ անոր կիները՝ Սաթենիկ եւ երկու զաւակները Սուրիա՝ Հալէպ՝ իր հօր տունը ուղարկած է:

Բարայեան ընտանիքի հետ իր բարեկամութիւնը դոկտոր Մուստաֆա Զէլէբին տարածած էր հայերու վրայ ընդհանրապէս:

Միսս Շէյնը եւ միսս Մէրին հեռացնելէ յետոյ թուրքերը մեզ տարադրել ուզած են, բայց դոկտոր Զէլէբին իր ամբողջ աղդեցութիւնը դործածած է, համոզելու համար թուրքերը, որ մեզ չսպաննեն: Ու յաջողած է:

— Քանի մը աղջիկներ սպաննելէ ի՛նչ շահ, ըսած է դոկտորը, այդ որեւէ առեն կրնաք ընել: Մինչդեռ հիմա մենք կրնանք աշխատցնել այդ աղջիկները կար կարելու, լուացք ընելու, կերակուր եփելու, հիւանդապահութիւն ընելու — ինչ որ այնքան պէտք ունի մեր բանակը:

Այդպիսով մենք կրկին ողջ մնացինք:

Դոկտորը յաճախ կուդար մեզ տեսնելու: Անոր հետ, երբեմն, կուդային թուրք սպաներ, ստուդելու համար, թէ ի՞նչ կ՚ընենք մենք:

Դոկտորը պատուիրած էր մեզի, որ երբ իրեն հետ թուրք սպաներ դան մեր դպրոցը, մեզմէ ամէն մէկը անպայման պէտք է որեւէ դործով զբաղած ըլլար, ոչ ոք պէտք չէ որ անդործ ըլլար: Ու մենք ճշդութեամբ կը կատարէինք դոկտորին պատուէրը:

Մենք այնպէս վարժուած էինք դոկտորին, որ անոր ամէն մէկ բառէն, անոր դէմքին արտայայտութենէն կը հասկնայինք, թէ ի՞նչ պիտի ընէինք, կը հասկնայինք, թէ մեզի վտանգ կը սպառնա՞յ, թէ ոչ: Երբ դոկտորը մռայլ դէմքով ներս կուգար, մենք գիտէինք, որ մեր վիճակը ապահով չէ, եւ ամէն ինչ կ'ընէինք, որ դժդոհ չձդէինք դոկտորին հետ եկած թուրք սպաները: Իսկ երբ դոկտորը ժպտուն դէմքով ներս կը մտնէր, մենք գիտէինք, որ դեռ ատեն մը ապահով ենք:

Դոկտոր Զէլէբին ամէն ինչ խորհած էր մեզ պաշտպանելու համար: Մեր խումբի հասուն աղջիկները թուրքերու անվայել վերաբերմունքէն պաշտպանած ըլլալու համար, դոկտորը կարգադրած էր, որ հիւանդ ու վիրաւոր զինուորներու համար հիւանդանոցը կերակուր տանողներն ըլլան պզտիկ՝ 10–12 տարեկան աղջիկները:

Երբ ռուսերը մօտեցան Բաղէշին եւ կռիւը Բաղէշի դուռներուն առջեւ տեղի կ'ունենար, մենք ահ ու սարսափի մէջ էինք: Եթէ ռուսերը քաղաք մտնէին եւ կռիւը քաղաքի մէջ փոխադրուէր, դոկտոր Զէլէբին այլ եւս անկարող պիտի ըլլար փրկել մեզ թուրքերու կատաղութենէն:

Աստուած սակայն խնայեց մեզ եւ ռուսերն ու դուք՝ հայ կամաւորներդ՝ դիշերով այնպէս անակնկալ խուժեցիք քաղաքը, որ թուրքերը պատեհութիւն չունեցան մեզ կոտորելու: Անոնք միայն իրենց մորթը փրկելու մասին կը խորհէին:

Երբ դուք քաղաքը դրաւեցիք, դոկտոր Զէլէբին մեր դպրոցին մէջ էր: Խումբ մը կամաւորներ ներս խուժեցին մեր դպրոցը, ու երբ տեսան թուրք սպայի համազգեստով դոկտորը, յարձակեցան անոր վրայ: Մենք հասկցանք, որ ներս մտնողները հայեր են:

— Ի սէ՛ր Աստուծոյ, խնայեցէք այդ մարդը, ան է մեզ ազատողը, մեզ փրկողը,— այս աղաղակով ու լալով, մենք նետուեցանք դոկտորի եւ կամաւորներու միջեւ:

Ու քիչ վերջը պատմեցինք կամաւորներուն մեր փրկութեան պատմութիւնը: Այս անգամ մենք էինք, որ կը փրկէինք բարի դոկտոր Զէլէբին եւ կը հատուցանէինք այն մեծ բարիքը, որ ան ըրած էր մեզի:

Կամաւորները դոկտոր Զէլէբիին տարին ու յանձնեցին ռուսերուն: Վերջէն լսեցինք, որ ռուսերը դոկտոր Զէլէբին, թուրք սպաներու հետ դերի տարած են Ռուսիա:

Ինծի հետ ազատուած աղջիկներէն ոմանք ամուսնացան Ամե-

րիկայէն եկած կամաւորներու հետ եւ եկան Ամերիկա։ Ոմանք ալ, որ հարազատներ ունէին Ամերիկայի մէջ, եկան իրենց հարազատներու քով։

Երբ մենք Նիւ Եօրք հասանք, հոս հանդիպեցանք Սաթենիկ Բարայեանի մօրը, Անթառամ Գրիգորեանին։ Ան լսած էր Բաղէշի կոտորածի մասին եւ, լուր չունենալով իր աղջկան ու փեսային մասին, համոզուած էր, որ անոնք ալ, իրենց զաւակներուն հետ զոհ դացած են Թուրքական դազանութեան։ Խեղճ կինը դրեթէ խենթեցաւ ուրախութենէն, երբ լսեց ինծմէ, որ իր աղջիկն ու թոռները ազատած են կոտորածէն եւ Հալէպ են։

Քանի մը տարի ետք, Ամերիկայի մէջ տեղեկացանք, որ դոկտոր Մուստաֆա Զէլէպին, ռուսական դերութենէն ազատած Հալէպ վերադարձած է, եւ ամուսնացած Սաթենիկ Բարայեանի հետ։

Դոկտոր Մուստաֆա Զէլէբին շատ ազնիւ վերաբերմունք ցոյց տուած է Սաթենիկին։ Գերութենէ վերադառնալէ յետոյ ան ըսած է Սաթենիկին.

— Պատերազմը վերջացած է եւ դուն ապահով կերպով կրնաս երթալ, ուր որ կը փափաքիս։ Հիմա հայերը իրենց երկիրն ու կառավարութիւնն ունին՝ եւ եթէ կ՝ուզես, ես քեզ հոն կը ղրկեմ։ Եթէ կ՝ուզես, կրնամ քեզ Պոլիս ղրկել, ուրտեղ շատ հայեր կան։ Իսկ եթէ կը փափաքիս իմ հօրս տունը կենալ եւ ամուսնանալ ինծի հետ, ես ուրախութեամբ կ՝ընեմ այդ։

— Դուն այնքան ազնիւ վերաբերուեցար ինծի եւ այնքան բարիք ըրիր ինծի ու իմ զաւակներուս, որ ես քեզմէ աւելի լաւ ամուսին դժուար թէ գտնեմ, պատասխանած է Սաթենիկը, տալով իր հաւանութիւնը։

Սաթենիկ Բարայեան ամուսնացած եւ նոր ընտանիք կազմած է դոկտոր Մուստաֆա Զէլէբիին հետ եւ այժմ կը բնակի Հալէպ»։

Այսպէս լրացրեց իր պատմութիւնը տիկին Լուսիա Սէֆէրեանը։*)

Տիկին Լուսիա Սէֆէրեանից բացի, ես առիթ ունեցայ ծանօթանալու նրա հետ ազատուած իր երկու ընկերուհիների հետ։ Դրանցից մէկը նախկին օրիորդ Սաթենիկ Ցարութիւնեանն է, որ այժմ կինն է շնորհալի բանաստեղծ եւ դերասան Անուշ Գրիգորեանի։ Գրիգորեան ընտանիքն էլ ապրում է Նիւ Եօրքում։ Միւսը

*) 1956-ին վախճանուեց այդ պատուական հայուհին՝ տիկին Լուսիա Սէֆէրեանը։

նախկին օրիորդ Արտեմիս Խանչալեան, իսկ այժմ տիկին Արփաճեան, բնակւում է Ֆիլադելֆիայում: Իր ամուսինը, Գէորգ Արփաճեան, մեր գնդի կամաւորներից է, որ եկել էր Ամերիկայից:

Տիկին Արտեմիս այնպէս ահաւոր կերպով է տպաւորուել Մեծ Եղեռնի զարհուրելի դէպքերից, որ մինչեւ այսօր առանց ծանր յուզումի, հոգեկան խոր տագնապի չի կարողանում վերադառնալ այդ արիւնոտ օրերին: Եւ ուստի չուզեցի նրան այդ յուզումին ենթարկել: Իսկ տիկին Սաթենիկ Գրիգորեանը իրենց վարժարանում անցրած վերջին երկու օրերից պատմեց հետեւեալը.

«Հիւանդանոցը կերակուր տանող պզտիկ աղջիկներէն մէկը ես էի: Մեզի հիւանդանոց տանող բերողը Հասան անունով թուրք մըն էր, իսկ հիւանդանոցի վերակացուն Մամադ Զաւուշ անունով թուրք մը, որ լաւ հայերէն կը խօսէր:

Ձեր կողմէ քաղաքը դրաւելէն երկու օր առաջ, երեկոյեան, քանի մը աղջիկներով կրկին կերակուր տարինք հիւանդանոց: Երբ այդ անպիտան Մամադ Զաւուշը լսեց որ մենք, աղջիկներս, իրարու հետ հայերէն կը խօսինք, սաստեց մեզ, որ այլ եւս հայերէն չխօսինք:

— Ալ հայերը լմնցան, հայերու Աստուածը չօգնեց իրենց, ըսաւ այդ անպիտանը:

Երբ հիւանդանոցէն վարժարան վերադարձանք, մեզի ըսին, որ յաջորդ օրը մեզի քաղաքէն պիտի հեռացնեն: Այդ կը նշանակէր, որ մեզ պիտի տարադրէին ու սպաննէին: Ամէն մէկս ճար մը պիտի խորհէր իր դլուխը ազատելու: Բայց ի՞նչպէս, ո՞ւր պիտի երթայինք, ի՞նչպէս պիտի ազատէինք այդ դաղան թուրքերու ձեռքէն:

Յաջորդ երեկոյ, քաղաք ձեր մտնելէն քանի մը ժամ առաջ, մեր հացերը բաժնեցին մեզի, միւս օրը մեզի ճամբայ հանելու նպատակով:

Այդ դիշերը անքուն եւ ահ ու սարսափի մէջ անցուցինք:

Երեք օր շարունակ կռիւ էր քաղաքի դուռներուն առջեւ եւ ամէն առտու կանուխ թնդանօթներու որոտը կը սկսէր: Սակայն հացերը մեզի բաժնելու դիշերը երբ անցաւ եւ օրը լուսցաւ, այդ առաւօտ ոչ մէկ թնդանօթի ձայն չլսեցինք:

Չէինք հասկնար, թէ ի՞նչ կ'անցնէր կը դառնար մեր շուրջը:

Մէյ մըն ալ Հասանը, որ քաղաք դացած էր, ընչասպառ ներս ինկաւ:

— Հայ Ֆեդայիները քաղաք լեցուեր են, ըսաւ սարսափած։ Զիս կը սպաննեն, եթէ բռնեն։ Կ'աղաչեմ, ազատեցէք զիս։

Մենք չհաւատացինք Հասանի խօսքերուն։

Բայց շատ չանցած, կամաւորներու խումբ մը ներս խուժեց մեր վարժարանը։

Ալ հասկցանք, որ փրկուած էինք։

Այդ օրը տեսանք Մամադ Զաւուշը, որ դերի բռնուած էր։

— Նա՞սըլսըն*), Մամադ Զաւուշ, ըսի իրեն չարախինդ կերպով։

— Քու Աստուածդ շատ զօրաւոր է, պատասխանեց Մամադ Զաւուշը հայերէն»։

Այսպէս լրացրեց իր պատմութիւնը տիկին Սաթենիկ Գրիգորեանը։

Տիկին Լուսիա Սէֆէրեանի եւ տիկին Սաթենիկ Գրիգորեանի պատմածներով չի լրանում Բաբայեան ընտանիքից աղատուածների զարմանալի ոդիսականը։ Միայն հայի անօրինակ ճակատագիրը կարող է խաղալ այն խաղերը, որ նա խաղացել է Բաբայեան ընտանիքի դլխին։

Տիկին Լուսիայի եւ տիկին Սաթենիկի պատմածները լսելուց շատ տարիներ յետոյ, ահա թէ ինչ եմ լսել Վաղարշակ եւ Սաթենիկ Բաբայեանների մեծ որդուց, Սուրէն Բաբայեանից, դարձեալ Նիւ Եօրքում։

Սուրէն Բաբայեանին ես հանդիպեցի իր տանը իր տատի՝ Անթառամ Գրիգորեանի եւ իր քրոջ՝ տիկին Արաքսի Մարաշլեանի հետ։

«Ես եւ քոյրս, Արաքսին, ծնած ենք Նիւ Եօրք, ես՝ 1910-ին, իսկ քոյրս՝ 1912-ին, եւ մկրտուած Նիւ Եօրքի Իսթ 27-րդ փողոցի Սուրբ Լուսաւորիչ Մայր Եկեղեցիին մէջ, այսպէս սկսեց Սուրէն Բաբայեանը։

1913-ին հայրս, մեր ընտանիքը իրեն հետ առած, վերադարձած է Բաղէշ։ Մեծ հայրս՝ Յովսէփ Գրիգորեանը եւ մեծ մայրս՝ Անթառամը, հոս մնացին, մինչեւ որ մենք վերադառնայինք։

Երբ 1914-ի պատերազմը սկսաւ, մենք Բաղէշ էինք եւ չկարցանք վերադառնալ Ամերիկա։

Թէեւ ես այն ատեն հազիւ հինգ տարեկան էի, բայց զարմանալի կերպով կը յիշեմ այն ամէնը, ինչ որ կատարուեցաւ մեր ընտանիքին հետ 1915-ին եւ անկէ յետոյ։

---

*) Ի՞նչպէս ես։

1915–ի ամրան օր մըն էր, երբ լուր տարածուեցաւ քաղաքին մէջ, որ Թուրքերը հայերը կը կոտորեն։ Հայերը շուկայի մէջ իրենց խանութները դոցած էին եւ ով որ կրցած էր՝ փախած եւ իր տունը ապաստանած էր։ Հայրս ալ շուկան էր, եւ մենք, մեր տունին դուռները ամուր դոցած, կը սպասէինք որ ան վերադառնար։ Մեր տունին պատուհաններէն դուրս կը նայէինք, անհամբեր սպասելով հօրս։ Վերջապէս հայրս երեւցաւ մեր փողոցին մէջ, բայց ոչ մինակ, այլ երկու Թուրք ոստիկաններու հետ։

Ոստիկանները չձգեցին, որ հայրս մեր տունը մտնէր։ Հայրս փողոցէն ըսաւ մեզի, որ տունէն դուրս չելլենք, մինչեւ որ ինք վերադառնայ։ Ոստիկանները հայրս իրենց առջեւ ձգած տարին։

Ու ալ երբեք չտեսայ հայրս։

Մեր քովի տունը Քարատեաններուն տունն էր։

Զինուած Թուրքերու խումբ մը եկաւ ու շրջապատեց այդ տունը եւ քիչ յետոյ Թուրքերը սկսան հրացան պարպել այդ տունին վրայ։ Տունէն ալ հրացաններ կը պայթէին։ Հայերը կը պատասխանէին Թուրքերուն։ Քարատեաններու տունէն դէպի պարտէզը տանող դուռը բացուեցաւ եւ հայ մը, որ քօռ Գալօ կ՝ըսէին, դուրս նետուեցաւ եւ դէպի պարտէզը վազել սկսաւ։ Թուրքերը սկսան կրակել անոր վրայ։ Քօռ Գալօն ինկաւ եւ մնաց անշարժ։ Քարատեաններու տունէն տակաւին հրացաններ կը պայթէին, երբ Թուրքերը կրակի տուին տունը եւ վառեցին։ Ալ ոչ ոք դուրս չելաւ այդ տունէն։

Այդ ատեն էր, որ դոկտոր Մուստաֆա Զէլէրին, Թուրք չաւուշի մը հետ եկաւ եւ մեր տունին փողոցի դուռը բախեց։ Երբ մայրս տեսաւ, որ դուռը բախողը դոկտորն է, դուռը բացաւ։ Դոկտորը առաւ մեզ եւ տարաւ իր տունը։

Դոկտորը գիտէր, որ հայրս մեզի ամէնուս Թոյն բաժնած էր, որ Թուրքերու ձեռքը չիյնանք, այլ Թոյնով մեռցնենք մեզ։ Դոկտորը այդ գիտնալով, խստիւ պատուիրեց մեզի, որ չըլլայ չըլլայ Թոյն ընդունինք ու խոստացաւ ամէն կերպ հոգ տանիլ մեր մասին։

Հայրս ոստիկանատնէն լուր ղրկած էր դոկտորին, խնդրելով պաշտպանել մեզ, իսկ ինք, որքան կրցանք հասկնալ, Թոյնով մեռած էր, Թուրքերու չարչարանքներէն ազատուելու համար։

Դոկտոր Մուստաֆան ատեն մը մեզ իրեն քով պահելէ յետոյ, Թուրք չաւուշի մը հետ, Տիգրանակերտի վրայով Հալէպ ճամբեց։

Հալէպի մէջ մենք ապրեցանք դոկտոր Մուստաֆային հօր տունը։ Դոկտորին հօր անունը Հաջ Մոհամմէդ ալ Զէլէբի էր։ Զէլէբիները Սուրիոյ արաբներու մէջ նշանաւոր տոհմ են, որ երկու երեք հարիւր տարուան հնութիւն ունի։

Դոկտորին հօր՝ Հաջ Մոհամմէդ ալ Զէլէբիին ընտանիքը մեծ ընտանիք էր։ Դոկտորին մայրը խորհեցաւ, որ մենք դոկտորին ընտանիքն ենք եւ մեզ ընդունեց իբրեւ իր թոռները եւ մայրս ալ՝ իր հարսը։

Հաջ Մոհամմէդի տունին մէջ մեզի իբրեւ ընտանիքի միւս անդամներուն հաւասար հոգ կը տանէին։ Ես կը յիշեմ, որ մայրս ինք իր հագուստները չէր կարեր, այլ ընտանիքի միւս անդամներուն համար հագուստ կարող կին մը կուգար, որ կը կարէր նաեւ իմ մօրս հագուստները։ Այդ կինը լաւ կը յիշեմ, որովհետեւ ան անդամ մը զիս մահէ ազատած է։ Մենք թուրքերէն կը խօսէինք։ Ատեն մը վերջ արաբերէն ալ սորվեցանք։ Դոկտորին մայրը մեր անունները փոխեց։ Մօրս անունը Հադիա*) դրաւ, քրոջս՝ Խադիճա, իսկ իմս՝ Ալի։

Երբ ատեն մը վերջը հայերու հետ ալ ծանօթացանք, անոնք մայրս Սաթենիկ կամ մադամ կը կոչէին։

Զիս դպրոց ալ կը ղրկէին։ Ամենէն առաջ արարական դպրոց մը։

Օր մը, դոկտորին հօրեղբօր տղան ինծի երկար հարց ու փորձ ըրաւ, հասկնալու համար, թէ իրականի մէջ ո՞վ եմ ես։ Կ՚երեւի թէ բան մը կռահած էր։ Վերջ ի վերջոյ ըսի իրեն, որ իմ անունս Սուրէն Բարայեան է, եւ որ թուրքերը իմ հայրս սպաննած են։ Դոկտորին հօրեղբօր տղան իմ ըսածները պատմած էր դոկտորին մօրը։ Բայց ատկէ ետքն ալ թէ՛ դոկտորին մայրը, եւ թէ ամբողջ ընտանիքը շարունակեցին առաջուան պէս աղէկ վարուիլ մեզի հետ։

Երբ պատերազմը լրանալէն յետոյ դոկտորը Ռուսիայէն վերադարձաւ, զիս արարական դպրոցէն հանեց եւ ճիզուիտներուն ֆրանսական դպրոցն ուղարկեց։ Երբ դոկտորն իմացաւ, որ զիս դպրոցին մէջ Ալի Զէլէբի կը կոչեն, սաստիկ բարկացաւ, դնաց դպրոցը եւ իմ անունս Սուրէն Բարայեանի փոխել տուաւ։ Մինչեւ իմ անունս Սուրէնի փոխուիլը իսլամ դասընկերներէս շատեր բարեկամ էին ինծի։ Երբ անունս Սուրէնի փոխուեցաւ, ես կորսընցուցի իսլամ ընկերներուս բարեկամութիւնը, բայց, ատոր

*) Հադիա՝ արաբերէն նշանակում է Աստուածատուր։

փոխարէն, քրիստոնեայ արաբ դասընկերներուս բարեկամութիւնը շահեցայ։

Շուտով Հալէպի մէջ հայկական դպրոց բացուեցաւ։ Դոկտորը զիս Ֆրանսական դպրոցէն հանել տուաւ եւ հայկական դպրոցը ղրկեց։

Դոկտորի Ռուսիայէն վերադառնալէ առաջ սարսափելի դէպք մը պատահեցաւ Հալէպի մէջ։

Հալէպի մէջ հիմնուած էին հայկական որբանոցներ, որոնց մէջ հազարաւոր հայ որբեր կային։

Օր մը, Հալէպին մօտիկ գիւղերէն գինուած արաբներու խումբեր լեցուցան Հալէպ եւ սկսան կոտորել փողոցներու մէջ՝ հանդիպած հայ երեխաները։

Հալէպի մէջ անգլիական հնդիկ զօրքեր կային։ Անոնց աչքերուն առջեւ տեղի կ՚ունենար անմեղ երեխաներուն այդ կոտորածը, բայց անգլիացի սպաները ոչինչ կ՚ընէին դադրեցնելու համար այդ ջարդը։ Անոնք միայն լուռ հանդիսատեսներ էին։

Ես դպրոցէն տուն կուգայի, երբ տեսայ, թէ ինչպէս գիւղերէն եկած այդ արաբները հանդիպած հայ երեխան կը սպաննէին։

Փրկութեան ճամբայ չունէի, ոչ մէկ տուն կրնայի մտնել, ամէն դուռ ամուր գոցուած էր։ Սարսափած, ինչ ընելս չգիտնալով, կռնակս տուի տունի մը գոց դրանը եւ կեցայ, ամէն վայրկեան սպասելով, որ գնդակ մը կամ դաշոյնի հարուած մը վերջ պիտի տայ կեանքիս։

Մէյ մըն ալ, յանկարծ, զարմանալի բան մը պատահեցաւ։

Այն դուռը, որուն յենած էի, քիչիկ մը բացուեցաւ եւ ձեռք մը, զիս կռնակէս գրկելով, ոյժով ներս քաշեց ու նորէն գոցեց դուռը։

Երբ ապշած յետ նայեցայ, տեսայ, որ զիս մահէն փրկողը իմ մօրս համար հաղուստ կարող հրէայ կինն է։

Ոմանք չեն սիրեր հրէաները։ Ես պատճառ չունիմ չսիրելու հրէաները, ընդհակառակը, ես զօրաւոր պատճառ ունիմ սիրելու զանոնք։ Այն սարսափելի օրուընէ ասդին իմ ապրած կեանքիս ամէն մէկ օրը ես պարտական եմ այդ հրէայ կնոջը։

Այդ օրը, կ՚ըսէին, Հալէպի փողոցներուն մէջ շուրջ 500 հայ մանուկներ ջարդուած էին։ Թէ ի՞նչէն առաջ եկաւ այդ արիւնհեղութիւնը, չեմ գիտեր։ Բայց կը խորհիմ, որ անպայման թիւրիմացութիւն մը տեղի ունեցած է, եւ այդ հայ երեխաները թիւրիմացութեան զոհ դացած են։

Այդպէս համոզուած եմ, քանի որ թէ՛ այդ ցաւալի դէպքէն

1904–ին Սասունի ապստամբութիւնից յետոյ Անդրանիկը, իր վինակից ընկերների եւ Պարսկաստանի դաշնակցական ընկերների հետ. ձախից դէպի աջ ոտքի կեցածները՝ Պօղոս, Սմբատ, Գրիգոր (Մենաւորի ընկերներից), Յովհաննէս (ուսուցիչ), Սարգիս (Սալմաստեցի) եւ Տիգրան: Նստածները՝ ձախից աջ Սեպուհ, Մալխաս, Անդրանիկ, Սամսոն եւ Մուրադ: Առաջին շարքում թեք ընկածները՝ Աւետիս եւ Առաքել:

Սուրէն Բաբայեան իր զաւակների հետ

Հայ կամաւորական Առաջին գունդը 1916 փետրուար 1–ին
Ալջաւազից Ախլաք ճամբայի վրայ:



Դոկտոր Մուստաֆա եւ տիկին Հադիա (Սաթենիկ) Զէլէբի
իրենց աւագ զաւակի հետ 1923–ին

առաջ եւ թէ անկէ ետքը, արաբները միշտ ալ հայերու հանդէպ վերին աստիճանի բարեացակամ եղած են։ Մենք գիտենք հիմա, որ Սուրիոյ եւ Լիբանանի մէջ հանգիստ կ՚ապրին երկու հարիւր հազարի չափ հայեր, որոնք պիտի մեռնէին անապատներու մէջ, եթէ չըլլար արաբ ժողովուրդին օգնութիւնը։

1920 թուին, տաս տարեկան հասակիս, հրաժեշտ տուի մօրս, քրոջս եւ Զէյլէրի ընտանիքին ու բարեկամ ընտանիքի մը հետ եկայ Ամերիկա մեծ հօրս եւ մեծ մօրս քով։ Երկու տարի յետոյ եկաւ նաեւ քոյրս՝ Արաքսին։

Մայրս իր երկրորդ ամուսնութենէն ունեցած է հինգ զաւակներ՝ երեքը մանչ, իսկ երկուքը աղջիկ։ Կէս-արաբ, կէս-հայ եղբայրներուս անուններն են Ֆուադ-Գրիգոր, Նուհադ-Յարութիւն եւ Վեղադ-Անթուան, իսկ քոյրերուս՝ Պալքըզ եւ Լամիս։ Անոնք բոլորն ալ, արաբերէնէն զատ կը խօսին նաեւ հայերէն։

Նուհադ-Յարութիւնը, ամուսնացած, հիմա Ամերիկա է եւ կը բնակի Նիւ Ճըրզի նահանգին Քըրնի քաղաքին մէջ։

Իմ զաւակներուս,— Բասլըրթին, Ճերարտին, Մայքլին եւ Պէաթրիսին,— որ ամենէն պզտիկն է, հինգ տարեկան,— անհաւատալի կը թուին ինծի հետ պատահածները, երբ ես Պէաթրիսիս տարիքին եղած եմ։ Եւ չեմ զարմանար, որ չեն հաւատար։ Ի՞նչպէս կրնան հաւատալ, երբ իրենք կ՚ապրին երկրի մը մէջ, ուր մանուկները ամէն խնամքի, դուրգուրանքի եւ սիրոյ առարկայ են, մինչդեռ ես կը պատմեմ իրենց երկրի մը մասին, ուրտեղ իրենց տարիքի մանուկները հարիւր հազարներով տառապեցան, չարչարուեցան եւ ջարդուեցան բարբարոսներու ձեռքով։

Եւ այդ երկրին անունն է՝ Թուրքիա»։

Այսպէս լրացրեց իր պատմութիւնը Սուրէն Բաբայեանը։

ՎԵՐԱԴԱՐՁ

Ապրիլի սկիզբն էր, երբ իր թիկնապահների մի խմբով Անդրանիկը մեկնեց Բաղէշից։ Անցանք Բահվէից, Սուրբից, ուր 1915-ին բուռն կռիւներ էին մղած Թուրք բանակի դէմ մեր կամաւորական չորս գնդերը, մասնաւորապէս մեր գունդը։

Անցանք Վանայ Լճի հարաւային ափի ամբողջ երկարութեամբ մինչեւ Ոստան, Արտամետ ու Վան։ Վանում երկու օրուայ դադարից յետոյ, մի քանի ամիս առաջ մեր եկած ճանապարհով՝ Արճակ, Սարայ, Կոտուր, Խոյ ու Ջուլֆայ գծով վերադարձանք Երեւան։

Անդրանիկը այլեւս չվերադարձաւ դէպի իր գունդը։

Արդէն հայ կամաւորական գնդերի կեանքը դրանից յետոյ երկար չտեւեց։ 1916-ի սեպտեմբերին Կովկասի փոխարքայ եւ ռուս-թուրքական ճակատի հրամանատար մեծ իշխան Նիկոլայ Նիկոլայեւիչի հրամանով պիտի լուծուէին հայ կամաւորական գնդերը եւ նրանց տեղ հայ կամաւորներից պիտի կազմուէին հայկական հրացանաձիգ գնդեր, ռուսական բանակի հայ սպաների հրամանի տակ։ Այդ ծրագիրը չիրականացաւ, քանի որ հայ կամաւորները չուզեցին մտնել այդ գումարտակների մէջ։ Ու մեր կամաւորական գնդերը զօրացրումի ենթարկուեցին։

Բայց նախ քան զօրացրումը, մեր գունդը մասնակցել է 1916-ի յուլիս 24-ից մինչեւ 30-ը Բաղէշի պաշտպանութեան համար մղուած արիւնահեղ կռիւներին։ Այդ կռիւների ժամանակ մեր գունդը, ինչպէս Բաղէշը գրաւելու կռիւների ժամանակ, նորից շատ զոհեր է տուել։

Բազմաթիւ ռազմիկների հետ ընկել են մեր զինակիցներից երկուսը՝ Ախլցխայի Արտաշէս Սուքիասեանը՝ վաշտապետ եւ Էրզրումցի Մանուէլը՝ փոխ վաշտապետ։

Արտաշէսը միջակից մի քիչ բարձր հասակով, բարեկազմ, գեղադէմ եւ պարզ ու զուարթ բնաւորութեամբ իր շուրջը խինդ ու ժպիտ տարածող մի անվեհեր ռազմիկ էր։

Էրզրումցի Մանուէլը միջահասակ, լայնաթիկունք, միշտ կենտրոնացած լուրջ դէմքով, սակաւախօս եւ ճակատամարտի մէջ վազրի կատաղութեամբ գրոհ տուող՝ մահը արհամարհող մի մարտիկ էր։ Իր ամբողջ դերդաստանը թուրքական վայրագ բարբարոսութեան զոհ եղած այդ ինքնամփոփ, լռակեաց երիտասարդը մի տենչ ունէր — որքան կարելի է աւելի շատ թշնա-

մի տապալել։ Թւում էր, թէ Մանուէլը գիտէր, որ այդ պատերազմից ողջ պիտի դուրս չգայ, ուստի աշխատում էր որքան կարելի է սուղ ծախել իր կեանքը, անխուսափելի վախճանին հասնելուց առաջ։

Արտաշէսի հետ Մանուէլը ընկել է Սալնոյ ճորում, թուրքական բանակի դէմ մի կատաղի հակադրոհի ժամանակ։

Սեպտեմբերին, Արտաշէսի եւ Մանուէլի մահից հազիւ մէկ ամիս անցած, մեր դունդը, հայ կամաւորական միւս գնդերի հետ զօրացրումի ենթարկուեց։ Հայ կամաւորական գնդերի մասնակցութիւնը Համաշխարհային Առաջին Պատերազմում ռուս-թուրքական ճակատի վրայ վերջ դրաւ։

1916-ին թուրքապատկան Հայաստանի մեծ մասը նուաճուած էր ռուս բանակի կողմից եւ ռուս կառավարութիւնը այլեւս հայ կամաւորների պէտքը չունէր։ Հայ ժողովուրդը, անտեղեակ իր թիկունքում կատարուող քաղաքական դաւին, իր զաւակների յաւելեալ արիւնով ծառայել էր Ռուսաստանի, Անգլիայի եւ Ֆրանսայի աշխարհակալական ծրագրներին։ Հայ կամաւորական գնդերի զօրացրումից տարիներ յետոյ պիտի պարզուէր, որ այն ժամանակ, երբ Ռուսաստանը թուրքապատկան Հայաստանը ազատագրելու խոստումներ էր տալիս, իսկ անգլիական ու ֆրանսական պարլամենտներում հայանպաստ ճառեր էին արտասանւում, նոյն Ռուսաստանը, Անգլիան եւ Ֆրանսան գաղտնի դաշինք էին կնքում Թուրքիայից առնելիք հայկական հողերը իրար մէջ բաժանելու մասին...

Պատմութիւնը, սակայն, այլ կերպ էր տնօրինել եւ երեք գիշատիչները չկարողացան վայելել իրենց յաղթանակի արդիւնքները։

Պատմութիւնը, դժբախտաբար, տարբեր տնօրինեց նաեւ երիցս անիրաւուած հայ ժողովրդի ճակատագիրը։ Երկու դաբաւոր թշնամիներ՝ ռուսական արջը եւ թուրքական գորշ գայլը՝ ձեռք մեկնեցին իրարու, խորտակելու համար հայ ժողովրդի ազատութիւնը եւ իրար հետ բաժանելու հայ ժողովրդի հինաւուրց հայրենիքը։

Բայց պատմութիւնը դեռ շատ տեղերում իր վերջին խօսքը չի ասել։ Չի ասել նա իր վերջին խօսքը նաեւ մեր հինաւուրց հայրենիքի ճակատագրի մասին...

ՆՈՐ ՃԱԿԱՏ

1917–ի Փետրուարեան Յեղափոխութեան հետեւանքով կազմուած Ռուսաստանի Ժամանակաւոր Կառավարութիւնը արտօնեց Կովկասեան երեք ազգերին՝ հայերին, վրացիներին եւ ազերիներին՝ կազմակերպել իրենց ազգային զօրամասերը:

Ալեքսանդր Կերենսկու վարչապետութեամբ Ժամանակաւոր Կառավարութիւնը բանակին ուղղեց թիւ 1 հրամանը, որով զինուորներից կազմուած կոմիտէներին իրաւունք էր տրւում խառնուելու բանակը կառավարելու եւ նոյնիսկ ռազմական գործողութիւնները վարելու գործերին, սկսել էր քայքայել ռուս բանակը: Եւ եթէ որեւէ պատճառով ռուս բանակը յետ քաշուէր Կովկասից, Թուրքերը պիտի օգտուէին առիթից դէպի Կովկաս արշաւելու համար: Իսկ դա պիտի լինէր մահացու վտանգ Կովկասի հայութեան եւ Կովկաս ապաստանած արեւմտահայութեան համար: Հասկանալի է, ուստի, որ ազգային զօրամասեր կազմակերպելու հարցով ամէնից աւելի մտահոգուած էր հայութիւնը եւ նրա ղեկավար մարմինը՝ Կովկասի Հայոց Ազգային Խորհուրդը, որ փոխարինել էր կամաւորական շարժումը վարած Ազգային Բիւրոյին:

Հայոց Ազգային Խորհուրդը եռանդով ձեռնարկեց հայկական զօրամասեր կազմակերպելու գործին: Հայկական կանոնաւոր զօրամասեր՝ հրացանաձիգ գնդեր, դումարտակներ, հեծելազօր, հրետանի եւ կամաւորական խմբեր սկսել էին կազմուել 1917–ի ամառուանից, թէ՛ թիկունքում եւ թէ ռազմաճակատում՝ Վանում, Խնուսում, Բարերդում, Երզնկայում եւ այլուր: Էրզրումում կազմակերպուած էր բերդապահ գունդը, Վանում՝ Վանի երկրորդ գունդը գնդ. Տիգրան Բալդասարեանի հրամանի տակ, Երզնկայում՝ Մուրատի եւ Բարերդում Սեպուհի ջանքերով կազմուել էին կամաւորական զօրամասեր, Խնուսում՝ Սասունի գունդը՝ սասունցի մարտիկներ Մանուկի եւ Մուշեղի ղեկավարութեամբ, Ալաշկերտում՝ տեղական զօրամասեր Սմբատի ջանքերով: Սրանցից դուրս զօրամասեր կազմակերպուած էին Կարսի եւ Երեւանի պաշտպանութեան համար:

1917–ի դեկտեմբերին, երբ արդէն ռուսական բանակը դրեթէ ամբողջութեամբ պարպել էր ռուս–թուրքական ռազմաբեմը, Կովկասեան ռուսական բանակի հատ ու կենտ մնացորդների եւ հայկական ու վրացական նորակազմ զօրամասերի ընդհանուր

հրամանատար նշանակուեց ռուս զօրավար Լեբեդինսկին, իսկ իր սպայակոյտի պետ գնդապետ Շատիլով, որ, ինչպէս տեսանք, մեր զօրաբաժնի սպայակոյտի պետ էր Բաղէշի կռիւների ժամանակ։ Դեկտեմբեր 17-ին ընդհանուր հրամանատար զօրավար Լեբեդինսկիի կողմից արտօնուեց հայկական բոլոր զինուած ոյժերի միացումը մի ռազմական միաւորի՝ զօրաբանակի (կորպուսի) մէջ։

Հայկական զօրաբանակը բաղկացած էր երեք զօրաբաժիններից (դիւիզիաներից)։

Առաջին զօրաբաժինը բաղկացած էր չորս գնդից՝ զօրավար Արէշեանի հրամանի տակ։

Երկրորդ զօրաբաժինը՝ չորս գնդից, զօրավար Սիլիկեանի հրամանի տակ։

Այրուձիի բրիգադ — երկու գունդ չորսական հարիւրակով, հրամանատարութեամբ գնդապետ Ղորղանեանի։

Արեւմտահայ Զօրաբաժինը բաղկացած էր երեք բրիգադներից։ Առաջին բրիգադ — Էրզրումի գունդ, Երզնկայի գունդ եւ ձիաւոր գունդ։ Երկրորդ բրիգադ — Խնուսի գունդ եւ Ղարաքիլիսայի (Ալաշկերտ) գունդ։ Երրորդ բրիգադ — Վանի առաջին գունդ եւ Զէյթունի ձիաւոր գունդ։

Արեւմտահայ Զօրաբաժնի հրամանատար նշանակուած էր Անդրանիկը, իսկ իր սպայակոյտի պետ՝ ռուս գնդապետ Զենկեւիչ։

Այս բոլոր զօրագնդերը օժտուած էին նաեւ անհրաժեշտ քանակութեամբ հրետանիով։

Հայկական Զօրաբանակի ընդհանուր հրամանատարն էր զօրավար Թովմաս Նազարբէգեանը, իսկ իր սպայակոյտի պետ՝ զօրավար Վրիշինսկին։

Հայկական Զօրաբանակի Հրացանաձիգ գնդերի ռազմիկների կորիզը կազմեցին մեծ մասով Հայ Կամաւորական նախկին գնդերի մարտիկները։

Մինչեւ 1918-ի յունուար ամիսը հայկական զինուած ոյժերի քանակը հասել էր շուրջ 17,000-ի։

Թէեւ ռուս-թուրքական ճակատը պարպուել էր ռուսական ոյժերից, բայց տեղ տեղ մնացել էին փոքրաթիւ ռուս զինուորներ, որոնք մեծ մասամբ թնդանօթաձիգներ էին, ինչպէս օրինակ Էրզրումում եւ Կարսում։ Մնացել էին բաւական թուով ռուս սպաներ, որոնք օգնեցին կազմակերպելու եւ տեղ տեղ էլ վարելու հայկական ոյժերը ու երբ սկսուեց թուրքական արշաւը, կռուե-

ցին Թուրքերի դէմ։ Այդպէս էր, օրինակ, գնդապետ Մօրելը, որ Երզնկայից մինչեւ Կարս կռուով նահանջեց մեր ոյժերի հետ։ Այդպէս էր գնդապետ Սամարցեւը, որ մասնակցեց մեր ոյժերի կազմակերպման Խնուսի շրջանում եւ ապա, Թուրքերի արշաւը սկսուելուց յետոյ, մեր ոյժերի դլուխն անցած, կռուով քաշուեց Սարըղամիշ, ուր միացաւ զօրավար Արէշեանի զօրամասին։ Այդպէս էին ռուս գնդապետ Կորոլկովը եւ յոյն գնդապետ Սակելարին, որոնք ոչ միայն 1918-ի կռիւներին մասնակցեցին, այլեւ մնացին հայկական բանակում մինչեւ Հայաստանի անկախ Հանրապետութեան խորտակումը Թուրքերի եւ Ռուսաստանի խորհրդային իշխանութեան միացեալ ոյժերով 1920 թուին։ Ռուս էր Կարսի բերդի հրամանատար զօրավար Դէյեւը։ Եւ վերջապէս, մօտ 300 ռուս սպաներ կազմակերպեցին մի դումարտակ, որի շարքային զինուորները գնդապետներ, փոխ-գնդապետներ եւ տեղակալներ էին եւ որոնք կռուեցին մեր ոյժերի կողքին մինչեւ 1918-ի հայեւթուրք պատերազմի վերջը։

Տրապիզոնից մինչեւ Բաբերդ ու Երզնկա, այնտեղից մինչեւ Վան, ու Վանից մինչեւ Թուրք-պարսկական սահմանագլուխը մօտ 500 մղոն երկարութեամբ տարածուող ճակատի պաշտպանութիւնը, որ կատարում էր 300 հազարանոց ռուսական բանակը, ընկաւ հապճեպով կազմակերպուած, ոչ բաւականաչափ մարզուած հայկական ոյժերի վրայ, որոնց թիւը նոյնիսկ 20,000-ի չէր հասնում։ Եւ հասկանալի է, որ այդքան տարածուն մի ճակատ անկարելի էր անվթար պահել այդքան քիչ ոյժերով։

Հայկական ոյժերը, տեղ տեղ կռուով, տեղ տեղ առանց կռուի 1918-ի փետրուարին սկսեցին յետ քաշուել՝ մէկ կողմից դէպի նախկին ռուս-Թուրքական սահմանը, իսկ միւս կողմից էլ դէպի Թուրք-պարսկական սահմանը։

Գլխաւոր ճակատի վրայ,— Բաբերդ, Երզնկա եւ Էրզրում,— հայկական ոյժերը վարում էին՝ Երզնկայում գնդապետ Մօրելը, օդնական ունենալով սերասստացի Մուրադին, Բաբերդում՝ Սեպուհը, Խնուսում՝ գնդապետ Սարմարցեւը եւ Ախլաթում Սմբատը իր սպայակոյտի պետ գնդապետ Արէշեանի հետ, իսկ Էրզրումի բերդի պաշտպանութիւնը ստանձնել էր Անդրանիկը։

Թուրք բանակը ամբողջ ճակատի վրայ յարձակման անցաւ 1918-ի յունուարի վերջին օրերը։

Երզնկայի վրայ Թուրքերի յարձակումը սկսուել է յունուարի 31-ին։ Գնդապետ Մօրելի եւ Մուրադի ղեկավարութեամբ Երզնկայի հայկական զօրամասը եւ քաղաքի հայ բնակչութիւնը

պարպել են քաղաքը եւ 11 օր տեւած հերոսական կռիւներից, եւ Թշնամուն ու Հայաստանի ցրտաշունչ ձմրան բաղմաթիւ զոհեր տալուց յետոյ, հասել են Էրզրում:

Կռուով Թշնամու օղակը ճեղքելով Բաբերդից Էրզրում է հասել նաեւ Սեպուհը իր զօրամասով եւ քաղաքի հայ բնակչութիւնով:

Էրզրումի շուրջ կռիւները սկսուել են Փետրուարի 14-ին եւ տեւել են մինչեւ փետրուար 26-ը: Թշնամու դերադանց ոյժերի ճնշման տակ Անդրանիկը փետրուար 27-ին հրամայել է պարպել Էրզրումը եւ քաշուել Կովկաս:

Էրզրումի անկումից յետոյ յուսալքուած Անդրանիկը մեկնել է Թիֆլիս եւ մի առժամանակ հեռացել է ռազմական գործերից:

Խնուսի մեր ոյժերի մի մասը, ինչպէս տեսանք, դնդապետ Սամարցեւի հրամանի տակ կռուով նահանջել է մինչեւ Սարըղամիշ եւ միացել զօրավար Արէշեանի զօրաբաժնին: Խնուսի ոյժերի միւս մասը՝ սասունցիներ Մանուկի եւ Մուշեղի ղեկավարութեամբ, եւ Ալաշկերտի ոյժերը՝ Սմբատի հրամանի տակ նահանջել են դէպի Արարատեան Դաշտ: Իսկ Վանից, որ մինչեւ ապրիլի կէսը մնացել է հայկական ոյժերի ձեռքը, հայ բանակը, Վասպուրականի բնակչութեան հետ, նահանջել է Պարսկաստան:

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՏԱԳՆԱՊԸ

1918-ի փետրուարի 10-ից սկսած Անդրկովկասը կառավարւում էր Անդրկովկասեան Սէյմի կողմից ընտրուած կառավարութիւնով, իսկ Սէյմը կազմուած էր Անդրկովկասի երեք գլխաւոր ազգերի՝ հայերի, վրացիների եւ ազերիների քաղաքական կուսակցութիւնների կողմից նշանակուած ներկայացուցիչներից: Թէեւ Անդրկովկասը կառավարւում էր Սէյմով, բայց իր կապը Ռուսաստանի հետ խզուած չէր նկատում, այլ իրեն համարում էր Ռուսաստանի մի մաս: Եւ թէեւ Անդրկովկասի կառավարութիւնը կազմուած էր հայերից, վրացիներից ու ազերիներից, բայց այդ կառավարութեան ղեկը փաստօրէն գտնւում էր վրացի սոցիալ-դեմոկրատների ձեռքում: Սէյմից ընտրուած Անդրկովկասեան առաջին կառավարութեան գլխաւոր նախարարութիւնները տրուած էին հետեւեալ վրացիներին.— Ե. Գեգեչկորի —

վարչապետ, Ա. Զիմենկելի — արտաքին գործերի նախարար, Ն. Ռամիշվիլի — ներքին գործերի նախարար եւ Գէորգաձէ — ռազմական նախարար: Իսկ մնացեալ երկրորդական նախարարութիւնները բաժանուած էին հայերի եւ ազերիների ու դարձեալ վրացիների միջեւ:

Օգտագործելով ազերիների թշնամութիւնը հայերի հետ եւ յենուած ազերիների անվերապահ աջակցութեան վրայ, որ գաղտնի զինակցութեան բնոյթ էր կրում, վրացի նախարարները միշտ պաշտպանեցին ո՛չ միայն Վրաստանի, այլեւ Ազըրբէյջանի շահերը եւ բացարձակ կերպով ոտնահարեցին հայ ժողովրդի ամենակենսական շահերը: Անդրկովկասեան կառավարութեան վարչապետութեան, արտաքին, ներքին եւ ռազմական գործերի նախարարութիւնների միջոցով վրացի նախարարները, մանաւանդ այն ժամանակուայ պատերազմական պայմաններում, պետական ամբողջ իշխանութեան տէրն էին: Թուրքահպատակ Հայաստանի խորքերից մինչեւ Անդրկովկաս կռուողը հայկական բանակն էր, իսկ այդ բանակի ճակատագիրը տնօրինող ռազմական նախարարը վրացի զօրավար Գ. Գէորգաձէն էր:

Պատերազմը տեղի էր ունենում Թուրքապատկան եւ ռուսապատկան Հայաստանի սահմաններում, իսկ պատերազմի, զինադադարի եւ խաղաղութեան հարցերը լուծողները Անդրկովկասեան կառավարութեան վարչապետը եւ արտաքին, ներքին ու ռազմական գործերի վրացի նախարարներն էին — Գեղեչկօրի, Զիմենկելի, Ռամիշվիլի եւ Գէորգաձէ:

Այս էր կացութիւնը 1918-ի ապրիլին, երբ Էրզրում-Սարիղամիշ-Կարս ռազմական դլխաւոր գծի վրայ թուրք բանակը հասաւ Կարսի արտաքին ամրութիւնների տակ:

Քանի դեռ պատերազմը տեղի էր ունենում հայկական հողերի վրայ եւ չէր հասել բուն վրացական սահմաններին, վրացի քաղաքական գործիչները եւ նախարարները շատ էլ մտահոգուած չէին հայկական ճակատի վրայ տեղի ունեցող դէպքերով: Բայց երբ թուրքերը, յենուած Բրեստ-Լիտովսկում Խորհրդային Ռուսաստանի հետ մարտ 3-ին կնքուած դաշնագրի վրայ, պահանջեցին Բաթումը, վրացիների առաջարկով Սէյմը որոշեց պատերազմ յայտարարել Թուրքիային: Իսկ մինչեւ այդ հայ-թուրքական ռազմաճակատի վրայ տեղի ունեցածը, կարծէք թէ, պատերազմ չէր, եւ Երզնկայից մինչեւ Կարս, ու Խնուսից եւ Վանից մինչեւ Արարատեան Դաշտ հայ զինուորի թափած արիւնը՝ արիւն չէր:

Ե. Գեղեչկորիի եւ Ա. Զխենկելիի ղեկավարութեամբ Անդրկովկասեան կառավարութիւնը մի կողմից, իբր թէ, պատերազմ էր վարում Թուրքիայի դէմ, իսկ միւս կողմից շարունակում էր հաշտութեան բանակցութիւններ վարել Թուրքերի հետ:

Ապրիլ 14-ին*) Թուրք բանակը, լաղ եւ աջարացի կամաւորների հետ, Աջարիայի կողմից շարժուեց Բաթումի դէմ: Բաթումը պաշտպանող վրացական բերդապահ զօրքը,— 3000 ռազմիկ, որոնցից 600-ը սպայ,— անձնատուր եղաւ: Թուրքերը, առանց դնդակ արձակելու, մտան Բաթում: Բաթումից Թուրք բանակը սկսեց շարժուել դէպի Վրաստանի խորքերը:

Կարսի ճակատի վրայ, ապրիլ 19-ին, Թուրքական երեք զօրաբաժին մօտեցան Կարսի արտաքին ամրութիւններին Նովո-Սելիմի եւ Աղադեւէի ուղղութեամբ: Այդ օրը երկու կողմերն էլ յամառութեամբ կռուեցին: Թուրքական գրոհներին յաջորդում էին հայկական հակագրոհները, հայկական յարձակումներին հետեւում էին Թուրքական հակայարձակումները: Նովո-Սելիմը եւ Աղադեւէն ձեռքէ ձեռք էին անցնում:

Քանի որ Սէյմը շարունակում էր Անդրկովկասը Ռուսաստանի մի մաս համարել, Անդրկովկասեան բոլոր զինուած ոյժերի ընդհանուր հրամանատարը շարունակում էր նկատուել Ռուսաստանի Ժամանակաւոր Կառավարութեան կողմից նշանակուած զօրավար Լեբեդինսկին:

Նովո-Սելիմի եւ Աղադեւէի կռուի օրը Կարս էին գտնւում զօրավար Լեբեդինսկին, Կարսի բերդապահ զօրքի հրամանատար զօրավար Դէեւը, հայկական զօրաբանակի հրամանատար զօրավար Նազարբէգեանը եւ Ֆրանսական զինուորական առաքելութեան պետ գնդապետ Շարդինը: Այս չորսը եւ զօրավար Լեբեդինսկիի սպայակոյտի անդամ ռուս սպաներից մի քանիսը ճակատի կացութիւնը ուսումնասիրելուց յետոյ եկան լաւատես եզրակացութեան, Կարսի յետագայ պաշտպանութեան վերաբերմամբ: Յաջորդ օրը, ապրիլ 20-ին, զօրավար Լեբեդինսկին իր եւ միւսների կարծիքը զեկուցեց Հայոց Ազգային Խորհրդին, որ Ալեքսանդրապոլ էր եկել ռազմաճակատին մօտիկ

---

*) Մինչեւ 1918-ի ապրիլ ամիսը Ռուսաստանը եւ Անդրկովկասը գործ էին ածում Գրիգորեան հին օրացոյցը: Այդ տարուայ ապրիլին Ռուսաստանը եւ Անդրկովկասը ընդունեցին նոր տոմարը: 1918-ի ապրիլից սկսած ամսաթիւերը այս գրքում նշանակուած են նոր տոմարով:

լինելու համար։ Ազգային Խորհուրդը, լսելով զօրավար Լեբեդինսկիի զեկոյցը, որոշեց շարունակել պատերազմը*)։

Կարսի տակ հայկական բանակի յամառ դիմադրութիւնը շարունակուեց մինչեւ ապրիլի 23-ը։

Մինչ հայկական բանակը շարունակում էր Կարսի պաշտպանութիւնը, Թիֆլիսում Անդրկովկասեան կառավարութեան վրացի նախարարները որոշում էին Կարսի ճակատագիրը։

Ապրիլ 22-ին Թիֆլիսում Անդրկովկասեան Սէյմը Անդրկովկասը յայտարարեց անջատուած Ռուսաստանից եւ հռչակեց Անդրկովկասի Դաշնակցային Հանրապետութիւնը։

Այդ քայլը, ինչպէս նման բոլոր կարեւոր քաղաքական քայլերը, առնուեց նախաձեռնութեամբ վրացի սոցիալ-դեմոկրատ քաղաքական գործիչների, որոնք, միաժամանակ, վարպետորէն յետեւում, գերմանների եւ թուրքերի հետ անհրաժեշտ միջոցներ էին ձեռք առնում, պաշտպանելու Վրաստանի շահերը՝ ի հաշիւ հայ ժողովրդի։ Իսկ ազերիներն ունէին իրենց զօրաւոր դաշնակիցները յանձին Թուրքիայի եւ Գերմանիայի։

Անդրկովկասը անկախ Դաշնակցային Հանրապետութիւն հռչակելու մասին Սէյմի տուած որոշումից անմիջապէս յետոյ Ե. Գեղեչկորին ներկայացնում է իր կառավարութեան հրաժարականը։ Սէյմը ընդունում է Գեղեչկորիի դահլիճի հրաժարականը եւ յանձնարարում է Ա. Չխենկելիին նոր դահլիճ կազմել։

Սէյմը կազմող կուսակցութիւնների ներկայացուցիչների հետ Չխենկելիի բանակցութիւնները տեւում են չորս օր, մինչեւ որ ապրիլ 26-ին նա կարողանում է կազմել իր դահլիճը եւ ներկայացնել Սէյմին՝ վաւերացման համար։

Ա. Չխենկելիի կազմած կառավարութիւնը հետեւեալն էր.— Ա. Չխենկելի՝ վարչապետ եւ արտաքին գործոց նախարար, Ն. Ռամիշվիլի՝ ներքին գործոց նախարար, Գ. Գէորգաձէ՝ ռազմական նախարար, օդնական ունենալով զօրավար Օդիշելիձէին, որ միաժամանակ Անդրկովկասեան բանակի հրամանատարն էր (զօրավար Լեբեդինսկին Կովկասեան ճակատի ընդհանուր հրամանատարն էր)։ Մնացած երկրորդական նախարարութիւնները բա-

---

*) Caucasian Battlefields, By W. E. D. Allen and Paul Muratoff. Cambridge, London University Press, 1953.

ժանուել էին դարձեալ վրացիների, հայերի եւ ազերիների միջեւ հետեւեալ կերպով.— Ելեւմտական նախարար՝ Ա. Խատիսեան, հաղորդակցութեան՝ Խ. Մելիք-Ասլանով (ազերի), արդարադատութեան՝ Ֆ. Խան-Խոյսկի (ազերի), երկրագործութեան՝ Ն. Խոմերիկի (վրացի), հանրային կրթութեան՝ Ն. Ուսուպբէկով (ազերի), առեւտրի եւ արդիւնաբերութեան՝ Հ. Հաջինսկի (ազերի), պարենաւորման՝ Աւ. Սահակեան, խնամատարութեան՝ Յ. Քաջազնունի, աշխատանքի՝ Ար. Երզնկեան (ոչ հայերի կողմից, այլ վրացիների, իբրեւ անդամ վրաց սոցիալ-դեմոկրատ կուսակցութեան), եւ պետական վերահսկիչ՝ Ի. Հայդարով (ազերի):

ԿԱՐՍԻ ԱՆԿՈՒՄԸ

Անկարող լինելով վրացական զէնքի ոյժով պաշտպանել Վրաստանը արշաւող Թուրք բանակի դէմ, որ արդէն սկսել էր թափանցել Վրաստանի խորերը, Անդրկովկասեան Դաշնակցային Հանրապետութեան կառավարութեան վրացի նախարարները որոշել են անմիջապէս Կարսը զիջել Թուրքերին, կասեցնելու համար Թուրքական արշաւը Վրաստանի դէմ:

Ապրիլ 23-ին, երբ հայկական ոյժերը կուում էին Սամաւաթ-Հարամ Վարդան (Ղարաչորան), Բողկալէ եւ Վլադիկարս ճակատի վրայ, հայկական ճակատի հրամանատար զօրավար Թ. Նազարբէգեանը ստանում է երեք հեռագիր,— մէկը Ա. Զխենկելիից, որով Զխենկելին հաղորդում է, որ Անդրկովկասը անկախ Հանրապետութիւն է հռչակուած եւ ինքը վարչապետ է նշանակուած, իսկ միւս երկուսը ռազմական նախարարի օգնական Օդիշելիձէից, որոնցով Օդիշելիձէն հրահանգում է զօրավար Նազարբէգեանին անյապաղ բանակցութեան մէջ մտնել ճակատի Թուրք հրամանատարութեան հետ, զինադադար կնքել եւ ապրիլ 25-ի կէսօրուայ մինչեւ ժամը երկուսը Կարսը յանձնել Թուրքերին, իսկ մինչեւ ապրիլ 28-ը յետ քաշել հայկական ոյժերը Ախուրեանի ձախ ափը:

Ապրիլ 25-ին մինչեւ կէսօրուայ ժամը երկուսը, մեր ոյժերը քաշուեցին Կարսից, որ, պաշարման դէպքում, մասնագէտ զինուորականների կարծիքով, կարող էր երկու շաբաթից մինչեւ

մէկ ամիս դիմանալ։ Իսկ այդ ճակատագրական օրերում մեր ոյժերի շահած ամէն մի օրը, ձեռք բերած ամէն մի յաջողութիւնը կարող էր բախտորոշ դեր կատարել հայ ժողովրդի գոյութեան պայքարի մէջ։

Կարսը Թուրքերին յանձնելու մէջ վրացի սոցիալ-դեմոկրատ նախարարների կատարած դաւադիր դերը պարզուեց իր ամբողջ մերկութեամբ Կարսի յանձնումին յաջորդած օրերում։

Այդ դաւի ծալքերը բանալու տեսակէտից փաստական ծանրակշիռ վկայութիւն է տալիս Կովկասեան ռազմաճակատի ընդհանուր սպայակոյտի նախկին ենթապետ զօրավար Գ. Ղորղանեանը*) «Հայերի մասնակցութիւնը Համաշխարհային Պատերազմին Կովկասեան Ռազմաճակատի վրայ» աշխատութեան մէջ։

«Կարսի անկումը» գլխի տակ զօրավար Գ. Ղորղանեանը գրում է.

«Ապրիլ 23-ի առաւօտեան Հայկական Զօրամարմնի (կորպուսի) մասերը կենտրոնացած էին հետեւեալ ճակատի վրայ. Սամաւաթ գիւղ-Հարամ Վարդան գիւղ-բարձունք Բէօյիւք Թէփէ-բարձունք Գիւնէյ-բարձունք Աղաբաբա-Գանը Բէօյ գիւղ։ Այս գիծը գտնւում էր անմիջապէս Կարսի ամրութիւնների շրջանի մօտ։

Հայ զօրքերը չփման մէջ էին թշնամու հետ, եւ ամբողջ ճակատի վրայ կռիւը սկսել էր բռնկուել, երբ ժամը մէկ եւ կէսին զօրամարմնի հրամանատար զօր. Նազարբէգեանը ստացաւ հետեւեալ երեք հեռագիրները»։

Ապա զօր. Ղորղանեանը տալիս է Զխենկելիի հեռագիրը, որով Զխենկելին հաղորդում է եւրոպական պետութիւններին Անդրկովկասը անկախ Հանրապետութիւն հռչակուելու եւ իրեն վարչապետ նշանակելու մասին։

Երկրորդ հեռագիրը զօր. Օդիշելիձէից է, որ ասում է.

«Հաղորդում եմ Ձեզ ի դիտութիւն, որ Անդրկովկասեան Սէյմը ապրիլ 22-ի իր նիստի մէջ հռչակել է Անդրկովկասի կատարեալ անկախութիւնը։ Կազմուած է նոր դահլիճ Զխենկելիի գլխաւորութեամբ եւ նրան յանձնուած է շարունակել հաշտութեան բանակցութիւնները Թուրքերի հետ։ Կառավարութիւնը

---

*) Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան կողմից զօր. Գ. Ղորղանեանը նշանակուած էր զինուորական խորհրդական Հայաստանի Խաղաղութեան Պատուիրակութեան Փարիզում։

հրամայում է Ձեզ անյապաղ համաձայնութեան գալ Ձեր դիմաց գտնուող Թուրք զինուորական իշխանութեանց հետ՝ ամբողջ ճակատի վրայ պատերազմական գործողութիւնները դադարեցնելու մասին, սկսած այսօրուան ժամը 5–ից։ Ներկայ հրամանի կատարման եւ պատերազմական գործողութիւնների դադարեցման մասին հեռագրեցէք ուղղակի ինձ, իսկ պատճէնը՝ ընդհանուր հրամանատարին։ Այս հեռագրից անմիջապէս յետոյ կ'ուղարկեմ Ձեզ մի հեռագիր Վեհիբ փաշայի անուան։ Թող զօր. Նազարբէգեանը հաղորդէ այն ըստ պատկանելոյն ռադիոյի միջոցով, իսկ զօր. Գարայեւը՝ բանաձնացի միջոցով ուղիղ հեռագրաթելով Բաթումից Տրապիզոն։ 23 ապրիլ, 1918, թիւ 9։ Պատերազմական նախարարի պաշտօնատար զօր. Օդիշելիձէ»։

Զօր. Օդիշելիձէի երկրորդ հեռագիրը, ուղղուած Հայկական Զօրամարմնի հրամանատար զօր. Նազարբէգեանին եւ Վրացական Զօրամարմնի հրամանատար զօր. Գարայեւին ասում է.

«Անյապաղ հաղորդեցէք Վեհիբ փաշային իմ հետեւեալ հեռագիրը. Կովկասեան ճակատի Թուրք բանակների ընդհանուր հրամանատար Ֆերիդ Մէհմէդ Վեհիբ փաշային։ Պատիւ ունեմ ծանուցանելու Ձերդ Գերազանցութեան, թէ՝ համաձայն վարչապետ Զիմենկելիի հեռագրի, որ ուղարկուած է Ձեզ 1918 ապրիլ 23–ին եւ հաւանօրէն արդէն ստացուած է Ձեր կողմից, ես հաճոյքը ունեցայ հաղորդելու Անդրկովկասի գործող զօրքերին նոր Անդրկովկասեան կառավարութեան հրամանը՝ դադարեցնել ամբողջ Անդրկովկասեան ճակատի վրայ պատերազմական գործողութիւնները, սկսած ապրիլ 23–ի ժամը 5–ից, համաձայնութեան գալով դիմակաց Թուրք իշխանութեանց հետ։ Ցոյս ունիմ որ Ձերդ Գերազանցութիւնը, յանուն յառաջիկայ հաշտութեան բանակցութիւնների յաջողութեան եւ մեր ժողովուրդների ապագայ բարեկամութեան, նոյնպէս կը հրամայէք Ձեր զօրքերին անմիջապէս դադարեցնել ռազմական գործողութիւնները։ 23 ապրիլ 1918, Թիֆլիս։ Խնդրեմ ընդունեցէք խորին եւ սրտագին յարգանքներիս հաւաստիքը։ Պատերազմական նախարարի պաշտօնակատար զօր. Օդիշելիձէ։»

Ինչպէս տեսանք, Անդրկովկասեան Սէյմի ապրիլ 22–ի նիստի մէջ Զիմենկելիին պաշտօն տրուեց՝ կազմել դահլիճը, որին յանձնարարուում էր շարունակել հաշտութեան բանակցութիւնները։ Սակայն դահլիճը կազմուեց միայն ապրիլ 26–ին եւ նոյն օրը ներկայացաւ Սէյմին, ստանալով վստահութեան քուէ։ Այսպիսով, վերոյիշեալ հեռագիրները (ապրիլ 23–ին) թէպէտ խօսում

են կառավարութեան անունից, իրապէս պէտք է նկատուեն առանձին անհատների գործողութիւններ, վասնզի Զխենկելիի կառավարութիւնը այդ պահուն տակաւին գոյութիւն չունէր։

«Փոխանակ զինադադարի բանակցութիւնները վարելու ընդհանուր հրամանատարի միջոցով, որի հետ նոյնիսկ չէին խորհրդակցել, ռազմական գործողութիւնները ապրիլ 23-ին ժամը 5-ին դադարեցնելու հրամանը ուղարկուած էր կրտսեր զօրամարմինների հրամանատարներին, երբ տակաւին երաշխաւորութիւն չէր ստացուել Թուրք հրամանատարութիւնից, թէ նա էլ նոյն միջոցին պիտի դադարեցնէ գործողութիւնները։ Զօր. Օ-դիշելիձէն Վեհիբ փաշային ուղարկած իր հեռագրի մէջ միայն յոյս է յայտնում, թէ Թուրք հրամանատարը եւս «յանուն յառաջիկայ հաշտութեան բանակցութիւնների յաջողութեան եւ մեր ժողովուրդների ապագայ բարեկամութեան նոյնպէս կը հրամայէ անմիջապէս դադարեցնել ռազմական գործողութիւնները»...

Հայկական ճակատի նկատմամբ այդ յոյսերը, դժբախտաբար, չարդարացան։ Եւ մինչ գործողութիւնների դադարեցման հրամանը այնտեղ ի կատար էր ածւում, տարաձայնուելով բոլոր զօրամասերի մէջ եւ խիստ բացասաբար աղդելով նրանց ոդիի վրայ, Թուրք զօրքերը շարունակում էին իրենց ռազմական շարժումները եւ դասաւորումները։

...

«Այս հեռագիրները չե՞ն պատկերացնում միթէ մի կացութիւն, որ անօրինակ է պատերազմական պատմութեան տարեգրութեան մէջ։ Կառավարութեան գլուխը դտնուող անձնաւորութիւնը (այն ժամանակ, երբ կառավարութիւնը տակաւին գոյութիւն չունէր), խախտելով կազմակերպութեան բոլոր հիմերը, հրաման է արձակում գործող զօրքերի հրամանատարին ռազմական գործողութիւնները դադարեցնելու եւ Թշնամու հետ զինադադար կնքելու մասին, չբացատրելով նրան ո՛չ զինադադարի դրդապատճառները, ոչ էլ նպատակը, ու միաժամանակ լուր է տալիս Թուրք ընդհանուր հրամանատարին, Թէ համաձայն է առանց որեւէ պայմանի պարպել շրջանի առաջնակարդ բերդը»։

Հետաքրքրական է այս առիթով յիշել անդրկովկասեան կառավարութեան ելեւմտական նախարար Ֆ. Կարճիկեանի եւ զօր. Նաղարբէգեանի միջեւ ապրիլ 24-ի ժամը 21-ին ուղիղ հեռագրաթելով տեղի ունեցած խօսակցութիւնը.

«Կարճիկեան.— Կարծո՞ւմ էք, արդեօք, որ Կարսի ճակատագիրը կանխորոշուած է եւ առհասարակ ի՞նչ պէտք է անել,

դրութիւնը փրկելու համար։ Պէտք է ասեմ, որ վերջին երեք օրուան ընթացքին, կառավարութեան չգոյութեան պատճառով, կարգադրութիւնները կատարւում էին անպատասխանատու անձերի կողմից, եւ դուցէ այդ է պատճառը, որ գործը կործանուեց։ Կարելի չէ՞, արդեօք, մի բան անել դրութիւնը փրկելու համար եւ մասնաւորապէս՝ ի՞նչ պէտք է անել։

«Զօրավար Նազարբէգեանը պատասխանում է.— Դժբախտաբար շատ ուշ հաղորդեցիք ինձ Ձեր դաղափարները։ Պատերազմական նախարար Օդիշելիձէի միջոցով ես ստացայ կառավարութիւնից բացորոշ հրաման՝ դադարեցնել Կարսի մօտ ռազմական գործողութիւնները եւ թոյլ տալ թուրքական զօրամասերին մօտենալ Կարսի ամրութիւններին երկու վերստ (քիլոմետր)։ Իսկ այժմ տեղի են ունենում բանակցութիւններ Կարսը պարպելու մասին։ Միակ բանը, որով այս պահուն կարող էք օգնել այն է, որ կառավարութեան միջոցով աղդէք Վեհիբ փաշայի վրայ, որպէսզի Կարսի պարպման պայմանաժամը մի ամսից պակաս չտրրուի։ Վախենում եմ, որ թուրքերը առաջարկեն դաժան պայմաններ, որոնց, դժբախտաբար, ստիպուած լինենք համաձայնելու, որովհետեւ զինադադարը մեր դաշտային մասերի մէջ կազմալուծում է առաջ բերել։ Մեզ ոչինչ յայտնի չէր, թէ ինչ է կատարւում այդտեղ, Թիֆլիսում։ Յայտնի էր միայն, որ կազմուած է նոր կառավարութիւն, բայց, դժբախտաբար, ձեզնից ոչ ոք այս օրերի ընթացքում չլուսաբանեց կացութիւնը»։

Ստեղծուած կացութիւնը աւելի լուսաբանելու համար պէտք է նկատի առնել, որ երբ Կարճիկեանն ասում է «վերջին երեք օրուան ընթացքին», դա նշանակում է սկսած ապրիլ 22-ից, երբ Սէյմը յանձնարարել է Զխենկելիին կազմել իր դահլիճը, եւ մինչեւ ապրիլ 24-ը, երբ Զխենկելին դեռ չկազմուած եւ Սէյմից չվաւերացուած իր դահլիճի անունով, հայ ժողովուրդի համար ամենաճակատագրական կարգադրութիւններն է արել։ Ապրիլ 23-ին, ինչպէս տեսանք, Զխենկելին հայկական բանակի հրամանատարութեան գլխի վրայից զինադադար է կնքել թուրքերի հետ եւ հրահանդել զօրավար Նազարբէգեանին՝ Կարսը թուրքերին յանձնել։ Ս. Կարճիկեանը ելեւմտական նախարար էր Զխենկելիի կառավարութեան նախորդի՝ Ե. Գեղեչկորիի դահլիճին, որ հրաժարական էր տուել ապրիլ 22-ին, ճամբայ բանալու համար Զըխենկելիին, որի ձեռքով պիտի գործադրուէր վրացի սոցիալ-դեմոկրատ նախարարների մշակած ծրագիրը թուրքերի հետ հաշտութիւն կնքելու մասին։ Թէեւ Գեղեչկորիի դահլիճը հրաժարա-

կան էր տուել, բայց Զիմենկելիի դահլիճը դեռ կազմուած չէր, եւ Գեղեչկօրիի կառավարութեան անդամ Խ. Կարճիկեանը իրաւունք ունէր կապ հաստատել հայկական բանակի հրամանատար զօրավար Նազարբէգեանի հետ, Կարսի կացութեան մասին տեղեկութիւն ստանալու: Բայց այդ կապը հաստատել չի յաջողուել ո՛չ Կարճիկեանին եւ ոչ էլ Գեղեչկօրիի դահլիճի անդամ միւս հայ նախարարներին: Հաղորդակցութեան նախարարութիւնը վրացիների ձեռքը լինելով, հայ նախարարներին, այս ու այն պատրուակով, արգելուել է հեռադրաթելով կապուել Կարսի հետ մինչեւ ապրիլ 24-ը, երբ Զիմենկելին թուրքերի հետ զինադադար էր կնքել եւ Կարսը թուրքերին յանձնելու հրաման արձակել: Ահա դրանից յետոյ է, որ Խ. Կարճիկեանին թոյլ է տրուել կապուել զօրավար Նազարբէգեանի հետ:

Շարունակելով վերլուծել Կարսը թուրքերին յանձնելու համար կազմակերպուած դաւը, զօրավար Գ. Ղորղանեանը գրում է.

«Ճիշդ է, որ Սէյմը ընդունեց Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը եւ պաշտօն տուեց կազմուելիք կառավարութեան՝ վարելու հաշտութեան բանակցութիւնները. ճիշդ է նաեւ, որ Հայկական Զօրամարմնի եւ Կարսի բերդի վիճակը ծանր էր. բայց պատերազմը շարունակւում էր. ու եթէ ստեղծուած պայմանների թելադրութեամբ որոշուած էր բերդը թշնամուն յանձնել, անհրաժեշտ էր ջանալ կանխաւ որոշ զիջումներ ստանալ թուրքերից, որոնք հակառակ պարադային պիտի դտնուէին բերդը զրոհով գրաւելու հարկադրանքի տակ:

Նկատի ունենալով ոյժերի փոխյարաբերութիւնը եւ բարոյական վիճակը, բերդը պիտի ընկնէր, բայց թուրքերը մեծաքանակ զոհեր պիտի տային, եւ այդ պիտի ստիպէր նրանց՝ կարեւոր զիջումներ անել, այն է՝ երկարաձգել Կարսի պարպման պայմանաժամը եւ թոյլ տալ, որ հայկական զօրքերը անարգել կերպով նահանջեն մինչեւ Բրեստ-Լիտովսկի պայմանագրով որոշուած սահմանը»:

«Այս եզրակացութիւնը հաստատում է ճակատի սպայակոյտի պետ գնդապետ Շատիլովի եւ Հայկական Զօրամարմնի սպայակոյտի պետ զօրավար Վրիշինսկիի միջեւ ուղիղ հեռադրաթելով տեղի ունեցած խօսակցութիւնով», շարունակում է զօր. Գ. Ղորղանեանը: «Գնդապետ Շատիլովը խօսում էր վարչապետ Զիմենկելիի կողմից, իսկ զօրավար Վրիշինսկին՝ զօրավար Նազարբէգեանի կողմից:

«Գնդապետ Շատիլով.— Զեկուցանում եմ, որ վարչապետ

Տիկին Լուսիա Սէֆէրեան

Նստած ձախ անկիւնում տիկին Հադիա (Սաթենիկ) Զելէբի, ոտքի կեցածները իր եւ դոկտոր Զելէբիի զաւակները, իսկ աջ անկիւնում տիկին Սաթենիկի մայրը Անթառամ Գրիգորեան:

Դոկտոր Մուստաֆա Զելէբի 1956–ին

Զխենկելին խնդրում է Զօրամարմնի հրամանատարից եւ Զեղ-նից յայտնել այժմ իսկ Ձեր տեսակէտը, թէ իր՝ Զխենկելիի՝ կողմից Կարսի պարպման մասին եղած կարգադրութիւնը համապատասխանո՞ւմ է արդեօք ստեղծուած պայմաններին. այսինքն՝ կարո՞ղ է նա ընդունել, որ Կարսի պարպման մասին Թուրքերի առաջարկները մեր կողմից մերժուելու դէպքում՝ նրանք միեւնոյնն է, մօտ օրերում պիտի տիրանային բերդին, կամ թէ այսօր պիտի դասաւորուէին այն եղանակով եւ պիտի դրաւէին այնպիսի նպաստաւոր կէտեր, որոնք պիտի որոշէին Կարսի ճակատագիրը: Կարելի՞ է յուսալ, որ եթէ կառավարութիւնը վճռէ մերժել Թուրքերի կողմից այսօր անստորագիր դրութիւնով ներկայացուած առաջարկը, մեր մասերը յաջողութեամբ եւ մեծ յամառութեամբ պիտի պաշտպանեն Հարամ Վարդան–Ախբաբա գիծը: Երրորդ հարց. մեր մասերը այսօր առաւօտեան տրուած հրամանին ենթարկուելո՞վ է որ ետ քաշուեցին, թէ Թուրքերի յարձակման սպառնալիքի տակ:

«Զօրավար Վրիշինսկի.— Պատասխանում եմ Ձեր հարցումներին՝ նրանց մասին Զօրամարմնի հրամանատարին զեկուցանելուց յետոյ: Բէգլի–Ահմէդի ջոկատի կողմից դրաւուած առաջաւոր դիրքի ճակատագիրը որոշուած էր երէկ զօր. Օդիշելիձէի կարգադրութեամբ՝ ռազմական գործողութիւնները դադարեցնելու եւ բանագնացներ ուղարկելու մասին: Այդ կարգադրութիւնը բացասօրէն ներգործեց զօրքերի վրայ: Սակայն դա չշօշափեց Կարսի բերդապահ զօրքը, ու հաւանական է, որ Կարսը դիմանար երկու շաբաթից ոչ պակաս, թերեւս նոյնիսկ մի ամբողջ ամիս:

«Եթէ ժամանակին մերժուէին Թուրքական պայմանները այսօր ընդունելու առաջարկը, այդ տակաւին կարող էր փրկել կացութիւնը, եւ Կարսի բերդը անտարակոյս յետ կը մղէր Թուրքերին. դեռ այսօր էլ բերդը շատ լաւ պաշտպանւում էր, մինչեւ որ ստացուեց վարչապետ Զխենկելիի եւ զօր. Օդիշելիձէի կարգադրութիւնը՝ բանագնացներ ուղարկել ճշդելու համար բերդի պարպման պայմանները: Այս բանը բերդապետին*) յայտնելուց յետոյ կռիւը դադարեց: Զօրքերը Աղաջ–Ախբաբա–Հարամ Վարդան առաջաւոր դիրքից հեռացան, ենթարկուելով հրամանի, թէեւ եղան դէպքեր, երբ մի քանի մասեր ինքնակամօրէն լքեցին իրենց դիրքերը»:

---

*) Ռուս զօրավար Դէեւ: Վ. Ա.

Այսպէս յանձնուեց Կարսը Թուրքերին Ա. Զիւենկելիի կազմակերպած յանդուգն դաւի իբրեւ հետեւանք։

Ապրիլ 25-ի կէսօրուայ մինչեւ ժամը երկուսը մեր ոյժերը քաշուեցին Կարսից դէպի Ալեքսանդրապոլ։ Կարսից մեկնող վերջին զօրամասի հետ մեկնեց այս տողերի հեղինակը։ Ապրիլ 28-ին հայկական դաշտային բանակը եւ Կարսի բերդապահ զօրքը անցան Ախուրեանի ձախ ափը եւ բանակ զարկին Ալեքսանդրապոլում։

Կարսը Թուրքերին յանձնելով վրացի նախարարները փրկեցին Վրաստանը եւ Թշնամուն յանձնեցին դաշնակից հայութիւնը։ Կարսի տակ կնքուած զինադադարը Թուրքերը յարգեցին վրացական ճակատի վրայ, բայց ոտքի տակ տուին հայկական ճակատի վրայ։

ԱՆԴՐԱՆԻԿԸ ԵՒ 1918-Ի ՄԱՅԻՍԵԱՆ ԿՌԻՒՆԵՐԸ

Էրզրումի անկումից յետոյ Թիֆլիս մեկնած Անդրանիկին Հայոց Ազգային Խորհուրդը առաջարկեց մի նոր զօրամաս կազմակերպել։

Անդրանիկ կազմակերպեց 3000 հոգուց բաղկացած մի զօրագունդ —բրիգադ — որ մայիսի մէկին արդէն պատրաստ էր, եւ բռնել էր Կարսից նահանջած հայկական ոյժերի ծայրայեղ աջ թեւը Գիւլլու Բուլաղում, Վրաստանի սահմանին մօտիկ։

Մայիս 15-ին Ալեքսանդրապոլի դիմաց, Ախուրեանի աջ ափին բանակած Թուրք բանակը, խախտելով զինադադարը, անակնկալ յարձակումով դրաւեց Ալեքսանդրապոլը եւ հայ-Թուրքական ճակատի վրայ ռազմական գործողութիւնները վերսկսուեցին։

Թուրքական անակնկալ յարձակումից յանկարծակիի եկած հայկական ոյժերը դատարկեցին Ալեքսանդրապոլը եւ հալճեալով նահանջեցին՝ մէկ կողմից դէպի Համամլի- Ղարաքիլիսա, իսկ միւս կողմից դէպի Արարատեան Դաշտ։

Մայիս 21-ին Թուրքերը դրաւեցին Համամլի կայարանը Ալեքսանդրապոլ-Թիֆլիս երկաթուղագծի վրայ։ Հայկական ոյ-

ժերը զօրավար Թ. Նազարբէգեանի հրամանի տակ քաշուեցին եւ ճակատ յարդարեցին Ղարաքիլիսայի տակ:

Միաժամանակ թուրքական ոյժերը կենտրոնացան Արարատեան Դաշտում, Սարդարապատի շրջանում, ուր հայկական ոյժերին հրամայում էր զօրավար Պ. Սիլիկեանը, եւ Բաշ Արարանի դէմ, որ պաշտպանում էր Դրօն:

Թէ՛ Սարդարապատի եւ թէ Բաշ Արարանի ուղղութեամբ թուրքերը սպառնում էին Երեւանին: Այդ երկու ճակատների վրայ էլ մայիսեան բախտորոշ կռիւները պսակուեցին հայկական զէնքի յաղթանակով:

Մայիս 21-ին թուրքերը յարձակուեցին զօրավար Սիլիկեանի ոյժերի վրայ: Ճակատամարտը տեւեց մինչեւ Մայիս 23-ը, երբ Սիլիկեանի բանակը ոչ միայն կարողացաւ պահել իր գրաւած դիրքերը թշնամու դրոհների դէմ, այլեւ մայիս 23-ին անցաւ հակայարձակման:

Մեր զէնքի համար նպաստաւոր կռիւները տեւեցին մինչեւ մայիս 28-ը, երբ զօրավար Սիլիկեանի զօրքերը ոչ միայն վերագրաւեցին Սարդարապատը, այլեւ քշեցին թուրքական բանակը մինչեւ Մաստարա եւ Անի, Սարդարապատից 30 մղոն դէպի հիւսիս, Ալեքսանդրապոլի ուղղութեամբ:

Հայկական բանակի սպայակոյտի մայիս 28-ի պատերազմական հաղորդագրութիւնը ասում է.

«Թուրքերը երեք օրուայ կռիւներից յետոյ ջարդուած են եւ նահանջում են հապճեպով: Նրանց զօրամասերը բաժանուած են երեք խմբերի: Առաջինը՝ Ալագեօզ կայարանից նահանջում է դէպի Անի կայարանը, երկրորդը՝ Ղըրմզլու եւ երրորդը՝ Աղջա-Ղալա: Մեր զօրամասերը քայլ առ քայլ հետապնդում են նրանց: Ոգեւորութիւնը աներեւակայելի է»:

Նոյն օրերում տաք կռիւներ տեղի ունեցան Բաշ Արարանի շրջանում: Մայիս 24-ին թուրքերը գրաւեցին Բաշ Արարանը: Մայիս 25-ին այդ ճակատի հրամանատար Դրօն դիմեց հակայարձակման եւ վերագրաւեց Բաշ Արարանը: Կատաղի կռիւները շարունակուեցին մինչեւ մայիս 29-ը, երբ Դրոյին յաջողուեց յետ մղել թուրքական ոյժերը Բաշ Արարանից դէպի հիւսիս:

1918-ի մայիսեան այդ ճակատագրական օրերում ամենակատաղի ճակատամարտը տեղի ունեցաւ Ղարաքիլիսայի տակ, որտեղ հայկական ոյժերին հրամայում էր հայկական բոլոր զինուած ոյժերի ընդհանուր հրամանատար զօրավար Թովմաս Նազարբէգեանը:

Թուրքերը իրենց ոյժերի մեծ մասը նետել էին Ղարաքիլիսայի հայկական բանակի դէմ, գրաւելու համար Ղարաքիլիսա–Դիլիջան–Իջեւան–Աղստաֆա գիծը, օր առաջ Բաքու հասնելու համար:

Հայկական ճակատի ծայրագոյն աջ թեւը Գիւլլու Բուլաղում դրուած էր Անդրանիկի զօրամասի պաշտպանութեան տակ: Մայիս 19–ին Անդրանիկի զօրամասը քաշուեց Գիւլլու Բուլաղից Վորոնցովկա եւ այնտեղից էլ Ջալալ Օղլի (այժմ Ստեփանաւան), ուր հասաւ մայիս 22–ին: Թուրքերը գրաւեցին Գիւլլու Բուլաղը եւ սկսեցին սպառնալ հայկական բոլանդակ աջ թեւին:

Մայիս 25–ին Անդրանիկը իր զօրամասով Ջալալ Օղլիից անցաւ Ցովհ. Թումանեանի հայրենի գիւղը՝ Դսեղ՝ (այժմ Թումանեան), ուր անշարժ մնաց մինչեւ մայիս 27–ը:

Մինչ այդ, մի օր առաջ, մայիս 26–ին սկսուել էր Ղարաքիլիսայի արիւնահեղ ճակատամարտը: Մայիս 27–ին զօրավար Նազարբէգեանի զօրքերը կորցրին Բզովդալ գիւղը եւ նոյնանուն լեռը, ու հայկական աջ թեւը քաշուեց Շահալի երկաթուղային կայարանը, ընդամէնը 3–4 մղոն հեռու Դսեղ գիւղից, ուր գտնուում էր Անդրանիկը իր զօրամասով:

Ղարաքիլիսայի ճակատամարտը տեւեց երկու օր, մայիս 26–ից մինչեւ մայիս 28–ը, երբ հայկական ձախ թեւն էլ տեղի տուեց թուրքական գերազանց ոյժերի առջեւ եւ թշնամին դրաւեց Վարթանլու գիւղը Ղարաքիլիսայից Դիլիջան տանող խճուղիի վրայ: Երկու օրուայ արիւնահեղ կռիւներից յետոյ զօրավար Նազարբէգեանը ստիպուած եղաւ յետ քաշել իր ոյժերը Ղարաքիլիսայից Դիլիջան, ուր հասաւ մայիս 29–ին:

Մայիս 30–ին իր զօրամասով Դսեղից Դիլիջան անցաւ նաեւ Անդրանիկը:

Մինչ այդ Թիֆլիսում տեղի ունեցած քաղաքական ծանրակշիռ դէպքերը եկան վերջ դնելու հայ–թուրքական պատերազմին:

Դեռ մարտ ամսին՝ Անդրկովկասեան Սէյմի կառավարութեան եւ Թուրքիայի միջեւ սկսուել էին հաշտութեան բանակցութիւններ Տրապիզոնում: Մայիսի վերջին օրերում այդ բանակցութիւնները Տրապիզոնից Բաթում փոխադրուեցին: Բաթումում Թուրքերը պահանջ էին դրել, որ իրենք հաշտութիւն կը կնքեն ոչ թէ Անդրկովկասեան կառավարութեան հետ, այլ Անդրկովկասի երեք ժողովուրդներից ամէն մէկի հետ առանձին: Վրացիները, որ ըստ երեւոյթին ապահովել էին իրենց, համա-



Ղարաբիլիսայի ճակատամարտի ռազմադաշտի քարտէզը առնուած W. E. D. Allen and Paul Muratoff-ի Caucaian Battlefields գրքից:

ձայնութեան դալով գերմանների եւ Թուրքերի հետ, մայիս 26–ին Սէյմի նիստի մէջ առաջարկեցին մի բանաձեւ, որով «Սէյմը արձանագրում է Անդրկովկասի քայքայման փաստը եւ յայտարարում չեղեալ իր լիազօրութիւնները»:

Մի քանի ժամ յետոյ, միեւնոյն շէնքում, ուր տեղի էր ունեցել Սէյմի վերջին նիստը, նիստ գումարեց Վրաց Ազգային Խորհուրդը եւ յայտարարեց Վրաստանի անկախութիւնը: Յաջորդ օրը Թաթարների Ազգային Խորհուրդը յայտարարեց Ազրբէյջանի անկախութիւնը:

Հայոց Ազգային Խորհրդին ուրիշ ելք չէր մնում, բայց եթէ առնել նոյն քայլը: Մայիս 28–ին Հայոց Ազգային Խորհուրդը որոշեց Բաթում ուղարկել հաշտարար պատուիրակութիւն բանակցելու եւ հաշտութիւն կնքելու Թուրքերի հետ՝ յանուն անկախ Հայաստանի: Մայիս 30–ին Բաթումում կնքուեց զինադադար Թուրքերի հետ, իսկ յունիս 4–ին ստորագրուեց խաղաղութեան դաշնագիրը Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ:

Մայիս 30–ին իր զօրամասով Դիլիջան հասած Անդրանիկը մերժեց ճանաչել Բաթումում կնքուած զինադադարը եւ զօրավար Նազարբէգեանի, իբրեւ հայկական բոլոր զինուած ոյժերի հրամանատարի իշխանութիւնը եւ քաշուեց նախ Նոր Բայազէտի շրջանը, եւ այնտեղից էլ Դարալագեազ դաւառը:

Դարալագեազից Անդրանիկը իր զօրամասով եւ բազմահազար գաղթականութեան հետ անցաւ պարսից սահմանը, երթալ միանալու համար Պարսկաստանում գործող անգլիական բանակին: Բայց Խոյ քաղաքի շրջակայքում Թուրք բանակի դիմադրութեան հանդիպելով, Անդրանիկը նահանջեց դէպի Նախիջեւան եւ այնտեղից էլ, 1918–ի յուլիսին անցաւ Զանգեզուր: Զանգեզուրը այդ ժամանակ կռւում էր Ազրբէյջանից ներխուժող ազրբէյջանեան բանակի եւ տեղական Թաթարների դէմ, որոնք աշխատում էին Զանգեզուրը ենթարկել Ազրբէյջանի իշխանութեան:

Անդրանիկը հաղիւ էր Զանգեզուր հասել, երբ, օգոստոս ամսին, ազրբէյջանեան բանակը, միացած օսմանեան Թուրք սպաների հրամանի տակ կազմակերպուած տեղական Թաթար ոյժերի հետ, յարձակուեց Զանգեզուրի վրայ:

Անդրանիկը, զանգեզուրցիների տեղական կռուող ոյժերը միացնելով իր զօրամասին, ջարդեց Թուրք եւ Թաթար ոյժերը եւ դուրս քշեց Զանգեզուրից:

Թուրք եւ Թաթարական երկրորդ յարձակումը Զանգեզուրի

վրայ նոյեմբեր ամսին կրկին վերջացաւ թշնամու պարտութիւնով։

Թշնամուն Զանգեզուրում ջարդելուց յետոյ, Անդրանիկը, ընդառաջելով ղարաբաղցիների կոչին, շարժուեց դէպի Շուշի, ազատելու համար Ղարաբաղը Ազրբէյջանի բռնակալ տիրապետութիւնից։ Բայց դեռ Շուշի չհասած, անգլիացիները, որ արդէն Անդրկովկաս էին մտել, կասեցրին նրա արշաւը եւ ստիպեցին վերադառնալ Զանգեզուր։

Անդրկովկաս ոտք դնելու առաջին օրուանից սկսած անգլիացիները ամէն կերպ թիկունք կանգնեցին Ազրբէյջանին եւ աշխատեցին Ղարաբաղն ու Զանգեզուրը՝ մեր հինաւուրց Արցախն ու Սիւնիքը՝ ենթարկել Ազրբէյջանի տիրապետութեան։ Անգլիական զօրավար Թամսրնի հաւանութեամբ Ազրբէյջանը Ղարաբաղի եւ Զանգեզուրի ընդհանուր նահանգապետ նշանակեց հայատեաց եւ ջարդարար Խոսրով բէգ Սուլթանովին։ Ղարաբաղի հայութեան դիմադրական կորովը կոտրելու համար ազրբէյջանցիները, անգլիացիների ներկայութեամբ, քանդեցին եւ կոտրեցին մի քանի հայկական գիւղեր։ Զնայած ազրբէյջանցիների այդ բարբարոսութեան, անգլիացիները մինչեւ վերջ աշխատեցին հաղարամեակներով Հայաստանի մաս կազմած Արցախ — Ղարաբաղը դնել արիւնարբու Սուլթանովի իշխանութեան տակ։

Եւ յաջողեցրին։ Ազրբէյջանը իրեն միացրեց Հայկական Ղարաբաղը։

Նոյնը արեց երկու տարի յետոյ նաեւ Խորհրդային Ռուսաստանի կառավարութիւնը, Ղարաբաղը Ազրբէյջանին միացնելով եւ ջանալով նաեւ Զանգեզուրը կորզել Հայաստանից եւ ենթարկել Ազրբէյջանին։

Դա մէկն էր այն հաղուագիւտ դէպքերից, երբ աշխարհակալ Անգլիան եւ «բանուորա-գիւղացիական» Ռուսաստանը դաշնակցեցին, ոտքի տակ տալու մի փոքր ժողովրդի՝ հայութեան՝ անկապտելի իրաւունքը իր հինաւուրց հայրենիքի մի մասի վրայ։

Այդ միեւնոյն վիճակին պիտի ենթարկուէր նաեւ Զանգեզուրը, եթէ զանգեզուրցիները վճռած չլինէին իրենց կեանքի գնով պաշտպանել իրենց ծննդավայրը։

Ղարաբաղից Զանգեզուր վերադարձած Անդրանիկը մնաց Զանգեզուրում մինչեւ 1919-ի փետրուար ամսի վերջը, երբ բացւում են Սիւնեաց Աշխարհից դէպի Արարատեան Դաշտ տանող ճանապարհները։ Այդ ժամանակ, անգլիացիների պնդումի վրայ, Անդրանիկը համաձայնեց հեռանալ Զանգեզուրից։ Անգլի-

ական բանակի սպայ Գիբլինի ուղեկցութեամբ, Անդրանիկը իր զօրամասով Զանգեզուրից իջաւ Էջմիածին, ուր մի առժամանակ մնալուց յետոյ, զօրացրեց իր զօրադունդը, զէնքերն ու ռազմամթերքը յանձնեց Գէորգ Ե. Կաթողիկոսին, ապա, Թիֆլիսի վրայով անցաւ արտասահման:

Զանգեզուրից Անդրանիկի հեռանալուց յետոյ Հայաստանի կառավարութեան կողմից ընդհանուր կառավարչի պաշտօնով Զանգեզուր ուղարկուեց հայկական բանակի փոխ գնդապետ Արսէն Շահմազեանը: Շատ չանցած Զանգեզուր հասաւ նաեւ Գ. Նժդեհը: Ա. Շահմազեանն ու Գ. Նժդեհը կազմակերպեցին Զանգեզուրի ռազմական ոյժերը եւ քաղաքացիական վարչութիւնը:

Ադրբէյջանի ոտնձգութիւնները Զանգեզուրի վերաբերմամբ շարունակուեցին, քաջալերութեամբ անգլիացիների:

1919-ի նոյեմբերին ադրբէյջանեան բանակը Ադրբէյջանի կողմից, իսկ թաթարական հրոսակախմբերը Նախիջեւանի կողմից միաժամանակ յարձակում գործեցին Զանգեզուրի վրայ: Գնդապետ Արսէն Շահմազեանի եւ Գ. Նժդեհի ղեկավարութեամբ զանգեզուրցիները երկու ճակատի վրայ էլ ծանր պարտութեան մատնեցին թշնամուն, որ դերիներ, զէնք ու ռազմամթերք թողնելով հայերի ձեռքը, ջարդուած փախաւ կռուի դաշտից:

Ներքին թշնամուն ջնջելու գործը դեռ բաւական ժամանակ եւ ճիգ պահանջեց: Բայց, վերջ ի վերջոյ, զանգեզուրցիները յաղթական դուրս եկան այդ պայքարից եւ իրենց արիւնով ամրացրին հինաւուրց Սիւնիքի անքակտելի կապը մայր հայրենիքի՝ Հայաստանի Հանրապետութեան հետ:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԻՑ ՀԱԼԱԾՈՒԱԾ»

1919-ի ապրիլին ես Թիֆլիսում էի:

Ինչպէս միշտ, յաճախ լինում էի Ցոլհ. Թումանեանի տանը, որ շատ մօտ էր իմ բնակած տանը:

Մի օր, երբ Ցոլհ. Թումանեանի տանն էի, նրան մի հեռագիր բերին:

Թումանեանը կարդաց եւ ապա լնճ մեկնեց հեռագիրը:

Կարդացի.

«Վրաստանի արտաքին գործերի նախարար
Ե. Գեղեչկորիին Պատճէնը Յովհ. Թումանեանին
Շահալի կայարանից Թիֆլիս, Վոզնեսենսկայ փողոց, 18
Հալածուած Հայաստանի կառավարութիւնից, գալիս եմ ապաստանելու Վրաստանի հիւրընկալ հողը: Խնդրում եմ թոյլ տալ ինձ Թիֆլիս գալ: ԱՆԴՐԱՆԻԿ»:

Աչքերիս չէի հաւատում, այնքան ծանր, չչմեցնող էր այդ հեռագրի գործած տպաւորութիւնը:

Անդրանիկը հալածուած Հայաստանի կառավարութիւնի՞ց...

Բայց այդ էր ասում Անդրանիկի ստորագրութեամբ եկած հեռագիրը:

Վրաստանի կառավարութիւնը, անկասկած, պիտի չմերժէր Անդրանիկի խնդրանքը: Բայց ի՞նչ պիտի մտածէր Վրաստանի կառավարութիւնը եւ առհասարակ վրացի ժողովուրդը, որից գաղտնի պիտի չմնար այդ հեռագիրը:

Ի՞նչ պէտք ունէր Անդրանիկը այդպիսի հեռագիր տալու մի օտար կառավարութեան, եթէ նոյնիսկ միանգամայն ճիշդ լինէր իր գրածը: Մի՞թէ Վրաստանի կառավարութիւնը պիտի չընդունէր Անդրանիկին իր երկիրը, եթէ նա հալածուած չլինէր: Ի՞նչ էր հետապնդում Անդրանիկը այդ հեռագրով,— Վրաստանի կառավարութիւնը եւ վրացի ժողովուրդը դատաւո՞ր դարձնել իր եւ Հայաստանի կառավարութեան միջեւ:

Այս մտքերն էին դառնում գլխումս, երբ մեկնեցի Յովհ. Թումանեանի տնից:

Յաջորդ օրը ես կրկին գնացի Թումանեանի տունը, վստահ լինելով, որ Անդրանիկը այնտեղ կը լինի:

Շահալի կայարանը, որտեղից հեռագրել էր Անդրանիկը, 5–6 ժամուայ հեռաւորութեան վրայ է Թիֆլիսից: Եւ որովհետեւ Յովհ. Թումանեանը մէկն էր նրանցից, որոնց հետ սերտ բարեկամութիւն էր հաստատել Անդրանիկը, ուստի կասկած չունէի, որ Թիֆլիս հասնելուն պէս, առաջին հերթին նա պիտի այցելի Թումանեանին:

Սխալուած չէի:

Երբ ներս մտայ Յովհ. Թումանեանի աշխատանքի սենեակը, այնտեղ նստած էին Թումանեանը եւ Անդրանիկը:

Յովհ. Թումանեանը հիանալի պատմող եւ շատ հաճելի զրուցընկեր էր: Շատ լաւ պատմող եւ հաճելի խօսակից էր նաեւ Անդրանիկը:

Անդրանիկի մէջ Թումանեանին գրաւողը, ամէնից առաջ,

Անդրանիկի հայրենասիրութիւնը եւ հռչակուած ռազմիկ լինելն էր։

Անդրանիկը՝ իր հերթին՝ գրաւուել էր Յովհ. Թումանեանի չէնշող անձնաւորութիւնով, Թումանեանի նահապետական չէնութիւնով հարուստ տնով եւ բարեկամների առջեւ միշտ բաց դրոնով։ Գիտէր, որ Յովհ. Թումանեանը հռչակուած եւ սիրուած բանաստեղծ է,— եւ այդչափ միայն։ Անդրանիկը, առհասարակ, գրքի հետ շատ գլուխ չունէր եւ հազիւ թէ Թումանեանի գրածներից որեւէ բան կարդացած լինէր։

Ոտքից մինչեւ գլուխ ռազմիկը՝ մէկ կողմից, եւ ամէն ինչով բանաստեղծը՝ միւս կողմից, մտերիմ բարեկամներ էին դարձել։

«Սասունցի Դաւիթ»ի հեղինակ Յովհ. Թումանեանը Սասնոյ բարձունքների վրայ հերոսական պայքարներ մղած Անդրանիկի մէջ, անկասկած, Առիւծ Մըհերից եւ Թլոլ Դաւթից մի մաս էր տեսնում։ Իսկ Անդրանիկը, անտարակոյս, Թումանեանի մէջ տեսնում էր Սասնոյ Շէնի՞կ, թէ Սեմալ գիւղի ռէս Խէչոյի իմաստութիւնը, պարզութիւնը եւ խօսքի ու վարմունքի թովիչ դրաւչութիւնը։ Ռէս Խէչոյի մասին յաճախ համով-հոտով պատմութիւններ էր անում Անդրանիկը, երբ հոգին խաղաղ էր եւ տրամադրութիւնը գուարթ։

Բայց ռէս Խէչոյի մասին պատմութիւններ անող Անդրանիկը, որ ահա նստած է իմ դիմաց Թումանեանի աշխատանքի սենեակում, այլեւս անցեալին է պատկանում, ոչ շատ հեռու անցեալին, 1904-ին,— երբ առաջին անգամ տեսայ եւ ճանաչեցի նրան Թիֆլիսի Մոսկովսկայա փողոցի մեր բնակարանում։

Գրեթէ մի տարի էր, որ չէի տեսել Անդրանիկին։

Թէեւ ես մէկն էի այն սակաւաթիւներից, որոնց գործակցութիւնից զոհ էր մնացել Անդրանիկը եւ մենք բաժանուել էինք իրարից գրեթէ հարազատների պէս, բայց Թումանեանի տանը մեր հանդիպումը հեռու էր ջերմ լինելուց։ Պաշտօնական եւ պաղ եղաւ ինձ հետ Անդրանիկը։

Իմ ներս մտնելով Անդրանիկի եւ Թումանեանի մի պահ ընդհատուած խօսակցութիւնը վերսկսուեց։

Խօսողը Անդրանիկն էր, որ շարունակեց պատմել Զանգեզուրից իր էջմիածին գալը։ Նա պատմում էր, որ էջմիածին հասնելուց մի քանի օր յետոյ իր զինուորներից մի խումբ դնացած է եղել Երեւան գնումներ անելու եւ բարեկամների այցելելու։

«Լուր եկաւ ինծի, որ Երեւանի շուկային մէջ Դերոյի*) զինուորները յարձակած են իմ տղաներու վրայ, քանի մը հոգի սպաննած և քանի մը հոգի ալ վիրաւորած են: Այդ լուրն առնելուս պէս հրամայեցի, որ իմ զօրամասը զինաթափի ընէ Էջմիածնի պահակազօրը եւ ոստիկանութիւնը, կտրտել տուի Էջմիածինը Երեւանի հետ կապող հեռագրի եւ հեռախօսի թելերը եւ զօրամասս շարժեցի դէպի Երեւան: Թէեւ ես կտրած էի հաղորդակցութիւնը Էջմիածինի եւ Երեւանի միջեւ, բայց Երեւանի վրայ իմ քալելու լուրը ինձմէ առաջ հասած էր Երեւան: Վարդապետ մը, իմ պատրաստութիւնները տեսնելով, ձի մը հեծած, աճապարանքով լուրը Երեւան հասցուցած էր**): Ատոր վրայ երեւանցիները պատրաստուած են եղեր կռուելու իմ դէմ:

«Երբ իմ բանակով հասայ Երեւանի տակ, Զանգուի աջ ափը, վրանս զարնել տուի Սարդարի այդիին եռեւի բլուրին վրայ, դաշնակից պետութիւններու դրօշակներն ալ վրանիս առջեւ զարնել տուի:» Անդրանիկը շեշտեց այս վերջին նախադասութիւնը, հասկացնելու համար, որ հայկական դրօշակը չի պարզել:

«Լուր ղրկեցի Երեւան եւ պահանջեցի, որ իմ զինուորները սպաննողները պատժուին, հակառակ պարագային սպառնացի, որ պիտի մտնեմ Երեւան եւ իմ ձեռքով պատժեմ յանցաւորները:

«Երեւանէն եկան անգլիական եւ ֆրանսական զինուորական ներկայացուցիչները եւ ապահովցուցին դիս, որ իմ զինուորներէն ոեւէ մէկ սպաննուած չէ: Շուկայի մէջ կռուի ժամանակ մէկ երկուքը միայն թեթեւ վիրաւորուած են: Ու խնդրեցին որ Էջմիածին վերադառնամ:

«Համաձայնեցայ, բանակս քաշեցի եւ Էջմիածին վերադարձայ», լրացրեց իր պատմութիւնը Անդրանիկը:

Ես ապշած մնացի, ականջներիս չէի հաւատում:

Անդրանիկը իր զօրամասով արշաւել է Երեւանի վրայ եւ սպառնացել է կռուով գրաւել Երեւանը: Եւ ո՞ւմ դէմ էր պատրաստուել ուղղել իր դէնքը Անդրանիկը,— Հայաստանի կառավարութեա՞ն, այն կառավարութեան, որ կազմուած էր Անդրանիկի երէկուայ դաղափարակից ընկերներից եւ որոնց զօրավիդ էին կանգնել Անդրանիկի երէկուան զինակից ընկերները,— բարերդ-

---

*) Անդրանիկը Դերոյի անունը Դերո էր հնչում:

**) Այդ լուրը տանողը Գարեգին վարդապետ Յովսէփեանն է եղել, յետագային Գարեգին Ա. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ:

ցի Սեպուհը, տարօնցի Սմբատը, զէյթունցի Յովնանը, սասունցի Մուշեղը, Մանուկն ու Զօլօն եւ սեբաստացի Մուրադը, որ մի քանի ամիս առաջ ընկաւ Բաքուի կռիւների ժամանակ:

Մի՞թէ հաւատալու բան է Անդրանիկի այդ քայլը:

Բայց պատմողը Անդրանիկն ինքն է, որի հեռագիրը՝ ուղղուած Գեղեչկօրիին՝ խօսում էր Հայաստանի կառավարութեան կողմից «հալածուած» լինելու մասին:

Անդրանիկն այլեւս այն Անդրանիկը չէր, որին տեսել եւ ճանաչել էի 1904-ին մեր տանը՝ Թիֆլիսում եւ, մի քանի ամիս յետոյ, Ժընեւում:

Ո՛ւր այն ժամանակուայ պարզ, անմիջական, անկեղծ ու համեստ Անդրանիկը եւ ուր այս ջղային, անհանդուրժող, դիւրաբորբոք, մռայլ, մաղձոտ Անդրանիկը: Ո՛ւր նրա սքանչելի հընչուն, գրեթէ մանկական ծիծաղը, որ մաքուր եւ անկեղծ սրտի պոռթկումն է, եւ ուր այժմեան մռայլ, անժպիտ դէմքը:

Անդրանիկի մէջ հոգեկան անհանգստութիւնը, դժգոհութիւնը, ջղայնոտութիւնը զգացւում էր պատերազմի առաջին օրերից սկսած:

Կամաւորական դնդերի գոյութեան ամբողջ ընթացքում, որ հաղիւ երկու տարի տեւեց, Անդրանիկը երեք անգամ լքեց իր գունդը եւ քաշուեց ռազմաճակատից: Եւ ամէն անգամ ռազմաճակատը լքելու պատճառը եղել է ոչ արդարացուցիչ, ոչ ծանրակշիռ պատճառ, այլ լոկ պատրուակ: Եւ ամէն անգամ պէտք է եղել, որ մեր ազգային մարմինները, Հ. Յ. Դաշնակցութեան ղեկավարութիւնը, յանձին Ռոստոմի նման բոլորից անխտիր յարգուած եւ սիրուած ղեկավարի, դիմեն Անդրանիկին, համոզեն, խնդրեն որ մեկնի ռազմաճակատ: Կամաւորական միւս չորս գընդերի հրամանատարներից եւ ոչ մէկը՝ Քեռին, Դրօն, Յ. Արղութեանը եւ Համազասպը՝ ոչ մի օր ինքնագլուխ չհեռացաւ ռազմաճակատից: Կամաւորական դնդերի երկու տարուայ գոյութեան ընթացքում գրեթէ մի ամբողջ տարի Անդրանիկը բացակայեց իր գնդից: Պատերազմի հէնց սկզբնաւորութեան, երբ իր գունդը պարսկական ճակատի վրայ էր, նա մօտ մի ամիս ձգեց ճակատը անցաւ Թիֆլիս: 1915-ի յուլիսին, Վանի մեծ նահանջից յետոյ Անդրանիկը լքեց իր գունդը ամբողջ վեց ամիս, մինչեւ 1916-ի յունուար ամիսը: 1916-ի ապրիլին կրկին մեկնեց իր գնդից եւ այլեւս չվերադարձաւ դէպի իր գունդը, մինչեւ այդ տարուայ սեպտեմբեր ամիսը, երբ կամաւորական դնդերը զօրացրումի ենթարկուեցին:

Անդրանիկի մէջ սկսել էր դլուխ բարձրացնել իշխանութեան եւ փառքի տենչը։ Եւ երբ նրան չէր յաջողւում իր փնտռած իշխանութիւնը ձեռք բերել, նա ջղայնանում եւ սկսում էր դանդատուել, որ իրեն դնահատող չկայ։ Այդ դնահատութեան պակասը, սակայն, պատրուակ էր, քողարկելու համար իր դժդոհութեան բուն պատճառը։ Անդրանիկը ոչ միայն դնահատուած, այլեւ սիրուած էր հայ ժողովրդի կողմից։

Եթէ կար Անդրանիկի արժէքը չդնահատող մէկը, դա, դըժբախտաբար, Անդրանիկը ինքն էր։

Փաշա տիտղոսը, որ տուել էր նրան թշնամին, չոյում էր Անդրանիկի փառքի տենչը։ Փաշաների մահացու թշնամի անվեհեր ռազմիկը ակնկալում էր, որ իրեն փաշա կոչէին։

Երբ 1917-ին Ռուսաստանի Ժամանակաւոր Կառավարութիւնը, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան դիմումին վրայ, Անդրանիկին զօրավարի տիտղոս տուեց,— տիտղոս, եւ ոչ թէ զինուորական աստիճան, քանի որ Անդրանիկը ո՛չ զինուորական կըրթութիւն էր ստացել եւ ոչ էլ ռուսերէն դիտէր, ռուսական բանակի իրական զօրավարի աստիճան ստանալու համար,— փաշան փոխարինուեց զօրավարով, որ չոյում էր նրա փառասիրութիւնը։

Ու դժբախտաբար, չհասկացաւ Անդրանիկը, որ Անդրանիկ անունը մեր ժողովրդի համար բարձր է բոլոր փաշաներից եւ զօրավարներից։

Իր դնդում եղած ժամանակ ես ամենայն խնամքով խուսափեցի նրան փաշա կոչելուց։ Ինձ համար Անդրանիկին փաշա կոչել կը նշանակէր վիրաւորել նրա արժանապատուութիւնը։

Մասամբ կամաւորական շարժման շրջանում, իսկ աւելի եւս յետագայ տարիներում, մինչեւ 1919-ը, Անդրանիկի շրջապատում եղան անպատասխանատու, բախտախնդիր մարդիկ, որոնք շողոքորթելով, կեղծելով ու քծնելով քաջալերեցին նրա մարդկային տկար կողմերը, թունաւորեցին նրա հոգին, եւ մղեցին նրան այնպիսի քայլերի, որ խոհական, հաւասարակշիռ դատողութիւնը թոյլ պիտի չտար Անդրանիկին անելու։

Այս տողերը թող չնկատուեն իբրեւ դատապարտութիւն Անդրանիկի, այլ իբրեւ խոր ցաւի արտայայտութիւն հեղինակի կողմից։

Ինձ համար շատ ծանր էր տեսնել Անդրանիկին հոգեկան այն

վիճակում, որ նա ցուցարերեց Յովհաննէս Թումանեանի տանը։

Ու ես չտապեցի մեկնել Թումանեանի տնից։

Երկու օր յետոյ տեղեկացայ, որ Անդրանիկը, Բաթումի վրայով Եւրոպա է մեկնել։

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԻՍ ԷՋԸ

1954–ին ես Յունաստանից մի նամակ ստացայ Անդրանիկի զնդի կամաւոր ընկերներից մէկից՝ Լեւոն Պարոնեանից։ Լեւոնը մէկն էր իմ այն երեք ընկերներից, որոնք իմ «բաղվեղկա»ի պատճառով եւ անարդար տեղը մտրակի մի մի հարուած ստացան Անդրանիկից։ Դիպուածով իմ հասցէն ձեռք ձգելով Լեւոնը նամակ էր գրել ինձ, ուրախութիւն էր յայտնել, որ կարող է նամակակցել իր հին զինակից ընկերոջ հետ։ Ես պատասխանեցի Լեւոնին եւ, ի միջի այլոց, հարցրի, թէ արդեօք ինքը Անդրանիկի զօրաղնդո՞ւմն է եղել, երբ այդ զօրաղունդը զօրացրումի է ենթարկուել Էջմիածնում։ Երբ Լեւոնը պատասխանեց, որ ինքը եղել է թէ՛ Էջմիածնում, եւ թէ մասնակցել է Երեւանի վրայ կատարուած արշաւանքին, ես խնդրեցի, որ նա գրէ ինձ Զանգեզուրից Էջմիածին գալու եւ Երեւանի վրայ արշաւելու պատմութիւնը։

Ահա թէ ինչ է գրել ինձ այդ մասին Լեւոն Պարոնեանը։ Ես պահել եմ իր նամակի լեզուն եւ ուղղագրութիւնը, եւ միայն փակագծի մէջ մի քանի անուններ ու բառեր եմ ուղղել։

«Էրիթրէա, 4 հոկտ. 954

«Սիրելի Վարդգէս,

Հակառակ որ 8 ամիս է հիւանդ եմ, թեթեւ կաթուած մը լեցած էր, ձեր խնդրանքին համեմատ անմիջապէս կը պատասխանեմ։

Շատ չիտակ է որ Անդրանիկը 1919–ին Էջմիածնի մէջ ցրուեց Կաթողիկոսին յանձնելով զէնքերը։ Կը կարծեմ որ փետրուարին, քարապահէն (Ղարաբաղ) եկանք Կորիս (Գորիս, Զանգեզուրի գլխաւոր քաղաքը), իսկ այն տեղէն անգաղակոթ (Անդեղակոթ), այն տեղը երկու օր մնալէ վերջը եկանք Պաղար Զայ մալականի (ռուսների) գիւղ, որ շատ լաւ ընդունելութիւն գտանք. գիւղացիք կովերը մորթեցին, մեղի կերակրեցին եւ այն տեղէն եկանք հայի մի գիւղ, որուն քահանան լուռ (լուր) ղրկած էր որ գիւղին

մէջէն չանցնինք։ Երբ բանակը ցրուեց զինուորները մաս մը Երեւան (Երեւան) կ՚երթան իրենց ատրճանակներովը. քաղաքին պաշտպան Բոլիցիան ուզեր է զինաթափել, մեր տղաքը չեն հպատակեր եւ կռիւ մը կսկսի Տրօի (Դրոյի) եւ Անդրանիկի զինուորներուն մէջը, որուն լուռը (լուրը) կը հասնի մեզի եւ անմիջապէս զինուորները հաւաքելով եւ միասին թնդանօթները առնելով կը քալէ Երեւանի (Երեւան) վրայ, ու քիչ մօտեցած քաղաքին կը հասնին Անգլիացի սպաները ու կը միջամտեն որպէսզի յարձակումը չընէ ու կը համոզուի որ պէտք է հեռանայ Հայաստանէն, ի սէր ժողովրդին։ Քանի մը հոգի առնելով մեկնեցաւ Պաթում ու գնաց ու գնաց։ Վարդդէս, ամէն ճիգ մը թափեցի որ քեզի օգտակար ըլլամ։

Կրկին կը դրեմ Անդրանիկը զօրացրեց Էջմիածնի մէջը 1919 թուականին եւ փետրուար ամսուն, իսկ 20–25 օր վերջը պատահեցաւ Երեւանի (Երեւանի) խնդիրը։ Այսքան կրնամ յիշել, կը սպասեմ նամակիդ բարեւներով Լեւոն Պարոնեան»։

1954–ին, երբ Դրօն Ամերիկա, Նիւ Եորք էր գտնուում, ես մի օր խնդրեցի, որ ինքն էլ պատմի, թէ ինչպէս է տեղի ունեցել Անդրանիկի արշաւանքը Երեւանի վրայ։

Դրօն, որ չէր հանդուրժում մեր յեղափոխական անուանի ռազմիկների մասին որեւէ բացասական խօսք լսել եւ առաւել եւս երբեք թոյլ չէր տալիս այդ ռազմիկներից ոեւէ մէկի տկարութիւնների մասին խօսել, սկիզբը դժկամակեց եւ չուզեց պատմել այդ դէպքը, բայց վերջը տեղի տուեց եւ պատմեց հետեւեալը.

«1919–ի փետրուարի կամ մարտի օրերից մէկն էր, երբ լուր եկաւ, որ Անդրանիկը, Դարալագեազի վրայով, Զանգեզուրից իջել է Դաւալու։ Ես անմիջապէս պատրաստել տուի Սուլուկիձէի վագոնը*) եւ մեկնեցի Դաւալու։ Երբ հասայ Դաւալու, պարզուեց, որ Անդրանիկը այնտեղից մեկնել է Ղամարլու։ Հրահանգեցի ձիեր պատրաստել եւ անմիջապէս մեկնեցի Ղամարլու, յուսալով այնտեղ հասնել Անդրանիկին։ Բայց նա արդէն անցել էր

---

*) 1918–ի հայ–վրացական կարճատեւ պատերազմի ընթացքում Լոռիի շրջանում վրացական զօրամասի հրամանատար Սուլուկիձէից հայերի խլած այսպէս կոչուած սալօն վագոնը, որ կատակով Սուլուկիձէի վագոն էր կոչւում։ Հանգստաւէտ վագոններից զուրկ Հայաստանի երկաթուղին այդ վագոնը գործ էր ածում Հայաստանի կառավարութեան անդամների եւ հայ ու օտար անուանի հիւրերի ճամբորդութեան համար։

Ղամարլուից։ Շարունակելով իմ հետապնդումը, ես հասայ Անդրանիկին Երեւանի այգիների շրջանում։

Մեր հանդիպումը սիրալիր եղաւ, ողջագուրուեցինք, որից յետոյ ես հրաւիրեցի Անդրանիկին Երեւան։

— Ես Երեւան չեմ դար, ես այդ կառավարութիւնը չեմ ճանչնար, պատասխանեց Անդրանիկը։

— Լաւ, եթէ չես ուզում Հայաստանի կառավարութեան հիւրը լինել, եղիր իմ հիւրը։ Քո պատուաւոր տեղը կը գտնես Երեւանում։ Երեւանի ժողովուրդը քեզ իր գլխի վրայ կ'ընդունի, ասացի ես։

— Ուրտեղ որ ուզես՝ կուզամ, բայց Երեւան չեմ դար, քու հիւրդ կ'ըլլամ ուրտեղ որ ուզես, բայց ոչ Երեւանի մէջ, կրկնեց Անդրանիկը։

Պնդելը այլեւս աւելորդ էր։

Անդրանիկը իր զինուորներով շարժուեց դէպի Էջմիածին։ Ես հետը գնացի Էջմիածին, ինտենդանտստվոյից*) իր զօրաղնդի կարիքները հոգացի եւ ապա եկայ Երեւան։

Զատկի Խմման օրը Երեւանի պարետ փոխ-զնդապետ Արշօ Շահխաթունին յայտնեց ինձ, որ Անդրանիկի զինուորներից մէկ երկու հարիւր հոգի Էջմիածնից Երեւան են եկել, շուկան տակն ու վրայ են արել եւ իրենց շարժ ու ձեւից երեւում է, որ կռիւ են փնտռում։

Զատկի տօնի առթիւ շուկան լիքն էր գիւղացիներով, որոնք մթերքներ էին բերել Երեւան ծախելու համար։

Ես նշանակուած էի հրամանատար Հայաստանի արեւելեան բաժնի, եւ Երեւանեան նահանգի ու Երեւան քաղաքի պաշտպանութիւնը ինձ էր յանձնուած։ Ես կարգադրեցի զնդապետ Կուռո Թարխանեանին գնալ եւ կարգը վերականգնել։ Միաժամանակ թելադրեցի Թարխանեանին, անցանկալի դէպքերի տեղիք չտալու համար զգոյշ շարժուել, եթէ ինքը նկատի, որ անկարգութիւն անողները խմած են։

Շատ չանցած զնդապետ Թարխանեանը զեկուցեց ինձ, որ խառնակիչները ոտքի տակ են տուել Երեւանի բաց շուկայում գիւղերից եկած գիւղացիների մթերքներով լիքը զամբիւղներն ու կողովները եւ Հայաստանի կառավարութեան հասցէին լուտանքներ են թափել։ Անզուսպներին զսպելու եւ կարգը վերա-

---

*) Համբարակութիւն, բանակը սպասարկող հիմնարկութիւն։

հաստատելու համար դնդապետ Թարխանեանը հրամայել է իր զինուորների օդի մէջ համազարկ տալ։ Ըստ երեւոյթին, դնդապետ Թարխանեանի զինուորներից մէկի անզգոյշ կրակից ոտքից վիրաւորւում է Անդրանիկի զինուորներից մէկը։ Դրանից յետոյ անկարգութիւն անողները փախչում են Էջմիածին եւ կարգը վերականգնում է։

Այդ նոյն օրուայ կէս գիշերից անց, առաւօտեան ժամը 2-ին, ինձ զարթեցրեց ինձ սպասարկող զինուորը եւ յայտնեց, որ երեք հոգեւորականներ են եկել եւ ուզում են անմիջապէս խօսել ինձ հետ շատ կարեւոր գործի մասին։

Ես ելայ ընդունելու եկածներին։

Զարմանքով տեսայ, որ մէկը Երեւանի առաջնորդ Խորէն արքեպիսկոպոս Մուրադբէգեանն է, միւսը Գարեգին վարդապետ Ցովսէփեանը*), իսկ երրորդը՝ չեմ յիշում ով էր։

Գարեգին վարդապետը հաղորդեց, որ ինքը շտապով եկել է Էջմիածնից, որտեղ Անդրանիկը զինաթափ է արել տեղական ոստիկանութիւնը, կտրել է Երեւանի հետ կապ պահող հեռագրային եւ հեռախօսային երկաթալարերը եւ յայտարարել է, որ գալու է Երեւանի վրայ։

Խորէն սրբազանը եւ Գարեգին վարդապետը եկել էին խնդրելու, որ վայրկեան առաջ մարդ ուղարկուի ընդառաջ Անդրանիկին, համոզելու համար, որ չգայ Երեւանի վրայ։

Փորձեցի կապուել Էջմիածնի հետ, բայց Էջմիածինը չպատասխանեց։ Դաշտային հեռախօսով կապուեցի Մարզարայի**) հետ։

Մարզարան ասաց.

— Լսել ենք, որ Անդրանիկը թելերը սաղ փրթել ա, ու գնում ա Էրեւանի վրայ։

Հեռախօսեցի Ղամարլու։ Ղամարլուն պատասխանեց։

Խօսողը փոխ-դնդապետ Հասան Փաշայեանն էր։

---

*) Խորէն արքեպիսկոպոս Մուրադբէգեան, յետագային Խորէն Առաջին Կաթողիկոս Ամենայն Հայոց, որ խեղդամահ է եղել սովետական Չեկայի ձեռքով։ Գարեգին վարդապետ Ցովսէփեան, յետագային Գարեգին Առաջին Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ։

**) Մարզարա՝ Էջմիածնից 12 մղոն դէպի հարաւ, Արաբսի հայկական ափին, սահմանապահ խոշոր մի գիւղ։

Հարցրի.— Զեռքի տակ փոխադրական ի՞նչ միջոցներ ունես:

Պատասխանեց.— Մի պարովոզ (շոգեկառք) եւ քսան վագոն:

Ասացի.— Կը լցնես վագոնները ինչքան զինուոր, որ կարող ես եւ անմիջապէս կը գաս: Անդրանիկը գալիս է Երեւանի վրայ: Զանգուի վրայ Նորաշէնի կամուրջը կայ, որ բարձրանում է Երեւանի այգիները: Այդտեղ դիրք կը բռնես եւ կը սպասես հրամանի:

Կանչեցի Աշտարակը եւ հրաման տուի, որ երեք վաշտ եւ մի հարիւրակ այգիների ճանապարհով շտապով հասնեն Դալմայի այգիները: Անդրանիկը գալիս է Երեւանի վրայ: Հարկ եղած միջոցները ձեռք առնել եւ եթէ կռիւն սկսուի Երեւանի վրայ, ամբողջ ոյժով զարկել Անդրանիկի թիկունքին:

Գնդապետ Թարխանեանին հրամայեցի իր երեք հարիւրակով,— երկուսը հետեւակ եւ մէկը ձիաւոր,— բռնել Զանգուի ափը եւ դէպի Էջմիածին տանող կամուրջը: Իր տրամադրութեան տակ թնդանօթներ դրի: Իրեն տրուած ռազմական խնդիրն է,— Անդրանիկը գալիս է Երեւանի վրայ,— բոլոր տրամադրելի միջոցներով յետ շպրտել եւ թոյլ չտալ որ Երեւան մտնի:

Շատ չանցած Թարխանեանը լուր ուղարկեց, որ Անդրանիկը հասել է Սարդարի այդու ետեւը գտնուող բլուրը: Աւելի ուշ, ժամը 5-ի մօտերը, Թարխանեանը տեղեկացրեց ինձ, որ իր պահակները երեք հետախոյզներ են բռնել:

Զինուորական գործողութիւնների դիմելուց առաջ ես որոշեցի մի նամակ գրել Անդրանիկին: Եւ գրեցի, որքան յիշում եմ, հետեւեալը.

«Անդրանիկ,

Մենք Սասունի քո յեղափոխական կռիւներով, քո յեղափոխական շունչով դաստիարակուած սերունդն ենք: Այսօր, հիմնուած մի քանի հարբածների անճիշդ, յերիւրածոյ լուրերի վրայ, դու գալիս ես Երեւանի վրայ:

Ես խնդրում եմ իմ պաշտած հայդուկապետին, որ նա սեւ արատ չբերի իր յեղափոխական անցեալին եւ հրաժարուի Երեւանի դէմ քայլեր առնելուց:

Միաժամանակ, իբրեւ Երեւանի նահանգի հրամանատար, պարտք եմ զգում զգուշացնել քեզ, որ եթէ չհրաժարուես քո մըտադրութիւնից, դու ինձ կը ստիպես դիմել զէնքի եւ կարող եմ վստահացնել քեզ, որ Երեւան չես կարող մտնել: Այդ ուղղու-

թեամբ հարկ եղած հրամանները տրուած են։ Աւելորդ է փորձ անել, նպատակիդ չես հասնի։

ԴՐՕ»

Այս երկտողը տուի մեր հին յեղափոխական ընկերներից քեռչալ Համբոյին, որ տանի։

Համբոն դնաց եկաւ եւ պատմեց, որ Անդրանիկը կարդացել է իմ երկտողը, մի մտրակ է քաշել Համբոյին, նամակս պատռել է եւ ասել. «Ես Դերոյի «մասսարը». ան խենթ է, ան կ'ընէ, ես անոր հետ գործ չունիմ, ես Երեւանի կառավարութեան հետ գործ ունիմ»։

Շատ չանցած նստել է ձին եւ իր զօրագունդը առած վերադարձել է Էջմիածին։

Յետագայում իմացայ, որ վերադարձին Փարաքարում*) մտրակի տակ է առել այն խմբապետներին, որոնք սուտ տեղեկութիւններ են հաղորդել իրեն Երեւանում, իր զինուորների հետ պատահածի մասին», լրացրեց իր տխուր պատմութիւնը Դրօն։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՔԱՂԱՔԱՑԻ

1920-ի աշնան Խորհրդային Ռուսաստանի եւ Քեմալական Թուրքիայի միացեալ ոյժերի տակ խորտակուեց Հայաստանի Անկախ Հանրապետութիւնը։

1918-ի Բրեստ Լիտովսկի դաշնագրով Խորհրդային Ռուսաստանի եւ սուլթանական Թուրքիայի միջեւ բաժանուած հայկական հողերը 1920-ին կրկին բաժանուեցին, այս անգամ Խորհրդային Ռուսաստանի եւ նրա դաշնակից Քեմալական Թուրքիայի միջեւ եւ այս անգամ Թուրքիան ստացաւ աւելի մեծ հողային աւար, քան թէ 1918-ին։

1920-ի դեկտեմբեր 2-ին ռուսական Կարմիր Բանակի սուինների՝ Երեւանում հաստատուեց խորհրդային իշխանութիւն։

---

*) Փարաքարը Երեւանի եւ Էջմիածնի միջեւ կէս ճանապարհի վրայի գիւղն է։

Մեր հայրենիքի դառն ճակատագիրը, շատ շատերի նման, ինձ էլ նետեց օտար ափեր։ 1921–ին ես անցայ Ֆրանսա՝ Փարիզ, ուր գտնուում էր Հայաստանի Հանրապետութեան Պատուիրակութիւնը հօրս՝ Ա. Ահարոնեանի նախագահութեան տակ։

Դաշնակից պետութիւնները եւ Ամերիկայի Միացեալ Նահանգները շարունակում էին օրինական ճանաչել Հայաստանի պարտուած ժողովրդավար Հանրապետութեան Պատուիրակութիւնը եւ դիւանագիտական ներկայացուցչութիւնները Եւրոպայում եւ Ամերիկայում։

1922–ի գարնան ես տեղեկացայ որ մի քանի ամսից ի վեր Անգլիայի Մանչեսթըր քաղաքում հաստատուած Անդրանիկը Փարիզ է եկել։

Փնտռեցի իր հասցէն եւ գնացի այցելելու իրեն։

Անդրանիկը իջել էր Փարիզի համեստ հիւրանոցներից մէկում։

— Մտէ՛ք, լսեցի իր ձայնը, երբ բախեցի իր սենեակի դուռը։

Երբ ներս մտայ, տեսայ որ Անդրանիկը պառկած է անկողնում։

— Հիւա՞նդ ես, արդեօք անհանգստացրի՞ քեզ, հարցրի իր մեկնած ձեռքը սեղմելով։

— Հիւանդ չեմ, բանիս առի ու քիչ մը պառկիմ՝ ըսի, պատասխանեց։

Թէեւ հարց ու փորձ արեց մեր ընտանիքի մասին, բայց իր վերաբերմունքը դրեթէ պաշտօնական էր։

Մեր խօսակցութիւնը չէր կապւում։ Տաս րոպէի չափ նստելուց յետոյ, ես մեկնելու շարժում արեցի։

Անդրանիկը նկատեց այդ եւ, ըստ երեւոյթին, իր ունկնդիրը չկորցնելու մտահոգութեամբ, մէկէն ի մէկ, առանց նախաբանի ձեռք առաւ 1920–ին Կարսի անկման խնդիրը։

— Կարսը Թուրքին տուին... կառավարութիւն ունէին, բանակ ունէին եւ Կարսի նման բերդը Թուրքին տուին... Անշուշտ... որո՞ւ հոգ, թէ Կարսը ձեռքէ կ'ելլէ... Երեւանի նախարարներո՞ւ... բանակը չկռուեցաւ կ'ըսեն... ինչո՞ւ չկռուեցաւ, ո՞վ է պատասխանատուն...»

Իր բերնից բառերը թափւում էին կարկտի նման, խօսում էր առանց մի վայրկեան կանգ առնելու, առանց շունչ քաշելու։ Անզուսպ զայրոյթ, ցասում, ծանր բառեր էին, որ պոռթկում էին նրանց հասցէին, որոնք «Կարսը Թուրքին տուին»։ Եթէ մի րոպէ դադար տար իր բառերի կարկտին, կարելի էր հարցնել իրեն, թէ մինթէ յանցանքը իրե՞նն էր, որ իր պաշտպանութեան յանձ-

նուած Իրզրումը ընկաւ 1918–ին, կամ թէ ի՞նչպէս պատահեց, որ Իրզրումում բանակը չկռուեց, եւ թէ ինչո՞ւ նոյնը չէր կարող պատահած լինել նաեւ Կարսում: Բայց այդպիսի բաներ ասել նրան կը նշանակէր իր բորբոքուած ներքին կրակի վրայ իւղ լցնել:

Ինձ ուրիշ բան չէր մնում, բայց եթէ օգտուել իր վայրկենական մի դադարից ու հեռանալ:

Այդպէս էլ արեցի, երբ մի բոպէ չունչ առաւ, շտապեցի հրաժեշտ տալ ու մեկնել: Այդ ընդունելութիւնից յետոյ այլեւս ուրիշ անգամ Անդրանիկին այցելելու փորձ չարեցի:

Մի քանի ամիս յետոյ, երկրորդ անգամ հանդիպում ունեցայ Անդրանիկի հետ, Ապրիլեան Սգատօնի օրը, երբ երկուսս էլ պիտի ատենախօսէինք միեւնոյն ամբիոնից: Այդ օրը մեր հանդիպումը սահմանափակուեց փոխադարձ բարեւով միայն: Անդրանիկը շրջապատուած էր այնպիսի բարեկամներով, որոնց ներկայութեանը ես պիտի չուզէի խօսել նրա հետ:

1922–ի մայիսին կամ յունիսին էր, երբ մի օր, Հայաստանի Հանրապետութեան Պատուիրակութեան շէնքը մտնելով, Պատուիրակութեան նախագահի դրասենեակում զարմանքով տեսայ Անդրանիկին: Անդրանիկից բացի սենեակում նստած էին հայրս, Ա. Խատիսեանը, Հայաստանի Հանրապետութեան նախկին ռազմական նախարար Ռուբէնը (Տէր Մինասեան) եւ Պատուիրակութեան քարտուղար Արտաւազդ Հանըմեանը:

Ռուբէնը, որ մի քանի օր առաջ էր Փարիզ հասել Թաւրիզից, նստած էր հօրս դրասեղանի առջեւ եւ մէկ միւսի յետեւից ծխիկներ վառելով ծխում էր անընդհատ:

Հայրս, Խատիսեանը, Անդրանիկը եւ Հանըմեանը խմբուած էին սենեակի այն մասում, որ բաւական հեռու էր Ռուբէնի դրաւած դրասեղանից:

Երբ ներս մտայ, խօսում էր Անդրանիկը, որ ինչ որ պատմութիւն էր անում: Նրան ունկնդրողները դլխաւորապէս հայրս եւ Խատիսեանն էին: Ա. Հանըմեանը երբեմն երբեմն դուրս էր դալիս եւ դնում քարտուղարական դրասենեակը, ուր աշխատում էր իր օգնական Մ. Ղազարեանը: Մէկ երկու անդամ իր դրասենեակը դնալուց առաջ Հանըմեանը ինչ որ բաներ հարցրեց Անդրանիկից:

Անդրանիկը, որ անցեալում ընկերական ու բարեկամական շրջանակում միշտ էլ բոլորի ուշադրութեան կենտրոնն էր իր հե-

տաքրքրական, համով հոտով պատմութիւններով, այժմ ղղալի ճիդ էր անում դրաւելու իր ունկնդիրների ուշադրութիւնը: Բայց այդ նրան չէր յաջողւում:

Չէր կարելի չնշմարել այն ձգտուածութիւնը, որ ղղացւում էր երկու կողմից՝ հիւրի եւ հիւրընկալների միջեւ եւ որ ծածկուած էր պաշտօնական քաղաքավարութեան թափանցիկ քօղով: Հայրս, Խատիսեանը եւ Հանըմեանը լսում էին Անդրանիկի պատմութիւնը եւ երբեմն նոյնիսկ մի քանի բառ փոխանակում նրա հետ: Մինչ Ռուբէնը, որի դէմքը մթամած երկինք էր յիշեցնում, ոչ միայն անմասն էր սենեակի միւս մասում անց ու դարձին, ոչ միայն չէր ունկնդրում, այլ նայում էր Անդրանիկի ղլխի վրայից մի անորոշ կէտի այնպէս, որ կարծես թէ Անդրանիկը գոյութիւն չունէր նրա համար այդ սենեակում:

Անդրանիկի համար այդ սենեակում նստածները, ու մանաւանդ Ռուբէնը, «կարսը թուրքին տուող» եւ «թուրքի հետ հաշտութիւն կնքող» մարդիկն էին: Իսկ միւսների աչքում Անդրանիկը հայ ժողովրդի 1918-ի կենաց եւ մահու պայքարի ճգնաժամային օրերում հայկական իշխանութիւնը ներկայացնող զօրավար Թովմաս Նազարբէգեանին չենթարկուող, Ղարաքիլիսայի ճակատագրական ճակատամարտից խուսափած, ճակատը լքած եւ Հայաստանից Իրան քաշուած ըմբոստն էր:

Դեռ չէի կարող հասկանալ, թէ ի՞նչն էր բերել Անդրանիկին Հայաստանի Հանրապետութեան նախկին նախարարների եւ Պատուիրակութեան անդամների մօտ:

Երբ մի անդամ էլ Ա. Հանըմեանը ոտքի ելաւ իր դրասենեակը դնալու, ես հետեւեցի նրան:

— Անդրանիկը ինչո՞ւ է եկել այստեղ, հարցրի ես:

— Ամերիկա պիտի երթայ, անցագիր չունի, եկած է եւ հայկական անցագիր կը խնդրէ, պատասխանեց Հանըմեանը:

— Պիտի անցագիր տա՞ք իրեն, կրկին հարցրի ես:

— Անտարակոյս. մարդը եկած է եւ հպատակութիւն կը յայտնէ, կրնա՞նք այդպիսի քաղաքացիի մը մերժել անցագիր տալ, ժպտալով պատասխանեց Հանըմեանը:

Ես վերադարձայ հօրս դրասենեակը նստածների մօտ:

Շատ չանցած Հանըմեանը բերեց եւ Անդրանիկին յանձնեց անցագիրը:

Անդրանիկը ոտքի ելաւ հրաժեշտ տալու ներկաներին:

Հայրս եւ Խատիսեանը սեղմեցին Անդրանիկի ձեռքը, Ռուբէնը տեղից չշարժուեց եւ, կարծես թէ իր անտարբերութիւնը

աւելի եւս ընդդծելու համար աւելի զօր տուեց իր ծխախոտին, իսկ Հանըմեանն ու ես ուղեկցեցինք Անդրանիկին մինչեւ վերելակի դուռը:

— Դո՞ւն ալ կուգաս, կէս հարցումի, կէս խնդրանքի ձեւով դիմեց ինձ Անդրանիկը:

— Այո՛, ակամայից պատասխանեցի ես:

Երկսով վերելակով վար իջանք եւ փողոց դուրս եկանք:

— Ո՞ւր կ'երթաս, հարցրեց Անդրանիկը:

— Այս կողմը, դէպի Պասսէ, ասացի ես, իմ դնալիք ուղղութիւնը ցոյց տալով:

— Ես ալ այդ կողմը կ'երթամ, միասին երթանք, վրայ բերեց Անդրանիկը:

Ինձ համար պարզ էր, որ Անդրանիկը ինձ է յարմարւում, որքան դիտէի, նրա ճանապարհը այդ կողմը չէր ընկնում:

Անդրանիկը մի անցնող թաքսի կանգնեցրեց:

— Նստէ՛, ասաց ինձ:

Նստեցինք թաքսին, եւ երբ հասանք Սենայի ափի մի կաֆէ, Անդրանիկը կանգնեցրեց թաքսին եւ վար իջանք:

— Հոս դաւաթ մը սուրճ խմենք, ասաց Անդրանիկը:

Ես մի դաւաթ սուրճ պատուիրեցի, իսկ Անդրանիկը սուրճ եւ մի փոքրիկ դաւաթ կոնեակ:

— Բան մը պիտի խնդրեմ քեզմէ, ասաց Անդրանիկը մտերմական շեշտով:

Ինձ համար հասկանալի եղաւ, թէ ինչո՛ւ Անդրանիկը հետամուտ էր, որ ես իրեն հետ մեկնէի Պատուիրակութեան շէնքից:

— Գիտես, որ ես կ'անեմ քեզ համար, ինչ որ կարող եմ, եղաւ իմ պատասխանը:

— Դուն գիտես, որ ես Դրօշակի խմբագրութեան նուիրած եմ Բըշարէ Խալիլին սուրը, շարունակեց Անդրանիկը:

— Գիտեմ, պատասխանեցի ես:

1905-ին Թիֆլիսի մեր տանը եւ ապա Զուիցերիայում Անդրանիկը պատմել էր Աղբիւր Սերոբին դաւադրութեամբ սպանել տուող բալաքցի քրդերի ցեղապետ Բըշարէ Խալիլի եւ նրա պահակախմբի ջարդը մեր ֆեդայիների ձեռքով: Ֆեդայիների վրիժառու խմբի ղեկավարը եղել էր Անդրանիկը Գէորգ Զաւուշի եւ Սպաղանաց Մակարի հետ: Բըշարէ Խալիլի գլուխը կտրել էր Անդրանիկը, հէնց Բըշարէ Խալիլի կեռ սրով: Այդ կեռ սուրը Անդրանիկը 1905-ին տարել էր Ժընեւ եւ նուիրել Դրօշակի խմբագրութեան:

— Դրօշակի խմբագրութիւնը պէտք չունի այդ սուրին։ Կը խնդրեմ որ խօսիս իրենց եւ ըսես, որ ինձի վերադարձնեն այդ սուրը, լրացրեց իր ասելիքը Անդրանիկը։

— Անդրանիկ, քո խնդրանքը կը յայտնեմ ում որ պէտք է։ Բայց կարող եմ վստահացնել քեզ, որ այդ սուրը քեզ չեն վերադարձնի, ասացի ես։

— Դուն ըսէ իրենց, ըսէ՛, կրկին պնդեց Անդրանիկը ու ոտքի ելաւ։

Այդ վայրկեանին իմ մտքից չէր կարող անցնել, որ Սենայի ափի այդ կաֆէում մեր բաժանումը վերջին հրաժեշտի բաժանում է եւ որ ես այլեւս երբեք պիտի չտեսնեմ Անդրանիկին։

Այդ տարին Անդրանիկը Ամերիկա անցաւ եւ հաստատուեց Քալիֆորնիայի Ֆրէզնօ հայաշատ քաղաքում։

Նոյն թուականին ճակատագիրը ինձ էլ նետեց Ամերիկայի Միացեալ Նահանգները։

1925–ից մինչեւ 1927–ը ես հաստատուել էի Նիւ Եորքին դրացի Նիւ Ջըրզի նահանգի Իւնիըն Սիթի քաղաքում, որ գրեթէ Նիւ Եօրքի արուարձաններից մէկն է։ Իւնիըն Սիթին միայն Հըդսըն գետով է բաժանուած Նիւ Եօրքից։ Աշխատանքիս բերումով ես յաճախ Նիւ Եօրք հանդիպել չէի կարողանում։

Եւ ահա, 1927–ի գարնանը, բարեկամներից մէկ հաղորդեց ինձ, որ երկու շաբաթ առաջ Անդրանիկը Նիւ Եօրք է եկած եղել, փնտռել է իմ հասցէն, բայց չի կարողացել գտնել եւ առանց ինձ տեսնելու վերադարձել է Քալիֆորնիա։

1925–ին, Անդրանիկի հին զինակիցներից անուանի Ֆեդայի Սեպուհը հրատարակել էր իր յուշերի հատորը, որի մէջ Անդրանիկի մարդկային տկարութիւնները չափազանցուած ձեւով էր ներկայացրել, եւ միանգամայն ստորադնահատել Անդրանիկի ռազմական կարողութիւնները։ Ես պարտք համարեցի, յենուած իմ տեսածների եւ լսածների վրայ, հրապարակ գալ ի պաշտպանութիւն Անդրանիկի, «Հայրենիք» օրաթերթում հրատարակուած մի յօդուածով։

Գրեթէ կասկած չունեմ, որ իմ այդ յօդուածը պատճառ էր եղել, որ Անդրանիկը փնտռել է ինձ։

Խոր ցաւ եղաւ ինձ համար, որ Անդրանիկին կրկին տեսնելու պատեհութիւնը փախած է եղել իմ ձեռքից։ Մինչեւ այդ ես առիթ էի ունեցել շրջելու Միացեալ Նահանգների բոլոր հայաշատ նահանգները, բացի Քալիֆորնիայից։ Ցոյս ունէի մի օր Քալիֆորնիա էլ գնալ եւ կրկին տեսնել Անդրանիկին։

Բայց ճակատագիրը տարբեր էր տնօրինել։

1927-ի օգոստոս 30-ին Ֆրէզնոյից քաշուած հեռագիրը գուժեց Անդրանիկի մահը։

Եօթ-ութ օր յետոյ Անդրանիկի աճիւնը հասաւ Նիւ Եորք, Ֆրանսա փոխադրուելու, այնտեղ թաղուելու համար։

Նիւ Եորքի Եպիսկոպոսական մեծ եկեղեցիներից մէկում, Հայոց Եկեղեցու ծէսով հոգեհանգիստ կատարուեց։ Իր նախկին կամաւորների մի փոքրիկ խմբով, երկիւղած խուռն բազմութեան հետ գնացինք մեր վերջին յարգանքը մատուցելու Սասնոյ անզուգական Հերոսին։

Յաջորդ օրը, Անդրանիկի աճիւնը ճամբուեց Փարիզ, այնտեղ Պէր Լաշէզ գերեզմանատան մէջ հողին յանձնուելու համար։

Երբ կանգուն էր Հայաստանի անկախ Հանրապետութիւնը, ըմբոստ Անդրանիկը մերժեց ճանաչել այդ Հանրապետութիւնը։ Բայց ճակատագրի մի արդար տնօրինութեամբ Անդրանիկը, իր կեանքի վերջալոյսին, ընդունեց պարտուած Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիութիւնը եւ հեռացաւ այս աշխարհից իբրեւ Քաղաքացի Հայաստանի Անկախ Հանրապետութեան։

Եւ թող օրհնեալ լինի ճակատագրի այդ իմաստուն տնօրինութիւնը։



ՅԱՆԿ ԳԼՈՒԽՆԵՐՈՒ

Անծանօթը	10
Խէչոյի դարդը	15
Հանդիպում Ժընեւում	19
Աս քու ըրածդ կը հաւնի՞ս···	23
Պատերազմը	29
Քիւրդերը Երեւանի փողոցներում···	33
Հրաշքը	37
Դէպի խոյ	41
Վանից Արճէշ	46
Իմ «բազվեդկա»ն···	49
Ասլանը	52
«Ես պիտի ձեր վերին հրամանատարն ըլլայի···»	56
«Ե՛ս եմ պետը»	60
Նորաշէնցի Կրպօն	64
Դէպի Արծկէ	68
Ալպաքից Դատվան	76
Բահվէ Դուրանի կռիւը	81
Դատվանում	86
Դէպի Բաղէշ	89
Ծուար գիւղում	97
Պատերազմական խորհուրդը	100
Գիշերային գրոհը	102
Բաղէշում	108
Մշոյ Դաշտում	115
Սասունցիները	123
Հայի ճակատագիրը	132
Վերադարձ	144
Անդրկովկասի տագնապը	149
Կարսի անկումը	153
Անդրանիկը եւ 1918-ի մայիսեան կռիւները	160
«Հայաստանի կառավարութիւնից հալածուած»	166
Պատմութեան միւս էջը	172
Հայաստանի Հանրապետութեան քաղաքացի	177

ՎՐԻՊԱԿ — Զօր. Սէրգէեւ-ի անունին տեղ կարդալ Զօր. Նիկոլայեւ: